891.99սփ.

Բազին

ՄՏՍԻ ՊԱՐՏՔ...

Անցնող երկու-երեք տարիներուն, Լուսաւորչի Ամսոյին տակ թէ Ծփիւռքի տարածքին՝ մեր գրականութեան ու մշակոյթի կալուածներուն մէջ, արձանագրուեցան կորուստներ, որոնց մէկ կարեւոր տոկոսին առիթով զգացուած ցաւը չկրցաւ արտայայտել «Բազին», ժամանակային թէ կամքէ անկախ այլ պատճառներով։

Տասէ աւելի էին անոնք, ոմանք «Բազին»ի աշխատակից կամ «Բազին»ի մօտ դէմքեր, ուրիշներ՝ ուրիշ հոսանքի մէջ, այսուհանդերձ, թէ՛ մօտը եւ թէ հեռուն, տարբեր որակներ նուաճած ըլլալով հանդերձ, հոգեւին նուիրուած էին հայ մշակոյթին, հետեւաբար՝ բոլորն ալ յարգելի։

Տանք անունները, որպէսզի կը ներէ մեր յիշողութիւնը՝ իրենց անհետացման կարգով.

Փօլ Կիրակոսեան
Համօ Սահեան
Մհեր Մկրտչեան
Նուպար Ակիշեան
Ստեփան Էմմիեան
Ռուբէն Զարեան
Լուդվիգ Բազիլ
Սմբատ Փանոսեան
Սէյրան Խաթլամաճեան
Արտաշէս Յունանեան
Յակոբ Կարապետեան
Եղիշէ Մանուկեան
Վալտեր Արամեան

Ինչպէս կ'երեւի, մարդկօրէն հաշուած՝ ոմանք գրեթէ ամբողջութեամբ ըսած էին իրենց խօսքը, մինչ ուրիշներ, անշո՛ւշտ առաւել կամ նուազ ուժգնութեամբ, դեռ կրնային շնչաւորել սպիտակ բազում էջեր, յայտնաբերել գունային խորհուրդներ կամ վերակենդանացնել մեր խօսքը, շարժումները, արտայայտչական մեր միւս իրայատկութիւնները, եթէ անսպասելի պահերու ճակատագրական հարուածը չխորտակէր անոնց հոգեղէն անօթը։

«Բազին»ի յաջորդական թիւերուն պարբերաբար էջ պիտի տրամադրենք անոնց, մաղթելով նոյն ատենն, որ այնուհետեւ մշակութային մեր անդաստանին մէջ քիչ ըլլան կորուստները, եւ բազմաթիւ՝ յայտնութիւններ։

10-11-12/94 digitised by

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1.–Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Բանաստեղծութիւններ
18.–Գ. ԱԲԷԼԵԱՆ	Պէյրութ
24.–ՎԱՐԱՆԴ	Ցաճախ եմ կեանքում
25.– » »	Զի հրավառ, զի սիրահար...
26.–Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ	Տենդեր
53.–Ս. ԳՐԻԳՈՐԵԱՆ	Երէկ-այսօր
53.– » »	Աչքերուդ մէջ
54.–Գ. ԱԽԵՏԻՍԵԱՆ-ԳՐԻԳՈՐԵԱՆ	Վիգէն-Վրէժ
70.–Փ. ՃԵՐԱՆԵԱՆ	Տուներուն հետ
71.– » »	Մօրս աչքերը
72.–Պ. ՄՆԱՊԵԱՆ	Առաջին շրջանակ
91.– * * *	Անցման այս շրջանին
92.–Ս. ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ	«Նորոգենք ժողովրդի հաւատը»
100.–Ա. ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ	Հայ առաջին թերթին՝ «Ազդարար»ի 200ամեակին առթիւ
115.–ԼԵԻՄՈՆ	Ո՞ւր ես, Լուսաւորիչ
117.–Պ.	Քսան տարի յետոյ
119.–ՎԱՉԳԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ	Կոնդակ «Գարուն» ամսագիրին
126.– * * *	Նշմարներ
132.– * * *	Լոյս տեսան
138.– * * *	Մշակութային լուրեր
144.–	1994ի բովանդակութեան ցանկը

digitised by A.R.A.R.@

Բագին

ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ԼԳ. ՏԱՐԻ 10-11-12 ՀՈԿՏ.-ՆՈՅ.-ԴԵԿՏ. 1994 ՊԷՅՐՈՒԹ

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ՆՇԽԱՐՆԵՐ՝ ՇՈՒՇԱՆԻՆ ՇԱՐԱԿՆՈՑԷՆ

ՇՈՒՇԱՆ

Շուշան մը
ակօսներու գիրքէն դուրս
թաղման աղօթքն է ծիլերուն
որ կ'ոտգէ
ածուները մեռեալներու բառարանին

Շուշան մը
եւ օրօրուող ձնծաղիկներ՝
միջոցին մէջ շողեր ցանող պարսերու
սաղմոսներուն ունկնդիր

digitised by A.R.A.R.@ 2000 ... JUN 2010.

մեր քոյրերն են հովուերգակ
որոնք գաղթեցին գեղին հանդերէն
օտարականներու ընկերակցութեամբ

Շուշան մը
մերկ ու վայրի
եւ քմայքոտ մանուշակներ
օտարական մեր խօսքերն են
որոնք կ'ապրին հեքիաթներու սեմին
եւ կածաններու ստուերներուն մէջ
կը ճանչնանք զիրենք
—երբ մենք կը դիտենք—
ստուերներուն քոյրերէն
շարժումներուն շողերէն
եւ տենդերուն գոյներէն

Յիշողութեան կապոյտին մէջ՝
իբրեւ արծիւ առասպելի եւ գալիքի
շարժումներն այդ օտարական
ոլոր-ոլոր պար կը դառնան
ապա կ'իջնեն մեղմ ու անձայն՝
հեքիաթներու եղեամ ինչպէս
սեւեռաբիբ աչքերու մէջ
որոնք կը տեսնեն
—երբ մեզ կը դիտեն—
մեզմէ հեռուն
մեր հիւղերէն ալ հեռուն
մեր ամպացող էութենէն շատ հեռուն—
անժամանակ ժամանակը հրաշքին
որ կը բարձրանայ ծխնելոյզներէն
եւ մեր շէներէն անդին երկարող
սարալանջի կածաններէն

Շուշան մը
հեզ ու բարի
եւ նրբահիւս կածաններ
մեր սրտերէն կ'երկարին
կ'երկարին ու կ'երկարին
եւ կ'երկարեն

կեանքի գիծերն մեր մթին

Գերմանիայի Հայոց Գրադարան
Հատոր
Գերմանիա, 16 Սեպտեմբեր 1990

142-2001
20553-212
digitised by A.R.A.R.@

ՃԱՆԱՊԱՐՀ

—Ճանապա՛րհն է այս

Շրջանցեցին
կիրճ ու ձորակ
դաշտ ու կածան
զառիթափեր օձանման
բայց տակաւին
անկոխ ու կոյս ուղիներ կան՝
միշտ արգիլուած գիրքի նման
եւ միգամած հին ծառուին
—ճակատագիրն ուղեւորին—
ու ծառերու երթէն անդին՝
երազներու նոր մայրուին
եւ յոյսի չափ նիհար ու ծուռ
վտանգաւոր բայց հմայիչ
նոյն լեռնուին

—Արդեօք վերջի՞ն ճանապարհն է այս
ուր կ'արտասուեն տիւ ու գիշեր
ոտնահետքերն անհետ կորած ճամբորդներուն՝
ինչպէս մահուան կարմիր փոշին
լինելութեան ակօսներուն

Պէյրութ, 19 Սեպտեմբեր 1990

ԱՐԵՒՈՒՆ ՏԱԿ ԶՂՋՈՒՄԻ

Ան
որ յայտնուեցաւ
ակօսներուն շարակնոցէն՝
իբրեւ Մեծ Աստղ յաւերժի
եւ սաղմոսներ երգելով երազներդ արթնցուց
թռչուն
թռչուն
կապո՞յտ թռչուն
հեքիաթի եւ խորհուրդի

digitised by A.R.A.R.@

ան
որ տափաստանեց
անհուն ծով մը ամպերէն
գիշերային թափանցիկ պարեգօտիդ
եւ նաւաստիին բաճկոնին վրայ՝
կապոյտ
կապոյտ
երկնակապո՞յտ պատարագ
եւ որ մագնիսեց
ձուկեր ու ճայեր
դէպի ջուրերն առասպելի
հեռաւոր ու անծանօթ
եւ փայլատակեց
բոյրեր արեւոտ
երազ ու նարօտ
տեսիլ ու կարօտ
մեկնումի ճօճուող յոգնած ձեռքերուն
եւ սոխակներուն ու մեղուներուն արծաթ ողջերթէն՝
սրտիդ վերջնագոյն սահմանին վերեւ՝
իբրեւ խօսք վերջին

հիմա
կը չորնայ
—ինչպէս չամիչ տանիքներուն—
արեւուն տակ
զոյգումի

Պէյրութ, 25 Սեպտեմբեր 1990

Ո՞Վ ԵՍ ԴՈՒՆ

—Ո՞վ ես դուն
—Հաւատա՛ որ չեմ գիտեր

—Օրերդ ինչպէ՞ս կ'անցընես
աշնան
հողին վրայ՝ տերեւին տակ
ձմրան
հողին վրայ՝ ձիւներուն տակ
գարնան

digitised by A.R.A.R.@

Հողին վրայ՝ խոտերուն տակ
ամրան
Հողին վրայ՝ ջուրերուն տակ

Տարօրինակ
տարօրինա՞կ մարդ արարած
դուն մինչեւ ե՞րբ պիտի ապրիս
այսպէս յամառ
դիմակի տակ

Գէյրուք, 9 Հոկտեմբեր 1990

ՈՒՐԵՄՆ ԻՆՉՈ՞Ւ

Եթէ միայն կը խօսիս
փոշիներուն եւ ամպերուն լեզուով
ըսէ նաեւ շողին—ծիլին—վտակին
—շարունակեցէք բարեկամներ
գառնուկներուն զուարթ ուղին
ծիածանին կողմնացոյցով

Եթէ միայն կը խօսիս
քամիներուն եւ գետերուն լեզուով
ըսէ նաեւ վարդին—լորին—ալիքին
—ասեղնագործեցէք բարեկամներ
ստուերներուս շեշտերը հին
ժամանակին ասեղներով

Միամիտ ուղի
եթէ գետերը իսկապէս սիրահարներդ են
անհունը կապոյտ՝ յիշողութիւնդ անդաւաճան
ամպերը ճերմակ՝ սաղմոսներդդ թեւաւոր
իսկ շուշանն ալ՝ զգեստդդ հարսանեկան
ուրեմն ինչո՞ւ ողբեր կը հիւսես
լացակումած քու ոտներով՝
փոխան սիրոյ պսակի

Գէյրուք, 13 Սեպտեմբեր 1990

digitised by A.R.A.R.@

ԴԱԺԱՆ ԱՐՇԱԼՈՅՍԻ ՇՈՂԵՐ

I

Կը բարձրանան
տրոփներէն շուշանին
մետաքսաձայն շարժումներ
եւ անեզրին մէջ կը ծփան
հին կարօտներ ու ժամեր՝
տեսիլներուն անվաւեր
շշուկներուն պատանի

Անցում
մութէն նոր մութին
ցուրտ գիշերին ցուրտ բոյրին
որ գիսաւոր իր աստղին
արշալոյսին կը բացուի

Ժամն է լոյսին հայելի
որ նոր դողեր կը հալի

II

Եւ պարզեցին
շուշանները արեւուն
լռութիւնը վերծանող արշալոյսը աքլորին
սաղմոսին հետ թաց հողին
բոյրերուն մէջ անեզրի

Սարալանջի
խոկացող կապոյտ գիծէն ալ անդին
կանաչ բոցեր ամպերն ի վեր ձգուեցան
եւ կիսաքուն մեղուները արթնցան
մայր շարժումը բնութեան

Դողդողացող օդին մէջ
շուշաններուն հետ տեսար
խորհրդաւոր խաչ ու շող—
մանիշակագոյն սաղմոսներ
մանիշակագոյն ալիքներ
մանիշակագոյն ճիչեր

digitised by A.R.A.R.@

յետոյ
գիսաստղը քարացած առագաստին
լինելութեան ալեկոծ պատուհասին
եւ մութ գիրիդ դէմ բացուած՝
իբրեւ վերջնագիր գալիքի

Շշուկներն իմ դեռատի՝
չաստուածներու զայրացկոտ բիբեր ինչպէս
դեռ կը ծփան ալիքներուն յաւերժի
մենութիւնը աստղերուն
անձկութիւնը շուշանին
որ նոր դողեր կը ծաղկի

Գէյրուք, 5 Հոկտեմբեր 1990

ՎԵՐԱԴԱՐՁ

Շուշանը ըսաւ
—վաղը երբ յոգնիս
կնոջ քմայքէն եւ գարնան երգէն
տուն կը դառնաս անպայման
—ինչպէս նաւը հեքիաթի—
բեռնաւորուած Արեւելքի վարդերով
անմահական համեմներով ու լոյսով
եւ բոյրերով ովկիանի

Եւ երբ տուն դառնաս
դուն պիտի ըլլաս ժպիտ ու համբոյր
երազի զեփիւռ եւ պար ցորենի
աստղերու ցնծերգ եւ լոյսի շոյանք
սոխակներու տօն եւ խօսքի շիկնանք
—աչքերդ սիրելիս նաւահանգիստն են
ամենախաղաղ եւ միշտ մօտագոյն

Անհաւասիկ
շուշան իմ
տուն կը դառնամ
գրաւներէն աշխարհի եւ հնչտանքի ծովերէն
որ քուն մտնեմ ապահով
ինչպէս կղզին հեքիաթի՝

digitised by A.R.A.R.@

Հոգւոյս երկինքը եղող
քու քերթուածիդ
լոյսին մէջ

Պէյրութ, 29 Սեպտեմբեր 1990

ՆՄԱՆՈՒԹԻՒՆ

Բարտին
մենութիւնն է հողին
ինչպէս խիճերը՝
լռութիւնը ձեւին

Բարտին
աղաղակն է հողին
ինչպէս շողերը՝
խօսքը յաւերժին

Անխօս—խօսուն
նմանութիւն պարզապէս

Պէյրութ, 17 Օգոստոս 1990

ԽԱՉՔԱՐ

Դարեր գրկած բեկոր մը քար
դարեր երգող երիզ մը լոյս
դարեր շնչող աղօթք ու յոյզ
դարերուն դէմ՝ տեսիլ մը վառ
եւ խաչքարին կողքին ծլած
արեգակին հոգեվարքը օրօրող
օ՜ շուշան մը դողահար
մահուան նման սպիտակ
միայնակ ու սպիտակ

եւ անկրակ

Պէյրութ, 21 Սեպտեմբեր 1990

digitised by A.R.A.R.@

ԱՇՆԱՆԱՅԻՆ ՊԱՏԿԵՐ

Տերեւները
եւ աստղերը
հողին վրայ միշտ կը հանգչին
այգեկութքի քրտինքէն ետք բազմաբուրեան
եւ նոր ծիլեր կը շնչշնկան

Խաղողները
եւ երգերը
կարասներու մէջ կը թաղուին
այգեկութքի քրտինքէն ետք բազմաբուրեան
եւ արեւներ կը համովնան

Ծուշանները
եւ միրգերը
աչքերու մէջ լոյս կը դողան
այգեկութքի քրտինքէն ետք բազմաբուրեան
եւ նոր սէրեր կը լիանան

Սոխակները
եւ հասկերը
սրտերու մէջ սիրտ կը դառնան
այգեկութքի քրտինքէն ետք բազմաբուրեան
եւ բիւր շարժում կը պսպղան

Հին գիծերը
եւ դէմքերը
ափերու մէջ երազ կ'ըլլան
այգեկութքի կրակներէն ետք խենթութեան
եւ նոր կեանքեր կը լղանան

Իսկ հողերը
հեզ ու խոնարհ
նոյն հողերը բազմաչարչար
այգեկութքի կրակներէն ետք անպայման
միայն հողին հողերուն մէջ կը քնանան
եւ հրաշքներ կ'անմահանան

Պէյրութ, 11 Հոկտեմբեր 1990

digitised by A.R.A.R.@

ԳՐԿԵՑ ՔԵԶ ԳԻՇԵՐԸ ՀՐԱԺԵՇՏԻ ԵՒ ՄԱՆԱՊԱՐՀԸ ԳՏԱՐ

I

Լայն կը բանայ
թեւերը վերջին առաւօտին
եւ կը մեկնի բուրմունքին հետ սոխակներուն
իր ապառնի արշալոյսին

(Ի՜նչ բոյր
քողարկուած
ժպիտիդ մէջ սպիտակ
կը գծէ թեւաճարումը զեփիւռին
երբ սոխակները կը համրեն
ճառագայթներն իրենց)

II

Դեռ ծանօթ չէ
իր շողերուն եւ շաղերուն
շնորհաբաշխ խորհուրդներուն
բայց կը բուրէ երջանիկ
անհունը խօսքին

(Ո՞վ կ'օշինդրէ
անձրեւները լիութեան
սրտին մէջ շուշանին՝
ինչպէս գանձ
երկնային)

III

Կը շարժի
լոյսին նման
որ վերծանէ գաղտնիքը բոյրին

(Ո՞վ կ'ամբարէ
բոյրերը աստղերուն

digitised by A.R.A.R.@

սպիտակ արեան մէջ շուշանին
եւ կը լուէ
լռութիւնը
արեւին)

IV

Կը խօսի հաստատ
աստղերու յայտնութիւնը աւետող
սակաւախօս բայց արդար մարգարէին նման
որ իմաստութեան մայր աղբիւրը կը գտնէ
երկար փնտռտուքէ ետք
որպէսզի մոռնայ

(Ով
արդեօք ո՛վ
կը կենայ իր կողքին
եւ չի տեսներ այլակերպումը լոյսին

ով
արդեօք ո՞վ
կը հեռանայ շուշանէն
եւ չի լսեր քայքայումը իր սրտին)

V

Ամէն անգամ
որ հովը կը սրսփայ
իր անդամներուն շարժումէն
ձեռքը կ'երկարէ զմրուխտ ծառերուն
եւ վար կը քաշէ շղարշները լոյսին՝
իբրեւ վարագոյրը խօսքին

(Ով
ըսէք ո՞վ
կը շոյէ հայեացքները շուշանին
եւ չի մոռնար մատներն իր
ծէսերուն մէջ կրակին)

digitised by A.R.A.R.@

VI

Որովհետեւ
սահմանները միայն իրեն կը մերձենան
կը թռչի խորհուրդներու անտառին
վերջին փշալարին վրայէն
դէպի
արշալոյսը վերջին
վերջին խօսքին

(Ով
արդեօք ո՛վ
կը ժամանէ շուշանին
օդէն առաջ
ճերմակ
ճերմակ
արիւն
ծորող)

VII

Երբ բոլոր ծաղկաթերթերը
երկինքն ի վեր բարձրացան
«այս ի՞նչ պայծառութիւն» շատրուանեց
տօնահանդէս շուշանը թափանցիկ՝
ինչպէս արձագանգը լոյսին
եւ
անէացաւ

(Ո՞ր մահը
կը ցնցէ շրթները շողին
խօսքէն առաջ)

VIII

Գրկեց քեզ
գիշերը հրաժեշտի

digitised by A.R.A.R.@

երբ ժամերը եղան
սպիտակ սահման

(Բոյրը պահեց
իր աչքերը լուսացող
որ քեզ տեսնէ

շողը պահեց
իր մատները միացող
որ քեզ գծէ)

IX

Ցաղթելով դանդաղութիւնը մահուան
առաջին կէտէն
առաջին կէտին
խաւարը ջնջեց հայելիները ջուրին
որ նոր ծիլը առաջնորդէ
քեզ քու արեան
արշալոյսին

(Ո՞վ
արդեօք ո՛վ
ոտոգեց տափաստանները մահուան
անապատէն ալ առաջ
որ հրդեհն այս անկրակ
ամբողջանայ
լիանայ)

X

Պայծառ շուշանը լոյսին
միութիւնն է իր մարմնին
պայծառ շուշանը բոյրին
անվերջ խօսքն է կրակին

(Ո՛վ
արդեօք ո՞վ
կը քնանայ

digitised by A.R.A.R.@

քեզի՛ պէս
եւ կը հսկէ
անշարժութիւնը մահուան)

XI

Վերադարձար յաղթական
երբ աստղերը հողին վրայ
թփրտացին կանաչ խօսքերն արեւին

վերադարձար յաղթական
երբ աստղերը հողին վրայ
արմատացան ոսկի միրգերն արիւնին
հասար արցունքիդ առաջին շողին
եղար հրաշքի մայրերակ վարար
եւ
ճանապարհը գտար

Գէյրուք, 23 Սեպտեմբեր 1990

ՍՊԻՏԱԿ ՊԱՏԱՐԱԳ

I

Կը փակէ
հորիզոնները արշալոյսին
եւ կը վերադառնայ
իր արշալոյսի
առաջին
շողին

(Ի՜նչ բլբուլ հազարան
կը բանայ անհունը բոյրիդ
երբ անտառը կ'ամփոփես
ծպիտիդ մէջ սպիտակ)

digitised by A.R.A.R.@

Ջուարթունի մը նման
անշշուկ եւ անձնամոռ
կը պատրաստուի իր օծումին
եւ տեսիլին կոյս աստղերէն
կաթնասպիտակ շարականներ կը բուրէ

II

Որովհետեւ
ասուպներն ու սահմանները
իր ուղղութեամբ կը շարժին
ճանապարհ հարթող Վահագնին նման
վեր խոյացաւ արծուաթեւ
մորմոքներու մառախլապատ դաշտերէն
դէպի վերջին վերջին անհունը լեզուին

(Ո՞վ
արդեօք ո՞վ
կը բարձրացնէ
քար լռութիւնն իր արեան
լինելութեան իբրեւ նշան՝
ինչպէս տերեւ

ո՞վ
ըսէք ո՛վ
միշտ կը յաղթէ իր մարմինին
իր անունին ու երազին
եւ կը վազէ օդէն արագ՝
ինչպէս արեւ
արիւն
կ
ա
թ
ո
ղ
)

Ծուշանը հեզ
ինքնամոռաց պատարագիչ
զոհ—զոհաբերն է լոյսին
առեղծուածին
իր երգին

digitised by A.R.A.R.@

III

«Առաւօտ լուսոյ
արեգակն արդար
առ իս լոյս ծագեա՛»

եւ ծագէ արեւ
երազ ու տերեւ
նշխար գոյութեան
ժպիտ արբեցման
բուրվառներ բանի
եւ խորհուրդ վերին
վտիտ շուշանին շողին մէջ նորին
դարեր խնկարկող շշուկին մէջ հին
բոյրին մէջ հողին
դողին մէջ վերջին
եւ վերջին
վերջին...

Ըսաւ
—այս ի՞նչ ջինջութիւն
երբ բոլոր սոխակները եղան երկինք
եւ չվերադարձան

ըսաւ
—ի՞նչ մահ կը ցնցէ
շուրթերը լաստիկին
խօսքէն առաջ

ըսաւ
—ի՞նչ լոյս կը ցողուէ
բիբերը մանուկին
տեսիլէն անդին

Ծոյեց գինք
լուսապատարագը խօսքին
եւ վէրքերն իր եղան
կաթնասպիտակ
հանգած կրակ

digitised by A.R.A.R.@

IV

Շուշանը
վերք մշտաբաց
մեր օրերուն մխացող

Շուշանը
լոյս է եւ դող
մեր սէրերուն սաւառնող

Շուշանը
երգն է վերջին
երբ երկինքի աստեղափայլ վերքերէն
կ'իյնան հողին անհաշիւ
բիւր պտուղներ տենդահար
—օ՜ աստղերը մեր սրտին—
կ'ընդելուզուին ճզովեալ կարմիր հողին
եւ կ'արթննան մեր մարմինէն վերջնական՝
շարժում իբրեւ
շուշան իբրեւ
արեւ իբրեւ
եւ
կը մնա՛ն

Պէյրութ, 29 Հոկտեմբեր 1990

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Գ. ԱԲԻԼԵԱՆ



ՊԷՅՐՈՒԹ

ԱՌԱՆՁԻՆՍ ՊԷՅՐՈՒԹԻ ՄԷՋ

Պէյրութէն վերադարձէս ետք, դոնէ դեռ չաբաթ մը կը զգայի ձեռքիս ցաւը։ Մայրս բաց չէր ձգեր զայն, հակառակ անոր, որ արդէն 14 գարուններ բոլորած էի։ Անշուշտ, մանկական նախկին երազանքը չէր մնացած, բայց եւ այնպէս կը կարօտնայի այդ քաղաքին։ Ե՞րբ կրկին պիտի տեսնէի զայն։ Ի՞նչ առիթ պիտի ըստեղծուէր, որպէսզի կարենայի երթալ հոն։ Դիւրին չէր երթալը։

Նոյն գարնան աւարտեցի դպրոցը, 8րդ դասարանէն։ Որքա՛ն երջանիկ էի։ Որքա՛ն ծափահարեցին զիս. առաջին անգամ ըլլալով սերթիֆիքայի քննութեանց մասնակցած էր մեր շրջանը։ Հակառակ յուսահատութեանց, Քեսապէն եղած էի միակ յաջողողը։ Ի՛նչ երջանկութիւն։ Յաջողութեան լոյսին տակ, ծնողներս որոշեցին Լաթաքիա դպրոց ղրկել զիս։ Կը կարծէի, որ մեծ, չա՛տ մեծ նուաճում մըն էր այդ սերթիֆիքան, բայց եկուր տես, որ քաղաքին մէջ շատ ալ նկատի չէր առնուեր։ Այնքան շատ էին հոն յաջողողները։ Դեռ կար կեցութեան հարցը։ Չէ՛, անկարելի պիտի ըլլար ուսանիլ։ Արդէն մեծ սէր ունէի արհեստներու հանդէպ։ Փոքր տարիքիս, երբ մայրս զիս փնտռելու ըլլար, ականջ կու տար, թէ ուր կ'աշխատէր վարպետ մը, անոր մուրճին ձայնին հաւատալով հոն կ'ուղղուէր եւ գրեթէ զիս հոն կը գտնէր։ Ի՞նչ կ'ըլլար, եթէ հիմա արհեստի հետեւէի։

—Ամօթ չէ՞, տղաս, դուն սերթիֆիքա ունիս. պէտք է որ դըպրոց երթաս։

Հայրս նոյնիսկ կ'երազէր զիս սպայից վարժարանին մէջ տեսնել։ Ջեղաւ։ Պէտք էր պաքալորիան, որ կ'ենթադրէր 5-6 տարիներու ուսում։ Լաթաքիոյ մէջ կարելի չէր այդ մէկը. մեր ընտանիքին նիւթական միջոցները այնքան նեղ էին այդ օրերուն։

digitised by A.R.A.R.@

Աչնանամուտ էր այլեւս. ընելիքս չէի գիտեր։ Օր մը դասընկերս յայտնեց, որ ինք Այնճար պիտի երթայ ուսանելու։ Հոն ամերիկացի մայրապետներ դպրոց բացած էին։ Գիշերօթիկ պիտի ըլլար։

Այնճա՜՜ր։ Ես լաւ չէի տպաւորուած այդ տեղէն։ Այդ ի՛նչ խեղճուկրակ բան էր։ Քանի մը ամիս առաջ անցեր էի անոր քովէն. խեղճուկրակ լապտերներու լոյսը վատ աղդեցութիւն ձգած էր վրաս։ Չէի ուզեր երթալ հոն, բայց ի՞նչ կարելի էր ընել։ Անճարը կ'ուտէր բանջարը։

Ես ալ յանձնարարական մը առի պատուելի-տնօրէնէն։ Հայրս յաջողեցաւ 150 սուրիական ոսկի պարտք առնել իր մէկ ծանօթէն ու ճամբայ ինկայ դէպի Պէյրութ, անկէ Այնճար երթալու համար։

Ե՞ս. առանձինս Պէյրո՛ւթ երթալի։ Սա ի՞նչ երազ էր։ Չէի հաւատար ըլլալիքին։ Այնճար չէի ուզեր երթալ, թէեւ հիմա որոշ չափով համոզուած էի, բայց Պէյրութէն անցնելու դաղափարը թեւեր կու տար ինծի։

Օրերը առաջ սկսած էին պատուէրները։

–Երբ ճամբան պիտի կտրես-անցնես, ուշադրութիւն ըրէ, տղա՛։ Օթոյի մը տակը չմնաս։

–Գողերէն ուշադրութիւն ըրէ։ Դրամդ ներսի գրպանիդ մէջ լաւ ապահովէ։ Գնդասեղով գրպանդ ամրացնել չմոռնաս։

–Օթէլ Լիւքս իջիր։ Կարաժէն բեռնակիր մը առ։ Կարաժին բեռնակիրները ապահով կ'ըլլան։ Դուրսէն չառնես բեռնակիրը։

–Բեռնակիրը առջեւէդ թող քալէ. եթէ դուն առջեւէն քալես, ինք բեռներդ առած՝ կը փախչի։

–Եթէ թրամվայ ելլես, ուշադրութիւն ըրէ. տակը չիյնաս։

–Ճամբէն որ անցնիս, ուշադիր···

Այդ քանի մը օրերու անընդմէջ եւ հօրս եւ մօրս փոխասաց քարոզները բարդոյթ ստեղծած էին մէջս։ Ուրախ էի, որ Պէյրութ պիտի երթայի, բայց նաեւ կը վախնայի։

–Նահարի կողմերը չերթաս. հոն զաղրանները շատ են, գլուխդ փորձանք կը բերեն։

–Բոլշեւիկներուն թաղերը չմտնես···

Փորձանք բան եղած էր սա Պէյրութը···

Վերջապէս ճամբայ ելայ։ Մինչեւ ինքնաշարժին քալելը պատուէրները կը շարունակուէին։ Քալեց ինքնաշարժը։ Ետեւ մնացին ծնողներս եւ քոյրս։ Ցուզումէն կու լայի։ Բայց վերջ ի վերջոյ ատոր ալ պիտի յաղթահարէի։ Պէյրութ կ'երթայի. քի՞չ բան էր։

Հասայ Պէյրութ։ Օ՛, որքա՜ն լաւ էր։ Հիմա պիտի չափէի փողոցները, երկու ձեռքերս ազատ. բայց միեւնոյն ատեն քանի՛ կը մօտենայի իմ երազներուս քաղաքին, ա՛յնքան կ'աւելնար անհանգըստութիւնս։ Ինչպէ՞ս պիտի կարենայի դլուխ հանել ամէն բան։ Պէտք էր երթալ մեր Գժօ խնամիենց։ Պէտք էր Պէյրութէն նոր յանձնարարական առնել։ Այդպէս ըսուած էր մեզի։

digitised by A.R.A.R.@

Կարաժ իջնելով դիմեցի սմսարին։ Սա, քիւրտ մը, որ Ահմատս կը կոչուէր, կը ճանչնար հայրս։ Երբ անոր անունը տուի, անմիջապէս ինծի ներկայացուց բեռնակիր մը։ Սա գլխուն վրայ վերցուց անկողնիս հակը. վերցուց նաեւ վալիզս եւ քալեց։ Միշտ ետեւ կը մնայի, որպէսզի չփախչէր՝ իմ բոլոր ունեցուածքովս։ Գացինք Օթէլ Լիւքս, որ կարաժէն շատ ալ հեռու չէր։ Առաջին ձախողութիւնս արձանագրուեցաւ։ Վերելակով վար իջած սպասեակը յայտնեց, որ տեղ չկար հոն։ Թելադրեց Փանսիոն Աննա երթալ։ Դիմացն էր. ինք պիտի հեռաձայնէր։

Ճարահատ հոն գացի։ Հազիւ տեղաւորուած եւ բաներ մը կերած, վար իջայ։ Կօշիկս ներկել տուի։ Ապա ուղիղ վեր ուղղուեցայ. որոշ չափով ծանօթ էի այդ տեղին։ Քիչ մը վերն էր խորհրդարանի շէնքը։ Անկէ աւելի վեր Ս. Նշան եկեղեցին էր, աւելի անդին՝ հայ սափրիչի մը խանութը։ Սափրիչի խանութէն քիչ մը ձախ երթալէ ետք, կը դառնայիր եւ կը հասնէիր խնամի Գժոյենց։ Անկիւնի վրայ տեսայ պեխաւոր, տիշտաշէ հագած, ֆէսաւոր խանութպանը, որուն խանութէն ելած սուրճի բոյրը կը գինովցնէր զիս։ Օ՛, այդ լաւ նշան էր. չէի կորսուած ուրեմն։ Քիչ մըն ալ վար. ահաւասիկ խնամիենց բակը։ Վերջապէ՛ս։

—Մ՞ուր իջած ես... Փանսիոն Աննա՞, օթէ՞լ։ Ջնո՞ս ամչնար։

—Ինչպէ՞ս չալկէի այդքան բան։

—Հիմա կ՚երթանք ու կը բերենք առարկաներդ։

—Կարելի չէ, երկու օրուան վարձքը վճարած եմ։

—Լաւ, յետոյ հոս կու գաս։ Ամօթ չէ՞։

Ամօթ ըլլալը ամօթ էր թերեւս, բայց եւ այնպէս նաեւ կար գիւղացիի հպարտութիւնը։ Ի՞նչ ըսել էր ուրիշին, թէկուզ եւ խնամիի տունը երթալ ու մնալ։

Յաջորդ օրն իսկ մեր խնամիենց Մարոն, որ ուսուցչուհի պիտի ըլլար Այնճարի մէջ — օ՛խ, ի՞նչ լաւ բան — տարաւ զիս պատուելի Հատիտեանին։ Քեսապէն բերած նամակս կարդալէս ետք, ան թելադրեց երեկոյեան վերադառնալ, յանձնարարական նամակը առնելու համար։ Ամէն բան լաւ կ՚ընթանար։ Նոյն երեկոյեան նամակ-յանձնարարականը առինք։ Յաջորդ օր Այնճար պիտի երթայինք։

Յաջորդ առաւօտ կանուխ եկաւ պատուելիին տնտեսը։ Յայտնեց, որ անպայման պէտք է հանդիպիլ պատուելի Հատիտեանին։ Հիմա արդէն սորված էի. գիտէի, թէ որ հանրակառքը պիտի առնէի եւ ուր պիտի իջնէի։ Գացի։

Պատուելին յանձնարարականը ետ առաւ։ Յայտնեց, որ ինք որոշած էր հոդ, Նոր Մարաշի մէջ, գիշերօթիկ մը բանալ մեզի համար։ Ընկերոջս ալ յանձնարարական նամակը առած էր։ Սա նորութիւն էր։

Ե՞րբ որոշած էր գիշերօթիկ բանալ. մէկ գիշերուան մէջ ի՞նչ պատահած էր։ Ո՛չ, մենք ամերիկացի մայրապետներուն քով պիտի

digitised by A.R.A.R.@

երթայինք։ Ամբողջ շաբաթ մը գացինք ու եկանք։ Մեզ նկատի իսկ չէր առներ։

—Հոս լաւ կ'ըլլաք, ես ձեզի մեծ դիւրութիւններ կը ստեղծեմ։ Ի՞նչ պիտի ընէք Այնճար։

Հաճելի բան չէր սա։ Ի՞նչ ընել սակայն։ Պէտք էր սպասել եւ գլուխ ցուցնել։ Միջնորդներն ալ չկրցան համոզել պատուելին, որ Քեսապէն բերած մեր յանձնարարականները պահած էր քովը։

Մինչ այդ, ես կը թափառէի Պէյրութի մէջ։ Հիմա Պուրճը բաւական մոերմացած էր ինծի։ Հասած էի նաեւ նաւահանդիստ։ Տարիներ առաջ միայն կայմեր տեսած էի։ Անկէ անդին, ինչ որ դաղափար ունէի նաւ ըսուած բանին մասին, առաւելաբար նկարներէ հաւաքուած էր։ Հիմա կը տեսնէի նաւեր, փոքր նաւեր, սակայն ինծի համար մեծ էին անոնք։ Աւելի հեռուն կային մեծ նաւեր։ Եւ ի՜նչ եռուզեռ էր այդ։ Մանրաբարձ հսկայ մեքենաներ բեռ կ'իջեցնէին եւ բեռ կը բեռցնէին։ Բեռնակիրներ, վաճառորդներ, շարժավարներ, շոգեկառքի կառքեր... որքա՜ն շարժում կար հոն։ Հիմա այլեւս առեղծուած չէր «Հարանեւոր» շոգեկառքը։ Կը տեսնէի զայն. հոն էր վայրաշարժը, հոն էին սեւ կառքերը։ Հիմա այլեւս հարսնիք չէր շոգեկառքին ճչակին ձայնը...

Առաջին անգամ ըլլալով ծանօթացայ միսէ պատրաստուած անծանօթ ուտելիքի մը, որ կրակին շուրջ, մեծ ձողի մը վրայ կը դառնար։ Համին ծանօթանալէս բաւական ետք էր, որ պիտի իմանայի անոր անունը՝ շաուրմա։ Քոքա քոլային եւ այլ հընկերներու հետ բաւական լայն մտերմութիւն հաստատեցի։ Տակաւին Մէրի քրէմ, Ֆելէֆիլ եւ ինչե՜ր...։ Չէ՛, եթէ պատուելի Հատիտեանին յանձնարարականը ուշանար, բոլոր դրամս պիտի ծախսէի, առանց դպրոցի երես տեսնելու։

Մեր կողմէ բաւական անտարբերութիւն ընելէ ետք, վերջապէս տիրացանք այդ շրջաթիւ յանձնարարականին։ Ուղղուեցանք Այնճար. սա Ապու Ֆառուազին պասն էր, որ ատկէ ետք զիս յաճախ պիտի փոխադրէր Պէյրութէն Այնճար եւ հակառակը։ Դարձեալ Ալէյ, Պըհամտուն, Սոֆար, Տահր էլ-Պայտար, Շթորա շղթան։ Ուղիղ ինը ամիս առաջ անցած էի այդ ճամբէն։ Հիմա, երկրորդ անցնելուս, արդէն ցերեկ էր. կրնայի տեսնել այս նշանաւոր հովոցներուն գեղանկարները...։ Չէ՛, անուշիկ էին ասոնք։ Ցետոյ, նաեւ եռուզեռ կար. տակաւին մարդիկ կը յամենային իրենց ամառնային առուներուն մէջ։

Վերջապէս, Ապու Ֆառուազին պասը հասաւ Այնճարի մուտքը։ Մայր գիծէն հեռու չէր. մէկ քիլոմեթր միայն։ Գնաց, գնաց, ապա կանգ առաւ տեղ մը։ Լսած էի, որ Այնճարի տունները կը բաղկանային մէկական քառակուսի սենեակէ եւ փոքր բաղնիքէ մը։ Բայց չէի կրնար երեւակայել այդքան մեծ թիւով սենեակներ եւ ասոնց կողքին մէկական փոքր քառակուսի։ Չէ՛, սա ըլլալիք չէր։ Հոս

digitised by A.R.A.R.@

ապրուելիք տեղ չէր. պէտք էր տարի առաջ, նոյնիսկ օր առաջ ա-զատիլ այս քառակուսիէն...։ Ինչ որ է. երեք կամ չորս տարիէն պիտի աւարտէի եւ մէյ մըն ալ ուրկէ պիտի տեսնէի ես այս Այն-ճար ըսուած տեղը...

Առաջնորդուեցանք տուն մը, որ զարմանալիօրէն տարբեր էր միւսներէն։ Սա երկյարկ խոշոր տուն մըն էր։ Դուռին բացուելուն հետ յայտնուեցաւ տարօրինակ զգեստով կին մը, տարօրինակ գլխար-կով։ Մեզի ըսուած էր, որ ամերիկացի մայրապետներ էին ասոնք։ Հազիւ բարեւած՝ երկարեցինք մեր յանձնարարական նամակները։ Կինը չփոթեցաւ պահ մը։ Մենք ալ չփոթեցանք։ Կը կարծէինք, որ ամէն բան կարգադրուած էր, իսկ թէ ո՞վ պիտի ըլլար կարգադրողը, մենք ալ չէինք գիտեր։

–Եա, պաղոննեղ, դուք ինչո՞ւ եկաք հիմա,– հարց տուաւ կինը։

–Մենք աշակերտ ենք,– կրկնեցինք միաբերան դասընկերս, ես եւ Պէյրութէն մեզի ընկերացած փոքր տղեկ մը։

–Շուէսթղ Մաղի Խոմ,– ձայնեց կինը։

Սա ի՞նչ անգլերէն էր։ Յետոյ ի յայտ պիտի գար, որ եղածը ո՛չ թէ անգլերէն, այլ գերմաներէն էր։

Երկու կիները բացին նամակները. կարդացին, բաւական դան-դաղութեամբ։ Համբերութեամբ սպասեցինք դրան առջեւ։

–Եա, հիմա մենք տեղ չունինք, պաղոննեղը...։ Եա, եա, բայց նեղս անցէք։

Եւ երկու կիները մեզի կը նայէին ու կը խնդային։

–Մենք եկած ենք Քեսապէն, աշակերտ պիտի ըլլանք։ Գիշերօթիկ պիտի ըլլանք։

–Եա, բայց մենք լուղ չունինք։ Ի՞նչ պիտի ընենք հիմա Շուէս-թըղ Մաղի...

–Եա, Շուէսթղ Հեսվիկ, ես ալ չեմ գիտեղ. բան մը պիտի ը-ննենք Մաղի...

–Եա, Շուէսթղ Հեսուիկ, ես ալ չեմ գիտեղ. բան մը պիտի ընենք սակայն։

Շունչ մը առինք։ Ուրեմն բան մը պիտի կարգադրուէր։ Թէեւ, ներքնապէս, կ'ուզէի, որ բա՛ն մըն ալ չկարգադրուէր, որպէսզի ետ տուն դառնայի. կարօտցած էի ծնողներուս, քրոջս, պարտէ-զին...։ Թերին եւ խաղող հրամցուցին մեզի։ Համով էր համով ը-լլալը, բայց մեր պարտէզի խաղողը որքան տարբեր էր հիմա։ Այգե-կութեան ժամանակն էր։ Եթէ հոն մնացած ըլլայի, կապիկի պէս սա թթենիէն միւս թթենիին վրայ կ'ըլլայի՝ քաղելու համար։ Ապա խոշոր հնձանին մէջ պիտի կոխկռտէի խաղողի գէզերը, հիւթը ստանալու եւ ուրպ եփելու համար։ Հիմա ի՞նչ կ'ընէին հայրս ու մայրս. մա՛նաւանդ ի՞նչ կ'ընէր քոյրս, որ միայն հինգ տարեկան կար։ Զէ՛, լաւ յուզուած էի։ Պէյրութի եռուզեռին մէջ այնքան ալ

digitised by A.R.A.R.@

չէի յիշեր ծնողներս, տունը, պարտէզը, որսի թռչունները։ Հոս, այս գիւղին մէջ, բոլորն ալ աչքիս առջեւ կը տողանցէին եւ կը թրջէին զանոնք։

Կարգադրուեցաւ, որ քանի մը օր մնայինք տիկին Սաթենիկին տունը. սա մայրապետներուն խոհարարուհին էր։ Ցեսոյ մնայուն տեղ պիտի կարգադրուէր մեզի համար։ Դուրս եկաւ, որ գիշերօթիկի չէնք չկար։ Սա ի՞նչ դպրոց էր, եթէ գիշերօթիկ չէնք չկար։ Նաեւ դուրս եկաւ, որ մենք առաջին գիշերօթիկներն էինք. բոլոր գիշերօթիկները, աղջիկ եւ տղայ, ընդամէնը 15 հոգի էին։

Շիտակն ըսելով՝ ես յուսախաբ էի։ Եթէ գիշերօթիկ չէնք չկար, ի՞նչ պիտի ըլլար հապա դպրոցը։ Յաջորդ առաւօտ պիտի տեսնէինք զայն։ Գիշերը անցաւ։ Առաւօտուն դուրս ելայ։ Սա ի՞նչ բան էր. մեր գիւղին մէջ արեւելքն ու արեւմուտքը այնքան յստակ էին։ Հոս բան յայտնի չէր։ Փորձեցի մեզ հիւրընկալող տիկին Սաթենիկին տունէն հեռանալ քիչ մը։ Մեղա՛յ Տէր, բոլոր տունները եւ փողոցները նոյնն էին։ Շատ չհեռացայ։ Չէ՛, սա Այնճարը ապրելիք տեղ չէր։ Ապագային, երբ Ծանօթանալի Եղուրդ Պօյաճեանի գործերուն, պիտի հաստատէի, որ նաեւ այնճարցիք շատ չէին հաւներ իրենց գիւղը։ Պօյաճեան իր մէկ պատմուածքը կը սկսէր «Այնճար դէշ տեղ մըն է. հիմնուած՝ դէշ թուականի մը...»։ Որքա՛ն կը համակրէի այնճարցի սա գրողին...

Գացինք նախաճաշի. դէշ չէր. հինգ աղջիկ, տասը տղայ։ Տղաքը, տարիքի տեսակէտով շատ. աններդաշնակ էին։ Մեծ ու փոքր, խառնուն էին։ Աղջիկները աւելի ներդաշնակ էին. գրեթէ բոլորն ալ նոյն տարիքի։ Նախաճաշը դէշ չէր։ Բարեւիլ մը սա կիներուն։ Ապա գացինք դպրոց. օ՛, ինչ աքանչելի դպրոց։ Նորաշէն եւ լուսաւոր դասարաններ, քով քովի շարուած...։ Չէ՛, այնքան ալ դէշ չէր։ Բայց ինչ ալ ըլլար, եթէ կարենայի, միայն մէկ տարի պիտի մնայի հոն։ Թող Պէյրութ մնացած ըլլայինք, պատուելի Հատիտեանին մօտ. ի՞նչ կ'ըլլար։

(Շար. 4) ԳԷՈՐԳ ԱԲԷԼԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՎԱՐԱՆԴ

ՅԱՃԱԽ ԵՆՔ ԿԵԱՆՔՈՒՄ

Յաճախ ենք կեանքում հարց տալիս մենք մեզ՝
Սակա՞ւ են նրանք, որոնց սիրեցի...
Իսկ պատասխանը մշուշում է հէք
Ինչ-որ քնքշանքով մեղմ ու կանացի...

Միրել ենք քանի՜-քանի՜ անգամներ,
Միրուել ենք որքան եւ ում, ո՛ւմ կողմից.
Այդ չգիտէք դուք, այդ չգիտեմ ես,
Չի գաղտնիքին եմ միշտ էլ կողմնակից։

Դա լա՞ւ է, թէ՞ վատ, սէր-ը՝ չգիտենք,
Իսկ ատելութիւնն ցուցնում է իրեն.
Դրա համար էլ մի քիչ խեղճ ենք, հէք,
Սպասում ենք, որ մեզ մի կարգին սիրեն...

Սպասում ենք, սակայն... սիրում են արդէն
Ինչ-որ անկիւնից ջերմ ու անծանօթ.
Իսկ մենք չգիտենք այդ սիրոյ հասցէն
Ու թափառում ենք ուրիշ շէնքի մօտ։

Թափառում ենք միշտ ու համոզւում հեզ,
Որ մի օր սէրը դուռն իր կը բացի.
Սակաւ ենք կեանքում հարց տալիս մենք մեզ՝
Շա՞տ էին նրանք, որոնց սիրեցի...

ՉԻ ՀՐԱՎԱՌ, ՉԻ ՍԻՐԱՀԱՐ...

Տարիների ահագնումը թողած մէկդի,
Մոռանալով ահ ու սարսափ, ե՛ւ ոխ, ե՛ւ քէն,
Առնելով նոր երազի գոյն եւ նոր ոգի,
Պատանու պէս, նրա՛ նման սիրահա՛ր եմ նորից արդէն...

digitised by A.R.A.R.@

Որքան թուխպ էր կուտակուել ժէռ հոգուս վրայ,
Որքան մրուր՝ սրտիս գաւթի տակ-յատակին.
Որքան մուր էր «ախ-ս» դաղել կրծքիս վրայ,
Որքան մշուշ առել կեանքիս փակ-ապակին։

Որքան հուր էր շաղել վրաս երկինքը շէկ,
Որքան ջուր էր մաղել վրաս երկինքը մուգ.
Որքան գոյն էր թաղել վրաս սեւ աչքը սէգ,
Որքան արիւն ցօղել վրաս խենթ վարդը մութ...

Որքան մութ էր պլլուել աստղիս փայլ-հմայքին,
Որքան «սուտ» էր փայլել մտքիս դաշոյնին մերկ.
Որքան գութ էր խորտակուել խեւ մի յորձանքի...
Որքան-կարկուտ փակել կեանքիս կածանը լերկ...

Հիմա այնպէս մաքրուելով - արցունքի պէս -
Հիմա այնքան ներողամիտ, այնքան անքէն.
Սահում եմ դէպ՝ կեանքի դաշտը, գարունքի պէս,
Չի հրավառ, չի սիրահար պատանի՞ եմ նորից արդէն...

*
* *

Անրջաբոյս ծաղկունքով վերացայ այս իրիկուն,
Անրջակոյս պատկերդ ինձ թախիծով կանչեց տուն.
Անջրայոյս քայլուածքով մօտեցայ իմ անկողնուն,
Անրջախոյզ նայուածքով փակեցի աչքս դողուն,
Անրջասոյզ նաւակս խորք ջրերում էր լողում,
Անրջախոյս իմ փերի, քեզ չգտայ իմ ուղում...
Անրջալոյս մերկութիւնդ վշտիս ամպն էր սքողում,
Անրջայոյզ արթնացայ, դրսում անձրեւ էր տեղում...

Թեհրան ՎԱՐԱՆԴ

digitised by A.R.A.R.@

Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ

ՏԵՆԴԵՐ

X

Այսօր ան մեկնեցաւ։ Մեկնելէ առաջ՝ հակառակ որ վշտացած էր ինձմէ, անարժէք իրի մը պէս, առանց մեծ կարեւորութիւն ընծայելու տուածին ու խոնարհութեամբ մը՝ որ հակառակ պաղարիւն մնալու ամբողջ նիգիս, յուզեց զիս, գեղեցիկ նուէր մը տուաւ ինծի։ Խոստացաւ նաեւ, որ երկարօրէն պիտի գրէ, տուն հասածին պէս։ Լուսանկար մը պիտի ղրկէ՝ պատանութիւնը յիշեցնող։ Ու դուն ալ պիտի պատասխանես ինձ, կ'ըսէր ազնիւ ձայնով մը, մինչ ես լուռ կը նայէի աղուոր աչքերուն ու կը վախնայի, որ հոգիս կը տկարանար։

-Մեր երկրին մէջ խենթ եւ կապոյտ ջուրեր կան,- կ'ըսէր,- ինչպէս քեզ պատմած եմ, ու բարձրահասակ ծառեր, որ տխրութեամբ կ'օրօրեն իրենց գլուխները, ջրեզերքներուն վրայ։ Մեր տղաքը պացիկ են, պայծառ ու մաքուր աչքերով։ Ու հակառակ որ գեղեցիկ են՝ քեզ չեմ փոխեր, անոնցմէ ո՛չ մէկուն հետ։ Զորս ամիս ձիւն կայ մեր տուներուն վրայ, անպարագիծ տարածութեամբ, սպիտակ լռութեամբ ձիւն, անհալ ձիւն։ Մեր երկրին մէջ լրջութիւնը օրէնք է,- կ'ըսէր,- անուշ ու տենդոտ աչքերը յառած աչքերուս։ Բոլորս ալ լրջութեամբ կ'ապրինք ու լրջութեամբ կը սիրենք, ասիկա շատ կարեւոր է, կը հասկնաս, չէ՞...

Ո՛չ մէկ բան ալ հասկնալ չէի ուզեր այդ վայրկեանին ու բնաւ ալ զիս չէր հետաքրքրեր, թէ իրենց երկրին մէջ ի՞նչ կայ։ Հակառակ որ կ'ուզէի ցուրտ, դեգ, անտարբեր տղայ մը մնալ մինչեւ վերջը՝ կարեւորը, կը զգայի, որ իր ներկայութիւնն էր։ Լաւ, խենթ ու նաեւ շատ լուրջ բնաւորութեամբ, ոսկեհնչուն դրամի պէս գուտ ու մաքուր աղջիկ մըն էր։ Իր ներկայութեան, սկիզբները, անընդհատ կը յիշեցնէի ինքզինքիս, թէ կեանքը

digitised by A.R.A.R.@

պէտք է անկեղծութեամբ ապրիլ, կեղծ դրամի պէս սուտ չհնչել ու արարքներէս այնպէս ընել, որ ամօթ չզգամ:

Անգամ մը՝ առաւօտեան երեքին, զինքը կ'առաջնորդէի իր սենեակը: Պանդոկին դրան առջեւ կեցանք: Երկուքս ալ թեթեւ-բէն կը սրսփայինք: Փողոցը լուռ էր, մութ: Կարծես թէ մեծ, յղի ամպեր կ'իյնային սալայատակին վրայ: Ձեռքը պաղ էր ձեռքիս մէջ, ըսի՝

–Ձեռքդ պաղ է ու կարծես անգգայ՝ ձեր երկրի ջուրերուն պէս...

–Ձեռքս պաղ է, Աշո՛տ, բայց գիտես, թէ սիրտս շատ տաք է,– ըսաւ լրջութեամբ,– գիշեր բարի, սիրելի՛ս...

–Մինչեւ վաղը առաւօտ մի՛ մոռնար զիս,– ըսի ժպտուն ու տակաւին, երբ առաւօտը արթնաս, յիշէ զիս, Հելլա՛...

–Լա՛ւ,– ըսաւ լրջութեամբ,– գիշեր բարի...

Ցեղոյ գլուխը դարձուց եւ ցաւով յարեց: Աչքերուն մէջ յանդիմանութիւն կար:

–Ինչո՞ւ համար գորովդ ցուցադրելէ կ'ամչնաս: Կարծես թէ ամօթ ըլլար աղջիկ մը սիրելը: Երբեք չէ պատահած, որ գուրգուրանքի ինքնարուխ ու ջերմ արտայայտութիւն մը խլած ըլլամ քեզմէ: Եթէ գիտնաս, թէ ի՜նչ գէշ տղայ մըն ես...

–Լա՛ւ,– պատասխանեցի ժպտուն,– բերանդ տուր...

–Ոչ, Աշո՛տ, հիմա այլեւս մեծ արժէք մը չունի այդ համբոյրը: Ուրիշ օր մը...

Ու ուրիշ օր մը այնքան երջանիկ էր ու զոհ ինձմէ, որ պզտիկ ձայնով մը՝ ականջս ի վար ըսաւ:

–Եթէ հարկ ըլլար նիշ դնել, այսօր քսանի վրայ՝ տասնինանի արժանի կրնայիր համարուիլ: Անուշ, գորովագին ու հեզ տղայ մը եղար: Նայէ՛ որ շարունակես...

–Այն ատեն արժէքազուրկ կ'ըլլամ,– ըսի կատակով,– մէկ անգամը բաւական է...

Հիմա որ մեկնած ես, սիրելի Հելլա, երբ կը յիշեմ քեզ՝ հանդիսաւոր խաղաղութիւն մը կը համակէ հոգիս: Լուրջ, ազնիւ ու շատ քաջ մարդ մը կ'ըլլամ ու քու մասիդ խօսելու համար, կը փնտռեմ խաղաղ ու մաքուր բառեր: Այս կերպարանափոխութեան ի՞նչ անուն կու տան, ըսէ՛, ձեր երկրին մէջ, ուր մարդիկ լուրջ են միշտ:

Էջը դարձուց ու նոյն ագահութեամբ շարունակեց կարդալ:

–Ինչպէս շոգեկաթսան, որ իր քովանդակելու կարողութեան վերջին կէտին վրայ, խուսափելու համար ճակատագրական

digitised by A.R.A.R.@

պայթումէ մը, կ'ապաւինի իր ապահովութեան ծորակին, այնպէս ալ՝ հոգիս։ Ու այս ամբողջ վերի էջերը ուրիշ բան չեն, եթէ ոչ, երկար ատեն զսպուած գորովի մը թոյնէն ազատելու միջոց մը։ Քանի մը տկար ու մանկական էջերու վրայ սպառելով զայն՝ հոգիս կը վերստանայ իր զօրութիւնն ու բնական վիճակը։

Ու դո՛ւն՝ Հելլա, եւ դո՛ւք՝ բոլոր աղջիկները, որ սիրած եմ, նոյնիսկ դո՛ւն՝ Իդա, կը վերստանամ ձեր յարաբերական կարեւորութիւնը։ Կեանքս կ'ազատի ձեր կապանքներէն ու իմ բոլոր գաղափարներուս իշխանութիւնը կը հաստատուի՝ միահեծան ու անառարկելի։

Բոլոր հծծիւններէն, սիրոյ բառերէն ու երգերէն առաջ՝ սիրէ՛ գաղափարներուն անստուեր ու յաղթական գեղեցկութիւնը։ Բոլոր փոքր յուզումներէն, հոգեկան տագնապներէն ու եսասէր երջանկութիւններէն հրաժարէ՛ ըմբռնելու համար մտքի անկորնչելի խանդավառութիւնները։ Եղի՛ր մէկը, որ մէկդի ձգած այս բոլոր պզտիկ բաները, յաղթութեամբ կը շարունակէ իր ճամբան։ Ապրէ՛ հաշտ գաղափարներուդ հետ։ Իրագործէ՛ զանոնք։

Այն գիշերը՝ տեղատարափը այնքան երկար տեւեց, որ Հելլան ստիպուեցաւ մնալ սենեակս։ Աչքերուն խորը՝ պղտոր, գարնանային ջուրերու յուսահատութիւնը կար։ Ջղայնութեամբ կ'երթար մէկ ափէն միւսը։ Բաց պատուհանէն՝ անձրեւին շառաչը կը լեցնար ներս։ Խոշոր կաթիլներ կը թրջէին իր վարսերը։ Ցեւտոյ կոնակէն՝ ես մօտեցայ իրեն, ուսերէն գրկեցի զայն ու ըսի.

–Սիրելի՛ Հելլա, կը տեսնես, որ անկարելի է մեկնիլ ու շատ ուշ է։ Հանուէ՛ ու մտի՛ր անկողին։ Երկու մանուկներու նման կը փաթթուինք իրարու եւ խաղաղութեամբ կը ննջենք...

Դանդաղութեամբ գլուխը դարձուց ետ ու նայեցաւ աչքերուս։

–Գիտե՞ս որ ընդունուած չէ աղջիկներուն համար դուրսը գիշերել։ Պիտի սկսին շատ գէշ մտածել վրաս ու ատիկա ո՛չ մէկ գնով չեմ ուզեր...

Բայց անկարելի էր փողոց ելլել։ Ու ինքं քուն ունէր։ Իսկ ես կ'ուզէի կարդալ՝ ընկղմած թիկնաթոռիս մէջ ու ըմպելով ծըխամորճիս ծուխը։

–Հինգ վայրկեան լոյսը մարէ, Աշո՛տ, անկողին մտնեմ, յետոյ կը կարդաս կրկին...

digitised by A.R.A.R.@

–Օ՛,– ըսի,– ի՜նչ ամչկոտ աղջիկ մըն է այս գիշեր...

Լոյսը փակեցի։ Ու մութին մէջ՝ անոր հագուստներուն շըրշիւնը արիւնս տաքցուց կրկին։ Տեղատարափին ձայնին մէջ կարծես յուզիչ եղանակներ կային։ Մօտեցայ ու բազուկներուս մէջ գրկեցի իր կիսամերկ մարմինը։ Ու երբ զայն համբուրեցի ծոծրակին վրայ՝ ամբողջ մարմնով դողաց։

–Աշո՛տ, շատ կը խնդրեմ, որ զիս հանգիստ ձգես այս գիշեր, չեմ գիտեր ինչու տխուր եմ...

Գորովով զայն դրի անկողնիս վրայ։ Շուտով աչքերը փակեց՝ անձրեւին ձայնը ականջներուն մէջ։ Իր մաքուր եւ աղուոր դէմքը, այնքան յուզիչ էր քունին մէջ, որ կարօտս հետզհետէ կը մեծնար։ Նստայ անկողնին եզերքը ու շատ մեղմ գգուանքներով շոյեցի վարսերը։ Ցետոյ համբուրեցի զայն բերնին վրայ։ Ընդոստ արթնցաւ, պզտիկ ճիչ մը արձակեց ու փաթթուեցաւ վզիս։

–Օ՛, ինչ լաւ է, որ մնացի, Աշո՛տ,– ըսաւ քնքշութեամբ,– այնքա՜ն երջանիկ եմ, որ...

–Տեսա՞ր, Հելլա՛, սկիզբը չէիր ուզեր մնալ...

–Եկո՛ւր, անկողին մտի՛ր, շո՛ւտ ըրէ, կը մսիմ...

Փաթթուեցանք ու շունչ շունչի սկսանք խօսիլ՝ գիշերուան մէջ։ Նախադասութիւնները կը խլէինք իրարու բերնէ, մինչ ժամերը կը մեռնէին։ Երբ յոգնած քնացանք, գրեթէ առաւօտ էր։ Մխրճեցանք անյատակ քունի մը մէջ, մերթ ընդ մերթ կ'արթընցայինք ու կը շօշափէինք իրար ու երջանիկ՝ կրկին անձնատուր կ'ըլլայինք ննջելու մեծ հանոյքին։ Անկողնէս բարձրացանք՝ հետեւեալ օրը, յետմիջօրէին։ Քաղցր թուլութիւն մը կար վրանիս ու մեր կոպերը թեթեւօրէն ուռած էին։ Բայց մեր հոգիները ուրախ էին ու գարնան գաղջ ու արեւայեղց առաւօտը պատուհանէն կը ժպտէր մեզ։ Բերանը կլորցնելով ըսաւ՝

–Ծոյլ տղայ մը ու շատ ծոյլ աղջիկ մը կան այս սենեակին մէջ։ Եկո՛ւր ըսենք, որ շուտով դուրս գան։ Գարնան անուշ առաւօտ է, թող երթան աշխատին...

–Բայց նախ՝ այդ ծոյլ տղան կը պահանջէ իր առաւօտեան սնունդը, Հելլա՛...

–Այդ տղան ծոյլ է ու որկրամոլ, ու քնաւ չեմ սիրեր զինքը...

–Ես ալ,– ըսի ժպտուն,– ի՜նչ գէշ տղայ է...

Ցետոյ՝ շռայլօրէն տուաւ ինձ ուզածս։ Ու շաղակրատ ու շատ երջանիկ՝ ելանք դուրս։ Փողոցին մէջ հովը կը հալածէր մեզ ու արեւը կը տաքցնէր մեր երիտասարդ մարմինները։

digitised by A.R.A.R.@

Տետրակը գոցեց ու երեսն ի վար ինկաւ բազմոցին վրայ։ Սիրտը կը զարնէր արագութեամբ ու թարթիչները թրջած էին։ Ժամը չորսը հնչեց, տօթը սկսաւ իյնալ։

Մարմնին խոնջէնքը քաղցր էր հիմա, ու սրտին տկարութիւնը՝ հաճելի։

Կ'ուզէր, որ դաշնակի վրայ մէկը նուագէր սիրային կամ մահատխուր հին եղանակ մը։

Կնոջ քնքուշ ձեռք մը հանգչէր գլխուն վրայ։ Կնոջ տաք ու սիրալի ձայն մը խզէր լռութիւնը։ Ձեռք մը բանա՛ր երջանկութեան դուռը, ըսէր —մտի՛ր...

*
* *

Բացարձակապէս ո՛չ ոք, ո՛չ ոք կրնայ գիտնալ, թէ քանի մը ժամ յետոյ ինչ պիտի պատահի իր կեանքին մէջ։ Ինչպէս ծովուն բացը տեղի ունեցող ալեկոծութիւն մը, վերջիվերջոյ կը հասնի ու կը զարնուի ափերուն, այնպէս ալ՝ հեռուն պատահած բաներ, համաձայն իրենց զօրութեան՝ կը բախին քու հոգիիդ եւ իմ հոգիիս։

Մարդիկ կան, որ չեն հաւատար նախազգացումի։ Իրենց գիտնալիք բանն է։

Ձախ աչքը կը խաղայ։ Լո՞ւր՝ հեռաւոր երկրէ, նամա՞կ թէ այցելութիւն...

Ճպուռներուն երգը՝ ասոսիներուն վրայ, պարբերական ու կարճ լռութիւններով, կը նմանի սիրոյ ժամուն արձակուած ճիչերու, որ կը խզեն խաւարը ու զուրկ մարդոց հոգին կ'արիւնեն։

Չի գիտեր, թէ ի՞նչ կը նուագեն, բայց եղանակը իր արեան մէջ կը հեղու անորոշ ու զօրաւոր յուզումներու մեծ քանակութիւն մը։ Կ'ուզէ բարձրանալ ու իյնա՛լ ցորենի արտերուն մէջ, պառկիլ ակօսի մը եզերքը, երեսը փակցնել հողին ու շնչել ծիլերուն ու ծաղիկներուն բարկ բոյրը։ Ցետոյ բարձրանալ ու հաւաքել ծծմորի կապոյտ ծաղիկներ։

Ի՞նչ կը նուագեն, չի գիտեր։ Նախ՝ ջութակին վրայ մէկը կու լայ։ Իմ հոգիս կամ քուկինդ։ Ցետոյ՝ ծեր, կեանքէն պարտուած մարդու թաւ ձայն մը է, որ կը հինցայ թաւջութի որո-

digitised by A.R.A.R.@

վայնին մէջ ու ի վերջոյ, սրինգին ծակերէն մանկուհիի մը հոգին է, որ կը ծորի դուրս։ Բարձրաձայն սկսաւ արտասանել։ Մարդիկ ապշահար նայեցան իրեն։

–Աստղ մը տխուր յամառութեամբ կը նայէր ինձ, մինչ հեռաւոր գարնան մը մէջ, բարակ ջրի մը եզերքը, գառնուկներ կ'արածէին ու սրինգ մը դողդողացին կը հեծէր ու այդ հեծեծանքը կարելի էր այսպէս թարգմանել՝

Առանց սիրոյ մարդիկ ինչպէ՞ս կրնան ապրիլ ու երբ սիրեն ինչպէ՞ս կրնան չտառապիլ։ Աղջիկ մը ինչպէ՞ս կրնայ միայն մէկ տղայ սիրել ու տղայ մը ինչպէ՞ս գեղեցիկ կնոջ մը ներկայութեան կրնայ անտարբեր մնալ։ Մարմինիս վրայ մէկը վէրքեր բացաւ ու ես կ'արտասուեմ բոլորին վշտերուն համար։

Եո՛ւ, եո՛ւ, եո՛ւ, եուո՛ւ...

Անգամ մը, Հանիան ուշ գիշերին բռնեց ձեռքէն ու ըսաւ.

–Եկո՛ւր, գետեզերք երթանք։ Տե՛ս, ի՞նչ լաւ գիշեր է, աստղերը կը նմանին սիրոյ համար մեռած տղոց լուսաթաթախ աչքերու։ Ծաղկած կասկենիներուն բարի բուրումը կը գինովցնէ զիս, պզտիկ Աշոտ, եկուր գետեզերք երթանք ու թափառի՛նք...

–Երթա՛նք, Հանիա՛,– ըսաւ ինք,– պայմանաւ, որ յետոյ ամբողջ գիշերը արթուն կենանք։

–Գլուխնիս կ'առնենք ու կը հեռանանք եւ երբ յոգնինք՝ խոտերուն վրայ կը հանգչինք, կը նայինք աստղերուն ու կը հաշուենք շուրջի լոյսերը...

Կը քալէին՝ առանց իրարու խօսք ուղղելու, մտիկ ընելով ներքին ձայներու։ Ցանկարծ Հանիան իր ձեռքը սեղմեց ուժգին ու խուլ ձայնով մը ըսաւ.

–Երբեք պատահա՞ծ է, որ լրջօրէն անձնասպանութեան մասին մտածես...

–Երկու անգամ միայն՝ շատ անկեղծօրէն ուզած եմ վերջակէտը դնել։ Բայց ուրիշ բազմաթիւ անգամներ, հեռաւոր կարոտի մը պէս, այդ փափաքը կրած եմ արեանս մէջ։ Տեսակ մը ապաւէնի պէս է։ Երբ մարդ շատ յոգնի ու իրապէս տարաբախտ զգայ ինքզինքը՝ անձնասպանութիւնը փրկութեան լաստի պէս ցանկալի կը թուի։ Նկատա՞ծ ես, Հանիա՛,– աւելցուց խորհրդաւոր,– որ ամէն անձնասպանութեան դէպքի առջեւ, մեզի նման մարդիկը՝ ծածուկ, այլ շատ զօրաւոր ուրախութիւն մը կը

digitised by A.R.A.R.@

գրած ու փաստաբերեն մարդոց մեծ մասը տեսակ մը բոլորաշունչ նախանձոտմով է, որ կը մտածէ անձնասպանները վրայ...։ Ասոնք մարդիկ են, որ յաջողած են հանգոյցը բակել, ընել ի՛նչ որ մեզմէ շատեր կը ցանկան ու չեն կրնար...

–Ըստ քեզի՝ ի՞նչ բաներու համար կ'արժէ անձնասպան ըլլալ...

–Նախ՝ երբ մարդ կը զգայ, որ յումպէտս վատնած է երիտասարդ կեանք մը։ Երբ վերսկսելու ո՛չ մէկ հնարաւորութիւն չի մնար։ Ու ապառած ըլլալով կեանքը լրումին տանելու ամէն կարելիութիւն, վերջնական սնանկութեան մը եզերքը կը գտնուի։ Այն ատեն՝ անձնասպանութիւնը արդար է ու գեղեցիկ ու ես կ'արդարացնեմ զայն...

–Այդ մէկ,– ըսաւ խուլ եւ գէշ ձայնով մը Հանիան,– համաձայն եմ, յետո՞յ...

–Երկրորդ՝ երբ մարդու մը կեանքին եւ գաղափարներուն միջեւ անանցանելի խրամատ մը բացուած է։ Ու խախտած՝ հաւասարակշռութիւնը։ Մարդոց մեծ մասը, նման պարագաներու տակ, կը նախընտրէ իրաւախոհութիւնը։ Բայց երբ տարածութիւնը շատ լայն է ու հետեւաբար իրաւախոհութիւնը շատ անբարոյ, վատ ու թշուառ, ես կուսակից եմ անձնասպանութեան։ Ատիկա անշուշտ, նման կեանք մը վերջացնելու համար, ազնիւ ու լաւագոյն ելքն է...

–Յետո՞յ, պզտի՛կ Աշոտ,– հարցուց Հանիան յամառութեամբ։

–Երբ մարդ անկարելիօրէն տգեղ է, բարոյապէս՝ ախտաւարակ, երբ ամէն գեղեցկութիւն իրապէս անկարելի է իր կեանքին մէջ։ Այս պարագային ալ անձնասպանութիւնը արդարանալի է։

Կոթնած կամուրջի բազրիքին՝ կը նայէին գետի սեւ ջուրերուն։

Սեւ ջրերուն վրայ կային լոյսի ցոլուն հետքեր։ Կային ստուերներ։

–Իսկ եթէ մարդ անձնասպան ըլլայ, առանց պատճառի,– ըսաւ Հանիան նոյն խուլ, գէշ ու խոր ձայնով, աչքերը բարձրացուցած իր դէմքին, –կ'ըմբռնե՞ս, առանց պատճառի...

Ինք լռեց։ Այդ միտքը թուեցաւ հրէշային, անկարելի, ոճրագար։

–Առանց պատճառի, պզտի՛կ Աշոտ,– կը կրկնէր հիմա տաք, համոզիչ, գրեթէ անուշ ձայնով մը, ձեռքը բռնած ափին մէջ ու միւս բազուկով գրկած տղուն ուսը,– այսպէս քաղցր

digitised by A.R.A.R.@

գիշերով, երբ աստղերը կը նմանին սիրոյ համար մեռած տղոց լուսաթաթախ աչքերու,– կ'ըմբռնե՞ս, թէ ի՛նչ գեղեցիկ է...

–Ինչպէ՞ս կրնաս այդպէս բան մը ըսել, Հանիա՛, ատիկա ոճրագործութիւն է: Տեսակ մը սատանան, գէշ, անգութ հանոյք: Ու այդ ոճրագործութիւնը ո՛չ մէկ արդարացում ունի...

–Եւ ո՞վ ըսաւ, որ երբեմն ոճիրը գեղեցիկ չէ...

Երկիւղահար նայեցաւ Հանիայի երկդիմի ու պղտոր աչքերուն: Ու չկրնալով պատասխանել՝ զայն ուժով սեղմեց բազուկներուն մէջ ու ճմլեց անոր տաք, լի ու քաղցր քերանը: Ցանկարծ ցաւի սուր ճիչ մը արձակեց սակայն: Աղջիկը՝ արիւնելու աստիճան, խածած էր իր վարի շրթունքը: Այդ արարքը այնքան յղի էր գէշ մտադրութիւններով, որ ինք քարի պէս լուռ մնաց: Յետոյ՝ թեւանցուկ վերսկսան քալել, Հանիայի մարմինը բացառապէս երիտասարդ ու գեղեցիկ էր այդ գիշեր: Կուրծքերը արձակուած ձմրան կապանքներէն, թեթեւ շապիկին տակէն կարծես իր աչքերուն կը խնդային:

Դանդաղութեամբ իջան գետեզերք: Կը քալէին ուս ուսի: Գիշերուան զով շունչը կը թափանցէր, գէշ խոնաւութեան պէս, իր ուսերէն ու կը սրսփար խարխուլ դողով մը:

–Եթէ չեմ սխալիր,– յարեց Հանիան անգթութեամբ,– արդէն կը մսիս ու ծարաւ ես ջերմութեան ու մարդկային մսի: Այս գիշեր, իմ վրաս մի՛ հաշուեր սակայն, պզտի՛կ Աշոտ,– աւելցուց ազատելով իր գրկախառնումէն ու նայելով լուսնի սկաւառակին,– տե՛ս, լուսինը ի՛նչ սպիտակ է, կը նմանի աղջկան մը դէմքին՝ հարսանեկան առագաստէն առաջ...

Յետոյ լռեց: Նստեցան քարերուն վրայ ու մտիկ ըրին հեռաւոր ժամացոյցի մը, որ տասներկուքը հնչեց: Գիշերը ցրտեց: Հանիան կը նայէր գետին պղտոր ու սեւ ջուրերուն: Սեւ ջրերուն վրայ կային միշտ լոյսի ցոլուն ու դողդողագին հետքեր: Յետոյ նոյն խուլ ու անգութ ձայներ, որ կարծես պիտի խզուէր անընմբռնելի տառապանքէ մը, ան ըսաւ՝

–Հիմա վերադառնանք հանապազօրեայ կեանքին ու անասուններու պէս...

–Բացարձակապէս ո՛չ,– ըսաւ ինք զայրացած,– ուր կ'ուզես գնա՛, Հանիա՛, բայց ես մինակ տուն պիտի երթամ: Ու պիտի քնանամ: Ահա թէ ինչ պիտի ընեմ:

Ուսերը թօթուեց ու ուզեց սանդուխներէն բարձրանալ: Բայց աղջիկը թեւէն բռնեց ու քրքջալով ըսաւ: Ու այդ քրքիջը չարաշուք բան մը ն էր.

digitised by A.R.A.R.@

–Ու սաղաւարտակիրները միաբերան գինի կը պահանջէին եւ կին...

Ցետոյ՝ թեւանցուկ վերադարձան: Որովհետեւ այլապէս կարելի չէր ընել: Վերադարձան հանապազօրեայ կեանքին ու ըրին անասունների պէս, ինչպէս Հանիան կ'ըսէր:

Ի՞նչ կը նուագէին, բացարձակապէս չէր գիտեր: Բայց թաւջութին որովայնին մէջ աղջիկ մը կ'արտասուէր իր կորսնցուցած կուսութիւնը: Բարձրացաւ, ուսերը թօթուեց ու խոշորաբայլ հեռացաւ: Ցայտաղրիւրները ծիգ ու աղուոր յորդումով մը կը վազէին: Ճպուռները, միշտ նոյն կրքոտ ու երկարաձիգ ճիչերով, կը խզէին լռութիւնը: Կը քալէր խրած իր մտածումներուն խորը ու միաժամանակ յիշելով Հանիային տարօրինակ արարքները: Այսուհանդերձ լուրջ, բոլորովին հաւասարակշիռ ու ուժեղ իմացականութեամբ աղջիկ մըն էր ատիկա: Ու հակառակ իր ամբողջ թաքուն ու բռնակալ փափաքին՝ ինք չէր կրնար հակառակը պնդել:

Երբ հասաւ իր բնակած տան առջեւ՝ սիրտը յանկարծ դողաց: Ատիկա արտասովոր ու խախուտ բան մըն էր: Անձկութեամբ բարձրացաւ սանդուխներէն ու յանկարծ, երկրորդ յարկը չհասած, դէմ առ դէմ եկաւ Իդայի հետ: Սիրտը կարծես պիտի խախտէր տեղէն: Այսուհանդերձ, զարմանքի կամ ապշութեան ոչ մէկ արտայայտութիւն կար դէմքին վրայ: Միայն թէ խիստ գունատ էր ու կը զգար, որ ձեռքերը մեծ տկարութեամբ մը կը դողային:

Լռութեամբ զայն առաջնորդեց իր սենեակը: Մարդու մը կը նմանէր, որ երկար ատեն սպասած ըլլալով դէպքի մը տեղի ունենալուն ու մանրամասնօրէն նախատեսած ըլլալով այդ պատահելիք բանին՝ բոլոր փոքր կամ կարեւոր մասերը, հանգստութեամբ կը դիտէ անոր զարգացումն ու ընթացքը: Ցանկարծ յիշեց Հանիայի տարօրինակ խօսքը, այն հեռաւոր գիշերուան ընթացքին, արտասանուած չարաշուք ձայնով մը ու խեղդուած քրքիջով՝

–Ու սաղաւարտակիրները միաբերան գինի կը պահանջէին եւ կին...

Իդան գունատ էր, այնպէս՝ ինչպէս կին մը կը գունատի, ամբողջ կեանքի մը ընթացքին, մէկ քանի անգամ միայն, ճակատագրական անկիւնադարձերու: Ու այդ գունատութիւնը արտասովոր գեղեցկութիւն մը կու տար դէմքին: Հագած էր սպիտակ ու իր ճպուռկ եւ քաղցր իրանը կորսուած էր կարծես շրջազ-

digitised by A.R.A.R.@

գեստին փրփրուն ծալքերուն մէջ։ Ձեռքին վրայ ամուսնական մատանի չկար ու նայուածքը կը յայտնէր մարմնին անդարձ ծարաւը։ Եւ այդ նայուածքը կը նմանէր լուռ հրաւէրի։ Բերանը կը դողար՝ ամրան տօթէն, յետոյ՝ հովի բռնուած կարմիր ծաղիկի մը պէս։

–Ահա եկայ,– ըսաւ սպիտակ ձայնով մը,– եկայ, որովհետեւ չէի կրնար չգալ…

Իսկ ինք, նայուածքը պահելով անոր աչքերէն ու դողդոջուն եկաւ ծունկի, փաթթուեցաւ անոր սրունքներուն՝ իր բազուկներուն ամբողջ տենդովը, յետոյ փնտռեց անոր գունատ ձեռքը եւ ջերմօրէն համբուրեց զայն։ Արտասուքի կաթիլներ կը հոսէին աչքերէն՝ թրջելով երիտասարդ կնոջ շուշանային ձեռքը։ Բարձրացաւ ու խուլ ձայնով մը ըսաւ.

–Հիմա դուրս ելլենք, Իդա՛, ու թոյլ տուր, որ քեզի ընկերանամ մինչեւ կայարան…

Լռութեամբ իջան սանդուխներէն եւ փողոց դուրս եկան՝ ինչպէս մարդ կ'ելլէ ազատ ափ։

*
* *

Ցաւ ու հանոյք տեսած, տենդէ պրկուած ու անգութ այդ շրթունքներով՝ քիչ մը խոնջ թերանը չէր միայն, որ երիտասարդ մարդու այդ դէմքին կու տար խիստ ու ցաւագին արտայայտութիւն մը։ Կարծես թէ ամբողջ դէմքը փորուած էր, որեւէ կարծր փայտի մէջ, ինչպէս միջնադարեան խոյակներու վրայ կը պատահի։ Աչքերուն մէջ կար շատ տառապած, այլ կեանքը յուսահատօրէն սիրող մարդոց յատուկ պղտոր, ազնիւ ու սեւ ցոլքը։ Ջղայնութեամբ կը խաղար իրի մը հետ ու բիրտ ձայնով մը կ'ըսէր.

–Բոլորն ալ կը տեսնես։ Եւ կը հաւատաս ըսածիս։ Անգթօրէն կ'ատեն իրար, որովհետեւ դատապարտուած են ընդմիշտ իրարու հետ ապրիլ։ Այս քանի մը տարիներու ընթացքին անկարելիօրէն ծերացան։ Եւ այս վաղահաս ու վտանգաւոր ծերութիւնը կը զգաս, որ ներքին վիճակ մըն է աւելի՝ քան թէ մարմնական յոգնութիւն։ Անընդհատ նոյն գէշ ու ոխակալ քինա-

digitised by A.R.A.R.@

խնդրութեամբը կը հալածեն իրար եւ պատրաստ են, առանց շահ ու ակնկալութեան իսկ, իրարու կող պատռելու։ Երբ իւրաքանչիւրը առանձին վերցնես, կը զգաս, որ արժանի են սիրոյ, պիտի ըսեմ նոյնիսկ գթութեան, բայց բոլորը միասին, կը նմանին գայլերու անօթի վոհմակի։ Ահա թէ ինչպէս մարդիկ են այս «մտաւորականներ»ը...

Նոյն ջղայնութեամբ գլանիկ մը վառեց ու նոյն բրտութեամբ աւելցուց։

–Բոլորին փորոտիքներուն մէջ ալ որեւէ թոյն կայ, ու բոլորին խօսքերուն տակ ալ՝ որեւէ յետին միտք։ Մեծ մասով խրած՝ ծանծաղուտի մէջ, անընդհատ կ'որոնեն անբուժելի դառնութիւն մը։ Ադամ, թշնամի ինքզինքնուն, մեծ մասամբ խախուտ առողջութեամբ, յոռի վարքով, երկչոտ եւ վատ, ատոնք մարդիկ են, որ ունին իրենց ազնիւ գայրոյթի ժամերը։ Կը խլրտին, կ'ոգեւորուին, կը սողան, կը մռնչեն, կը լռեն, իրար կը խածնեն, երբեմն կրքով հրապարակ կ'ելնեն, երբեմն կը մնան լուսանցքի վրայ ու միշտ կը դժգոհին ժողովուրդէն։ Ահա թէ ինչպէս են...

Ու ահա տարիներ յետոյ միշտ նոյն մայրաքաղաքն էր՝ իր անձկալի, ջղային հապճեպ կեանքով։ Փողոցներ կային, որ թիզ առ թիզ կը յիշէր, շէնքեր, վաճառատուններ, լրագրավաճառի կրպակներ։ Ու տեսակ մը յանցաւոր ու մեծ հանոյք մը կը զգար՝ լսելով կրկին ընդարձակ ու խառնակեաց քաղաքէն պղտոր ու անորոշ շշուկը։ Ծերուկ մը երեկոյեան թերթ կը ծախէր, գինովի իր աւրուած ձայնը ձգած։ Գրասենեակներէն ու վաճառատուններէն, օրերնին վերջացուցած պաշտօնեաներ կը թափէին փողոց՝ ու անապարանքով կ'ուղղուէին դէպի ստորերկրեայ երկաթուղին կամ հանրաքարշերը։ Իսկ իր ընկերը նոյն բիրտ ձայնը կը շարունակէր, կարծես զարնելով բառերու գըլխուն՝

–...Ու ցաւալին այն է, որ մարդ ստիպուած է համերաշխիլ հետերնին, նոյնիսկ դաշինք կռել։ Կապերդ խզել իրենց հետ՝ կը նշանակէ օտարանալ։ Լաւ կամ վատ՝ իրենք են, որ կը ներկայացնեն այս նժդեհ ու տարագնաց ժողովուրդին զանազան մասերը, կ'անձնաւորեն զայն։ Ապստամբիլ դէմերնին՝ կարելի չէ, որովհետեւ պայքարի արդիւնաւէտ միջոցները կը պակսին։ Ու յետոյ գիտե՞ս աւետարանական յուզիչ խօսքը.– *ո՛վ որ բնաւ չէ մեղանչած՝ թո՛ղ նետէ առաջին քարը*...։ Այդ քարը նետելու ընդունակ մարդիկ չկան, ահա եղերականը։ Բոլորս ալ՝ առաւել

digitised by A.R.A.R.@

կամ նուազ, խրած ենք նոյն ճահիճին մէջ։ Ու չխրիլ կարելի չէ, կը բաւէ քանի մը ամիս ապրիլ հետերնին՝ վարակուելու համար իրենց ոխերէն, կիրքերէն եւ հատուածական թշնամութիւններէն։ Կամայ թէ ակամայ՝ քեզ կը խառնեն իրենց տխուր թափօրին, քեզ մասնակից կ'ընեն փոքր հաշիւներու, ատելութեանց։ Ցետոյ գնա՛ ու տառապէ՛...

Լռեց ու սկսաւ ծխել։ Ցաւ ու հանոյք տեսած ու անգուշ շրթունքներով՝ քիչ մը խոնջ իր բերանը ծռած էր վշտագին գծով մը։ Ճակտին վաղահաս խորշումները ու աչքերուն եւ քթին բոլորտիքը եղած թեթեւ ծալքերը դէմքին կու տային վշտի անկորնչելի արտայայտութիւն մը։ Մէկ ումպով կուլ տուաւ գարեջուրը ու շարունակեց՝

–Ու բոլորն ալ ունին իրենց անառարկելի արդարացումները։ Առ իրենցմէ ամէնէն թշուառականը, քննէ իր կեանքը, թոյլ տուր, որ խօսի ու կը տեսնես, որ մարդկային դատաստանը անզօր է դէմերնին։ Բոլորն ալ ունեցած են իրենց կեանքին հերոսական շրջանը, վերելքն ու մակընթացութիւնը ու եթէ այդպէս են, գուցէ ամբողջովին իրենցը չէ յանցանքը...

Նախադասութիւնը սակայն մնաց կիսատ։ Վրայ հասաւ պզտիկ կազմով իբր թէ «երիտասարդ գրող» մը ու իր թուչունի պզտիկ գանկը շարժելէն բարեւեց՝

–Բարեւ, բարեւ, Աշո՛տ,– ըսաւ կէս-սիրալիր, կէս-վերամբարձ ձայնով մը,– շուտով երեք տարի կ'ըլլայ, որ իրար չենք տեսած։ Մեծցեր, զօրացեր ես...

Ձեռքը դրաւ ուսին, գրեթէ կնոջական ու խարդախ հայեացք մը ձգեց վրան։

–Դո՛ւն ալ բաւական ճամբայ կտրեցիր,– աւելցուց երկդիմութեամբ,– այս քանի մը տարիներու ընթացքին։ Անցեալ օր, տեղ մը քու մասիդ կը խօսէին, բոլորն ալ համաձայն էին, որ «խոստմնալից» տղայ մըն ես, ինչպէս կ'ըսեն...

Հագուած էր խնամքով, գրեթէ փնտռուած, չափազանցուած խնամքով մը։ Ու ինք զգաց, որ անոր ամբողջ անձին կը յայտնուէր շատ երիտասարդ մնալու յամառ ու ծիծաղելի ճիգ մը։ Եւ յիշեց ընկերոջ մը խօսքը անոր մասին,– Տասներկու տարի է, եթէ ոչ աւելի, որ «երիտասարդ գրող» է, կարծես այդպէս ալ պիտի շարունակուի...։ Ցիշեց նաեւ, միակնոցի սիրուն մանրավէպ մը, որ իր հասած օրն իսկ, պատմած էին։ Մանրանկար «երիտասարդ գրող» ընկերոջ մը հետ՝ կ'երթայ միակնոց մը գնելու վանաորդուհին, թէ՝

digitised by A.R.A.R.@

–Պարոնը բժշկական գիր ունի՞, ի՞նչ տեսակ միակնոց պէտք է տալ…

Առանց շփոթելու կը պատասխանէ՝

–Ո՛չ, օրիո՛րդ, քիչ մը տկար է միայն աչքս ու պարզ ապակի մը կարծեմ կրնայ գործս տեսնել…

–Ո՞ր աչքերնիդ է տկարը, պարո՛ն,– կը հարցնէ աղջիկը։

Պատրաստուած չըլլալով այդ հարցման, երկվայրկեան մը կը վարանի։ Կ'ըսէ ձախը՝ ինչպէս որ կրնար ըսել աջը։ Փորձի ենթարկելէ յետոյ այդ խեղճ աչքը, վերջապէս կու տան միակնոց մը։ Խանութէն հազիւ դուրս եկած սակայն, մեքենաբար զայն կը դնէ աջ աչքին։ Ընկերը զուարճանալով, թէ՝

–Եղբայր, ո՞ր աչքդ տկար է, ա՞ջը թէ ձախը…

Զգալով ստեղծուած յիմար վիճակը ու իրր թէ կացութիւնը փրկել կարծելով՝

–Երկուքն ալ տկար են,– կը պատասխանէ,– հեռուն լաւ չեմ տեսներ…

–Այն ատեն ինչո՞ւ համար ակնարոյծի չես երթար ու ակնոց առներ։

Պատմութիւնը շաբաթ մը չանցած այնքան կը տարածուի, որ խեղճը օրը քանի մը անգամ միակնոցին վրայ կը զգայ ծանօթներուն հեգնական ակնարկը ու միանգամընդմիշտ կը հրաժարի թէ՛ ակնոցէ եւ թէ միակնոցէ։

–Կարծեմ թէ ձեր խօսակցութիւնը ընդհատեցի,– ըսաւ «հրիտասարդ գրող»ը,– ինչի՞ մասին կը խօսէիք, կարելի՞ է հարցընել…

–Ծանօթներու, ընկերներու մասին,– պատասխանեց ինք, աշխատելով խուսափիլ։

–Ու անշուշտ, ընդհանրապէս նաեւ «մտաւորական»ներու,– յարեց հեգնութեամբ, ծուռ ակնարկ մը ձգելով միւսին վրայ։– Գիտե՞ս, Աշո՛տ, բոլոր նոր եկողներուն միտքը կը պղտորէ, շատ կարեւորութիւն պէտք չէ ընծայես ըսածներուն։ Սովորութիւն ըրած է բոլորին դէմ գանգատիլ…

–Իրաւունք ունի,– ըսաւ գրեթէ խստութեամբ ու մեքենաբար։ Ցետոյ կարծես իր ընկերոջ վրէժը լուծելու համար, վայրկեան մը լռելէ յետոյ, աւելցուց,– աչքերդ կարծես թէ տկար են, ինչո՞ւ համար ակնոց չես գործածեր…

Այդ նախադասութիւնը թշնամութեան պէս ինկաւ իր եւ անոր միջեւ։ Ու հազիւ արտասանած զայն՝ զղջաց։– Ահա թշնամի մը շահեցանք,– ըսաւ մտովի,– ատիկա ոչինչ, բայց զայն

digitised by A.R.A.R.@

վիրաւորելու ցանկութիւնս բնաւ ալ ազնիւ չէր, այսուհանդերձ անկարելի էր կողմ չբռնել։ Ստիպուած էի երկուքին միջեւ ընտրութիւն մը կատարել։

–Ուրեմն,– ըսաւ «երիտասարդ գրող»ը խուլ ձայնով մը, որ կ'աշխատէր անտարբեր թուիլ,– ինչ՞ զ ալ պատմած են նշանաւոր միակնոցիս պատմութիւնը։ Անապարած են մեր սիրելի բարեկամները ու դուն ալ անապարեցիր ցոյց տալ, որ գիտես, դեռ ժամանակ կ'ըլլար...

Զգալով որ յանցաւոր է՝ լռեց։ Ու փրթած խօսակցութիւնը այլեւս կարելի չեղաւ վերսկսիլ։ Խաղաղօրէն՝ մութը կը տեղաւորուէր փողոցներուն եւ տուներուն վրայ։ Ինքնաշարժներու եւ կառքերու խլացուցիչ աղմուկը կը ջղայնացնէր զայն։ Անորոշ տխրութիւն մը եկաւ ու բնակութիւն հաստատեց մարմնին մէջ։ Բարեբախտաբար երկու նորեկներ եկան ու ընտանեբար նստան։ Յետոյ՝ «քնանդատ» մը, կաշիէ պայուսակ մը թեւին տակ։ Ու խօսակցութիւնը տաքցաւ, դարձաւ կրքոտ, անվերջանալի։ Իր մտածումը սակայն մեծահայլ կը թափառէր հեռուն, սօսիներուն ծառուղիին եւ ցայտաղբիւրներուն շուրջ։ Օրուան այս ժամուն, ահա սրճարաններու յառաջամասերը կը լենային ու գաւառական քաղաքը կը զգենուր իր ամբողջ մելամաղձիկ շնորհը։ Ճպուռներու ձիգ ու կրքոտ երգը կը խլէր լռութիւնը։ Ու գիշերը լայն ու խաղաղ ալիքներով կը թաւալէր։ Գարնան վերջերը, երբ ծառերը կը դողային ծաղկումի լրութեան մէջ, ինք եւ Հելլան կողք կողքի կը քալէին լռութեամբ։ Երբեմն զայն կը սեղմէր իրեն ու կը յառաջանային գրեթէ գրկուած, ուս ուսի, թեւանցուկ։ Այս բոլորը սակայն այլեւս կը պատկանէին անվերադարձ անցեալին։

–...Կարծես թէ ամէն բան կը սկսի իրենցմով,– կ'ըսէր «քնանդատ»ը,– մինչդեռ ամէն բան կը պարտին հիներուն։ Տարբական համեստութենէ զուրկ են ու չեն քաշուիր հրապարակաւ իրարու խունկ ծխելէ, անշուշտ սպասելով միշտ, որ միւսը պիտի փոխադարձէ։ Այլեւս յոգնեցանք այս բոլոր «երիտասարդ գրողներ»էն, որ երիտասարդ իսկ չեն։ Իսկ իրենց անհանդուրժելի, գրեթէ լկտի յաւակնութիւնը երբեմն կը դառնայ անարգական՝ բոլոր անոնց համար, որ տարիներու աշխատանք ունին ետեւնին...

–Ի՞նչ, կ'ուզէիք որ ծնկաչոք երկրպագե՞ն ձեզ,– յարեց «երիտասարդ գրող»ը։– Կը բաւէ որքան որ սուտ տաղանդներն ու «մեծ գրագէտ»ները պարտադրեցին մեզի։ Օտար գրականու-

Digitised by A.R.A.R.@

թեանց հետ մեր անմիջական շփումը մեզ արթնցուց խոր քունէ մը։ Անշուշտ բազմաթիւ թղթէ անուններ կան, որ պէտք է պատռել, գրքեր, որ հարկ է վերագնահատութեան ենթարկել...

–Որեւէ բան պատռելէ առաջ՝ հարկ է մտածել զայն փոխարինելու մասին։ Երբ ձեզ մտիկ կ'ընէ մարդ՝ անկարելի է, որ չջղայնանայ։ Պատռելիք բան մը կայ եթէ՝ ատիկա ձեր բոլոր յիմարութիւններն են, «նոր գրողներ»ու արտադրութիւնները...

–Անշո՛ւշտ, այդ բոլոր երիտասարդները անհանգիստ կ'ընեն ձեզ։ Սերունդ մը կայ՝ ուժաթափ, անպէտ, սնանկ ու ծեր, որ այսուհանդերձ չ'ուզեր զիջիլ իր տեղը բարձրացող երիտասարդութեան։ Կառչած է իր դիրքերուն ու օրհասական արջի պէս կը կռուի...

–Շատ լաւ ալ կ'ընէ,– ըսաւ «քննադատ»ը անհամբեր,– ասպարէզը կարելի չէ հանգիստ սրտով ձգել՝ այդ կիսակիրթ, կոկոզավիզ, կիսով ապասերած ու մեծ մասով անարժէք տղոց, որ «նոր սերունդ» կոչուելու յանդգնութիւնը ունին։ Ո՛չ, մարդ երբ ակնարկը կը պտտցնէ շուրջը, իրապէս կը յուսահատի։ Ամբողջ արտասահմանեան եւ երկրային մամուլն ու պաբերականները լեցուն են իրենց արտադրութիւններով։ Բայց քանի՞ անուն կրնաք յիշել, որ կրնան հետք մը ձգել գրականութեան պատմութեան մէջ, մէ՞կ, երկո՞ւ...

–Կը չափազանցէք,– ըսաւ մէկը,– «նոր»երուն դէմ ձեր ունեցած վերապահութիւնը իրապէս անըմբռնելի է։ Սերունդ է՝ որ անշուշտ տակաւին չէ գտած իր հունը, բայց տարիներուն հետ կը գտնի, ընդունակ տղաքներ շատ կան...

–«Ընդունակ տղաք», «խոստմնալից ուժեր», եւայլն,– ընդմիջեց «երիտասարդ գրող»ը զայրացած,– կը բաւէ՞ որքան լսեցինք այդ կաղապարուած, իմաստէ զուրկ, այդ տխմար խօսքերը։ Խոստում չէ, որ կը բերենք՝ այլ գործեր։ Լաւ են կամ գէշ։ Ահա թէ ինչ պէտք է ըսել...

–Իսկ եթէ ըսենք, կատաղութենէ փրփուր կը թքնէք,– պատասխանեց «քննադատ»ը։– Օրինակ՝ եթէ ըսեմ, որ տասը-տասներկու տարիներէ ի վեր «երիտասարդ գրող»ի մը պատմուածք մը կը պտտցնես ուսերուդ վրայ ու տակաւին ո՛չ մէկ գործ ունիս, որ արժանի ըլլայ հանրային ուշադրութեան, անշուշտ հաճութեամբ չէ, որ պիտի ընդունիս...

–Օ՜,– յարեց միւսը թեթեւ ծաղրով մը,– սիրելի՛ս, կը գոհանամ պատասխանելով, որ դուն չես յամենայնդէպս, որ իրաւունք ունիս կամ կրնաս որեւէ վճիռ արձակել ու շատ պաղա-

digitised by A.R.A.R.@

բիւնութեամբ կը հարցնեմ, թէ քանի՞ հոգի գիտեն, որ երկար տարիներ առաջ մեծապատուութիւնդ հրատարակած է պատմուածքներու հատոր մը... վրիպած «գրագէտ» մը, որ «քննադատութիւն» կ'ընէ: Մեծ փորով հատորը, որ երկու տարի առաջ լոյս ընծայեցիր, կը կարծե՞ս, որ ոեւէ մէկը մինչեւ ծայրը կարդալու համբերութիւնը ունեցաւ...

«Քննադատ»ը խածաւ շրթունքը ու լռեց: Բայց վիրաւորանքը շատ ծանր էր ու երկար չկրցաւ համբերել: Տհաճ ու խուլ ձայնով մը, ուր կը յայտնուէր իրական ցաւ եւ քինախնդրութիւն, յարեց՝

–Չ'արժեր պատասխանել: Բայց դիտել կու տամ, որ խնդիրը կը վերաբերէր քու գրածներուդ եւ ոչ թէ իմ գրքերուս: Եթէ քաջ էիր՝ թո՛ղ կարծիքդ յայտնէիր առաջ...

–Առաջ կամ յետոյ, կը յայտնեմ ե՛րբ որ ուզեմ: Ու մի կարծեր, որ մեր լռութիւնը միշտ հաւանութեան նշան է: Բազմաթիւ «հին»եր կան, զորս դիւրութեամբ կրնանք վար իջեցնել իրենց պատուանդաններէն, եթէ չենք ըներ՝ որովհետեւ վեհանձն ենք ու չենք վախնար իրենց մրցակցութենէն: Մնաց որ, ոմանք շատ լաւ կը զգան ատիկա ու տեսակ մը չէզոքութեան դաշինք կնքած են հետերնիս, մե՛նք...

–Դո՛ւք, դո՛ւք, ո՞վ էք դուք,– ըսաւ մէկը,– նախ՝ «նոր գրական սերունդ» չկայ, երկրորդ՝ եղածները մեծ բան մը չեն արժեր: Դուք իսկ՝ լաւ կարծիք չունիք ձեր մասին: Քանի՛ գլուխ՝ ա՛յնքան ձայն: Լաւագոյն պարագային՝ բաժնուած էք թշնամի խմբակներու: Մէկուն կը մօտենաս, կը հարցնես, թէ կարդացա՞ծ է իր ընկերոջ վերջին գրածը –բէօ՛հ,– կ'ըսէ ուսերը թօթուելով,– չ'արժեր ժամանակ վատնել: Կը հարցնես միւսին,– մէկը պէտք է ընկերաբար խորհուրդ տայ, որ դադրի գրելէ...,– կը յարէ սպառիչ կերպով: Ահա թէ դուք ո՛վ էք, բոլորդ ալ՝ փքացած հպարտութենէ, այլամերժ ու յաւակնոտ: Ու ի՛նչ որ ցաւալի է գէթ ձեր սերնդակիցներուն հետ, եղբայրական կապ չունիք եւ ոչ ալ համերաշխութիւն: Ու անընդհատ՝ ոեւէ մէկուն դէմ ուղղուած որեւէ թունաւոր ու գէշ հեգնութիւն կայ ձեր շրթներուն վրայ...

–Անշո՛ւշտ,– ըսաւ «երիտասարդ գրողը» տհաճութեամբ,– ձեզ նման զգացական չենք, ոչ ալ խարդախ: Ո՛չ աւելորդ ու սին յուզումներ ունինք եւ ոչ ալ կը պահենք մեր կարծիքը: Ի՛նչ որ ուղիղ է՝ ուղիղ է: Ու յետոյ՝ խօսքը երդիք նետելու սովորութիւն չունինք...

digitised by A.R.A.R.@

–Ու երբեք ընդհանուր խնդիրներու մասին կարելի չէ խօսիլ հետերնիդ, ամէն տեղ կը տեսնէք ձեր պզտիկ անձը, ամէն հարց կը վերածէք մանր, չնչին, անձնական խնդրի: Վերջապէս՝ իւրաքանչիւրդ կեդրոնական անձնաւորութիւն մըն էք...

–Ցամենայնդէպս, հին սերունդին նման, գէթ ժողովուրդը չենք խաբեր: Կ'ապրինք մեր աշխատանքովը ու ոչ մէկուն վզին բեռ չենք...

–Լա՛ւ, լա՛ւ,– ըսաւ մէկը,– բոլո՛րդ ալ կատարելագործուած տիպեր էք: Հասկցանք...

Ո՛չ, չէր կրնար տանիլ այլեւս այս խօսակցութեան շեշտը: Ամէն արտասանուած խօսք կը վիրաւորէր զայն: Ու այս բոլոր մարդոց մտահոգութիւններն ու հաշիւները կը թուէին գձուձ, զանցառելի, փոքր: Ու մտածումը խոշորաձայն կը հեռանար, կը վերադառնար իր խաղաղութեան: Կը դեգերէր՝ հին, սիրելի կայքերու շուրջ: Ցանկարծ խզեց լռութիւնը, տաք ու խաղաղ ձայնով մը ու լրջութեամբ ըսաւ՝

–Երեւակայեցէ՛ք, ձեր ամբողջ վէճը կրպակի կռիւի տպաւորութիւն կը ձգէ վրաս: Անշուշտ մթնոլորտն ու բարքերն են յանցաւոր, այլապէս խորապէս պիտի զգայիք, որ տխուր, յուսահատական բան մը կայ ձեր բոլոր ըսածներուն մէջ...

Բոլորը դարձան իրեն: Ու անոնց աչքերուն մէջ ինք արդէն նկատեց արթնցող ընդդիմութիւնը, որ կրնար թշնամութեան, ատելութեան փոխուիլ:

–Կարեւորը յամառութեամբ, լռութեամբ աշխատիլն է: Ժամանակը կը գտնէ ընդարձակ գործի մը մէջէն լաւն ու վատը: Ինչո՞ւ կ'անապարէք ու կ'ուզէք կանխել զայն...

–Որովհետեւ,– ըսաւ «երիտասարդ գրողը» երկդիմութեամբ,– մարդիկ կան՝ որ կը խնողեն հրապարակը, մակաբոյծներ՝ որ կը պլլուին ծառերու բուներուն, ուրիշներ՝ որ կը քաշեն ոտքերէդ, ստիպուած ես ազատիլ արգելքներէ, արդիւնաւէտ կերպով աշխատիլ կարենալու համար: Ու միշտ «հիներ»ն են, որ քար կը գլտորեն մեր ոտքերուն տակ...

–Այո՛, մակաբոյծներ կան,– ըսաւ «քննադատ»ը բարձրանալով,– միայն թէ հարկ է ճշդել, թէ որո՛նք են եւ որո՛նք չեն...

Հազիւ անոր հասակը կորսուած էր փողոցն ի վար, երբ «երիտասարդ գրող»ը ծուլութեամբ ու անտանելի ժպիտով մը իր մանր աչքերուն խորը, յարեց՝

–Զուզեցի աւելի առաջ երթալ, այսօրուան համար կը բաւէ: Ահա բոլորն ալ այսպէս են, գրեթէ թշնամութեամբ լեցուած դէ–

digitised by A.R.A.R.@

պի նորերը: Մարդ երբեմն յուսահատութիւն կը զգայ, տեսնելով ժողովուրդին ծոյլ անտարբերութիւնն ու հիներուն խարդախ կեցուածքը...

–Երեւակայէ՛,– աւելցուց ուրիշ մը,– ինքզինքը «ինտատ» կը համարէ, բայց չի կարդար: Մէկ կողմ ձգէ օտար գրքերը՝ որ լաւ չի հասկնար, գալով հայերէններուն՝ փորձով գիտեմ, որ հազիւ կը թղթատէ, ընթրիքէն յետոյ կամ նախաճաշի ընթացքին...

–Անգամ մը տուն հրաւիրած էր զիս: Աշխատասենեակը տարաւ: Սեղանին վրայ՝ ցուցական կերպով դիզուած նամակներ կային, շեշտակի դիրքով՝ որպէսզի բոլորը երեւան: Կեղծ անփութութեամբ մը ըսաւ. «Շաբաթը չորս-հինգ հատ աշխատակցութեան հրաւէր կը ստանամ, մարդ կը շփոթի, թէ ո՞ր մէկուն պատասխանէ...»: Յետոյ՝ գրեթէ անձկութեամբ սկսաւ խաղալ անջատ թղթերու ծրարի մը հետ: Կը զգայի, որ կ'ուզէր ուշադրութիւնս հրաւիրել: Ի վերջոյ չկրցաւ ինքզինքը զսպել ու նոյն սուտ ձայնովը յարեց. «Այս ալ ուսումնասիրութիւն մըն է...»: Անշուշտ կը սպասէր, որ հարցումներ տայի, բայց ես լուռ կեցայ: Ստիպուած աւելցուց. «Մտադրութիւն ունիմ՝ առանձին գրքով լոյս ընծայել...»: Ու խիստ տխուր երեւոյթ մը ունէր, որովհետեւ չհարցուցի, թէ այդ «ուսումնասիրութիւն»ը որո՞ւ կամ ինչի՞ մասին է...

–Ու ո՛չ մէկ ինքնեկ, ինքնատիպ մտածում, ո՛չ մէկ նուրբ դիտողութիւն, այլ բազմիցս ծամուած, որոճացուած, նորոյթէ ինկած գաղափարներ: Անգամ մը, իր յօդուածներէն մէկուն մէջ պատմական վէպի մասին՝ հանդիպեցայ իրապէս ճշգրիտ դիտողութեան մը: Մտովի ըսի– մեր յիմարը անկարող է նման նախադասութեան մը հայրութեան իրաւունքը պահանջել...: Իրա՛ւ ալ, երեք օր յետոյ, դիպուածով, օտար պարբերականի մը մէջ, բառ առ բառ գտայ խնդրոյ առարկայ միտքը՝ ծանօթ գրադատի մը գրչին տակ...

–Ատիկա իր հին սովորութիւնն է,– յարեց «երիտասարդ գրող»ը,– մնաց որ, միանակ չէ, գրեթէ բոլոր հիները ունին այդ կազմախօսական հիւանդութիւնը...

Մութը կը խտանար՝ փողոցներուն վրայ եւ տուներուն: Վտիտ, սրսփուն աղջիկ մը ծաղիկ կ'առաջարկէր: Կեցան սալայատակին եզերքը: Ու խաղաղօրէն սկսաւ անձրեւել: Բարակ, մոխիրի նման, նուրբ կաթիլներով անձրեւ մըն էր ատիկա, անձրեւ մը, որ կը թափանցէ մարդուն ոսկորներէն ներս, որ անփարատելի տխրութեան պէս կը պատէ հոգիդ. մէկը հարցուց՝

digitised by A.R.A.R.@

–Ի՞նչ կը մտածես, Աշո՛տ...

Մեծ ու տաք աչքերը տարօրինակ լոյսով մը կը ցոլային, վարսերը անխնամ ինկած էին ճակտին վրայ ու ծխամորնը, որ կախուած էր իր հեշտասէր բերանէն, նուաղած էր: Ծանրութեամբ գլուխը դարձուց ու գրեթէ դժկամ, գէշ ձայնով մը ըսաւ՝

–Սպասեա՛ք, սպիտակ գինի մը...

Ցետոյ, ընդհանուր լռութեան մէջ, ցրտութեամբ ու բոլորովին հեռու, օտար, տարօրինակ ձայնով մը, ուր միւսները արհամարհանք նկատեցին միայն, ըսաւ՝

–Կը մտածեմ, թէ ի՞նչ կրնաք ըսել իմ մասիս՝ եթէ յանկարծ միւսին նման բարձրանամ ու հեռանամ: Ատիկա շատ հետաքրքրական է...

Ոչ ոք պատասխանեց, բայց ինք զգաց, բոլորին աչքերուն մէջ, արդէն ոսկոր կապող ատելութիւն մը: Կարծես թէ մէկէն, այդ հաւաքուած մարդոց մէջ օտար, անցանկալի մէկը դարձաւ ինք: Ցիշեց ընկերոջ խօսքերը.

–Լաւ կամ վատ, իրենք են, որ կը ներկայացնեն այս ճոդեհ ու տարագնաց ժողովուրդին զանազան մասերը: Կ'անձնաւորեն զայն: Ապստամբիլ դէմերնին, կարելի չէ, որովհետեւ պայքարի արդիւնաւէտ միջոցներ կը պակսին: Ու յետոյ՝ գիտե՛ս աւետարանական յուզիչ խօսքը.– *Ո՛վ որ բնաւ չէ մեղանչած՝ թող նետէ առաջին քարը*...: Այդ քարը նետելու ընդունակ մարդիկ չկան...

Կա՛ն, կա՛ն: Պէտք է որ ըլլան:

Ինք պիտի նետէ այդ առաջին քարը: Պիտի պատրաստուի՝ զայն զօրութեամբ եւ արդիւնաւէտ կերպով արձակելու համար: Ուրախութեամբ պիտի նետէ զայն:

Նուրբ կաթիլներով, այդ մոխիրի նման անձրեւը կը շարունակէր տեղալ քաղաքին վրայ եւ իր հոգիին: Հարաւի տաք ու անուշ արեւը մնաց հեռուն: Ո՛չ ճպուռներ կը խզեն գիշերային խաղաղութիւնը, ոչ ալ աղբիւրներուն ցայտքը կը պատռէ, փոքր վէրքով մը, այս խաւարը:

Ատիկա մէկ-երկու տարի առաջ էր: Օր մը Հանիան՝ իր երկդիմի ու գէշ ձայնովը, սենեակի լռութեան խորը ձգեց հեռեւալ խօսքը: Ինք փորի վրայ պառկած կը կարդար, իսկ ան՝ սեղանին առջեւ գլխահակ կը գրէր: Լոյսը կը խաղար հրճուանքով անոր տաք վարսերուն մէջ:

digitised by A.R.A.R.@

–Հոգի ըսածդ, պզտի՛կ Աշոտ, օձի խորխ չէ, որ փոխես: Մեր բոլոր յուսահատական ճիգերը զայն ամբողջական յեղաշրջման ենթարկելու զուր են: Մարդ կը ծնի կարողութիւններու եւ զգացական հարստութեանց որոշ գումարով մը: Ինձ կը թուի, թէ կարելի է որոշ սրբագրութիւններ ու փոքր տեղափոխութիւններ ընել: Բայց գումարն ու տեսակը կը մնան նոյնը: Ու եղերականը այն է, որ մարդ կերպարանափոխման հզօր ցանկութեան մը հետ կը կրէ, կեանքի բոլոր ելեւէջներու ընթացքին, իր ինքնութիւնն ու սկզբնական բնաւորութիւնը պահող հոգի մը: Ահա մեր բոլոր տառապանքներուն աղբիւրը...

Փողոցին լոյսերը կարծես թրջած էին անձրեւէն: Ու նաեւ բոլոր միւս լոյսերը, որ կը վազէին: Կը քալէին՝ առանց անապարանքի, հակառակ անձրեւին ու կարծես մասնաւոր հաճոյք մը գտնելով գիշերային տխրութեան, թաց սալայատակներուն, բոլոր թրջած բաներուն վրայ: Ի վերջոյ իր ընկերը խզեց լռութիւնը, ըսաւ՝

–Ահա թէ ինչպէս են՝ քինախնդիր, վատ, նանրամիտ: Երեքչորսը տեսար՝ երկար բացակայութենէ մը յետոյ: Միւսները՝ բոլորը նման են իրարու, ջուրի կաթիլներու պէս: Ու չեն զգար իրենց ամբողջ աղքատութիւնը...

Յետոյ՝ անձրեւը յամառեցաւ, առատացաւ ու իրենք մտան գետնին տակը:

*
* *

–Միայն քու հացդ է, որ կրնայ յագեցնել իմ մեծ անօթութիւնս: Ու միայն ակնարկիդ լոյսին տակ է, որ կրնամ մոռնալ այս բոլոր ցաւերը: Կը յառաջանամ՝ մութին մէջէն ու քաղաքը՝ իր բոլոր վտանգներով կը փաթթուի ոտքերուս: Մինչեւ հեռաւոր ծայրամասեր կը հետեւիս քայլերուս ու քու հաւատարմութեամբդ կը յաղթես ինձ: Յետոյ կը ծռիս վրաս ու քաղցրօրէն կ'ըսես,– Առանձին, այս անյատակ գիշերուան մէջ, ո՞ւր կը կարծես թէ կրնաս վիշտդ խեղդել: Երբ ծագի առաւօտը՝ աւելի քան աղքատ պիտի ըլլաս կրկին: Երբեք չպիտի յոգնիմ քեզ կանչելէ՝ մեր յիշատակներուն: Ափերովս պիտի գրկեմ տառա-

digitised by A.R.A.R.@

պագին գլուխդ ու բերանիդ ծարաւին համար, հոգւոյս ամբողջ աղապատանքը պիտի ջամբեմ բեզի։

Կը յառաջանամ մութին մէջէն ու քաղաքը, իր բոլոր վտանգներով, կը փաթթուի ոտքերուս։ Ակնարկս՝ արցունքի կաթիլի մը մէջէն, կ'իյնայ օտար աղջիկներու վրայ։ Ու բոլորին քով հեռաւոր ու կորսուած բան մը կը փնտռեմ բեզմէ։ Քունիս մէջէն՝ կ'երկարեմ բազուկներս, գրկելու համար իրանդ։ Ու գիշերուան եւ շուրջս ապրող մարդոց ունայնութիւնը զիս կը խրէ անառաւօտ յուսահատութեան մը մէջ։ Եկո՛ւր, եկո՛ւր...

Ննջել կարելի չէր։ Փողոցի աղօտ ցոլքը կ'իյնար տախտակամածին վրայ։ Ժամացոյցը կը հեգէր իր հին, մելամաղձիկ եղանակը։ Գիշերային ծանրամարմին կառքեր կ'անցնէին կարծես խրելով սալայատակին մէջ։ Ամրան տօթը՝ անձրեւէն յետոյ, յոյլ էր ու ծանր։ Աւրուած, յուսահատ դէմքով լուսնկայ մը կը դեգերէր աղտոտ երկնքի կտորի մը վրայ։ Ննջել կարելի չէր։

–Մեր երկրին մէջ խենթ եւ կապոյտ ջուրեր կան,– կ'ըսէր,– ինչպէս քեզ պատմած եմ ու բարձրահասակ ծառեր, որ տխրութեամբ կ'օրօրեն իրենց գլուխները, ջրեզերքներուն վրայ։ Մեր տղաքը սլացիկ են, պայծառ ու մաքուր աչքերով...

–Մեր երկրին մէջ լրջութիւնը օրէնք է,– կ'ըսէր անուշ ու տենդոտ աչքերը յառած աչքերուս,– բոլորս ալ լրջութեամբ կ'ապրինք ու լրջութեամբ կը սիրենք, ասիկա շատ կարեւոր է։ Կը հասկնաս, չէ՞...

Օ՜, լաւ կը հասկնար։ Որովհետեւ իր ամբողջ կեանքի ընթացքին՝ վերջնական, ամբողջական ընծայումով մը սիրած էր լրջութիւնը։ Տեսակ մը անորոշ վախ զգացած էր բոլոր ծիծղուն, ժպտուն ու շատ ուրախ բաներէն։ Երիկամուտներուն խորէն ատած էր ածան հեգնութիւնն ու ծաղրը։ Սիրած էր, բոլոր լուրջ բաները։ Կատակը միշտ նեղած էր գինքը ու մարդոց դէմքերուն վրայ անընդհատ փնտռած էր այն ծանրախոհ, գրեթէ մութ ու տխուր շնորհը, որ կու գայ հիմնական լրջութենէ։

Ամէն մարդ իր գիտցածին պէս կը կարգադրէ իր պզտիկ կեանքը։ Ու ինք կ'ընդունի, որ ապրելու այլ եղանակներ կրնան գոյութիւն ունենալ։ Ինք սակայն կը նախընտրէ լրջութեամբ ապրիլ, լրջութեամբ սիրել, ինչպէս կ'ըսէր Հելլան։ Ամբողջ մարմնով ու հոգիին ամբողջ զօրութեամբը նետուիլ յորձանքին մէջ։ Փշրուիլ կամ յաղթել։ Լուրջ են բոլոր ազնիւ, բոլոր մեծ բաները, բոլոր ստեղծագործ զայրոյթներն ու բեղուն յուսահատութիւնները։ Լուրջ է կեանքը։

digitised by A.R.A.R.@

Նոչել կարելի չէր։ Մարմնին մէջ դեռ կը յապաղէր կարծես անձրեւին յուսահատ տխրութիւնը։ Ու փողոցին աղօտ ու կասկածելի ցոլքը կ'իյնար ներս, տախտակամածին վրայ։

Ատիկա պատահեցաւ Մայիսի լուսաթաթախ առաւօտ մը։ Որոշած էին զարթնուլ արեւէն առաջ, երբ գիշերուան կաթիլները հազիւ կ'իյնան ծաղիկներուն գոգը։ Կ'երթային դաշտային կածանէ մը ու աղջամղջային կիսալոյսի մէջ՝ անոր գիրգ ու խաղցր իրանը արտասովոր կերպով խոովիչ էր։ Ինք կը սիրէր ետ մնալ ու դիտել անոր մարմնին շնորհը, երբ կը քալէր։ Ինք կը սիրէր՝ տենչահար ակնարկով մը գրկել զայն, իր հազիւ զգալի շարժումներով։ Այդ օրը հագած էր, առաջին անգամ ըլլալով, գարնանային դեղին պարեգօտ մը։ Վերարկուն, սիրուն գօտիով մը, կը գրկէր մէջքը, յայտնելով մարմնի վարի մասին հեշտագին գեղեցկութիւնը։ Մազերը արձակ էին ու երբ նորածագ առտուան առաջին ճառագայթները ողողեցին զայն, իր զգայարանքները խենթեցան կարօտէ։ Գրեթէ բրտութեամբ գրկեց զայն ու ըսաւ՝

–Ինչպէ՞ս կարելի է քեզ չսիրել, Հելլա՛։ Եթէ պատկանէիր ուրիշին՝ կրնայի, հակառակ ամէն բանի, անձնասպան ըլլալ քեզի համար։ Ատիկա մեծապէս գեղեցիկ արարք մը կ'ըլլար...

–Խե՛նթ,– ըսած էր,– խե՛նթ,– համբուրելով զինքը, –գիտե՛մ որ ըսածդ չէիր ըներ, որովհետեւ վերջին պահուն միշտ մէջդ կը յայտնուի *միւսը*, որուն ակնարկէն հոգիս կ'երկնչի երբեմն։ Միւսը՝ որ պողպատէ աչքեր ունի կարծես ու խիստ անգութ ձեռքեր...

Տագնապահար շարժումով մը բարձրացաւ անկողինէն ու անապարանքով սկսաւ հագուիլ։

–*Միւսը, միւսը,*– կ'ըսէր մտովի,– վաղը պիտի սկսի վերջնականօրէն անոր միահեծան ու բացարձակ իշխանութիւնը ու բոլոր Հելլաներն ու բոլոր Հանիաները միանգամընդմիշտ պիտի ընկղմին յիշատակներու մեծ խաւարին մէջ...

Իդա՛, Իդա՛...

–Ահա եկայ,– ըսիր սպիտակ ձայնով մը,– որովհետեւ չէի կրնար չգալ...

Իսկ ինք ինկաւ ծունկի, անոր ոտքերուն առջեւ, փաթթուեցաւ սրունքներուն, փնտռեց անոր գունատ ձեռքը ու շրթներուն ծարաւը աւելի մեծցաւ։ Ցետոյ՝ տարիներէ ի վեր իր սիրած կինը մեծ քաջութեամբ վերադարձուց իր ընկերոջ։ Ասիկա արարք մըն էր, որուն ամէն մարդ ընդունակ չէ։ Ու այդ քաջու-

digitised by A.R.A.R.@

թեան միւսն էր, որ մղեց զինքը։ Ու հիմա հոգիին խորը ո՛չ մէկ զղջումի մնացորդ կայ, ո՛չ մէկ մրուր։

Մարմինը ջերմի մէջ էր։ Աչքերուն մէջ կարծես կը զգար երեկոյեան անձրեւին բարակ, խոնջ տխրութիւնը։ Սանդուխներէն իջաւ հապճեպով ու ձայնը հնչեց պանդոկին մեծ լռութեան մէջ, հակառակ մարմնի խոնջէնքին, մեծ զօրութիւամբ։

–Պարա՛նը, եթէ կը հաճիք, պարանը...

Անշուշտ որեւէ գրքէ էր, որ Հանիան յիշատակած էր, հեռաւոր այդ գիշերուան ընթացքին, իր գէշ, երկդիմի, վտանգաւոր ձայնովը, այդ յղի նախադասութիւնը՝

–Ու բոլոր սաղաւարտակիրները, միաբերան, գինի կը պահանջէին եւ կին...

Բազմաթիւ մարդիկ կան, որ կը պահանջեն բազմաթիւ բաներ, իսկ այդ յուզիչ եւ տարօրինակ աղջիկը ո՛չ մէկ բան կը պահանջէր։ Օր մը, նոյն յեղակարծ ու անժամանակ շեշտով, իր ձայնին մէջ, աչքերը յառած առաստաղի հանգոյցներէն մէկուն վրայ ու ծուխը փչելով վեր, ըսած էր՝

–Մէ՛կ բան միայն *կ'արժէ* պահանջել ուրիշներէն, բոլոր ուրիշներէն, ատիկա գիտես ի՞նչ է, պզտի՛կ Աշոտ...

Ինք հեռուն էր այդ վայրկեանին, որեւէ մտածումի մը թեւերուն վրայ։ Հապճեպով վերադարձած էր ետ, զայն ուժով սեղմած էր բազուկներուն մէջ, համբուրած անոր մերկ ու զով ուսը՝

–Ամէն մարդ իր պահանջը ունի, Հանիա՛, համաձայն իր խառնուածքին այդ պահանջը...

–Օ՜ ո՛չ,– ընդմիջած էր զինքը,– պզտի՛կ Աշոտ, լաւ մտիկ չընիր, ըսի մէկ բան միայն կ'արժէ պահանջել ուրիշներէն, *կ'արժէ*, կ'ըմբռնե՞ս... բոլոր միւսներուն համար չ'արժեր խոնարհիլ, վարձահատոյց ըլլալ։ Գիտե՞ս ինչ է ատիկա...

Մօտաւորապէս կը զգար, թէ ի՞նչ ըսել կ'ուզէ, բայց չկընցաւ արագութեամբ ձեւակերպել զայն։

–Ներքին հաւասարակշռութիւն,– աւելցուց ժպտուն։– Մարդիկ զայն կ'անուանեն «երջանկութիւն», «ապրելու ուրախութիւն», «հոգեկան ապահովութիւն»։ Կարեւորը անունը չէ, այլ՝ այդ զոյգ մը բառերուն բովանդակութիւնը։ Ու ատիկա, պզտի՛կ Աշոտ, կը լսե՞ս, բոլոր ուրիշները, որ կան, բայց բոլորը...

–Անկարող են տալ,– լրացուց ինքզ,– ամէն մարդ ի՛նքզ պիտի փնտռէ իր ներքին հաւասարակշռութիւնը։ Ու հո՛դ է արդէն բոլոր ներքին պայքարներուն գեղեցկութիւնը...

digitised by A.R.A.R.@

–Օ՛,– պատասխանեց բոլորովին անտարբեր ձայնով մը, կարծես թէ կը խօսէր՝ արատի մը մասին, որ կար պարեգօտին վրայ,– եթէ այդպէս է, եթէ ճիշդ այն վայրկեանին, երբ իրապէս պէտք ունիմ ուրիշներուն, պիտի մնամ ամբողջովին առանձին, ալ ինչի՞ կը ծառայեն մարդոց բոլոր օրէնքները, կարգերն ու պետութիւնները: Բացարձակապէս կրնամ հրաժարիլ այդ բոլորէն, պզտի՛կ Աշոտ…

–Լա՛ւ, հրաժարէ, Հանիա՛,– ըսած էր ինք,– եթէ կրնաս…

Ըսած էր ու զղջացած, որովհետեւ աղջիկ մըն էր, որ կըրնար հրաժարիլ:

Սալայատակին եզերքը կեցած՝ լեցուց ծխամորճը: Ասող մը կարծես ժպտեցաւ աչքերուն: Խոշորաբայլ կտրեց ծառուղին ու անցաւ հանդիպակաց ափը: Գիշերուան անսպառ լռութիւնը՝ բաց ու սպիտակ էջի մը պէս՝ կը տարածուէր իր առջեւ: Զայն կարելի էր լեցնել՝ մարդ ինչո՞վ որ ուզէր: Ուզե՛ս՝ յիշատակներով, ուզե՛ս՝ երազներով, ուզե՛ս՝ հարստութեան ծրագիրներով:

–Երբ պատանի էիր,– ըսաւ մտովի,– երբեք չէի՞ր երեւակայեր, որ այսպէս մարդ մը պիտի ըլլաս, անընդհատ՝ երկու ճամբաներու մէջտեղը, անընդհատ՝ խոշոր գլուխդ ափերուդ մէջ, երկմտութեամբ մտածելով, թէ երկուքէն ո՞ր մէկը պէտք է ընտրել: Քառակուսի ուսերով ու զօրաւոր տղայ մըն էիր ու գիտէիր քրքջալ, առանց յետին մտքի ու առանց ծածկուած դառնութեան: Ահա, երկար տարիներէ ի վեր՝ անկարող ես վերագտնել հին օրերու այդ քաղցր ու հնչեղ քրքիջը…

Ու յիմարի պէս փորձեց քրքջալ: Կը յիշէր, որ անգամ մը որեւէ ծովեզերեայ սրճարանի մը առջեւը տեսած էր երբեք կիներ, որ լաւ թրջած ճաշէ մը յետոյ արուեստականօրէն կը փորձէին խնդալ: Ատիկա շատ դիւրին բան մըն է: Մէկը առանց պատճառի ու անիմաստ կերպով կը սկսի սուտ քրքիջ մը թողուլ, որ քանի մը վայրկեան յետոյ, կը վարակէ միւսները: Ու անգամ մը, որ մեքենականօրէն, արձակուի քրքիջը՝ այլեւս դժուար է զսպել զայն: Ու այդ երբեք կիները, սատանան՝ իրենց էգի վաւաշ ձայներուն մէջ, կը խնդային, բռնած իրենց թիկունքները: Խնդուքը կը սարսէր այդ խոլ մարմինները ուժեղ ցունցերով: Ու իրա՛ւ որ շատ ինքնատիպ ու խեղկատակ տեսարան մըն էր ատիկա:

Փողոցի մը անկիւնը, ինքն իր վրայ կծիկ եղած դատարկապորտ կին մը կը կաղկանձէր: Ու այդ կաղկանձիւնը կարծես թէ կը քակուէր այդ անկեալ էակին ընդերքներէն: Երբեմն՝ իր

digitised by A.R.A.R.@

ոսկրուտ ու սեւ ձեռքերով կը քերթէր մորթը: Ու ինք այնքան մերձ էր կնոջ, որ կը լսէր քերուըտուքի ձայնը:– Ո՞վ էր այն տարօրինակ մարդը, որ գոհացում տալու համար իր ներքին տենդին, որպէս Նազովրեցիի լաւ հետեւորդ, կը պառկէր բորոտներուն հետ: Ահա արարք մը, որ հոս երկրին վրայ, երբեք կարելի չէր վարձատրել: Արարք մը, որ մեծապէս գեղեցիկ է:

Ցետոյ՝ անձրեւը սկսաւ իջնել քաղաքին վրայ եւ իր հոգիին: Ատիկա նոյն անձրեւն էր, բարակ, սրսփուն կաթիլներով, անձրեւ մը, որ իր խոնաւութեամբ կը թափանցէ ոսկորներէդ ներս: Քայլերը արագցուց: Կատու մը՝ ոտքերուն քսուելէն անցաւ ու սահեցաւ փողոցն ի վար ու կարծես հետքերուն վրայ ձգեց իր աչքերուն կանաչ ու էգ բոյրը: Ու հետզհետէ լոյսերը առատացան: Մինչեւ որ գիշերային թաղը՝ իր կասկածելի աղմուկով, բռնեց կոկորդէն, ու տարաւ-նետեց սրճարանի մը խորը, երկու սիրահար կիներու դիմաց:

Ու կրկին, *մէկը* եւ *միւսը*՝ մնացին դէմ դիմաց: Ու հակառակ որ չվերջացած, վճիռ ստացած խնդիր էր, *մէկը* եւ *միւսը*, կեցած էին իրենց հին դիրքերուն վրայ ու կոկորդ կոկորդի՝ կը կռուէին: Ու այդ պայքարը յուզիչ, յուսահատական, արտասովոր ու անպայմանօրէն գեղեցիկ բան մըն էր: Ու կը թուէր, թէ ահա վերջին ժամն է վերջին գուպարին ու *մէկը* կամ *միւսը*, ջախջախուած ու արիւնաքամ պիտի իյնայ գետին:

–Ո՛չ ոք, կ'ըմբռնէ՞ք, ո՛չ ոք, կրնայ պնդել,– կ'ըսէր Հանիան,– որ ինք միակտուր մարդ մըն է: Ես, օրինակ, կազմուած եմ առնուազն երեք տարբեր անձնաւորութիւններէ: Ու համաձայն օրուան, նոյնիսկ ժամուն, անոնցմէ մէկը կամ միւսը, յաղթական ու հեգնոտ՝ կը տիրէ հրապարակին: Միւսները սակայն՝ կը սպասեն վրէժի ժամուն: Ու այդ ժամը կու գայ: Մարդիկ կան, որ կը տառապին ասոր համար: Բայց գէշ ու հիւանդ հանոյքով մը ու գրեթէ նոյն սիրով, կը սնուցանեն այդ տարբեր անձնաւորութիւնները: Ես ասոնցմէ եմ, իսկ դուն, Աշոտ, հարկ է որ հաշուեյարդարի ենթարկես *միւսը*: Դուն պէ՛տք է որ ընես ատիկա, կրնաս ընել կամ գէթ հաստատես մէկուն կամ միւսին գերակշռութիւնը...

Վերջին ժամն է վերջին գուպարին: Ուսի ուժեղ շարժումով մը այս գիշեր կռնակէն պիտի նետէ այդ տարապարհակ բեռը ու պիտի ցատկէ խրամատին միւս ափը:

Եւ երբ առաւօտը ծագի՝ մարդոց աչքերուն պիտի նայի զօրեղ ու պողպատէ հայեացքով մը, արբած յաղթանակէ, ու պատրաստ՝ ամէն պայքարի:

digitised by A.R.A.R.@

–Զգա՛ բնութեան հանապազօրեայ զարթօնքը, ձայները, որ աստիճան առ աստիճան կը բարձրանան: Եղիր տղայ մը, որ յաղթութեամբ կը դիմաւորէ նոր օրը: Հպարտութեամբ կատարէ գործդ, բծախնդրութեամբ կատարէ՛ զայն: Ցաղթանակէ՛...

Խոշոր գլուխ մը հակած՝ սեղանին վրայ, վայրկեան մը կը հանգչի իր յոգնութենէն: Ատիկա իր ներքին տագնապին յաղթած տղու գլուխ մըն է, որ ինչ յետոյ պիտի ընդունի նորածագ օրուան լոյսը իր աչքերուն խորը: Ու ձեռք մը, ծանր ու զօրեղ շարժումներով, կը ծռի սպիտակ էջի մը վրայ ու կը գրէ.

–Այս գիշեր՝ հաշուեյարդարի ենթարկեցինք մէկը, որ աւելի քան հինգ տարիէ ի վեր կը զբաղէր ուշադրութեան անարժան բաներով: Ատիկա ծնունդով կը պատկանէր մարդոց այն տեսակին, որ անգութ հեգնութեամբ մը «մտաւորական» կը կոչեն: Ան գձուձ էր ու վատ: Կը սիրէր գէշ հաճոյքներն ու սատիկ ուրախութիւնները: Կուսակից էր ձրի արարքներու ու անընդունակ էր որեւէ մեծ, գեղեցիկ ու հզօր ստեղծագործութեան...

Ցետոյ բարձրացաւ ու ելաւ դուրս: Ու խրեցաւ մայրաքաղաքի հիւանդ, ծոյլ ու գէշ գիշերուան մէջ:

*

* *

Դեռ երեկոյ չեղած՝ մութը ինկած էր բակին վրայ ու ատիկա Սեպտեմբերի մեղամաղձիկ ու անորոշ մութ մըն էր, տեսակ մը ծփուն տխրութեան պէս բան մը: Ահա նման իրիկուններու էր, որ շուտով աշխատանքը վերջացնելու եւ սենեակ վերադառնալու զօրեղ կարօտ մը կը ծնէր հոգիին խորը: Ատիկա ծուլութիւն չէր, որովհետեւ ահա երեք շաբաթէ ի վեր կ'աշխատէր հոս, ամբողջովին խրած գործի տենդին մէջ ու փնտռելով քաղցր խոնջէնքը, որ այնքան սիրելի ու թանկ կ'ընծայէ հանգիստը: Երբ վերջապէս մեքենաներու մռունչը խուլ ձայնով մը մեռաւ, մեսաղագործարանի հսկայ տարածութեան վրայ, գրեթէ հիւանդ անապարանքով մը գնաց ծորակին առջեւ, լուացուեցաւ, հանեց գործի հագուստները ու ելաւ դուրս, առանց բոլորտիքը նայելու:

Կը քալէր հապճեպ ու մեծ քայլերով ու աշնան երեկոյեան մութը տարտամ հրճուանքով մը կարծես կը պատէր հոգին: Ամբողջ մարմնին մէջ կար ծուլութեան մեծ փափաք մը: Մտածումը սիրով կ'երթար անկողնին ու կոնակի վրայ կը հանգ-

digitised by A.R.A.R.@

չէր։ Ուսերուն եւ ծունկերուն ճգաններուն մէջ պրկուելու պետքը կը նեղէր զայն։ Գդակը ծռած ու ծխամորճը շրթունքին կը յառաջանար գրեթէ նեղքելով բազմութիւնը։

Երբէք շարաթէ ի վեր կ'ապրէր ներուժ, ազնիւ, գրեթէ խաղաղ կեանքով մը։ Կարծես թէ տեղատարափէն յետոյ իր ներքին դաշտանկարը կը շնչէր բնութեան քաղցր անդորրութիւնը։ Այսուհանդերձ կը զգար, որ կռիւը բոլորովին չէ վերջացած ու երկար համբերութիւն մըն է աշխատանքը։ Կը զգար, որ ամէն օր պէտք էր յաղթել բազմաթիւ խոչընդոտներու։ Ու բոլո՛ր ընթացիկ հոգերէն, պզտիկ տառապանքներէն ու առօրեայ դժուարութիւններէն անդին՝ կային կեանքի հիմնական խնդիրները։ Հիմա ապահինութեան օրեր էին։ Կեանքը կրկին, երկար տագնապէ մը յետոյ, կը թուէր արտասովոր կերպով գրաւիչ, գեղեցիկ, բայց յետոյ կրկին ան պիտի երեւար իր մերկ ու անգութ դէմքովը ու հարկ պիտի ըլլար պաշտպանուիլ։

–Կարեւորը,– յիշեց,– ստոյգ է, որ ապրիլը չէ, ինչ ձեւով ալ որ ըլլայ, այլ՝ ուժգնութեամբ ապրիլը, ներքին յորդահոս, ատոք ու տենդահար կեանքով մը...

–Տենդահար եւ ուժգին խանդավառութիւն մը, խանդավառութիւն մը, որ չի մաշիր, ահա թէ ի՛նչ պէտք է, որպէսզի մեր կեանքը չվերածուի աշուն, ծոյլ ու թշուառ բանի մը...

Երբ սանդուխներէն կը բարձրանար՝ տանտիրուհին ըսաւ, որ երիտասարդ աղջիկ մը զինքը հարցուցած էր ու խոստացած, որ կրկին պիտի գայ։ Սրտի քաղցր սեղմումով մը նետուեցաւ սենեակ, փոխեց շապիկը ու երկնցաւ անկողնին վրայ։– Հիմա, կրնայ գալ, ըսաւ մտովի, ո՛չ մէկէն չեմ վախնար այլեւս ու ո՛չ ոք կրնայ կեանքս շեղեցնել իր հունէն։ Ցանկարծ դուռը բախեցին։– Մտէ՛ք,– ըսաւ քաջ ու զօրաւոր ձայնով մը։ Բարձրացաւ ու դուռը բացաւ ու իր ուժեղ բազուկներուն մէջ ընդունեց Հելլայի սիրելի իրանը։ Լռութեամբ սեղմեց իրեն ու աչքերուն վրայ երկարօրէն համբուրեց զայն։ Արտասուքի կաթիլներ թրջեցին ձեռքերը։ Բառերը անօգուտ էին, որովհետեւ սէրը, ազատած՝ իր բոլոր աւելորդ զարդերէն, կեցած էր իր մերկ ու ազնիւ գեղեցկութեամբը։ Գլուխը հանգչեցուց աղջկան ուսին վրայ ու ըսաւ՝

–Հելլա՛, Հելլա՛, երիտասարդ ենք ու կեանքը գեղեցիկ է, սիրելի՛ս...

(Շար. 9 եւ վերջ) ՎԱՉԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԵՐԷԿ-ԱՅՍՕՐ

Երէկ թախիծ էր ու ահ,
Առանձնութիւն հեւասպառ,
Երէկ մորմոք մէր տմոյն,
Դժոխային առօրեայ,
Մահ էր երէկ ու արիւն,
Հոգիի թէժ աղերսանք,
Երէկ անսէր ու անգոյն
Տուայտանք էր յուսահատ...

Այսօր խանդ է ու ալիւն՝
Երակներուս մէջ հոսող,
Այսօր տօն է լուսածին,
Հոգիիս մէջ հրաբորբ,
Կեանք է այսօր ու հաւատք՝
Մենութիւնս ակօսող,
Այսօր սէր է սարսռածին՝
Քուկդ ըլլալու ցանկութի՛ւն...

* * *

Աչքերուդ մէջ,
կայ բռնկուն քաղցրութիւն,
տենդ մը թովի՛չ,
ուր կը հալի նայուածքիս
կուսութիւնը թաւշային...

Ձեռքերուդ մէջ,
կայ թրթռուն ջերմութիւն,
հոսք մը աղո՛ւ,
ուր կը հալի մատներուս
մենութիւնն աշնանային...

Համբոյրիդ մէջ,
կայ մեղեդի անդադրում,
հուր մը բոսոր,
ուր կը հալի շրթներուս
ամայութիւնն ահալի...

ՍԵԴԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Պէյրութ

digitised by A.R.A.R.@

Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՎԻԳԷՆ — ՎՐԷԺ

Ուզում եմ մի դիպուածք ասել Արմէնէոյի մասին։ Երբ Թուրքերին քշել են, Արմէնէոն մտնում է Թուրքական տուն տեսնի հօ այստեղ ՕՄՕՆ չկա՞։ Այդ սրիկաները իրենց անդամալոյծներին իրենց հետ չեն տարել, փախել էին մոռանալով ազդակցութիւն, մոռանալով հարազատութիւն։ Մի ընտանիքում կար 60ամեայ հօրեղբայր, որ չի ամուսնացել, անդամալոյծ է, թողել են նրան ու փախել։ Այս անդամալոյծը ծանրակշիռ մէկն է՝ մօտ 90 կգ։ Խեղճ Արմէնէոն մի կերպ շալակել է նրան, ասել է.

–Մի վախենայ, ես քեզ չեմ սպանում,– իրար ճանաչում էին,– մի վախենայ Ալավերդի, արի մօտս։

Գիւղից հանել է, տարել պարետատուն, կոմենդանտին, թէ քեզ նուէր, տար Ծիրգուլի, տեսնենք փոխարէնը քեզ ինչ կը տան։ Միայն կ'ասես Արմէնէոն է նուիրում ձեզ, անամօթներ, որ փախչում էք՝ տարէք, կամ էլ էք տանում, բերէք մեզ յանձնեցէք, մենք կը պահենք սրանց։

Մաղկեփնջերով մենք դիմաւորեցինք ազատարարներին։ Արդէն հանդիստ հոգով գիւղում սկսուեց երդիկներից բարձրանալ բուն հայկական Տողի առաջին ծուխը։ Գիւղ եկան ուրիշ զինուորներ, որոնցից բոլորին չեմ կարող յիշատակել։ Եկել էին Եղէգնաձորից, Լենինականից, յիշատակութեան արժանի է Լենինականից եկած Սամոն, Երեւանից եկած Խաչոն, Դեղին Միշան, Վարուժը։ Վարուժը կարծեմ զոհուել է Նոյեմբերեանում, ստոյգ տեղեկութիւն չունեմ։

Ստեղծուեց գիւղում զինուորական շտաբ։ Շտաբի պետ նշանակուեց Վիգէնը, ընդհանուր ռազմական գծով Արմէնէոն։ Գիւղից 2 կմ. ցած դրուեցին առաջին պահակակէտերը, որ Թուրքերը չմտնեն գիւղ։ Շուրջօրեայ պահակութիւն էին անում, միաժամանակ հրճուանքով նայում էին օդ բարձրացող Թուրքական տների մոխիրներին։

digitised by A.R.A.R.@

Յաջորդ օրը գիւղ եկաւ թուրքական մի ուղղաթիռ, պտտուեց, բայց վախեցաւ իջնել։ Երեւի չէր հաւատում, որ կարող է իրենց տներն էլ ծխալ ու միալ, ինչպէս մեր սրտերն էին ծխում դրանից առաջ։ Այս դէպքերից յետոյ մնացել էինք արդէն, որ մինչ այդ չուար էինք, չգիտեմ ինչ դրութեան մէջ, ինչպէս ներկայացնեմ այդ մարդկանց արարքը· ու ծաղրով ինձ հարցնում է.

–Գրեսա, հաւատո՞ւմ ես, որ Տողի թուրքը վերջացել է, ոչ մի հատ չկայ։

Ասում եմ.

–Այո։

Աւելացրեց.

–Եթէ հաւատում ես, որ Տողի թուրքը վերջացել է, ոչ մի հատ չկայ, ապա պէտք է հաւատաս, որ ես ու Արմէնչոն հասել ենք Սասուն, կռուելու ենք Մուշի ու Վանի համար, որ ծովից ծով Հայաստան պէտք է տեսնենք։

Ասացի.

–Լաւ, այդ մասին գրքերում բան չկայ գրուած։

Խորհրդային գրքերում ի՞նչ ծովից ծով Հայաստան, այս բառերը միայն չակերտների մէջ ենք մենք սովորել։

Անընդհատ ինձ դաշնակցական գրականութիւն էր տրամադրում կարդալու համար։

Ասում էի.

–Լաւ է ուրիշ կուսակցութիւնից խօսի, երեւի իմ յետամնացութիւնն է, իմ մտաւորականի թոյլ տեղեկութիւններն են այդ կուսակցութեան մասին։ Այդ կուսակցութեան խեղճ անդամներից ոչ մէկը արժանի, բախտաւոր կեանք չի ունեցել, կա՛մ գնդակահարուել է, կա՛մ աքսորուել, կա՛մ վաղաժամ մահացել։

Ասում է.

–Գործդ չի, չէ՞ որ նրանք պարտաւոր են, դու գիտե՞ս,– ասում է,– ե՞րբ է այս կուսակցութիւնը հիմնադրուել։

Ասացի.

–Կարծեմ 1890 թ.-ին։

–Թէ առանց կարծիքի 1890 թ. է, ի՞նչ է հարիւրամեայ կուսակցութեան հետ, ո՞ր կուսակցութիւնը կարող է մրցել կամ համատեղուել կամ այդպիսի հերոսներ ունենալ։

Ու ես աւելացրի.

–Բայց գիտե՞ս, Վիգէն, որ ես դաշնակի թոռ եմ, որ պապս 1937 թ.-ին Սաալինի հրամանով աքսորուել է Սիբիր, որ այս խեղճ մարդիկ Սիբիր աքսորուելուց յետոյ պարզել են, որ ինքը ժողովրդի մօտ յարգանք շատ է վայելում։ Իմ պապը խելօք է եղել, 10 տարի աքսորավայրում մնալուց յետոյ հրաշքով կենդանի վերադարձել է։ Երբ որոշ մարդիկ հարցնում էին. «Ի՞նչ արժէքը տաս այս կառավարութեանը, որ քեզ 10 տարի Սիբիրում պահել է», ինքը ծաղ-

digitised by A.R.A.R.@

բանքով ասում էր. «Բայց գիտէ՞ք ինչքա՜ն փող պիտի ծախսէի այնքան տէրութիւն տեսնելու համար»։ Ինքը այսպէս կոչուած ծառայում էր կոմի ինքնավար հանրապետութիւնում, Սիկոտիվկար քաղաքի մօտ։ Աշխատում էր փուռում, որպէս հացթուխ։ Անունը թուրքական անուն էր՝ Իբաթ Ամիրջանեան, Ֆումի գիւղից, մօրական պապս էր։

Մայրս ինձ միշտ սովորցնում էր.

–Ինչ-որ կատարւում է՝ բարձր խօսէք ամէն ինչի մասին, բայց ազգային հարցից շատ կամաց խօսեցէք։

Ասում էի ուսուցչուհի մօրս.

–Մայր, ինչո՞ւ։

Ասում էր.

–Գիտէք, պապը սովորեցրել է՝ աւելի լաւ է ուրիշները խօսեն, քան մենք։

Երբ Ստալինի հարկահանութեան տարիներին մարդիկ դժգոհում էին հարկերից, Ալեքսան անունով մի մարդ հայհոյելով գնում էր գիւղամիջում, ասելով, թէ այսպիսի կառավարութի՞ւն կը լինի, Ստալինի հե՛րն անիծած, ինչու այսքան հարկի տակ դրեց, ես այսքան հարկը որտեղի՞ց տամ, մթերումները ինչպէ՞ս հասցնեմ այս աղքատ գիւղացին։ Պապս ասել է, երեխաներ, եւ քաշուեցէք, եթէ Ալեքսանը այդպէս հայհոյի Ստալինին, ոչ մի բան չի լինի, բայց որ մենք լսենք մեզ կը բանտարկեն, քանի որ քաղաքական ճկուն մտքի տէր էր։

* * *

Գիւղում ստեղծուած շտաբը, որ արդէն մտահոգուած էր շրջակայքի պահպանութեան, ազատութեան համար, գործում էր մինչեւ 1992 թ.-ի Սեպտեմբերը, երբ արդէն Ղարաբաղում, Արցախում կազմաւորւում էր ազգային-ազատագրական բանակ եւ պաշտպանութեան պետական կոմիտէ։

1992 թ.-ի Սեպտեմբերի 1-ից ստեղծւում է ռազմական շտաբ եւ զինուորական գումարտակ։ Զինուորական գումարտակի ղեկավար նշանակւում է Արմէնչոն, իսկ Վիգէնը՝ շտաբի պետ։ Նրանք մշակում են պլաններ, ծրագրեր, թէ ինչպէ՞ս կարելի է օգնել մարդկանց, անվտանգ ապրելու համար։

–Արմէնչո, տեսնես Մարտունու շրջանում ի՞նչ նոր զէնքեր ունեն, տեսնես կը հասցնե՞նք այս անգամ Աւոյին հանդիպելուց բոլոր զէնքերին ծանօթանալ։ Արմէնչո, ե՞ս գնամ ծանօթանալու, թէ դու։

Ինքը ասում է.

–Վրէժ, աւելի լաւ է ես գնամ։ Հէնց որ դու գիւղից հեռանում ես, մարդիկ ամէն մի հարցով դիմում են շտաբին, ես չեմ

digitised by A.R.A.R.@

սիրում մարդկանց հետ շատ հանդիպել, իմը զէնքն է, զէնք տուր ու անցիր առաջ։

Ինքը մտածում է ինչ մանիվրներով կարելի է թուրքերին սպանել, նրանց խաբել, ինչպէս կարելի է քշել։

Ասում է.

–Այս վախկոտները միշտ շների վոհմակի նման են գալիս, սպանում են, բայց նորից են աճում, նորից են բարձրանում, կախարդական այն վիշապի նման մի գլուխը կտրում ես, մէկի տեղը եօթն է աճում։

–Ա՛հ,– ասում է Վիգէնը,– Արմէնչօ, յաղթանակը մերն է լինելու, մերը կը լինի։

Արմէնչոն աւելացնում է.

–Ճիշտ ես ասում, Վրէժ, յաղթանակը կը լինի, բայց մենք չենք լինի։

Այսօր երբ քայլում եմ գիւղամիջով, երբ ինքն ու Արմէնչոն յաւիտեան նինջով պառկած են իրար մօտ, երբ նրանց անունները գրուած ցուցանակին յարակից բարդիներն են մեղմ քամուց օրօրւում, ես յիշում եմ նրանց խօսած խօսքերը ու ասում.

–Հանգստութիւն ձեր յոգնած ոսկորներին։

Յիշում եմ այս պահին քաջ Անդրանիկի խօսքը.

–Մահս չեմ ափսոսար, այլ գործս, որ կիսատ է, կեանքս չեմ ուզում ափսոսալ, միայն ու միայն գործս։

* * *

1992 թ-ի Ապրիլին որոշուել է ազատագրել մեր գիւղը, մշտական ումբակոծութեան եւ գնդակոծութեան տակ պահող դիմացի Ղաչար թուրքական գիւղից։ Այս գիւղը հայկական տարածք է ընդգրկում, հարթավայրային, մեծ գիւղ է։ Այս գիւղի ազատագրման մարտին պարտադիր ոչ ոք չի ներկայացել։ Ներկայացել են Վիգէնն ու Արմէնչոն եւ գիւղից երեք հոգի։ Ջլաջողուեց գիւղը այս անգամ ազատագրել։ Օպերացիան խափանուեց։ Տխուր, յոգնած, վշտաբեկ սրտով տուն վերադարձան, կեղտի, ցեխի, փոշու մէջ կորած ու մտածում էին միեւնոյնն է՝ պէտք է Ղաչարը ազատագրուի։

Երկու օր յետոյ լսուեց Արթուր Մկրտչեանի մահուան բօթը։ Ես կեանքում առաջին անգամ եմ տեսնում Վիգէնին բարձրաձայն հեկեկալիս։ 1992 թ-ի Ապրիլի 14ին, առաւօտեան ժամը 5 անց կէսին Մոսկուայի «Մայակ» ծրագիրը հաղորդեց, որ Արթուր Մկրտչեանը այլեւս չկայ։

Յաջորդ օրը մեր տանը հիւր էր Վահան Յովհաննիսեանը, այդ օրը մեր տանն էր գտնւում Հայաստանի Սպիտակ քաղաքից Սերգէյ Բոստանջեան անունով մի մարդ, որը թուրքերի մօտ պա-

digitised by A.R.A.R.@

տանդ էր վերցուած 1992 թ.ի Յունուարին։ Թուրքերը կապուել էին մեր գումարտակի հետ եւ յայտնել, որ իրենց մօտ է գտնուում մի հայ մարդ, եթէ ուզում էք փոխանակէք՝ նրան վերցրէք։ Վիգէնը զարմացական հարցրել է, ինչպէս թէ ուզում էք հայ մարդին փոխանակէք, ի՞նչ է, հայը պէտք է թուրքի մօտ գերի՞ մնայ։ Սերգէյին փոխանակեցին, մեր տանն էր գտնուում, քանի որ այս մարդը անծանօթ էր լրիւութեամբ։ Կեանքում Ղարաբաղ չէր տեսել, լսելուց բացի։ Խեղճն էլ ասում էր, որ մեծ աղէտի՝ երկրաշարժի ինչ-որ մնաններ է կրել, ի հարկէ այդպէս էլ կը լինէր։

Վիգէնն ու Վահանը հէնց մեր տան աստիճանների վրայ իրար փաթաթուած ոնց էին լացում, թէ ինչպէս էր Վիգէնը ողբում Մկրտչեան Արթուրի մահը՝ ես չէի պատկերացնում։ Վիգէնի հայրն ու մայրը մահացել էին։ Այդ օրերին ինքը այդպիսի ոչ մի ողբ չէր արել, այդպէս չէր սգացել։ Սգացել էր սրտով, խորը, ծնողի կորուստ ունեցող որդու վշտով, բայց Մկրտչեանի մահը չեմ տեսել ինչպէս էր սգացել։ Ինքն ու Վահանը փաթաթուած տաս րոպէից աւելի սգում էին, ամբողջ մարմնով հեկեկում վշտաբեկ։ Գնացին Ստեփանակերտ, մասնակցեցին յուղարկաւորութեանը, պայմանների սղութեան պատճառով շատ էի ափսոսում, բայց չկարողացայ ես էլ գնալ։ Լսեցի, որ հեռուստացոյցով ցոյց են տուել, քանի որ մեր գիւղը զրկուած է ելեկտրականութիւնից ու Հայաստանի հեռուստահաղորդումները դիտելու հնարաւորութիւնից, ուղիղ էլ չկայ այսօր, կտրուած ենք արտաքին աշխարհից։

Ամէն անգամ մարտի գնալիս ես Վիգէնին խնդրում էի մի քիչ զգուշութիւն իր կողմից։

Ասում էր.

–Վա՛, քիչ ասա, Մկրտչեանի նման տղան, որ չկայ՝ ես ինչ եմ որ։

Կարծես թէ աւելորդ էր հաշւում իրեն ապրելը, երբ լսում էր իրեն մօտիկ, մտերիմ, հերոսացած ընկերներից մէկի մահուան բօթը։

Երբ Վլադիմիր Բալայեանը զոհուեց, վշտաբեկ տուն եկաւ, թէ Վլադիմիրը այլեւս չկայ, իսկ ինչ ցնցող տպաւորութիւն թողեց Ասկոլկայի մահը նրա վրայ, չեմ ուզում նկարագրել։

Պապանձուեմ, որ այդպէս եմ ասում, լաւ է, որ Արմէնչոյի մահը չտեսաւ։

* * *

1993 թ.ի Մարտի վերջերին հանգուցեալ Աւոյի հետ պլան էր մշակւում Ղաջար գիւղը ազատագրելու համար։ Երբ ներկայացրել էին հրամանատարական կազմը, Աւոն արեւմտահայ լեզուով էր խօսում, բացատրելու ժամանակ օգտագործել է մեզ համար անհաս-

digitised by A.R.A.R.@

կանալի տերմիններ, մենք շատը ռուսական տերմիններ ենք օգտագործում, մա՛նաւանդ ռազմական հարցում։ Տուն վերադառնալուց՝ Արմէնչոն հարցնում է.

–Լրէժ, մօտաւորապէս հասկանում եմ ինչ է ասում Աւոն, ասում է թանկ, ա, թող տանկ ասի, էլի, ասում է օթօ, թող աւտօ ասի, էլի։

Վիգէնը ասում է.

–Արմէնչօ սուս մնա՛, ո՛ր բառը չես հասկացել, ես քեզ կը բացատրեմ։

Զրոյցի են նստել, թէ պլանը ինչպէս պէտք է կատարուի։

* * *

Ապրիլի 2ին ազատագրուեց Ղաչար գիւղը, տուեցինք զոհեր, բայց ոչ Տողից։ Մի տեսակ թող Աստուած ինձ ների, ուրախացայ, որ Տողից զոհ չկայ։ Եթէ գիւղից որեւիցէ մէկը զոհւում է՝ ես ինձ մեղաւոր եմ համարում։

Միշա ասում էի.

–Վիգէն, այնպէս արէք, որ զոհ չլինի, այլապէս ես մեղաւորի աչքերով եմ նայում զոհուածի հարազատներին։

Եւ ինքը ինձ մեղադրում է, ինչու եմ այդպէս անում.

–Իսկ եթէ ես զոհուեմ, ո՞վ է մեղաւոր։ Երբ ծառայում էին Աֆղանստանում, Գերմանիայում, Չեխոսլովակիայում՝ զոհւում էին ամէնուրեք, Խորհրդային պետութեան ցանկացած ծայրում, ոչ ոք իրեն մեղաւոր չէր համարում։ Հիմա, որ հողի, մայր հողի համար արիւն են թափում, որ Աւարայր է այսօր մեզ համար, դու պէտք է քեզ մեղաւո՞ր համարես։

Ասում եմ.

–Ջգիտեմ մեղաւոր եմ, թէ անմեղ եմ, բայց այս Շարժման պարագլուխը դու ես, լիդերը դու ես ներկայացնում, ուղղակի մարդիկ ասում են, ահ, ինքը սկսեց այս Շարժումը, հանգիստ ապրում էինք, ինչներիս էր պէտք Հայաստան, Ղարաբաղ կամ Ադրբեջան, մեզ համար նշանակութիւն չունէին։

Այդպէս ասում են այն մարդիկ, ովքեր գաղափար չունեն հայոց պատմութիւնից, ում համար որտեղ հայ՝ այնտեղ կացն է իջնում, որոնց համար հայրենիք գոյութիւն չունի, բայց նրանք չգիտեն ինչ է նշանակում առանց հայրենիքի։ Ալաջիանի «Առանց հայրենիքի»ի գիրքը չեն կարդացել, դրա համար չգիտեն։

* * *

1992 թ.ի Ապրիլի 2ին իմ երեխաների՝ Արշակի եւ Վարդանի ծննդեան օրն է։ Ամբողջ օրը ոչ մի բանով չէի պատրաստուել։ 14

digitised by A.R.A.R.@

տարեկան են դառնում։ Չէր եղել որ օր մը չնշենք։ Ես ուրախանալով ասում էի, տեսնես Ապրիլի 2ին ինչ նշանաւոր մարդ է ծնուել։ Մի անգամ ձեռքս ընկաւ հայկական մի օրացոյց, Մարիետա Շահինեանի ծննդեան օրն էլ է Ապրիլի 2ին։ Մտածեցի լաւ է, Մարիետա Շահինեանը խելօք է, իրենք էլ խելօք կը լինեն։

Անընդհատ Վիդէնին խնդրում էի, որ մի քիչ երեխաներին հոգ տանի, սրանից յետոյ աւելի շատ դաս սովորեն, բայց երեխաներին, ինչպէս մագնիսը ձգում է զէնքամետաղը։

—Գործ չունես, երբ տղաներս աւարտեն միջնակարգը ես նրանց նուիրելու եմ մէկական զէնք, թող կռուեն։

Ասում էի.

—Ինչ պակաս է, որ դու մանկավարժ ես, հոգեբան ես եւ միաժամանակ զինուոր ես։

Ասում է.

—Գործ չունես, այսօր զէնքն է մարդկանց պէտք եւ ուրիշ ոչինչ։

—Հա,— ասում եմ,— յիշում եմ, որ աղջիկդ քայլում է պատըշգամբով ու խաղալով երգում.

«Հայոց օրիորդներ, չքնաղ տիկիններ, կախէք ձեր զարդեր, կը ներէք՝ փամփուշտներ»։ Ճիշտ է, այդ տողերը պէտք է մեզ միշտ ուղեկից լինեն, բայց քանի որ մենք ապրել ենք այլ պայմաններում, մի քիչ դժուար ենք յարմարւում։ Յիշեցի մի դէպք, երբ մի օր մեր տանը գտնւում էր կարմիր շապիկով, կը ներէք, որ անգրագէտի պէս եմ խօսում, Մոսկուայում ռազմական ակադեմիայի կողմից հրատարակուած լայնածաւալ գիրք, որի մէջ կային բազմաթիւ զէնքերի նկարներ, գծագրեր, ինչպէս են պատրաստւում այդ զէնքերը, ինչ փամփուշտներ են կրակում եւ քանի մետր, ինչպիսի արագութեամբ եւ այլ ռազմական տերմիններ։ Արշակն ու Վարդանը այդ գիրքը դրած սեղանին՝ նայում էին, որ գրքի մէջ նկարած գծագրերը տետրի մէջ փոխանցեն։ Տետրի վրայ ոչ մի բան չեն գրել։ Որպէս տետրի անուն՝ գրել էի քաղցր բաների համար։ Արմենչոն տուն եկաւ, բազմոցին նստեց, բացեց տետրը եւ քմծիծաղով ասաց.

—Ա, Վրէժ, այս երեխէքը այս ինչ են անում, գրել են, թէ քաղցր բաների համար, ա, խոխէք, մեր լեզուով եմ ասում, էստեղ կոնֆետ կայ նկարած, թէ թխուածք, ինչ քաղցր բաներ։

Ասացի Արմենչոյին.

—Ճիշտն ասա, քեզ համար քաղցր չի՞։

Ասում է.

—Հա՛, ինձ համար քաղցր է, բա, էս երեխաները ո՞նց են գգում այս մետաղների քաղցրութիւնը։

Ասում եմ.

digitised by A.R.A.R.@

—Դէ՛, ո՞ւմ տանն են ապրում, ո՛ւմ երեխաներն են, որ այդպէս չզգան։

Թեթեւակի պէտք է նշէինք. ոմբակոծութեան տակ, երեխաների ծննդեան օրը։ Երեկոյեան հինգն անց կէս փչրուած, յոգնած, փոշեթաթախ Արմէնչոն ու Վիգէնը եկան մեր տուն, թէ ինչ ունես-չունես սեղանին շարի, սոված ենք։ Սկսեցինք եղած-չեղածը շարել, նախօրօք պատրաստել էի, ուղղակի ձեռս չէր բռնում սեղան բացել, սպասում էի, որ անվնաս, կենդանի տուն վերադառնան։ Արդէն մութն ընկնում էր, կրակ վառեցինք, որ մեր ազգային սովորութեան համաձայն խորոված անենք. նոյնիսկ այնպիսի տեղ կրակ վառեցինք, որ հեռուից թուրքերը չնկատեն, քանի որ բաց դաշտ էր դէմներս, կարող է յանկարծ հրանօթով խփէին, մեր սեղանը խանգարէին։ Խորոված արեցինք, սեղան նստեցինք, կերանք խմեցինք, մոմի լոյսի տակ։ Վիգէնը, իր սովորութեան համաձայն, ինչ սեղան նստում էր, առաջինը խմում էր առիթի կենացը, երկրորդը խմում էր ծնողների կենացը ու երրորդը միշտ յոտնկայս խմում էր.

—Դէ, տղերք, գիտէք չէ՞...

Տղերքը ոտքի էին կանգնում, զոհուածների յիշատակի կենացն էին յարգում։ Մի-մի ումպ խմեցին զոհուածների յիշատակը յաւերժացնելու համար, նստեցին մինչեւ գիշերուայ 3 անց կէս, հիւրերի հետ Վիգէնն էլ դուրս եկաւ, թէ գնում ենք շտաբ էլի։ Ասացի.

—Լաւ է գոնէ այսօր մնայ։

Ասում է.

—Ոչ, Արմէնչօ, որտե՞ղ ես գնում։

Թէ՝

—Շտաբ։

Երկուսով գնացին շտաբ։ Ամսի 3ին եւ 4ին տուն չեկաւ։

Ապրիլի 4ին միայն ու միայն Տողի գումարտակով, Արմէնչոյի ազնուագոյն տղաների գումարտակով ազատագրուեց Ֆիզուլիի մօտ, համարեա՝ շարունակութիւնը կազմող Ղովչաթլի գիւղը։ Գիշերուայ ժամը 4ին Վիգէնը զանգեց, թէ՝

—Ի՞նչ վիճակում էք։

Ասացի.

—Երեխաները շորերով են քնել, չեմ ուզեցել հանեն, որպէսզի գալուցդ արթնացնեմ։ Միայն մի անկարգութիւն են արել, ինձ վախեցրել են։ Երբ ազատագրուել է Ղովչաթլի գիւղը. բոլորը սկսել են հրավառութիւն անել, օդ կրակել, երեխաներն էլ քո աւտոմատն են վերցրել ու կրակել, ես էլ վախեցել եմ, ասում եմ, երեխաներ, մի կրակէք, թողէք մնայ։

Ասում են.

—Մամա, բա ո՞նց աննենք, մի անգամ բա չկրակե՞նք։

Ես էլ ասել եմ.

—Որ մեռնեմ իմ վրա կը կրակէք։

digitised by A.R.A.R.@

Ասել են.

—Ոչ, պէտք չէ այդպէս։

Ժամը 4ին եկաւ, թէ սոված ու յոգնած եմ, իսկոյն ոտքերը լուացինք, սեղան դրեցի, քիչ ու միչ կերաւ, երեխաներին մէկ-մէկ համբուրեց ու պառկեց, որ մի քիչ հանգստանայ։ Անընդհատ հեռախօսը զանգում է, զանգողը վարորդ Կիմանն է, Արմէնչոյի փեսան։ Ասում է. «Վրէժ, բա պոստի տղաները սոված են, ինչպէ՞ս կարող եմ մեքենայով հաց հասցնել»։

Վրէժն էլ, իր սովորութեան համաձայն, ասում է.

—Հիմա չգնաս, թող սոված մնան, ոչինչ, սոված կը դիմանան, ամէնուրեք ականապատուած է, այնքան ականներ կայ հողի մէջ դրուած։ Այս ականները դրուած են առանց քարտէսի, հէնց հողը անցք են բացել ու լցրել, որպէսզի կարողանան փրկուել։ Ական դնողը այլեւս կենդանի չէ, հնարաւոր չէ բոլորի տեղն իմանալ։ Լոյսը կը բացուի, սակրաւորները կը գան, կը ստուգեն այս ականների տեղերը, մէկ-մէկ կը հանենք ու կը գնանք։

Առաւօտեան ժամը 9ին ճաշեցինք, անչափ բարձր տրամադրութեամբ Վիգէնը, ոնց որ Ղրգ երկնքում, նորից գնում է չտաբ։ Տուն գալուց ասում է.

—Գիտե՞ս, ինձ նման տղայ չի լինի։

Ասում եմ.

—Ինչո՞ւ,

Թէ՝

—Այդպիսի մի գիւղ հանեցինք առանց մի զոհի։

Ազատագրւում է Կավաք կոչուող եկեղեցին։ Կավաք եկեղեցին կառուցել են վանից եկածները, որոնք գաղթել են 1877-78ին, գուցէ դրանից առաջ են եկել, գուցէ այդ թուականներին վերանորոգել են։ Կավաք՝ նշանակում է կայ Աւագը, Աւագ անունով չինարարը, ուղղակի միացեալ ասում ենք Կավաք։ Կավաքը գերի էր Թուրքերի մօտ։ Գուրգէնն ասաց, որ պէտք է բոլորս զոհաբերութիւն անենք այնտեղ, մատաղներ անենք, որ մենք կենդանի կարողացել ենք տուն վերադառնալ։ Ժամը 9ին գնացինք չտաբ, չտաբն ու գպրոցը իրար մօտ են գտնւում։ Դպրոցի տնօրէնն ասաց.

—Հը, ի՞նչ անենք, այսօր դաս անենք, պարապմունքնե՞ր սկսենք, թէ՞ կարող է մեզ գնդակոծեն Թուրքերը, որ իրենց գիւղը վառել ենք արդէն։

Գնացին հարցնեն Արմէնչոյին, հեռուից քմծիծաղով նայում էի, ընկերուհուս ասում եմ.

—Տես, Արմէնչոն այս ըոպէին այդ մարդուն կ'ուղղի դէպի Վիգէնը, որովհետեւ ասում է.

—Գալիս են, բան են հարցնում կամ խնդրում, ես մտածում եմ որտե՞ղ է զէնքը, իրանք ուրի, բանից են հարցնում, չեմ յի-

digitised by A.R.A.R.@

չում. միայն գէնքն եմ տեսնում, մենակ կռուի դաշտն եմ պատկերացնում ամէնուրեք։ Մեզ ասացին այսօր պէտք չէ պարապմունքներ, ցրուէք տները։ Եկայ տուն, արդէն ժամը 9 անց կէս էր, սպասում էի տանը, հարեւանուհիս եկաւ, թէ արի գնանք մի քիչ բանջար հաւաքելու։

Վիգէնը շատ էր կանաչեղէն սիրում, ամէն տեսակ, ամէն ձեւով՝ եփած, տապակած։

Գնացինք բանջար հաւաքելու։ Ջանցած 15 րոպէ՝ մէկ էլ մի խուլ պայթիւն լսեցի։ Հարեւանուհուս ասացի.

—Ամեռա, այս ի՞նչ պայթիւն է, թէ ոչ մի բա՞ն...

—Ի՞նչ պիտի լինի, լաւ, էլի մի քիչ սիրուդ հանգիստ պահիր։

Ջանցած կէս ժամ՝ Արշակս ու Վարդանս եկան, թէ՝

—Վա՛յ, մամա, շուտ արի...

Գնում ենք Այզոխ, որտեղ ժամանակաւոր զինուորական հասպիտալն է։

—Բա, դիտե՞ս, որ պապան մեքենայով, ճանապարհին գնալիս, ականի վրայ պայթել է, բայց ոչ մի բան չի եղել, մամա, ո՛չ մի բան, հանգի՛ստ, ոչ մի բան չկայ, մենակ ասում են ոտքը կտրուած է, այնտեղ վիրահատում են, եկէք գնանք։

Արագ-արագ նստեցինք մեքենան ու ճանապարհուեցինք։ Հէնց ճանապարհի կէսին, որտեղ տեղադրուած էին մեր հրանոթները, որտեղ կայ ուժեղ կապ, կանգնեցրին մեքենան ու ասացին.

—Շուտ, մտէք գնոնափորը, դուս ինքնաթիռ կայ, այս բոպէին ռմբակոծում են։

Արդէն «Սու» ռմբակոծիչը եկել էր, մեզանից ահագին հեռաւորութեան վրայ ռումբ էր նետել։ Բարեբախտաբար ռումբը անտառը էր ընկել, չնայած վնասել էր կողքի դիւզի թաղուած որոշ տներ, բարեբախտաբար զոհեր չկային։ Շտապ-շտապ հասանք հասպիտալ, պատուհանից տեսայ վիրահատական սեղանի վրայ արնաթաթախ պառկած է Վիգէնը։ Աւտոն պայթել էր տանկային ականի վրայ։ Փոքրիկ 10 սմ. ունեցող բեկորը մտել էր ականջի տակ ու այլեւս ոչ մի օգնութիւն։ Դադարել է բաբախել նրա սիրտը, որ ո՛չ յոգնութիւն ունէր, ոչ էլ օգնութիւն։ Մանօթ վիրաբուժը արցունքախառն մշակում էր վէրքը, չէր հաւատում։ Արմէնչոյի հետ միասին պատուհանից նայում էինք ներս։ Անընդհատ Արմէնչոյի ձեռքն էի սեղմում.

—Վա՛յ, Արմէնչո, ի՞նչ կ'անենք, ինչպէ՞ս կ'ապրենք։

Ասաց.

—Եթէ իմանամ, թէ ինքը պիտի կենդանանայ այս նեռնակով, ես ինձ կը սպանեմ։ Ես կը պատկեմ նրա տեղը, չեմ համբերում։

Իրը պէտք է տանէին Երեւան, դեռեւս չգիտէինք իր վէրքի աստիճանը, տեսակը, ասացին, որ ուղղաթիռ պէտք է գայ տեղափոխելու, մօտեցայ բժշկին՝ հարցրի.

digitised by A.R.A.R.@

Ասել են.

—Ոչ, պէտք չէ այդպէս։

Ժամը 4ին եկաւ, թէ սոված ու յոգնած եմ, խսկոյն ոտքերը լուացինք, սեղան դրեցի, քիչ ու միչ կերաւ, երեխաներին մէկ-մէկ համբուրեց ու պառկեց, որ մի քիչ հանգստանայ։ Անընդհատ հեռախօսը զանգում է, զանգողը վարորդ Կիմանն է, Արմէնէոյի փեսան։ Ասում է. «Վրէժ, բա պոստի տղաները սոված են, ինչպէ՞ս կարող եմ մեքենայով հաց հասցնել»։

Վրէժն էլ, իր սովորութեան, իր զգուշութեան համաձայն, ասում է.

—Հիմա չգնաս, թող սոված մնան, ոչինչ, սոված կը դիմանան, ամէնուրեք ականապատուած է, այնքան ականներ կայ հողի մէջ դրուած։ Այս ականները դրուած են առանց քարտէսի, հէնց հողը անցք են բացել ու լցրել, որպէսզի կարողանան փրկուել։ Ական դնողը այլեւս կենդանի չէ, հնարաւոր չէ բոլորի տեղն իմանալ։ Լոյսը կը բացուի, սակրաւորները կը գան, կը ստուգեն այս ականների տեղերը, մէկ-մէկ կը հանենք ու կը գնանք։

Առաւօտեան ժամը 9ին ճաշեցինք, անչափ բարձր տրամադրութեամբ Վիգէնը, ոնց որ Դրդ երկնքում, նորից գնում է չտաք։ Տուն գալուց ասում է.

—Գիտե՞ս, ինձ նման տղայ չի լինի։

Ասում եմ.

—Ինչո՞ւ,

Թէ՝

—Այդպիսի մի գիւղ հանեցինք առանց մի զոհի։

Զատագրւում է կավաք կոչուող եկեղեցին։ Կավաք եկեղեցին կառուցել են Վանից եկածները, որոնք գաղթել են 1877-78ին, գուցէ դրանից առաջ են եկել, գուցէ այդ թուականներին վերանորոգել են։ Կավաք՝ նշանակում է կայ Աւագը, Աւագ անունով չինարարը, ուղղակի միացեալ ասում ենք կավաք։ Կավաքը գերի էր թուրքերի մօտ։ Գուրդէնն ասաց, որ պէտք է բոլորս զոհաբերութիւն անենք այնտեղ, մատաղներ անենք, որ մենք կենդանի կարողացել ենք տուն վերադառնալ։ Ժամը 9ին գնացինք չտաք, չտաքն ու դպրոցը իրար մօտ են գտնւում։ Դպրոցի տնօրէնն ասաց.

—Հը, ի՞նչ անենք, այսօր դաս անենք, պարապմունքնե՞ր սկսենք, թէ՞ կարող է մեզ գնդակոծեն թուրքերը, որ իրենց գիւղը վառել ենք արդէն։

Գնացին հարցնեն Արմէնէոյին, հեռուից քմծիծաղով նայում էի, ընկերուհուս ասում եմ.

—Տես, Արմէնէոն այս բոպէին այդ մարդուն կ'ուղղի դէպի Վիգէնը, որովհետեւ ասում է.

—Գալիս են, բան են հարցնում կամ խնդրում, ես մտածում եմ որտե՞ղ է դէնքը, իրանք ուրիշ բանից են հարցնում, չեմ յի-

digitised by A.R.A.R.@

չում. միայն ղէնքն եմ տեսնում, մենակ կռուի դաշտն եմ պատկերացնում ամէնուրեք։ Մեզ ասացին այսօր պէտք չէ պարապմունքներ, ցրուէք տները։ Եկայ տուն, արդէն ժամը 9 անց կէս էր, սպասում էի տանը, հարեւանուհիս եկաւ, թէ արի գնանք մի քիչ բանջար հաւաքելու։

Վիգէնը շատ էր կանաչեղէն սիրում, ամէն տեսակ, ամէն ձեւով՝ եփած, տապակած։

Գնացինք բանջար հաւաքելու։ Ջանցած 15 րոպէ՝ մէկ էլ մի խուլ պայթիւն լսեցի։ Հարեւանուհուս ասացի.

—Սվետա, այս ի՞նչ պայթիւն է, թէ ոչ մի բա՞ն...

—Ի՞նչ պիտի լինի, լաւ, էլի մի քիչ սիրտդ հանգիստ պահիր։

Ջանցած կէս ժամ՝ Արշակ ու Վարդանն եկան, թէ՝

—Վա՛յ, մամա, չուտ արի...

Գնում ենք Այզոխ, որտեղ ժամանակաւոր ինուորական հոսպիտալն է։

—Բա, պիտե՞ս, որ պապան մեքենայով, ճանապարհին գնալիս, ականի վրայ պայթել է, բայց ոչ մի բան չի եղել, մամա, ո՛չ մի բան, հանգի՛ստ, ոչ մի բան չկայ, մենակ ասում են ոտքը կոտրուած է, այնտեղ վիրահատում են, եկէք գնանք։

Արագ-արագ նստեցինք մեքենան ու ճանապարհուեցինք։ Հէնց ճանապարհի կէսին, որտեղ տեղադրուած էին մեր հրանօթները, որտեղ կայ ուժեղ կապ, կանգնեցրին մեքենան ու ասացին.

—Շուտ, մտէք գետնափորը, օդում ինքնաթիռ կայ, այս րոպէին ռմբակոծում են։

Արդէն «Սու» ռմբակոծիչը եկել էր, մեզանից ահագին հեռաւորութեան վրայ ռումբ էր նետել։ Բարեբախտաբար ռումբը անտառը էր ընկել, չնայած վնասել էր կողքի գիւղի թաղուտի որոշ տներ, բարեբախտաբար զոհեր չկային։ Շտապ-շտապ հասանք հոսպիտալ, պատուհանից տեսայ վիրահատական սեղանի վրայ արնաթաթախ պառկած է Վիգէնը։ Աւտոն պայթել էր տանկային ականի վրայ։ Փոքրիկ 10 սմ. ունեցող բեկորը մտել էր ականջի տակ ու այլեւս ոչ մի օգնութիւն։ Դադարել է բաբախել նրա սիրտը, որ ո՛չ յոգնութիւն ունէր, ոչ էլ օգնութիւն։ Մանօթ վիրաբուժը արցունքախառն մչակում էր վէրքը, չէր հաւատում։ Արմէնչոյի հետ միասին պատուհանից նայում էինք ներս։ Անընդհատ Արմէնչոյի ձեռքն էի սեղմում.

—Վա՛յ, Արմէնչօ, ի՞նչ կ'աննենք, ինչպէ՞ս կ'ապրենք։

Ասաց.

—Եթէ իմանամ, թէ ինքը պիտի կենդանանայ այս նունակով, ես ինձ կը սպանեմ։ Ես կը պառկեմ նրա տեղը, չեմ համբերում։

Իբր պէտք է տանէին Երեւան, դեռեւս չգիտէինք իր վէրքի աստիճանը, տեսակը, ասացին, որ ուղղաթիռ պէտք է գայ տեղափոխելու, մօտեցայ բժշկին՝ հարցրի.

digitised by A.R.A.R.@

—Գառնիկ, ի՞նչ վիճակում է, կարո՞ղ է արդեօք ուղեղը ցնցուած լինել, որ ուղղաթիռի մէջ չվնասուի...

Դէմքը շրջելով ինձանից՝ ասաց.

—Գրեսա, ուղեղ չունի, 1-2 բոպէի կեանք ունի։

Ամբողջ Արցախի երկնակամարը փլուեց գլխիս։ Մտայ վիրահատական սենեակ, դեռեւս զարկերակը խփում էր, մօտեցայ, դեռեւս երիտասարդ սրտի արիւնն էր հոսում սրտից։ Վիրաբոյժը անընդհատ յորդորում էր, բուժաշխատողներին չտապեցնում էր, որպէսզի վիրահատական սեղանից տեղափոխեն, որովհետեւ չէր ուզում տեսնել իր ընկերոջը այդ վիճակում։

Շտապ օգնութեան մեքենայով, իր ընկերների ուղեկցութեամբ տուն բերեցինք։ Ամէնուրեք ներկայանում էին գլուխ խոնարհելով Վիգէնին։

Մի քիչ ուզում եմ կարեւորութիւն տալ այն դէպքին, երբ մեր գիւղի համար, առաջին անգամ անսովոր կերպով նրա աճիւնը պէտք է ամփոփէին, ոչ թէ ժառանգական դերեզմանոցում, ծնողների կողքին, այլ՝ Եռազիլը Գրիշայի խնդրանքով ինձ հարցրին, որտե՞ղ կարող են ամփոփել Վիգէնի աճիւնը, ես ասացի.

—Գիւղի նախկին շտաբի բակում, որտեղ հայրենական պատերազմի զոհուածների յուշարձանն է։

Զարմանալի է ինձ համար, ինչպէ՞ս կարելի է աճիւնը ամփոփել, ինչպէ՞ս կարելի է ամէն օր անցնել այդ ճանապարհով։ Այդ ճանապարհով ես գնում եմ ջրի, դպրոց, խանութ, փոստ, բանջարանոց, ընկերոջ մօտ հիւանդանոց։ Միեւնոյն է՝ պէտք է ամփոփէի։ Երբ երեկոյեան, բոլորս էլ այրուած, խանձուած դէմքերով, նստած իրար էինք նայում, Արմէնչոն աչքերիս նայեց ու ասաց.

—Եթէ ինձ մի բան պատահի, կը տանէք Վիգէնի մօտ։

Ասացի.

—Հարիւր անգամ, հազար անգամ ինձ ների, ամօթ չի, Արմէնչօ, ինչ ես ասում։

Թէ՝

—Ոչ, ես առանց իրեն չեմ կարող մնալ, ինձ էլ պիտի տանէք նրա մօտ։

Այժմ, երկուսն էլ իրար մօտ յաւիտեան նինջով քնած են։

* * *

Ես ուզում եմ Վիգէնի մասին մի քիչ աւելացնել։ Վիգէնը 1992ի Դեկտեմբերից մինչեւ 93 թ.ի Յունուարի վերջերը, Ստեփանակերտ էր գնում իւրաքանչիւր շաբաթը մէկ անգամ ու ամէն անգամ ասում էր.

—Ս.Կ.ի նիստ ունենք։

Մի անգամ ինքն ու Արմէնչոն նստած էին, հարցնում եմ.

digitised by A.R.A.R.@

—Ի՞նչ է Կ.Կ.ը։

Արմենչոն չգիտէր, աչքով արեց, թէ՝

—Մենք զինուորականներ ենք, պահանջում ենք չտալի կողմից, նախ դու ասա տեսնենք ի՞նչ է. եթէ հաւանենք քո ասածները, կ'ընդունենք ու մենք էլ կ'աւելացնենք մերը։

Ասում եմ.

—Դէ, կը-կը երկու տառերը կենտկում է նշանակում։

Արմենչոն հարցնում է.

—Հա՞, Վրէժ, կենտկո՞մ է նշանակում։

Ասաց.

—Այո։

—Իսկ, ինչո՞ւ են Կ.Կ. ասում։

—Այբուբենի մէջ «Կ» տառը գրաբարում «կեն» են ասում, դրա համար էլ ասում են կենկեն, ինչպէս «Զ» ասում են «զա», ա՛յ, այդ ձեւով է։

Արմենչոն ասաց.

—Ձի՞չտ է ասում, Վրէժ։

Ասաց.

—Այո՛, մի զբաղեցնի, թող սեղանը չարի, ուշանում ենք։

Այդպէս էլ Կ.Կ.ը այդ օրը իմ կողմից բացատրուեց, իսկ նրանք զարմանքով ընդունեցին, Վիգէնը ասաց.

—Բա՛ չգրե՞մ, կարող է մոռանամ։

Ասացինք.

—Քեզ մոռանայ։

Կ.Կ.ի նիստերից յետոյ միշտ ասում էի.

—Հնարաւոր չի՞, դու ընկերներիդ Ստեփանակերտ ասես, որ ամէն անգամ այստեղից մինչեւ Ստեփանակերտ չգնաս, ախը, ճանապարհները վատ են, դեռեւս ճանապարհի որոշ հատուած վտանգաւոր է, վառելիքի հարցն է։

Ասում է.

—Է՛, չես հասկանում, չէ՞, պէտք է անպայմա՛ն գնամ։

Ու ամէն անգամ նորութիւններ էր բերում։ Ստեփանակերտից վերադառնալուց միշտ հարցնում էի, թէ՝

—Բերե՞լ ես թղթերից։

—Այո, բերել եմ, որի՞ց ես ուզում։

—Ասում եմ՝ «Երկիր» եմ ուզում։ Սիրում եմ «Երկիր» թերթը վերնագրից մինչեւ խմբագիր, մինչեւ հասցէ։ Միայն այդ թերթի առաջին էջի որոշ համարներ չեմ սիրում, գոյժը չեմ սիրում։

Բացատրում էի երեխաներին, թէ ի՞նչ է նշանակում գոյժ։ Ամէն անգամ տխուր բերում են թերթը ու ասում.

—Դրեստա, տես, գոյժի մէջ ովքե՞ր են։

Եւ Ապրիլի 6ին երբ իրեն յուղարկաւորումն էր, Երեւանից երկու հոգի ներկայացան, որոնք նախկին ծանօթներ էին, 1992 թ.ի

digitised by A.R.A.R.@

ամրանը մեր տանն էին, Բագրատն ու Աբոն, ինձ նուիրեցին «Երկիր» թերթը, ես չատ ուրախացայ, դա մի տեսակ սպեղանի էր ինձ եւ գոյժի մէջ էր Վիգէնի անունը, պահում ու պաշտում եմ։ Երբ ընկերները դալիս են ինձ ցաւակցելու, վերջում աւելացնում են.

–Ի՞նչ կ'ուզէք։

–Միայն «Երկիր» ու «Ազատամարտ» թերթերն եմ ուզում։

1993 թ. Ապրիլի 13ին, «Երկիր» թերթում ինչ-որ նիւթ են տպագրել, որ Վիգէնի անունով ջոկատ է ստեղծուած, որ պէտք է գայ այստեղ մարտնչի, եւայլն, դեռ այդ համարը չեմ կարդացել, խոստացել են ինձ հասցնել, բայց մինչեւ օրս չկայ, ոչինչ, երեւի կը գայ եւ մեզ կը գտնի։

Երբ Վիգէնի աճիւնը դագաղում դասաւորում էինք, ուղղում, փակում մարդկանցից, միայն ու միայն իր սրտով երեւի իր գրպանն եմ դրել «Մահ կամ Ազատութիւն» դրօշը, որ Վահանն էր նուիրել, «Դաշնակցութեան պատմութիւնը», «Կանոնագիր»ը եւ այլ գրքոյկներ, թող յաւիտեան միասին լինեն, երեւի ինքը թեթեւ կը զգայ այդպէս։

1992 թ. Նոյեմբերին էր, գիշերը ժամը 4 անց կէս տուն եկաւ բարձր տրամադրութեամբ, անընդհատ երգելով էր բարձրանում, ասում եմ.

–Ի՞նչ է պատահել, ա՛յ Վիգէն։ Ի՛նչ պատահեց, ամօթ է։

Չնայած տանը մարդ չկար, ասում է.

–Որ իմանաս ո՞ւմ հետ էի։

–Մ՞ւմ։

Թէ՝

–Բաֆֆու։

–Մ՞ր Բաֆֆու։

Թէ՝

–Բաֆֆի Յովհաննիսեանի։

–Երգի՞չ Բաֆֆի Յովհաննիսեանի։

Ասում է.

–Վա՛յ, ինչքա՛ն ես յետամնաց, բա՛ չգիտե՞ս, Հայաստանի կառավարութեան հրամանով Բաֆֆի Յովհաննիսեանը իր հրաժարականը տուեց։

Ասում եմ.

–Դէ լաւ, էլի, Բաֆֆի Յովհաննիսեանը ռադիոյո՞վ։

–Մ՛չ, միասին Հադրութ ենք եղել, Հադրութից մինչեւ Ֆող, ես, Բաֆֆին, Արմէնչոն երգելով եկանք։

–Ասում եմ ի՞նչ երգ էիք երգում։

–Բաֆֆի Յովհաննիսեանը երգում էր «Դաշնակցութիւն ժողով արեց, Թեհլիրեանին Բեռլին ղրկեց»։ Վեր կաց՝ լամբի լոյսը մի

digitised by A.R.A.R.@

քիչ ուժեղացրու ու տես ո՞նց է Թեհլիրեանը Թալեադին գետնին զարկեր։

—Հօ՛, ինձ վրայ փորձ չե՞ս անելու։

Ասում է.

—Ջէ, պիտի այնպէս ասենք, որ լաւ լինի։

Իսկ Արմէնչոն ասում է.

—Ա՛, Վրէժ, այդ երգը ե՞րբ պիտի սովորեմ։

Ասում ենք.

—Արմէնչօ, ո՞ր երգը գիտես։

Թէ՝

—Մենակ՝ «Եռագոյն դրօշը», էն էլ մէկ-մէկ մոռանում եմ, մի քիչ երգում եմ, յետոյ իմ խմբի տղաները շարունակում են, ես մոռանում եմ, յետոյ կամաց-կամաց ձայնակցում։

Բաֆֆի Յովհաննիսեանից յետոյ եկաւ ու ասում է, թէ՝

—Այդ երգը պիտի անգիր անեմ ու միշտ պիտի երգեմ։

Ամենասիրած երգը «Ադանայի ողբ»ն էր, որ տխուր պահերին երգում էր։ Երբ տխրում էինք ասում էր.

—Չվախենաք, մենք այլեւս ողբ չենք տեսնելու, դա Ղարաբաղին չի վերաբերւում, «Ադանայի ողբ է», թէ ինչ է։ Ղուշադլուն ազատագրել ենք, որ դէպի Իրան սահման ունենանք, որ պետութիւն դառնանք, որ պետականօրէն մեզ ճանաչեն չճանաչողները, վայ ղեկավարները, որոնք չեն ուզում մեզ բարձրացնել, մեր արժէքը դեռ չգիտեն։

Միշտ ասում էր.

—Երբ անցնի գարունը, վարդի դինը նոր ենք խմանում։

Ճիշտ այդպէս է, որ այդ մասին փոքրիկ յօդուած տպուելուց յետոյ «Ցառաջ» շրջանային բուլետինում տպուել էր, վերնագիրը այդպէս էր՝ «Կոտրուելուց յետոյ է իմացւում միայն ծառի բուն հաստութիւնը»։ Ճիշտ է, կոտրուելուց յետոյ էր։

Վիգէնի հետ անչափ մտերիմ էր Գանատայից Բաֆֆի Շամլեանը։ Նա 1992 թ.ի Օգոստոսին մեզ մօտ էր եկել՝ Հրայր Խաչոյեանի հետ միասին։ Երբ ծանօթացանք Բաֆֆի Շամլեանի հետ զարմացաւ, որ չգիտեմ արտասահմանում գործում է Շամլեան վարժարանը։

Հարցրեց.

—Իսկ դու Ռուբէնի յուշերը կարդացե՞լ ես։

Ասացի.

—Բաֆֆի, կը ներես, ի՞նչ Ռուբէն, ես Ռուբէն յեղափոխական չգիտեմ։

Վիգէնն էլ կողքից ծաղրանքով աւելացրեց.

—Ինքը միայն իր հայր Ռուբէնին գիտի։

—Հօրս անունը Ռուբէն է։

Դեկտեմբերին մի օր, իր սովորութեան համաձայն, գիշերուայ 12ն անց էր, ցուրտ, տեսնեմ Վիգէնը եկաւ, թէ՝

digitised by A.R.A.R.@

–Արթո՞ւն ես, վեր կաց, քեզ համար լաւ-լաւ նուէրներ եմ բերել։

Ասում եմ.

–Միայն «Երկի՞ր», թէ՞ ուրիշ բան էլ ես բերել։

Ասաց.

–Ձէ, պէտք է վեր կենաս, փոքրիկ ծանրոց ունենք, պիտի բացես։

Վեր եմ կենում, լամբի լոյսի տակ բացում, տեսնեմ ի՞նչ ուրախութիւն, Բաֆֆի Շամլեանը անձնական գրադարանից Ռուբէնի 7 հատորները մեզ է ուղարկել։

Կարդում եմ այժմ այդ հատորները մէկիկ-մէկիկ, տխուր-տըխուր եւ ինչքա՛ն զուգահեռականներ կան, ինչքա՛ն նմանութիւններ կան այսօրուայ պայքարի եւ Ռուբէնի եւ միւս ընկերների մղած պայքարի միջեւ։

Ապրիլի 5ի տխուր օրից յետոյ, ցաւակցական շատ նամակներ եմ ստացել։ Մեր շրջանում, Ղարաբաղում հեռագրական կապը թոյլ է, հեռագրեր չկան։ Առաջին սրտաճմլիկ, հոգեցունց նամակը ստացել եմ Բաֆֆի Շամլեանից, որ ինձ է հասցրել Վարանդ Փափազեանը։

Նամակը գրել է Ապրիլի 10ին։ Այստեղ ինքը նշում է, որ Ղարաբաղ, Հայաստան կատարած այցելութիւնների մասին է պատմել իրենց ընտանիքին, երբ Վիգէնի մահուան սրտաճմլիկ լուրը նրանք առել են եւ այս լուրը ցնցել է Բաֆֆուն հոգեպէս ու ամբողջովին։ Ես գիտեմ, որ իւրաքանչիւր այսպիսի անձնաւորութեան մահուան գոյժը կը ցնցի ազնիւ մարդուն, քանի որ նա ծնուել ու ապրել է միայն հայրենիքի համար։

* * *

Նրան դուր չէր գալիս խաղաղ կեանքը, միայն ու միայն պայքար էր տենչում ու Շամլեանի նամակի մէջ յիշատակուած էր Արմենչոյի մասին, գրում է այսպէս.

«...Անկասկած Վիգէնն ու Արմենչոն ուղիղ շառաւիղներն են Նիկոլ Դումանի, Դրոյի, Անդրանիկի, Համազասպի այն սերնդի, որոնք ազատագրական պայքարի սկիզբն են դրել»։

Երբեմն նրան յանդիմանում էի, դիպուածքների, կատարուածների մասին ասում էր.

–Գիտե՞ս ինչ, որ ծերանամ, թոշակի անցնեմ, 60 տարեկանից յետոյ, կը պառկեմ բազմոցին եւ կը թելադրեմ, դու էլ ինչպէս միշտ, պարտաւոր ես գրանցելու, որ պատմութիւն դառնայ։

Բայց ամէն անգամ 1988ից, երբ տանից դուրս էր գալիս, ասում էր.

–Գրիր, տեսրը վերցրու գրիր, ինչ է կատարւում այսօր։

digitised by A.R.A.R.@

Գրել էի մինչեւ 1991 թ.-ը, վախենալով ՕՄՕՆականներից՝ վառեցի, չէի պատկերացնում, որ կարելի է թաքցնել։ Հաւատում էի, որ այդ թուղթ վառելն էլ մեզ կ'օգնի դժուարութիւնից փրկուելու համար։

Բաֆֆի Շամլեանը տեսնելով այս պայքարը, տեսնելով նրանց կատարածները, ասում էր.

–Եթէ չես հասցնում գրել Վիգէնի ասածները, ես կը գնամ Գանատա, այնտեղից ձայնագրիչ կ'ուղարկեմ։

Այդպէս էլ կիսատ մնաց. ինչքա՛ն դիպուածներ, հերոսութիւններ, քաջագործութիւններ կան, որոնք հետները տարան գերեզման։ Այժմ պէտք է իր ընկերներին փնտռեմ, տեղեկութիւններ հաւաքեմ ու գրանցեմ։ Երեւի պէտք կը գայ ապագայ սերունդների համար։

Արմէնչոն սիրում էր կրկնել.

–Այս Շարժման ուղեղը Վիգէնն է, իսկ ոտքերը՝ ես։

Ինչպէս երբեմն ուղեղն ու ոտքերը իրար էին խառնւում եւ երկուսն էլ մի գործող մարդ էին դառնում։

Վիգէնից յետոյ Արմէնչոն մի տեսակ այլայլուած, իր մահից մէկ շաբաթ առաջ եկաւ ինձ մօտ, մի տեսակ խուսափում էր, խօսելուց ասում էր.

–Գիտե՞ս ինչ, Գրետա, ես չեմ պատկերացնում, որ պիտի ապրեմ այլեւս, երեւի չուտով պիտի գնամ իրա մօտ։

Ասում էի.

–Արմէնչօ, ի՞նչ է։

Ասում էր.

–Այլեւս չեմ կարող ապրել առանց իրան։ Առաջ որ գնում էի մարտի՝ զգում էի, որ թիկունքում ինքն է։

Ասում եմ.

–Լա՛ւ, Արմէնչօ, քիչ տխրիր, հերիք է, եթէ ես կարողանում եմ ինչ-որ կերպ քեզնով իմ վիշտը փարատել, քա ո՞նց կը լինի առանց քեզ։

Ասում է.

–Ես չեմ կարող առանց նրան դիմանալ եւ դեռ երեք ամիս չէր անցել, 3 օր պակաս էր 3 ամսից, երբ ինք էլ գերեզման իջաւ։

ԳՐԵՏԱ ԱՒԵՏԻՍԵԱՆ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Փ. ՃԵՐԱՆԵԱՆ

ՏՈՒՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Կար ժամանակ,
տուներն իրարու մօտ էին այնքա՜ն.
մէկուն գիշերն ընդարձակ,
ցանկապատուած առօրեայովը միւսին՝
տան մը քաղցր մթնոլորտը կը լուսէր...

Յետմիջօրէն,
սալորենիին գաղջ փաղաքշանքով,
աղջկան դիմանկարներ շրջանակելու
ստուերներ կ'արտաշնչէր։

Մեր մանկութեան թախծասեւեռ յոյզերով,
տուներու սպիտակ կտուրներուն հեղեղուած
աստղեր,
կորուսեալ հայրենիքի մասին,
չլուսցող միտքեր կը լուսաբանէին։

Ոմանց համար,
աստղերն այդ
հայրենաւանդ սօսիներու շուքերուն գոհուած
հարազատի
արեան ցայտքերն էին,
երկինքի անեզրութիւնն ի սպառ մրոտած...

Օ՜, ժամանակ,
անհրաժեշտ մեկնողներու բազմութեանց ընդմէջէն,
ինծի սեւեռող դիմաստուերներով՝
օրերուս ո՞ր անբնակ մայրուղիներն ես խճողեմ։

Հիմա կարծես,
ցերեկը մէկուն
գիշերն է միւսին
եւ կարենալ պահելու համար
փոթորկայոյզ
նժարները նոյն կշիռքին՝
հարկաւոր է,
որ ես ննջեմ գիշերները լոկ մէկ աչքով,
միւսին մէջ պահելու դէմքդ արթուն։

digitised by A.R.A.R.@

Շէնքի մը,
երեսուն յարկերուն տակ ցանցուած՝
օտարներու մէջ անլեզու,
քաջատեղեակ մնջախաղի արուեստին,
միակ օտարն ես ըլլամ։

Եւ դեգերի՜մ, դեգերի՜մ,
ժամերուն հետ երբեք չժամադրուած՝
սլաքին նման։

Մեր փողոցի ծայրամասին,
տուներու կէս գիշերային խոստովանանքն ունկնդրող
լապտեր մը կար,
որուն լոյսին՝
գինովի մը մենախօսութեան յաջորդող
ոռոգէին նման,
տարիները ամայացան...

ՄՕՐՍ ԱՉՔԵՐԸ

Մօրս աչքերն յաճախ խոնաւ եղած են,
հայեացքիս մէջ դեռ մանկուց,
երկինքներու արեւամերձ տարածքն այդ՝
չարտաբերուած բառի մը վաւերականութեամբ պահելու։

Տարագրութեան անչափելի տարիներուն,
թաշկինակի կարիքն ան կորսնցուցած էր ի սպառ.
արտասուքն իր՝ գոգնոցով
կը ցամքեցնէր։

Կը թուէր,
թէ ան իր դէմքը երկու անգամ կը ցօղուէր.
իր օրուան մէջ,
կարծես երկու առաւօտներ ըլլային։

Մէկը՝ նօսր մեր աչքերուն մէջ կայթող՝
միւսը՝ - անցեալ կորուսեալ -
աղբիւրի մը լուսաթաթաւ շշուկէն
արշալոյսներ կայլակող...

ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Պ. ՄՆԱՊԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԱԿ

Տանջալից եղան գիշերային մնացեալ ժամերը: Մահճակալին վրայ գալարուեցայ ու գալարուեցայ, ու երբ յուլիսեան արեւը պատուհանէն ներս խուժեց՝ վեր ցատկեցի:

Հայելիին մէջ չսիրեցի դէմքս: Ցանցանք գործած ու վերահաս պատիժի մը հետեւանքները կանխօրօք ապրող մարդու մը ցաւը կարծէք կը լողար աչքերուս մէջ:

Զարկի զանգակը եւ մօտս փութաց բարեբանին կինը, որ պաշտօն ունէր խնամք տանելու ինծի: Պատուիրեցի լեղի սուրճ մը: Չխաղաղեցան ջիղերս: Խաղաղարար չէր նաեւ սիկարէթին բարկ ծուխը: Բացի «Փարի Մաչ»ի հերթական համարը: Անօգուտ: Ամբողջ Կիրակին Մատամ Պիանքայի փանսիոնը անցընելու որոշումս չեղեալ թուեցաւ մէկէն ու իրիկնադէմի անորոշ կսկիծին խայթը նորէն սկսաւ նեղել զիս:

Փանսիոնէն դուրս գալէ առաջ երբ անդրադարձայ Էտմոնին ու Մունիրին կազմած յայտագիրներուն, զգացի, որ տուած խոստումս աւելի տկարացած է արտիս: Մէջս իր անակնկալ ու առաջին բխումին հետ կը հոլովուէր մեղեդի մը միայն, գիշերը՝ մտերմութեան մէջ երգած Ֆապիանին «Ես չեմ կրնար պառկիլ առանց քեզի, չեմ կրնար ծերանալ առանց քեզի, չեմ կրնար մեռնիլ առանց քեզի» երգին քաղցր մրմունջը, այսուհանդերձ Ֆրանսուհիին հեռաձայնին թիւը առտու առանձին հրապոյրով մը չխռովեց զիս: Ոչինչ կը պակսէր ինծի, ո՛չ երիտասարդական հովեր, ո՛չ առողջութիւն, ո՛չ դրամ, բացարձակապէս ոչի՛նչ, այլ արեանս մէջ սկսած էր կեղծիչ ձանձրոյթ մը, որուն աղբիւրը անյայտ կը մնար: Երբ եօթը տարի առաջ գործի ասպարէզ նետուեցայ, ներկայ կացութիւնս նուաճելի մայր մտահոգութիւնս էր: Հոս եմ հիմա, երազած բարձունքիս վրայ, բայց առանց որ մէկը հարուած մը տուած ըլլայ ինծի կամ բան մը առած-տարած ինծմէ, դատարկութիւն մը միայն կը տեսնեմ ներսս, դուրսը, ամէն տեղ, գործիս թէ վայելքներուս մէջ: Խաղաղարար չէ նոյնիսկ յիշատակը հին տառապանքներուս, որոնք ժամանակաւոր բաղցրութեամբ մը օրօրելէ ետք անձս, որեւէ թոյլ յիշատակի մը պէս կը ցնդին յանկարծ, զիս կրկին միանակ ձգելով տակիւ-առնելիք չունեցող մարդու մը վիճակուած անկարելի դատարկութեան մէջ: Ինծի պէս մարդոց համար տարեցուած այս բաղձակրթու-

digitised by A.R.A.R.@

թենէն, այս փայլփլուն մշակոյթէն, գլխապտոյտ պատճառող շարժանը-կարներէն, պատկերասփիւռէն, ոստիկանական վէպերէն եւ արագ մեր-կացող աղջիկներուն սարսռուն հանոյքներէն յագեցած ըլլալու զգայնու-թեան եւ տարբեր աշխարհի մը մէջ մխրճուելու անկարողութեանս ճիշդ մէջտեղը ինկած հոգիի մը տուայտանքը կը խորանայ ու կը թանձրա-նայ հետզհետէ արեանս մէջ ու կը թունաւորէ էութիւնս: Կեանքը էա-պէս ու լիապէս ըմբոշխնելու համար հոգիս կարօտը ունի ուրիշ բանի մը, որուն անունը կը խուսափի մտէս:

Այս մտատանջութեանց բեռան տակ, ներքնայարկէն դուրս բերի կապոյտ Պուիքս եւ ուղղուեցայ դէպի քաղաքին պերճաշուք թաղը, Համ-բա: Թափառեցայ քիչ մը պարպուած պողոտային ու փողոցներուն մէջ եւ ապա դարձայ ու Հանրային պարտէզը եզերող ճամբէն սկսայ դան-դաղօրէն առաջանալ: Իւնիոն շէնքին մօտ ճիւղաւորուող քառուղիին չհասած՝ պահ մը կանգ առի: Ինքնօրօրման համար տրամադրութիւնս յանկարծ սկսաւ տարուբերիլ ծովուն ու լերան միջեւ: Անցայ քառուղին, ապա թեքեցայ աջ ու սկսայ թաւալիլ Ֆենիսիա պանդոկին զառիթա-փէն: Ծովը աւելի կապուտցած էր կարծէք եւ Սէն ժորժ պանդոկի յար-դարած լողափին սկսած էին փալփլիլ շարժուն ու անշարժ մերկութիւն-ները: Ծո՞վ թէ լեռ, լե՞ռ թէ ծով, կը կրկնէի շարունակ ու կը մնայի նոյն կէտին վրայ: Նորմանտիին առջեւէն անցած պահուս՝ մէկէն ծո-վուն մէջ երկարած մօտակայ Հաճ Տաւուտի մէջ սուրճ մը առնելու փափաք մը ծնաւ մէջս: Ասպարէզիս մէջ ծանօթ անուն դարձած առա-ջին տարիներուն, պայմանագրութիւններ կնքելու համար յաճախ հոս կը ժամադրուէինք յաճախորդներու հետ, գործի մէջ ճիւղաւորուելէ ա-ռաջ, ժամանակ սպանելու համար բարեկամներու հետ եւս կը հանդի-պէինք այս սրճարանը եւ ունէինք մեր նախասիրած անկիւնը, երբէք կողմերէն ծովուն նայող սեղան մը, որուն վրայ հիմա հակած էր ան-խնամ արտաքինով, սեւ մազերը ճակտին թափած ազազուն երիտասարդ մը: Հակառակ անոր, որ գրաւած սեղանին համար տեսակ մը տհաճու-թիւն զգացի իրեն հանդէպ, ուղղուեցայ իր կողմը եւ տեղ գրաւեցի ֆովի սեղանին առջեւ: Երիտասարդը վերջացուցած ըլլալ կը թուէր առ-ջին փռած թերթերուն ընթերցումը ու կարմիր մատիտով կը խաղար թուղթի կտորի մը հետ, ազահօրէն ներծծելով Կոլուազին առատ ծու-խը:

«Լ'Օրիան»ի լուրերուն խորագիրները աւարտած՝ խմբագրական նոթին վրայ աչք մը պտտցնելու կը պատրաստուէի, երբ դանդաղօրէն մօտէս անցաւ յիսունի շուրջ դեգերող պատկառելի անձնաւորութիւն մը ու, ֆովի սեղանին առջեւ կանգ առնելով՝ հարցուց գորովալիր.

–Այսօր ինչպէ՞ս ես, Ատոմ:

–Միշտ նոյնը,– պատասխանեց սեւահեր երիտասարդը նոյնպէս յարգալիր,– միշտ նոյնը, «Ծով կենցաղոյս հանապազ զիս ալեկոծէ»:

Արտասանած վերջին բառերուն հետ՝ սկսաւ խնդալ եւ աչքերուն մէջ ուրուացաւ սատանայական ուժ մը, մինչ միւսը սկսաւ երանի տալ

digitised by A.R.A.R.@

իրեն, իր անկախութեան, ֆաշուրեան, անարդարութիւնները անարկիւղ դիմագրաւելու կորովին համար։

Ի լուր անոնց բառերուն՝ արիւնս սկսաւ խռչալ եւ առանց ինքզինքս մատնելու՝ աւելի արեցի լռութիւնս։ Շատով պարզուեցաւ, որ «Գարեան» միջնակարգ վարժարանին մէջ պաշտօնակից ուսուցիչներ եղած են ու եկած են խորհրդակցելու աւելի երիտասարդ ուսուցիչի մը բախտին շուրջ։

-Ձե՞մ խանգարեր,- ըսի՝ մօտենալով իրենց։

-Նստէ,- ըսաւ երիտասարդը մաքրմակաւ եղանակով,- խանգարելու բան չկայ։

Համարձակութիւնս աւելի զօրացաւ եղած բուխ երաւէրին վրայ։ Հարցուցի.

-Որո՞նց հետ խօսելու պատիւը ունիմ։

-Ես Ատամ կը կոչուիմ, գործէ նոր արձակուած վարժապետ, իսկ վաստակաւոր ուսուցիչ պարոն Արգարը, նովին բանիւ, գործազրկութեան թեկնածու։ Դո՞ւք։

-Գարոյր Անյայտ։ Բնակարանային շինութեանց յանձնակատար։

Մականունս լսող ամէն մարդու պէս անմիջական եղաւ իրենց զարմանքը, զոր փարատելու համար տուի ծանօթ մանրամասնութիւնը։

Հայրս, Անատոլուի կողմերէն փրկուած որբ մը, համրացած-մնացած է Որբահաւաքի մարմինին առջեւ, ո՛չ ծնողներուն անունները կրցած է յիշել, ո՛չ ծննդավայրը եւ ոչ ալ իր անունը, եւ Որբահաւաքի անդամներէն մէկը Վահան արձանագրած է զինք եւ ծննդավայրը յորջորջած Անյայտ։ Այդ արձանագրութիւնը հետագային նոյնութեամբ անցած է ինքնութեան թուղթին վրայ։

-Այսպէս է պատմութիւնս,- ըսի,- ես որբ հօրս որբ զաւակը՝ Գարոյր Անյայտ։

Տուած ծանօթութիւններս երեւի բաւարարութիւն տուաւ իրենց եւ այնուհետեւ ինձմով չհետաքրքրուեցան։ Սկսան շարունակել իրենց կրտսեր պաշտօնակիցին մասին ինչ առաջ ընդհատուած խօսքը։ Որքան հասկցայ, ան հոս պէտք է ըլլար այս պահուն, բայց որեւէ լուր չկար իրմէ։ Ատամ կը զարմանար այդ յապաղումին համար։ Գարոն Արգար, ընդհակառակն, անոր բնաւորութեան մէջ նոր նշմարած վերապահութիւնները ուրուագծելով՝ եղածը անակնկալ չէր համարեր։ Իր ենթադրութիւնը համոզումի վերածած, սուրնը աւարտելէ ետքը ժամանակ անց՝ ան տարի եկաւ, խառնուելով բախել իրենց դուռը ու, հետքը գտնելէ հետ միասին հանդիպիլ Ատամին նոյն վայրը։

-Ահա մարդը, գլխագիր Մարդը,- ըսաւ Ատամ, երբ դուրս եկաւ պրպտած Արգար եւ նոյն հիացումով շարունակեց իր խօսքը անոր մասին։

Շարք մը տարիներ դար ուսուցչական ասպարէզը ընդգրկած ազնիւ մարդ մը պրպտած Արգար, իր ստանձնած բոլոր նիւթերը սիրելի ընծայելու բազմաթիւ կարողութեամբ օժտուած հոգի, որ խոնաւ իր յարկին

digitised by A.R.A.R.@

հարուածներէն զարնուած ոտքին համար խնդրած էր գերծ կացուցուիլ հերթապահի ու հսկիչի յաւելուածական պարտաւորութիւններէն, եւ սակայն վարժարանին հոգաբարձութիւնները մերժած էին իրեն այդ շնորհը, սպառնալով, որ եթէ մերժէ ընդառաջել առաջարկուած նախկին պայմաններուն, կրնայ ներկայացնել իր հրաժարականը:

–Այդ անողոք մթնոլորտին մէջ ընդունած էր էֆենտիներուն պայմանը,– ըսաւ Ատոմ,– հաւանաբար այն մտածումով, որ կրնար անձնասպան ըլլալ առանց աշակերտ ունենալու հրճուանքին:

–Քե՞զ ինչու գործէ արձակեցին, պարոն Ատոմ,– հարցուցի հետաքրքիր:

–Նախ՝ մոռցիր պարոնը, Ատոմը կը բաւէ:

–Լաւ,– ըսի ժպտուն ու կրկնեցի հարցումս:

–Պարզ չէ՞ միթէ:

–Ոչ:

Պատմեց:

Մէկ ուսուցիչ պակաս ունենալու շուկայիկ հաշիւով մը բարձրագոյն դասարաններէն երկուքը միացնելու պատասխանատուներուն կամայական որոշումը համարած էր ոճիր եւ այդ յանդգնութիւնը չէին ներած իրեն: Տուեալ բախումին վաղորդայնին արդէն սկսած էր իր շուրջ հիւսուիլ բանսարկութիւններու սարդոստայնը եւ պատահած էր այն, որ ինն ամիս առաջ ծրագրած էին դաւին վիրաւորուած հեղինակները:

–Միշտ այդպէս եղած է, յաղթական դուրս եկած են ամիրաները,– եզրակացուց Ատոմ՝ լիահագագ խնդալէն:

Այդ պահուն ներս մտաւ տարեկից, այլ բարձրահասակ ու հեղինակաւոր երեւոյթ մը մատնել ուզող երիտասարդ մը, որ աչք մը պտտցնելէ ետք շուրջը, լայն ժպիտ մը ձեւացնելէն եկաւ եւ Ատոմը բարեւելէ ետք ուղղակի տեղ գրաւեց մեր սեղանին երրորդ աթոռին: Ներկայացանք իրարու: Հայաստանի համալսարանի բանասիրական ճիւղը աւարտած Վանակ Նարեան, որ այժմ կ'աշխատէր Գատերազմէն ետք հասակ նետած Սփիւռքի գրողները պատկերացնելու կոչուած թեզին վրայ: Այդ առընչութեամբ, ուրիշներու կարգին, քանի մը հանդիպում ունեցած էր նաեւ Ատոմին հետ ու հիմա եկած էր նոր հարցումներով: Թուեց քանի մը անուններ ու առանձին հետաքրքրութեամբ մը կանգ առաւ Լեւոն Վարագեանի մը դիմաց:

–Անձամբ չեմ ճանչնար Վարագեանը,– ըսաւ Ատոմ,– թերթերուն մէջ քանի մը անգամ միարար թատերգութիւններու տակ հանդիպած եմ անունին: Անմիջապէս կը զգացուէր բառերուն հետ իր ներքին առընչութիւնը եւ ուզէր կարծես երազի մը համար տառապելու փոթորկալի ընդունակութիւն մը: Մե՛ղք...

–Ա՞ն ալ վաղամեռիկ գնաց,– հարցուցի՝ նախակրթարանի օրերս յիշելով:

–Ոչ, մնաց, դիմեց սակայն միւս անձնասպանութեան, լռեց:

digitised by A.R.A.R.@

իրեն, իր անկախութեան, քաջութեան, անորոշութիւնները աներկիւղ դիմագրաւելու կորովին համար։

Ի լուր անոնց բառերուն՝ արիւնս սկսաւ խայտալ եւ առանց ինքզինքս մատնելու՝ աչքի սրեցի լսողութիւնս։ Շուտով պարզուեցաւ, որ «Պարեան» միջնակարգ վարժարանին մէջ պաշտօնակից ուսուցիչներ եղած են ու եկած են խորհրդակցելու աչքի երիտասարդ ուսուցիչի մը բախտին շուրջ։

–Ձե՞մ խանգարեր,– ըսի՝ մօտենալով իրենց։

–Նստէ,– ըսաւ երիտասարդը մտերմական եղանակով,– խանգարելու բան չկայ։

Համարձակութիւնս աչքի զօրացաւ եղած բուխ հրաւէրին վրայ։ Հարցուցի.

–Որո՞նց հետ խօսելու պատիւը ունիմ։

–Ես Ատոմ կը կոչուիմ, գործէ ներ արձակուած վարժապետ, իսկ վաստակաւոր ուսուցիչ պարոն Արգարը, նովին բանիւ, գործազրկութեան թեկնածու։ Դո՞ւք։

–Պարոյր Անյայտ։ Բնակարանային շինութեանց յանձնակատար։

Մականունս լսող ամէն մարդու պէս անմիջական եղաւ իրենց զարմանքը, զոր փարատելու համար տուի ծանօթ մանրամասնութիւնը։

Հայրս, Անատոլուի կողմերէն փրկուած որբ մը, համրացած-մնացած է Որբահաւաքի մարմինին առջեւ, ո՛չ ծնողներուն անունները կըրցած է յիշել, ո՛չ ծննդավայրը եւ ոչ ալ իր անունը, եւ Որբահաւաքի անդամներէն մէկը Վահան արձանագրած է զինքզինքս եւ ծննդավայրը յորջորջած Անյայտ։ Այդ արձանագրութիւնը հետագային նոյնութեամբ անցած է ինքնութեան թուղթին վրայ։

–Այսպէս է պատմութիւնս,– ըսի,– ես որբ հօրս որբ զաւակը՝ Պարոյր Անյայտ։

Տուած ծանօթութիւններս երեւի բաւարարութիւն տուաւ իրենց եւ այլեւս ինձմով չհետաքրքրուեցան։ Սկսան շարունակել իրենց կրտսեր պաշտօնակիցին մասին քիչ առաջ ընդհատուած խօսքը։ Որքան հասկըցայ, ան հոս պէտք է ըլլար այս պահուն, բայց որեւէ լուր չկար իրմէ։ Ատոմ կը զարմանար այդ յապաղումին համար։ Պարոն Արգար, ընդհակառակն, անոր բնաւորութեան մէջ ներ նշմարած վերապահութիւնները ուրուագծելով՝ եղածը անակնկալ չէր համարեր։ Իր ենթադրութիւնը համոզումի վերածած, սուրնը աւարտելէ քիչ ժամանակ անց՝ ան ոտքի ելաւ, խոստանալով բախել իրենց դուռը ու, հետքը գտնելէ ետք՝ միասին հանդիպիլ Ատոմին նոյն վայրը։

–Ահա մարդը, գլխագիր Մարդը,– ըսաւ Ատոմ, երբ դուրս ելաւ պարոն Արգար եւ նոյն հիացումով շարունակեց իր խօսքը անոր մասին։

Շուրջ քառորդ դար ուսուցչական ասպարէզը ընդգրկած ազնիւ մարդ մը՝ պարոն Արգար, իր ստանձնած բոլոր նիւթերը սիրելի ընծայելու բացառիկ կարողութեամբ օժտուած հոգի, որ խոնաւ իր յարկին

digitised by A.R.A.R.@

հարուածներէն զարնուած ոտքին համար խնդրած էր գերծ կացուցուիլ հերթապահի ու հսկիչի յաւելուածական պարտաւորութիւններէն, եւ սակայն վարժարանին հոգաբարձուները մերժած էին իրեն այդ շնորհը, սպառնալով, որ եթէ մերժէ ընդառաջել առաջարկուած նախկին պայմաններուն, կրնայ ներկայացնել իր հրաժարականը:

–Այդ անողոք մթնոլորտին մէջ ընդունած էր էֆենտիներուն պայմանը,– ըսաւ Ատոմ,– հաւանաբար այն մտածումով, որ կրնար անձնասպան ըլլալ առանց աշակերտ ունենալու հրճուանքին:

–Ինչ՞ զգործէ արձակեցին, պարոն Ատոմ,– հարցուցի եռաջրբիր:

–Նախ՝ մոռցիր պարոնը, Ատոմը կը բաւէ:

–Լաւ,– ըսի ժպտուն ու կրկնեցի հարցումս:

–Պարզ չէ՞ միթէ:

–Ոչ:

Պատմեց:

Մէկ ուսուցիչ պակաս ունենալու շուկայիկ հաշիւով մը բարձրագոյն դասարաններէն երկուքը միացնելու պատասխանատուներուն կամայական որոշումը համարած էր ոճիր եւ այդ յանդգնութիւնը չէին ներած իրեն: Տուեալ բախումին վաղորդայնին արդէն սկսած էր իր շուրջ հիւսուիլ բանսարկութիւններու սարդոստայնը եւ պատահած էր այն, որ ինն ամիս առաջ ծրագրած էին դաւին վիրաւորուած հեղինակները:

–Միշտ այդպէս եղած է, յաղթական դուրս եկած են ամիրաները,– եզրակացուց Ատոմ՝ լիահագագ խնդալէն:

Այդ պահուն ներս մտաւ տարեկից, այլ բարձրահասակ ու հեղինակաւոր երեւոյթ մը մատնել ուզող երիտասարդ մը, որ աչք մը պտտցնելէ ետք շուրջը, լայն ժպիտ մը ձեւացնելէն եկաւ եւ Ատոմը բարեւելէ ետք ուղղակի տեղ գրաւեց մեր սեղանին երրորդ աթոռին: Ներկայացանք իրարու: Հայաստանի համալսարանի բանասիրական ճիւղը աւարտած Վանակ Նարեան, որ այժմ կ'աշխատէր Պատերազմէն ետք հասակ ձեռած Սփիւռքի գրողները պատկերացնելու կոչուած թեզին վրայ: Այդ առընչութեամբ, ուրիշներու կարգին, քանի մը հանդիպում ունեցած էր նաեւ Ատոմին հետ ու հիմա եկած էր նոր հարցումներով: Թուեց քանի մը անուններ ու առանձին հետաքրքրութեամբ մը կանգ առաւ Լեւոն Վարազեանի մը դիմաց:

–Անձամբ չեմ ճանչնար Վարազեանը,– ըսաւ Ատոմ,– թերթերուն մէջ քանի մը անգամ միարար թատերգութիւններու տակ հանդիպած եմ անունին: Անմիջապէս կը զգացուէր բառերուն հետ իր ներքին առընչութիւնը եւ ունէր կարծես երազի մը համար տառապելու փոթորկալի ընդունակութիւն մը: Մե՛ղք...

–Ա՞ն ալ վաղամեռիկ գնաց,– հարցուցի՝ նախակրթարանի օրերս յիշելով:

–Ոչ, մնաց, դիմեց սակայն միւս անձնասպանութեան, լռեց:

digitised by A.R.A.R.@

–Ուրիշ մանրամասնութիւններ չունի՞ս իր մասին,– հետաքրքրուեցաւ Վանակ։

–Կ'ըսեն, թէ ունի «Ցեղ մահու» խորագրուած թատերական շարք մը սեւագրութիւններ։

–Ցեղ մահո՞ւ։ Զարմանալի է։

–Ո՛չ այնքան։ Նման երեւոյթներ յաճախադէպ են մեր մէջ։ Կու գան, տանջող երազներու մասին կը զառանցեն քանի մը հեղ եւ երբ դատարկութիւն մը տեսնեն իրենց շուրջ՝ կը քաշուին իրենք իրենց մէջ։ Մէկը՝ Վարագեան։

–Ափսո՜ս։

–Որո՛ւ համար,– խստացուց յանկարծ ձայնը Ատոմ։

–Ինչպէ՞ս թէ որու, իրե՛ն համար,– ըսաւ Վանակ։

–Ափսոս մեզի՛ համար, եւ աստիճան մը աւելի։ Յատկապէս այն պատճառով, որ նմաններու լռութիւնը նշան է աղքատութեան։

Աւելի սրեցի լսողութիւնս։

–Անոնք աղն են կեանքին,– շարունակեց Ատոմ։

Սրտիս մէջ կարծեցի լոյս մը ինկաւ։

–Իրենց հետ կը բերեն յափշտակութեան աղը։

Վանակ շարժեց գլուխը։

–Զոյնութեան աղը, որ աղօթքի չափ անհրաժեշտ է։

Լռութիւն։

–Ջերմութեան, այեկոծութեան, հրավառութեան համերը, առանց որոնց միապաղաղութիւնը պիտի թագաւորէր ամէնուրեք եւ նետէր մեզ անարիւն մարդոց հոգեմաշ անշարժութեան մէջ։

Ատոմ լռեց, Վանակ ընդհանուր երեւոյթի մը մէկ երեսը համարեց ճամբուն սկիզբը մնացող ուժերուն պարագան եւ, քանի մը նոթ ընելու աճապարանքով՝ անցաւ քովի սենեակը։

Ցանախորդները հետզհետէ բազմացան ու սուրճի բոյրերով, ծուխերով, գաւաթներու աղմուկով ու տարբեր լեզուներով առաջ տարուող վէճերով համակուեցաւ մթնոլորտը։ Մանօք դիմագիծերէն հազիւ քանի մը հատը կրցայ ճանչնալ – ծերացած ու մտատանջ խմբագիրներ, ուսուցիչներ, ամուրիներ, ոմանք թախծոտ, ոմանք շարժուն, աղմկարար։

–Զարթուր ականջներուն համար,– վերսկսաւ Ատոմ,– թվ գիտէ ի՞նչ հրաշալի նիւթի մը տիրացած համարեց ինքզինքը այս վայրկեանին Վանակ։ Վստահաբար, Վարագեանի պարագան մեծ բաւարարութիւն պիտի պատճառէ իր դասախօսներուն ու խորհրդատուներուն, որոնք պզտիկ փաստերէն մեծամեծ ընդհանրացումներ հանելու վարժութեան մը ծառայեցին շարունակ եւ ողջ ժողովուրդը վերածեցին մենքի եւ դուքի, դուք՝ այդպէս, մենք՝ այսպէս, դուք աւարտած պատմութիւն, մենք յաղթական երբ...

–Ես,– ըսի,– այդ բաներուն շատ գլուխ չունիմ, բայց կ'ուզէի բան մը աւելի իմանալ այդ երիտասարդ թատերագիրին մասին։ Իրապէ՞ս չես ճանչնար

Digitised by A.R.A.R.@

–Ոչ։ Եւ անտարբերութեան հետ շփոթուող այս տրամադրութիւնը նոր չէ մէջս։ Բնաւ չեմ յիշեր, որ հեռուէ հեռու ուշադրութիւնս գրաւած մէկը տեսնելու փափաք արթնցած ըլլայ սրտիս։

Լռեց։ Ցետոյ՝ ժպտելէն շարժեց գլուխը։ Ցետոյ՝ աւելցուց.

–Եթէ պատահաբար հանդիպիմ մէկուն կամ միւսին՝ լաւ, այլապէս նակատագրականօրէն պիտի հանդիպինք հոն։

–Հոն ո՞ւր,– զարմացայ ես։

–Ըստ բոլոր բարոյախօսներուն՝ ապերասաններուն սահմանուած բոցակէզ վայրին նիշդ մէջտեղը։

Ես սկսայ խնդալ, ինք աւելի մոայլեցաւ, յետոյ՝ գլուխը այս ու այն կողմ դարձնելով ու հառաչելէն գոչեց.

–Զարմանալի, շա՜տ զարմանալի է աշխարհը, ուր չես գիտեր ինչպէս յանկարծ հաւաքականութիւն կը կազմեն կիսաշնորհները եւ շնչահեղձ կ'ընեն մակընթաց ուժերը։

Լռեց։ Ցնցեց մարմինը։ Նայեցաւ ծովուն բացերը, փորձեց ժպտիլ, ու երբ աղօտ փայլ մը նշմարեցի կնճիռներուն, հարցուցի.

–Ինչ առաջ գրիչ մը եւ թուղթ տեսայ առջեւդ։ Դո՞ւն ալ բաներ մը կը գրես։

Վեր առած ձեռքերուն հետ կուրծքը առաջ տանելով ֆրթմնչեց եւ ապա բառերուն վրայ զուարթ շեշտ մը դնելով՝ արտասանեց.

–Այս տարիքում, այս չարիքում,

Հանճարները վաղուց արդէն էլ չկային...

Լուռ՝ յառեց ակնարկը վրաս։ Աւելի բարձրացուցի ձայնս.

–Ի՞նչ տարիքի մասին է խօսքը, երբ նոյնիսկ մէկ թել սպիտակ չկայ մազերուդ մէջ։

–Այս տարիքում, այս չարիքում,– կրկնեց։

Պահ մը զիրար լուռ դիտելէ ետք, ուզեցի աւելի բան իմանալ իր կեանքին մասին։

–Կեա՛նքս,– երկարեց ձայնը,– որ ամփոփուած է երեք համառօտ անցուդարձերու մէջ,– նախկին ուսանող, նախկին կուսակցական եւ, ինչպէս ֆիչ առաջ յիշեցի, նախկին վարժապետ։ Թուեմ նաեւ պատնառները ու վերջ։ Ուսումս չկրցայ շարունակել, որովհետեւ դրամ չունէի, կուսակցական չկրցայ մնալ, որովհետեւ ուրիշներ համբերութիւն չունէին, վարժապետ չկրցայ մնալ, որովհետեւ նոր ամիրաները հիներուն շատ կը նմանէին։

Վերջին բառին հետ նորէն քահ-քահ մը պոռթկաց, բայց այս անգամ փոխանակ արձագանգելու իր զուարթութեան, հին վէրքի մը բորբոքումը զգացի սրտիս, դրամի պակասով զգացած վէրքս, որ իրեն հանդէպ խորացող համարումս վերածեց ծածուկ եղբայրութեան մը։ Բայց նոյն ատեն զգացի, թէ որքան տարբեր են մեր բնաւորութիւնները։ Ես տարիներով կրեցի այդ հարուածին հետեւանքները, մինչ ինք խնդալով կը թուէր ստացած հարուածները։

–Անէ առաջ այցելած ես ուրեմն Բաբիլոնը,– ըսաւ յանկարծ ալ-

digitised by A.R.A.R.@

քերը լայն բանալով։

–Ի՞նչ Բաբելոն, ո՞ր Բաբելոնը,– զարմացայ ես։

–Կիրակնօրեայ։

Հարցական՝ նայեցայ աչքերուն։

–Հիմա այսպէս կնքած են Հաժ Տաւուտը։

Այնպէս կարծեցի, որ իրապէս աւելի քան այլ տեղէ, բաբելական նկարագիր մը կը պարզէր Հաժ Տաւուտը, ուր կը հաւաքուէին տարբեր համայնքներու ներկայացուցիչներ ու այլազան լեզուներով բարձրաձայն կը խաչաձեւէին զիրար։ Անխուսափելի է այս տպաւորութիւնը, եթէ են-թական հեղ մը եղած է Եւրոպայի մէկ սրճարանը։ Հոն՝ լռութիւն, հոս՝ աղմուկ, մա՛նաւանդ Կիրակի օրերը։

Պարզեցի տպաւորութիւնս։

–Իմ ակնարկս ընդհանուր երեւոյթի մը չի վերաբերիր,– ըսաւ Ա-տոմ,– խօսքը մերիններուն մասին է։ Քաղաքի բոլոր կողմերէն ու բոլոր հոսանքներէն ներկայացուցիչներ հոս կը հանդիպին իրարու, կը վիճին շարունակ ու, առանց որեւէ օրակարգի շուրջ համաձայնելու՝ կը մեկնին։

–Հո՞ս կը խառնուին լեզուները,– հարցուցի զուարթ։

–Երբեմն հոս կը խառնուին եւ երբեմն խառնուած կու գան։ Նայած հրատապ նիւթին։ Ահա՛, խօսքին վրայ հասան նաեւ երկու ուրիշներ, նայէ։

Սեմին երեւցան իրարմէ տարիքային քիչ տարբերութիւն ունեցող երկու երիտասարդներ, մէկը միջին կազմով ու քիչ մը ճաղատ, Մանուէլ Սարենց, «Արեգ» չէզոք թերթի խմբագիրներէն, իսկ միւսը՝ Տիմօ Մերկեան, ազատ ասպարէզի մարդ, մեքենագէտ, որ կը պատրաստուէր մեկնելու Փոսկրեայ ափունք, հոս կրած ձախորդութիւնները հոն դարմանելու երազով։

Մեր սեղանին շուրջ հազիւ տեղաւորուած՝ Վանակ մօտեցաւ, վերցուց շրջուն թերթավաճառէն Սարենցի նոր գնած թերթերէն քանի մը հատը ու դարձեալ գրաւեց իր աթոռը։

Տիմօ Մերկեան անմիջապէս սկսաւ իր տրտունջները թափել, թուել մինչեւ Ափրիկէները երթալու իր պատճառները, առանձնապէս շեշտը դնելով իր որբութեան վրայ, պատասխանատուութեան մեծ բաժինը բեռցընելով հօրը ուսերուն։

–Նորէ՞ն սկսար նոյն յանկերգը,– ըսաւ Մանուէլ։

–Կրնա՞մ միթէ երբեւիցէ մոռնալ։ Դուք ի՞նչ գիտէք, թէ ինչ կը նշանակէ որբութիւն, ինչպէս կ'անցնի կամ անցած են որբի մը օրերը, տարիները։

Պարզուեցաւ, որ հայրը հօրանասուն տարեկանին աշխարհ բերած էր տղան ու տղան անձերելի կը գտնէր իրեն դէմ գործած հօրը այդ մեղքը։

–Հօրանասո՛ւն տարեկանին, կ'երեւակայէ՞ք, ի՞նչ տեսակ մարդ պէտք է եղած ըլլայ մէկը, որ չանդրադառնայ, թէ շուտով որբ պիտի

digitised by A.R.A.R.@

մնայ զաւակը, ո՞րբ, կրկնակի՛ որբ, երբ մա՛նաւանդ շօշափելի որեւէ ժառանգութիւն չէ ձգած ետին։

–Ես այդպէս պիտի չզգայի ինքզինքս,– ըսաւ Ատոմ զուարթ տրամադրութեամբ։

–Ինչպէ՞ս պիտի զգայիր հապա։

–Հպարտ։

–Հպա՞րտ։ Նմա՞ն հօր մը համար։

–Այո, նման հօր մը համար։

–Բայց ո՞ր արժանիքին համար,– ջղայնացաւ Տիմօ։

–Ինչպէ՞ս թէ ո՛ր։ Տղամարդկայի՛ն իր հրաշագործ կարողութեան համար։

Մանուէլ սկսաւ բարձրաձայն խնդալ, ես ջանացի գսպել ինքզինքս, իսկ Տիմօ խիստ բորբոքած ըսաւ.

–Ու իր գործած հրաշքներէն մէկն ալ ես։ Ի՜նչ մեծ բան։

–Անշուշտ դուն, եւ անշուշտ մեծ բան։ Ինչ կը պակսի քեզի։ Ո՛չ կոյր ես եւ ոչ ալ կաղ։ Առողջութիւնդ՝ տեղը։ Ուրիշ ի՞նչ է զաւկի մը սպասածը հօրմէն։

–Ցամենայնդէպս, որբի մը ճակատագիրը չէ։

–Հայրանալու հանոյքին մէջ մարդ ցաւագին հետեւանքներու մասին չի մտածեր։

–Հապա զաւկին ապագա՞ն։

–Գետինն անցնի ապագան։ Հօր մը ո՛ր տարիքին ալ աշխարհ եկած ըլլայ մարդ, պէտք է երախտագիտութեամբ յիշէ անոր անունը։ Զի՞ բաւեր, որ անէութենէն դուրս բերած է քեզ ան ու յանձնած այս հրաշքին, որ աշխարհ կը կոչուի, այս արեւին, այս ծովուն, լեռներուն, հովերուն, այս աղջիկներուն ու ձայներուն, տեսանելի հրապոյրներով ու անմեկնելի խորհուրդներով բաբախուն այս հանդէսին։

Ստեղծուած լուութիւնը առիթ տուաւ, որ անդրադառնամ իմ կեանքիս տարբեր հանգրուաններուն, որոնք հօրս կանխահաս մահով անորոշութիւններէ ու տառապանքներէ զերծ չէին եղած, բայց երբեք չեմ դաւած հօրս ու անոր յիշատակը օրհնելու կարծես նոր հրճուանք մը պայթեցաւ արեանս մէջ։

–Օ-հո՛,– բացագանչեց Սարենց՝ նորութիւն մը մատնանշել ուզող եղանակով։

Դարձանք իր նայած կողմը։

Ծովը եզերող մօտակայ ճամբէն կ'անցնէր պացիկ ու խարտիշահեր կին մը, որ մէկ ձեռքին սպիտակ պայուսակ մը բռնած եւ միւսին մէջ հսկայ գայլաշունի մը շղթան՝ կ'առաջնորդեր։ Օրօր պանդոկին ուղղութեամբ, անգիտանալով շրջապատը, երեւակայութեանց ընդմէջէն պարագնաց իշխանուհիի մը բոլոր իրաւասութիւնները կրկնելով։ Անցորդները կը դանդաղեցնէին իրենց քայլերը, կը դառնային իրարու, կը ծրպտէին, կը շարժէին իրենց գլուխները։

–Նկատա՞ծ էք, որ վերջերս բազմացած են մանկամարդ գայթակ-

digitised by A.R.A.R.@

դուքիւնները,– ըսաւ Մանուէլ։

–Եւ անոնց կողքին պերճաշուք շունները, որոնք շատերէս հազար անգամ աւելի բարգաւաճ կեանք մը կը վայելեն,– արձագանգեց Տիմօ։

–Վերջացուցի՞ր,– հարցուց Ատոմ։

–Ինչո՞ւ։

–Առաջարկ մը ունիմ քեզի։

–Ի՞նչ։

–Չիս հետդ Ափրիկէ կը տանի՞ս։

–Ա՛ռ քեզի նորութիւն։ Դուն ի՞նչ պիտի ընես հետս։

–Գործէ արձակուած եմ ու գործ կը փնտռեմ։ Աշկերտ կ'ըլլամ քեզի։

–Դո՞ւն։

–Ես։ Անպայման ափրիկեցի աշկերտներ պիտի ունենաս ձեռքիդ տակ։ Անոնց շարքին գործ մը կու տաս ինծի։

–Վարժապետութենէն աւելի լաւ կ'ըլլայ,– ըսաւ Սարենց քրքջալէն։

–Հապա խմբագրութենէն նուա՞զ լաւ,– հեգնանքով պատասխանեց Ատոմ։

–Ի՛նչ պարապ բաներու մասին կը խօսիք,– ձայնը բարձրացնելով մեր սեղանին մօտեցաւ Վանակ,– նայեցէք ի՛նչ կայ հոս։

Տարբեր փայլ մը աչքերուն՝ ան դրաւ «Նիուզ Ուիք»ը սեղանին եւ երկրորդ անգամ քննական ակնարկ մը պտտցուց մեր վրայ։ Կարմիր կայսրութեան վերնախաւին հանրագումարը ուրուագրող յօդուածի մը կողքին ու երկայնքին՝ կ'երեւէին Լենինի, Ստալինի եւ անոնց հետ հետագայ տասնամեակներուն համայնավար նուիրապետութեան մէջ բարձրը դիրքեր գրաւած դէմքերուն լուսանկարները, որոնց շարքին նաեւ Միկիտան Անաստասը։

–Նայեցէք, ի՜նչ յաղթական տեսք մը ունի մեր մարդը։

Մանուէլն ու Տիմոն հակեցան թերթին վրայ, մինչ Ատոմ հարեւանցի հետաքրքրութենէ մը եռք, դէմքը դարձուց ծովուն կողմը եւ սկսաւ ուշադիր հետեւիլ հեռացող վիթխարի նաւուն, իսկ Անաստասի խորամանկ աչքերուն ու երկայն պեխերուն ի տես՝ իմ մտքին մէջ սկըսաւ արագօրէն դառնալ այն ժապաւէնը, որ հայ թէ օտար շրջանակներու մէջ կը պատմէր նախագահական աթոռին հասած ըլլալու անոր փառքը։

Ատոմի անտարբերութիւնը հաճ տրամադրութեամբ մը չդիմաւորեց Վանակ, որ բորբոքած հարցուց.

–Նոյնիսկ օտարները մեծերու շարքին կը դասեն Անաստասը։ Այս հանգամանքը բան մը չ'ըսե՞ր քեզի։

–Ոչ։

–Ինչպէ՞ս։

–Սիրտս որեւէ կապ չունի այդ մարդուն հետ։

–Սիրտդ մէկ կողմ դիր։ Զոր տրամաբանութի՞ւնը։

–Հազիւ թէ։

digitised by A.R.A.R.@

–Երեւոյթներ կան,– մէջ մտաւ Մանուէլ,– որոնց ճիշդ չէ անձնական դիրքերէ մօտենալ: Ստիպուած ենք երբեմն բաժնել ընդհանուրին կարծիքը:

–Պարտադիր չէ,– ըսաւ Ատոմ մեղմ:

–Կարելի՞ է ուրեմն անգիտանալ Միկիտան Անասեանի մեծութիւնը:

–Ան միայն յարաբերական արժէք մը ունի ինծի համար: Մնաց որ, ես լրիւ կը բաժնեմ նման անձերու առիթով մտքերուն մէջ խուժող այն կարծիքը, զոր բանաձեւած է մեր ընկերային բանաստեղծներէն մէկը:

–Ո՞վ:

–Համառ-Հաթիպան: «Բայց թէ խելքէդ շահ չունի Հայաստան, թըքեր եմ քու էլ, խելքիդ էլ վրան»:

–Ո՞վ ըսաւ, թէ Հայաստանը շահ չունի իր խելքէն:

–Շօշափելի փաստեր չկան:

–Հապա անո՞ւնը:

–Անունը ընտիրքեան բան մը չ'արժեր:

–Ես,– ըսաւ Տիմոն գլուխը թերթին էջերէն վեր առնելով,– դէմ եմ անունը անշահ համարող այդ կարծիքին: Անունը ինքնին արժէք է եւ շահեկան ամէնուս համար: Ինչպէս գիտէք, ես շուտով անծանօթ երկիր մը պիտի երթամ, Ափրիկէ, ուր պիտի ստիպուիմ ինքզինքս ծանօթացնել աշխարհին մեր յայտնի անուններով:

–Եւ այդ անուններէն մէկը Միկիտան Անասե՞նը պիտի ըլլայ կը կարծես:

–Անշուշտ:

–Կը ցաւիմ:

–Կ'ուզէիր հապա քու փառաբանած թոքախտաւորներո՞վդ ներկայանայի մարդոց,– գոռոզացաւ Տիմոն,– կամ պարծենայի նահատակներուդ թափօրո՞վ: Ատոմ մեր վրայ խնդացնելու կը ծառայեն եւ ուրիշ ոչինչ:

Ատոմ լուռ՝ մէկ-մէկ նայեցաւ ամէնուս աչքերուն, հառաչ մը արձակեց ու դարձեալ դարձաւ ծովուն, որ սկսած էր տառապագին հեւք մը մատնել: Անհանգիստ էր նոյնպէս Վանակ, որ գրպաններուն մէջ կը խաղցնէր ձեռքերը: Սեղանին վրայ աչքերուն պտոյտը կռահելով՝ զգացի, որ բան մը կը փնտռէ: Իր կողմը հրեցի սիկարէթի տուփս: Շնորհակալութեամբ շարժեց գլուխը:

–Ես,– ըսաւ Ատոմ, Տիմոյին նայելով,– կը խօսիմ մնայուն արժէքներու մասին եւ Միկիտան Անասեան մնայուն արժէք դառնալու ոչ մէկ երաշխիք ունի: Առօրեայ հովերը ասպարէզ նետեցին զինք եւ նոյն հովերուն հետ վաղը կամ քանի մը տարի յետոյ անխուսափելիօրէն պիտի նետուի մոռացման վիհը:

–Որո՛ւ հոգը վաղը, որո՛ւ հոգը քանի մը տարի յետոյ,– ընդդիմախօսելու կիրքով մը ձայն առաւ Տիմոն,– ինծի, օրինակ, ոչինչ կ'ըսէ

digitised by A.R.A.R.@

երկը, իսկ գալիքի մասին թող մտածեն գալիքի մարդերը։ Մեզի պատկանողը միայն այսօրն է եւ ով որ որեւէ չափով նպաստ մը կը բերէ մեր առօրեայ պահանջներուն, կը դիւրացնէ կեանքի պայքարը, ան է իմ հերոսը։ Ես իմ քուէս կու տամ քաղաքական ու տնտեսական ասպարէզներու ներկայացուցիչներուն, եւ Միկիտան Անասեանը անուրանալի մեծութիւն է այդ մարզերուն մէջ։

–Ժամանակակիցներուն կարծիքները վնասակար նշանակութիւն չունին ու չեն կրցած ունենալ մարդոց մեծութիւնը չափելու արարքին մէջ։ Մեծը ան է, ան եղած է միշտ, որ ժողովուրդին խղճմտանքէն երակ մը կ'անձնաւորէ, անկասկած երազի մը վրայ շող մը կը նետէ ու կը նուաճէ սերունդներուն երախտագիտութիւնը։ Փառքի նման պսակ մը կարելի չէ հիւսել Միկիտան Անասեանին։

–Դուն, Ատոմ,– ըսաւ Վանակ,– եւ քեզի պէս ուրիշներու ալ հանդիպած եմ, որոնք կ'ուրանան նորայայտ բոլոր արժէքները...

–Ոչ բոլորը,– ընդմիջեց Ատոմ։

–Բոլորին առիթով եւ ամէն ինչի առիթով նոյնը զգացած եմ։ Տեսակ մը խառնուածքներ կան եւ դուն, նկատած եմ, մէկն ես անոնցմէ, որոնք սովորութիւն ըրած են քննադատութեան թիրախ դարձնել ժամանակակից մեր հսկաները, որոնց նմաններուն չենք հանդիպած որեւէ դարաշրջանի։

–Եթէ մենք ալ ձրի ուսանած ըլլայինք, կամ հրաւէրներով յագեցած, կամ որեւէ պատիւի արժանացած՝ թերեւս մենք ալ ամէն մարդ ու ամէն ինչ հաշտ աչքով դիտելու վարժութեան մը տէր դարձած կ'ըլլայինք ու ամէն բան հեզասահ կ'ընթանար։ Բայց դժբախտաբար նման շնորհներ զլացուեցան ոմանց։ Եթէ շնորհուէին անգամ՝ մեզմէ շատեր պիտի մերժէին շնորհուած պատիւները, որովհետեւ անոնք երբեք պիտի չուզէին վտանգել իրենց անկախութիւնը։ Ինչ կը վերաբերի ինձի, պիտի չվարանէի գոց աչքով ստորագրել այդ աշխարհին եւ այդ ասպարէզներուն մէջ գործած անձերուն ուղղուած բոլոր քննադատութիւնները, որոնք բնաւ ամօթի զգացում չեն առաջացներ մէջս։

–Ապերախտութիւնը այսքան կ'ըլլայ,– ըսաւ Վանակ՝ ջղային շարժումով մը «Նիւզ Ուիք»ը հրելով Ատոմին առջեւ։

Մանուէլ փոխ առ փոխ կը ծխէր ու կը մռայլէր, Տիմոն շարունակ վեր ու վար կ'ընէր գլուխը, ես՝ շփոթահար հանդիսատեսի մը պէս կը հետեւէի մերթ իրենց եւ մերթ շրջապատի անցուդարձերուն, իսկ Ատոմ, լուռ, անգլիական թերթին էջերը կը դարձնէր եւ երբեմն վեր կ'առնէր գլուխը՝ ու ակնարկը կը դարձնէր այս կամ այն անկիւնէն բարձրացած ադմուկներուն կողմը։

–Ինչո՞ւ մէկէն լռեցիր,– հետաքրքրուեցաւ Վանակ։

–Որովհետեւ ընելիքներուս ծանօթ ես։

–Միկիտան Անասեանը երբեք նիւթ չէ եղած մեզի։

–Կրնար այսօր եւս նիւթ չըլլալ։ Ժամանակավրէպ հարց մը...

–Ինչո՞ւ այդպէս կը կարծես։

digitised by A.R.A.R.@

–Անոր համար, որ երբ զգաստութեան պահը այցի գայ անով հը-պարտացող մարդոց, շուտով պիտի անդրադառնան երեւոյթին խաբուսիկ խորքին: Ինչ գիտնամ: Միտքս երբեմն կը փորձէ չմեղանք մը ճարել իր պարտազանցութիւններուն, բայց արիւնս կը մերժէ մեծարանք մատուցանել մեր տառապանքներուն ու պապակներուն օտար մնացած այդ մարդուն:

–Ան առնուազն մեծ անուն մըն է: Մի՞թէ պզտիկ բան է ատիկա:

–Իմ ներքին մէջ նո՛յնիսկ աւելի նուազ է, բան պզտիկը, չնչին է՝ պիտի ըսէի: Ով չի գիտեր, որ մարդոց անունէն շուտով կը ջնջուին հանգամանքներուն ջնարակները ու կը մնայ մերկ իրականութիւնը, որ անողոք է ու անողոք պիտի մնայ Միկիտան Անասեանի հանդէպ:

–Ես Միկիտան Անասեանի հանդէպ բացարձակ համարում մը չունիմ,– նորէն խօսք առաւ «Արեգ» թերթին խմբագիրը,– բայց կը խորհիմ, թէ Ատոմի դատաստանը լեցուն է ծայրայեղութիւններով:

–Թերեւս,– ըսաւ Ատոմ,– թերեւս: Կ'ուզեմ սակայն հաւատարիմ մնալ ես ինծի, ու կրկնելով ըսել, որ անձնապէս սրբապղծութիւն կը համարեմ այդ մարդուն անունը դասել սեմանչելագործ մեծերու կողքին ու պարծենալ: Մեր ժողովուրդին հետ պորտի ոչ մէկ կապ ունեցած է ան, որպէսզի ստիպուէի գլխարկ հանել իր առջեւ: Կը կասկածիմ նոյնիսկ, որ Հայաստանը օր մը բուխ սրտով յիշած ըլլայ իր անունը:

–Հոս արդէն ծայրայեղութիւնը ակնբախ է,– ըսաւ Վանակ,– Հայաստանի ժողովուրդը երբեք այնքան ապերախտ չէ եղած եւ միշտ գիտցած է պանծացնել իր արժանաւոր ներկայացուցիչները: Նոյն միահամուռ յարգանքը ընծայեց ու կը շարունակէ ընծայել նաեւ Անասեանին եւ իր երախտագիտութեան իբրեւ առհաւատչեայ՝ շրջաններ կոչեց իր անունով, գիւղեր, դպրոցներ:

–Այո, բայց պիտի չմոռնանք, որ նոյն համակարգին տակ ապրող ժողովուրդը Թարքեկեան արիւնարբուին անունով ալ գիւղ ու հաստատութիւններ մկրտեց:

–Նման երեւոյթներ շատ կան ազգերու պատմութեան մէջ,– ըսաւ Մանուէլ,– բայց այդքան արագ պէտք չէ հաւասարութեան նշաններ դնել ենթականերուն միջեւ: Թարքեկեանը ի վերջոյ տեղական դէմք էր, իսկ Անասեանը միջազգային աստղ:

–Ճիշդ է, բայց ես այնքան միամիտ չեմ ուզեր ըլլալ, կարծելու համար, որ կուսակցական համակարգերուն մէջ ընծայուած պատիւները հոգերուխ ապրումներու արդիւնք եղած են: Միկիտան Անասեանը իր ըրածներուն համար մեծ չէ, այլ…

Զախակողմեան անկիւնէն բարձրացած աղմուկ մը ընդհատեց Ատոմի խօսքը: Մերունիի մը եւ երիտասարդի մը միջեւ ծագած վէճ մըն էր, որ պահ մը գրաւեց բոլորին ուշադրութիւնը: Քովի սեղանին շուրջ բոլորուածները ժպիտով կը հետեւէին անոնց եւ կարծես կ'ուզէին, որ շարունակուի կռիւը:

–Այլ,– դառնալով Ատոմին հետապնդեց Վանակ:

digitised by A.R.A.R.@

–Այլ չըրածներուն համար փոքր։

–Ինչ կը մնայ, որ փոքրոգի ըսես,– մէջ մտաւ դարձեալ Տիմոն։

–Թող ինչ չմնայ, ըսեմ նաեւ փոքրոգի։ Անասեանը այն մարդն է, որուն մասին կը տիրէ թանձր վերապահութիւն մը, մա՛նաւանդ զինք մեր բախտին մէջէն դիտող հոգիներուն մէջ։ Արձանագրուած փաստեր գուցէ դժուար է այսօր ճարել, չարձանագրուածները պերճախօս են սակայն։

–Օրինա՞կ,– անապարեց պահանջել Տիմոն։

–Ես բանաստեղծութիւններ կարդացած իմ ու երգեր լսած ի գովք Շահեանին, որ իմ հերոս չէ եղած, Խանեանին, որ ուրիշներուն կուռքն էր, Բաղեանին, որուն հետ զգացած ներքին մտերմութիւնս միակը-տուր չէր, բայց նման ոգեշնչումներու աղբիւր երբեք չէ եղած կարմիր սակաւապետութեան մէկ աթոռէն միւսը ոստոստած տիտղոսակիր այդ հացկատակը։

–Կը մոռնաս,– յիշեցուց Վանակ ջղագրգիռ եղանակով մը,– որ տասնեակ հազարաւոր հայեր ներկայ կ'ըլլան իր եղոյթներուն։

–Եւ անշուշտ մեծ ցնծութեամբ կը ծափողջունեն զինք։

–Եւ, այո, ցնծութեամբ կը ծափողջունեն։

–Այս կէտին մէջ,– փութաց ըսել Մանուէլ,– ես տարակարծիք եմ Վանակի հետ։ Որքան ես գիտեմ, Միկիտան Անասեան իր կարօտներուն մղումով երբեք հայրենիք չէ այցելած, այլ եռն ղրկուած է մեծաւորներուն վճիռները գործադրելու կամ ընտրութիւններ կազմակերպելու պաշտօնով։ Իսկ նման առիթներու եղած ծափահարութիւնները ցիշդ չէ անպայման համակրանքի յայտարար նշան համարել։

–Բայց ինչո՞ւ,– առարկեց Վանակ։

–Ինչո՛ւ,– երկարեց ձայնը Ատոմ,– կարմիր բռնակալութեան կողմէ գործուղուած ո՞ր մարդուն չէ ծափահարած Հայաստանի ժողովուրդը, որ Անասեանին եղածը արտարուխ համարելով շլանայինք։ Շլացուցիչը միւսը պիտի ըլլար, որ մերժուեցաւ իրեն։

–Ես չհասկցայ ակնարկութիւնդ,– ըսաւ Տիմոն, ո՞ր միւսին կը վերաբերի խօսքը։

–Ինչ առաջ ակնարկեցի միւսին, որ հաշուի կ'առնէր հոգեկան ալիքէ բխած ու ընտրեալներուն ընծայուած մեծարանքի անանց վկայութիւնները, որոնց գոնէ ես չհանդիպեցայ Անասեանի անունին դիմաց։ Իրեն հանդէպ եղածը զգացական ցրտութիւնն է պարզապէս, զսպուած ատելութիւնը։ Եւ իրաւունք չունի՞ն միթէ մարդիկ այդպէս վարուելու։ Ե՞րբ յոյս մը եղաւ ան մեր բազմախոց ժողովուրդին եւ ե՞րբ նպաստաւոր պահ մը ստեղծեց տառապած մեր հայրենիքին համար։ Երբ մենք ողբերգական օրեր կ'ապրէինք, նոյն դիրքերուն վրայ էր ան, Լենինէն քայլ մը ետ, Ստալինի աջ կողմը, յաջորդ դաժաններուն ձախ կողմը, բայց օր մը ձայն բարձրացո՞ւց անոնց եղերական վճիռներուն ու սահմանադրական վատութիւններուն դէմ։

–Ինչէն գիտես, որ չբարձրացուց։ Անպայման բարձրաձա՞յն պէտք

digitised by A.R.A.R.@

է խօսած ըլլայ մէկը, որ հասկնալի ըլլայ իր վերաբերումը,– ընդդիմախօսեց Վանակ։

–Այլուր սակայն շատ, չափէն աւելի շատ բարձր ենչեցուց իր ձայնը, յատկապէս երբ որոգայթներ կը հիւսուէին մեզի դէմ։ Ով որ լսած կամ կարդացած է՝ չի կրնար մոռնալ մեծ ճիւաղին օրօր իրեն յանձնուած հայաստանեան արիւնոտ առաքելութիւնը բացայայտող բառերը, թէ ան՝ «չախչախել ու հողմացրիւ է արել հայ ժողովրդի ամենակատաղի թշնամիներին»։

–Ի՞նչ կ'ուզէիք որ ըներ հապա,– գոռաց մէկէն Վանակ,– ձգէր, որ թշնամիները շարունակէի՞ն իրենց վնասաբարութիւնները։

–Ինծի համար խիստ զարմանալին այն է, որ նոյնիսկ այսօր մարդեր կան մեր մէջ, որոնք 37ին գրպարտութեամբ ոչնչացուած դէմքերը կը շարունակեն ոխերիմ թշնամի համարել։ Անասեանի հողմացրիւ ըրածները հզօր կարողութիւններով օժտուած այն գործօններն էին, որոնց այնքան պէտք ունէին մեր արիւնազանգ հողն ու արիւնաքամ մնացորդացը։

–Չե՞ս կարծեր, որ գրպարտութեան մեծ բաժին մը կայ այդ վերագրումին մէջ։

–Ոչ, չեմ կարծեր։ Եւ տակաւին մեղսակցութեան, իր սահմանակցուցիչ տոմարին մէջ էջն է ասիկա։

–Մի՞սը, միսնե՞րը,– ուզեց իմանալ Տիմոն։

–Աստուածային յատկութիւններու տէր դէմքերուն դաւանանած օրերուն, դաւանանց նաեւ աստուածապարգեւ մեր հողին, հաճութեամբ որդեգրելով յանուն բարի դրացնութեան կազմած իշխանաւորներուն լոգունգային խաբեբայութիւնները։

–Ցետո՞յ,– աւելի աշխուժացած հարցուց Մանուէլ։

–Աւելի բարենպաստ ժամանակներու, երբ Ղարաբաղի հայերը բաշ թօթուեցին ազերի լուծին դէմ, այս անգամ հանդէս եկաւ իր սեփական նախաձեռնութեամբ, ու ազգամիջեան վտանգներ միայն տեսաւ այդ սրբազան ծառացումին ետին եւ ձախողութեան մատնեց լուծումը այնքան մօտ կարծուած այդ տանջալից հարցին։

–Այո, յիշեցի· իր ձեռնպահութիւնները անկատ չեն անցած։

–Իսկ իմ համոզումով՝ նման մեղքերով խարանուած մարդու մը անունին կարելի չէ կառչիլ ու ցնծութեան աղաղակներ արձակել, ես չեմ կրցած, չեմ կրնար։

–Դուն ազատ ես,– ըսաւ Վանակ խիստ,– բայց ես չեմ կրնար այսպիսի գրութիւններու առջեւ անտարբեր մնալ։ Մնաց որ, եթէ քու թըուած անցուդարձերուն առիթով ճպաստաւոր դիրքեր չորդեգրեց Անասեան, այդ կը նշանակէ պարզապէս, որ ո՛չ թէ չէր ուզեր, այլ ի վիճակի չէր...

–Ուրեմն մեծ չէր եւ հետեւաբար հպարտանալու խնդիր չի մնար մէջտեղ։ Մեծութիւնը, ստուգուած է բոլոր ժամանակներուն մէջ ու բոլոր ժողովուրդներուն հոգեկան տեսիլքի մը բարձրին մէջ կը խմորուի

Digitised by A.R.A.R.@

եւ վտանգներ դիմագրաւելու սխրագործութեամբ աւանդ կը դառնայ։

–Ըստ քեզի այրող տեսիլէ մը չէ՞ր բխած ուրեմն այն վարդապետութիւնը, որուն հաւատացին ինք ու իր ընկերները,– հարցուց Նոբէն Տիմոն։

–Չեմ կարծեր, ո՛չ։ Մեծը կը զգար, որ աշխարհը մէկ հայրենիքի վերածելու եւ մարդը համաշխարհային քաղաքացի դարձնելու ցնորքը արմատ չէ ունեցած եւ չի կրնար ունենալ ժողովուրդներու հոգեբանութեան մէջ։

–Կը մոռնաս, որ մարդեր էին իր ընկերները, որոնց շրթներէն միլիոններ հաշուող բազմութիւններ կախուեցան տասնամեակներ շարունակ,– յիշեցուց Վանակ։

–Եւ նոյն միլիոնները անոնց սուրերուն տակ քաւեցին իրենց առաջին ոգեւորութեանց մեղքերը,– յարեց անմիջապէս Ատոմ։

–Ո՞ր վարդապետութիւնը, ո՞ր կրօնքը զոհեր չէ խլած սակայն, որ մարդոց երջանկութիւն խոստացող այդ նորագոյն վարդապետութեան առիթով ինկածներուն յիշատակը այնքան ծանր ճնշէր մարդոց խղճմտանքին վրայ։

–Դուն կ'անգիտանաս ուրեմն լինելու եւ չլինելու երեւոյթը։

–Ա՞յդ ինչ բան է, ո՞ր լինելու եւ ո՞ր չլինելու մասին է խօսքը,– հետաքրքրուեցաւ Տիմոն։

–Ըսեմ։ Կայ ըլլալու կամեցողութիւն մը եւ կայ չըլլալու հաստատամտութիւն մը։ Կայ յանուն մը եւ կայ ընդդէմ մը։ Ցանուն գաղափարի մը ընդունուած խաչելութիւնը ուրիշ բան է, եւ բոլորովին ուրիշ՝ մերժուած վարդապետութեան մը համար ստացուած հարուածը։ Եթէ Նազովրեցիի ու Լենինի անունները միաժամանակ յիշելու արարքը սրբապղծութիւն չհամարուէր, պիտի ըսէի, որ քրիստոնեաները խաչուեցան յանուն Քրիստոսի, մինչ Կարմիր կայսրութեան սահմաններուն միլիոններ սրածուեցան ընդդէմ Լենինի։

–Հապա միջնադարու հաւատաքննիչնե՞րը։

–Գիտէի, որ մէկդ պիտի յիշէք միջնադարու հաւատաքննիչները, որոնց խլած ոչ-քրիստոնեայ կամ այդպէս կարծուած զոհերուն թիւը կարելի է կազմել, ինչպէս կարելի է կազմել աշխարհի տարբեր մասերուն վրայ չարչարանքի ենթարկուած գաղափարական համայնավարներուն թիւը, բայց ո՞վ կը համարձակի կազմել նոր ուսմունքը մերժած ըլլալու յանցանքով կարմիր հաւատաքննիչներուն ոչնչացուցած միլիոններուն մարդահամարը։

–Անասելանը կը հաւատար աշխարհը վերափոխելու գաղափարական պայքարին եւ հետեւաբար այնքան դատապարտելի չի կրնար ըլլալ կարգ մը երեւոյթներուն առջեւ իր որդեգրած դիրքը, որքան կը կարծուի,– ըսաւ Վանակ։

–Բայց պէտք չէ կարծել, որ այնքան միամիտ էր ինք, որ տեսած ու զգացած չըլլար իր շուրջը կատարուածները։ Իր վրացի ու թաթար ընկերները իրեն պէս ու յաչս աշխարհի քարձրաձայն համաշխարհային

digitised by A.R.A.R.@

երազներ կը փայփայէին, այլ վարդապետական նոյն նշանախօսքերուն տակ կ'ընդարձակէին իրենց սեփական երկիրներուն սահմանները, մինչ-դեռ մեր պարոնը ծափ կը զարնէր ի հաճոյս արիւնարբու այդ յափշտակիչներուն։ Կը համարձակիմ ըսել, որ վրացի արիւնկզակները կրնան օր մը նո՛յնիսկ երախտագիտութեամբ յիշուիլ իրենց պատմութեան մէջ, բայց Անասեանը նկատագրուած է երախտաշատ որեւէ էջ չունենալու մեր պատմութեան մէջ, ինչպէս չունի այսօր ինձիպէսներուն արտին։

–Զեզիպէսնե՛րը,– հեգնեց Վանակ,– քանի՞ հոգի կը հաշուէք արդեօք։

–Չեմ գիտեր,– ըսաւ Ատամ պաղարիւն,– չեմ կրնար ըսել, բայց չեմ կարծեր նաեւ, որ մեծաթիւ են Անասեանի անունին հիացողները։ Ես շատ տրամադիր չեմ հաշուի առնելու անոր կենսագրութեան անտեղեակ անձերուն եւ վարձատրութիւնը ղեկավար սկզբունք դարձուցած երջանիկ դասուն ովսանգանները։ Օտար հայասէրի մը կրաւորական ապրումն անգամ չէ մատնած ան։

–Ստիպուած եմ կրկնել գլխաւոր հարցումս,– ըսաւ Վանակ,– ի վիճակի՞ էր քու բանաձեւած պապակներուդ ի նպաստ շարժելու։

–Ի վիճակի՞։ Ի վիճակի՞ էին սակայն միւսները, Արագի Խանեանն ու իր սերնդակից ընտիրները, բայց անոնց կուրծքին տակ քար դրուած չէր, սիրտ դրուած էր։

–Սի՞րտ։ Նորէ՛ն սիրտ։ Սիրտը ի՞նչ գործ ունի սակայն քաղաքական մարզերուն մէջ։

–Ինչպէ՛ս թէ սիրտը ինչ գործ ունի։ Ունի՛, եւ շա՛տ։ Կեանքին մէջ պահեր կան, եւ մեր պատմութիւնը տասնեակ օրինակներ ունի այդ ուղղութեամբ, երբ շօշափելի ու թիրտ ուժին դէմ սիրտն է, որ պոռթկացած է եւ արիւնելով նուիրագործած վտանգի ենթարկուած սրբութիւնը։

Ատամի վերջին ճիչին հետ՝ սպասեակը եկաւ եւ Տիմոյին իմացուց, որ հեռաձայն ունի։ Արագ մը ոտքի ելաւ ան, անապարանքով վերադարձաւ ու յայտնեց, թէ իրեն ուղեկցելու պատրաստուող տեղացի ընկերը տունը իրեն կը սպասէ։

–Ցուսամ համաձայնութեան եզր մը կը գտնենք,– ըսաւ Մանուէլ խնդումներես եւ միացաւ Տիմոյին։

–Կը փորձենք,– ըսաւ Ատամ ցաւագին ժպիտով մը։

Ժամը տասներկուքը անցած էր արդէն ու մթնոլորտը ստացած էր տարբեր երանգ մը։ Ցանախորդներէն ոմանք կամաց-կամաց կը բաժնըւէին իրենց բարեկամներէն ու սրճարանային սիրելի զբաղումներէն, իսկ ուրիշներ ծովահայեաց պանդուխաններուն մօտ պատրաստել կու տային գարեջուրի սեղանները՝ հազիւ նշմարելի ալիքներուն վրայ թարմացած հովերուն յանձնելով իրենց քրտնաթոր երեսները։

–Նկատած եմ,– ըսաւ Վանակ,– եւ ես կը բաժնեմ անոնց մեծ մասին հաստատումները, որ ամէնէն դիւրին գործը քննադատութիւնն է,

digitised by A.R.A.R.@

մ'նաւանդ ենթակային կամ անոր գործունէութեան բոլոր կողմերուն ծանօթ անձերուն քացակայութեան տեղի ունեցած ինքնադատութիւնը; Նման ծաղկեալ շրջան մը ունեցանք մ'նաւանդ վերջին տասնամեակներուն: Իր միջավայրին մէջ, ով գիտէ ի՞նչ ահարկու վիճակներէ անցած է Միկիտան Անասեանը եւ կրցած է բոլոր խոչընդոտները յաղթահարելով դիմանալ հերթական փոթորիկներուն: Մինչդեռ մենք, առանց հաշուի առնելու այդ հանգամանքները, գաւաթ մը ջուր խմելու դիւրութեամբ, հիմա նստեր ու գետնէ գետին կը զարնենք գինք:

–Ըստ քեզի, իր առաւելութիւններո՞ւն շնորհիւ կրցաւ յաղթահարել փոթորիկները,– հետաքրքրուեցաւ Ատոմ՝ յօնքերը վեր առնելով:

–Անշո՛ւշտ:

–Ես այդպէս չեմ կարծեր: Ընդհակառակն: Իր դիմացկունութեան հիմնական ազդակները փնտռուած արժանիքներէ զուրկ ծնած ըլլալու ադամական արատները եղան: Ըսուածը յանկարծօրէն գործադրելու վարքագիծի մը հետեւելով՝ իր սերնդակիցներէն շատեր նոյնպէս կրնային առօրեայ ջուրերու վրայ ծփալ, բայց ամէն մարդ ընդունակ չէ նուաստութեանց ծովերուն մէջ թիավարել: Ընտիրները կ'ըսեն իրենց էութենէն բխող խօսքը եւ ի հարկին կը խաչուին իրենց դաւանած ճշմարտութեանց խաչափայտին: Միկիտան Անասեանը սեփական ճշմարտութիւն չունէր եւ ատոր համար առագաստ պարզեց ոնրապարտներու արձակած հովերուն: Իր դիմացկունութեան առասպելներով կրնան թերեւս ուրիշներ հպարտանալ, բայց որեւէ գնով անոնք գիս չեն կրնար կաշառել:

–Իսկ ես պնդելով կը պնդեմ,– ըսաւ Վանակ ջղային թափով մը,– որ այդ պայմաններուն մէջ հոչակ շահած մարդ մը պարտաւոր ենք դասել մեծերու շարքին:

–Ինա՛ւ երբեք: Որեւէ պայմանով չեմ կրնար արիւնարբուներու մեղադրիչները յիշել սրբազան մեծերու կարգին:

–Բայց ո՞վ ունինք իրմէ աւելի հոլովուած անուն:

–Ես հոլովուած անուններու մասին չեմ խօսիր, կը խօսիմ մեծերու մասին: Իր ապրած ժամանակին ու միջավայրին մէջ իմ ճանչցած մեծերէն մէկը մեր երազը իրենց արիւնով սրբագործած տիպարներուն շարքին դասուեցաւ, միւսը՝ մեր խոյանքներուն թեւաւոր ներկայացուցիչը եղաւ, երրորդը՝ մեր պայծառ ակնարկին շռայլ ոգը, չորրորդը՝ մեր խորագոյն ապրումներուն համանուագային արտայայտութիւնը, հինգերորդը՝ տիեզերական հեռուները խուզարկող մեր հետաքրքրութիւններուն խորհրդանիշը, այլ մեր ընկալչութենէն ի՞նչ կը ներկայացնէ մեծանուն այդ փոշտացին, որ այսօր պարտադրէր ինքզինք մեր համարումին:

–Զափազանցութիւն չափազանցութեան:

–Երբեք:

–Երբեք համոզիչ չէ ըսածդ:

–Կը ցաւիմ: Ուրիշ ի՞նչ չափերով կ'ուզես, որ գնահատենք մարդ

digitised by A.R.A.R.@

մը, որ անմեղներու արիւնէն ծովեր գոյացան շուրջը, իսկ ինք մէկ երազ փայփայեց միայն, արեան ծովերուն վրայ հեշտօրէն ծփալ, ինչպէս ծփացած են ու կը շարունակեն ծփալ պալատական նաւերիններրը:

–Ուրիշ փշապսակ մնա՞ց գլխուն զետեղելու,– ջղայնացաւ Վանակ:

–Մնաց, ի հարկէ՛ մնաց, եւ կասկած չունիմ, որ աւելի հեռու ժամանակներու մէջ պիտի բազմանայ փշապսակներուն թիւը: Հապա ի՞նչ: Կ'ուզէիք, որ անձնապաշտներուն համա՞ր ալ փառապսակ հիւսուին:

–Ինչ որ կարելի էր՝ ըրաւ:

–Բայց դեռ կարելի շատ բան կար անդին:

–Ի՞նչ, օրինակ:

–Այն՝ որ երբ քաղաքական ծիրանաւոր մը չի կրնար տէր կանգնիլ իր ժողովուրդին, պէտք է ձեւը գտնէ գոնէ՛ մեռնելու անոր համար: Այլապէս մարդոց թուքն իսկ շատ է անոր անարժան նակատին:

–Բոլոր պարագաներուն մէկ բան անհերքելի կը մնայ:

–Ի՞նչ:

–Որ օտար երկնակամարներուն փայլած աստղերը միշտ ալ հրեանք պատճառած են մեզի եւ ատիկա ուժ ներշնչող սովորական երեւոյթ մը չէ:

–Կրնայ ըլլալ: Բայց կենանք պահ մը ու անդրադառնանք նոյն այդ երեւոյթին: Օտար միջավայրերու մէջ բարձր դիրքեր գրաւած դէմքեր, նիշդ է, ունեցած ենք եւ ունինք հիմա: Առաջին հերթին կ'ուրախացնեն մեզ անոնք, կ'ուրախացնեն սակայն այն յոյսով, որ բախտորոշ պահու մը իրենց ուժերն ու հմայքը պիտի նուիրաբերեն հարազատին կարօտներուն: Այդ բախտորոշ պահերը, ըսինք արդէն, ներկայացան Միկիտան Անասհանին եւ ներկայացան մէկէ աւելի անգամներ, բայց որեւէ ատեն մատը մատին չզարկաւ ձեր փառաբանած անձը: Օտարին ծառայութեան հոգեւին նուիրուած տիպարը կը ներկայացնէ ան եւ ոչ թէ այն միւս գործօնը, որուն համար օտարը ստիպողական միջոց է՝ հասնելու համար սեփական պապակները պսակելու առաքելական մակարդակներուն: Կը յիշէք հարկաւ այն տառապեալ ուխտաւորը, որ ծառայեց ֆրանսական բանակին եւ քաջազուն այն երկու եղբայրները, որոնց ուժին վրայ կը յենուր վրաց արքունիքը: Այդ մարդոց համար օտար բանակն ու օտար արքունիքը միջոցներ էին եւ հանրածանօթ են անոնց հրավառ երազներուն ակնարկները, որոնք ջահեր դարձան յետոյ ոլորապտոյտ մեր ճամբաներուն վրայ: Նոյնպէս կը յիշէք բիւզանդական գահերուն բազմած տասնեակ մը հայազգի կայսրերը: Բայց այդ կայսրերը որո՛ւ ինչին: Բիւզանդական գահուն բազմած տասնեակ կայսրերուն փոխարէն, կարմիր կայսրութեան մէջ ունեցանք կարմիր աստիճանաւոր մը, որուն հանդէպ բարեացակամ չեն կրնար ըլլալ մեր հոգիները ու պատմութիւնը, ինչպէս բարեացակամ չեն եղած մեր մատեանները օտարին ծառայութեան նուիրաբերուած շքախումբին հանդէպ:

–Որքան ալ ծայրայեղութեան տանիս խստապահանջութիւնդ, ան-

digitised by A.R.A.R.@

կարելի է նսեմացնել մեր թէ օտար մամուլին մէջ հիւսուած իր փառքը։

–Թող իր փառքին նառագայթներով ջերմանան ուրիշներ։ Աւելցնեմ միայն, որ իմ նժարիս մէջ Արազի Խանեանին արիւնոտ դագաղը միշտ աւելի կշիռ ունեցած է, քան Միկիտան Անասեանի ոսկեզօծ աթոռը։

Վանակ լուռ ակնարկ մը նետեց իմ վրաս ու քմծիծաղ մը ուրուացաւ դէմքին, երբ Ատոմ աչքերը հեռուն սեւեռած, կարծես կ'ալեկոծէր ինքն իր մէջ ու դէմքը ստացած էր տարօրինակ խոժոռութիւն մը։

–Ես,– ըսաւ մեր կողմը դառնալով,– իմ հոգիիս մէջ հազար անգամ վիճած եմ այդ հարցին շուրջ ու յանգած նոյն եզրակացութեան։ Այդ մարդուն անունը լսած ատենս մեր մեռելները անհանգիստ կ'ընեն գիս։

–Ցայտնի բան է, որ մենք նոյն լեզուն չենք խօսիր,– ըսաւ Վանակ ու ոտքի ելաւ։

Երբ մարդ չմնաց մեր շուրջը, իմացայ, որ Ատոմ ատեն մը եւս պիտի փորձէ սպասել իր կրտսեր պաշտօնակիցին եւ եթէ ան երեւի՝ միասին գիւղ պիտի բարձրանան, Ղազիրի շրջանը, Այն Պիքար։

Ես դեռ չէի որոշած, թէ ուր պիտի անցընեմ մնացեալ ժամերս ու տեղէս շարժելու ոչ մէկ տրամադրութիւն կը յուզէր գիս։

Պարզեցի միտքս։ Ժպտեցաւ։ Ընդունեց նաեւ երկրորդ գաւաթ մը առնելու առաջարկս։ Կրցայ քիչ մը աւելի մտերմանալ իր ապրած օրերուն։ Ելեւէջներով հարուստ եղած էին նոյնպէս իր մանկութիւնն ու պատանութիւնը, անհանդարտ, յանձնապաստան, ապերասան։

Կը նայէի իր կիսաժպիտին եւ կը զգայի, որ նոյն ակնթարթին խառնափնթոր խորհրդածութիւններ կը խուժէին մտքիս։ Տարիներով ինքզինքս եւ ձեռնարկներս մեր միջավայրէն ու նման հարցերով տարուած տիպարներէն հեռու պահելէ ետք, չեմ գիտեր ինչու այսքան դանդաղեցայ այս մէկուն առջեւ եւ ինչու անոր ցաւերը ունկնդրելով այսքան աղէտ զգացի ինքզինքս։ Իբրեւ բնակարանային շինութեանց յանձնակատար՝ տեղացիին, փրանսացիին, յոյնին եւ ուրիշներու հետ գործ ունենալու հանգամանքս թուեցաւ, թէ քիչ մը ամէնուն պէս ըրած էր գիս ու պարպած առանձին երեւոյթներու կապուած մարդոց յատուկ ուժականութենէն։ Ես՝ որ կեանքի կրկէսը իջնալէս ետք որեւէ պատճառով չեմ նախանձած մարդոց, զարմանալի արագութեամբ մը սկսայ տառապիլ նման վարակիչ թափի մը պակասէն։ Երբեք չեմ յիշեր, որ հարց մը կամ անձնաւորութիւն մը այս ամբողջութեամբ ու կիրքով շահագրգռած ըլլայ գիս ու մղած ծայրայեղ վիճակներու, որոնք շնորհի մը պէս կը փայլէին ինձմէ փոքր Ատոմի դէմքին։ Երբ խօսք կ'առնէր, ներքին ալեկոծումէ մը կը բռնուէր յանկարծ մարմինը ու բառերը շրթներուն կու գային կարծես երկարօրէն գսպուած ապրումներու անդունդներէն...

(Հատուած)

ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆ

digitised by A.R.A.R.@



ԱՆՑՄԱՆ ԱՅՍ ՇՐՋԱՆԻՆ...

Հայաստանի գրողներու արտահերթ համագումարը սկսաւ Սեպտեմբեր ամսու կէսերուն եւ երկու օրերու վրայ երկարած աշխատանքներու աւարտին ընտրեց իր նոր վարչութիւնը, նախագահ՝ բանաստեղծ Ռաֆմիկ Դաւոյեան։

Այս համագումարը նախորդներէն կը տարբերէր յատկապէս անով, որ կանխօրօք ճշդուած յայտագիրով մը չէր ընթանար անիկա եւ բոլորովին վերծ էր հրամանագրային կաշկանդումներէ։

Ամբողջ վաթսուն տարի երապուած այս առաւելութեան կողքին՝ պարպուեցաւ նաեւ ոչ-հաճելի երեւոյթ մը, առաջացաւ յանկարծօրէն սանձակերծուած մարդոց միջավայրին մէջ անխուսափելի դարձած այն մթնոլորտը, որ կ՚եռար հաշիւներ մաքրելու մոլեգնութեամբ, կիրար խաչաձեւելու դիտումներով ու փոխադարձ վիրաւորանքներով։

Այսուհանդերձ, ստեղծուած այս եռուզեռը հարիւրապատիկ անգամ աւելի նախընտրելի համարուեցաւ նախորդ համագումարներուն սարսափելի կարգապահութենէն, որուն դառն հետեւանքները ցմրուր ըմպած էին անխտիր բոլորը, մինչ նորին մէջ թագաւորող ազատութիւնը հեռանկարային էր ինքնին։

Հայրենի ծանօթ պայմաններուն ու ֆիզիքական լուրջ անհանգստութիւններու կրկնակ պատճառներով՝ գրողներու նախկին վարչութիւնը գրաւոր թէ բանիւ բերանոյ յայտնեց, որ չէր կրցած իր ուսերուն դրուած պարտականութիւնները լրիւ կատարել, իսկ համագումարին մասնակից դէմքերուն մեծամասնութեան մէջ կը տիրէր այն լաւատեսութիւնը, որ նոր վարչութիւնը պիտի կարենայ ստեղծագործական տանելի պայմաններ ստեղծել բոլորին համար եւ հնարաւոր պիտի դարձնէ արժանաւոր գործերու հրատարակութիւնը։

Անցման այս շրջանին, մտքի այս ջոկատին հանդէպ անկասկած որ պարտք մը ունի նաեւ Ափիւռքը, ի միջի այլոց ոտքի պահելու համար անոր բեմերէն «*Գրական Թերթ*»ը եւ «*Նորք*»ը՝ իբրեւ բաց հրաւէրներ ստեղծագործ ուժերու։

Ցաջորդող էջերուն ընթերցողին ուշադրութեան կը յանձնենք հրատապ քանի մը հարցերու պարնուող Միլվա Կապուտիկեանի բացման խօսքը, որ ներկաներուն կողմէ համարուեցաւ համագումարին ամէնէն լուրջ ելոյթը։

digitised by A.R.A.R.@

Ս. ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

"ՆՈՐՈԳԵՆՔ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱԽԱՏԸ"

Սիլվա Կապուտիկեանի բացման խօսքը Հայաստանի Գրողներու Միութեան Համագումարին

Մի 8—10 տարի առաջ գրական համագումարի բացման խօսքը կը սկսուէր հետեւեալ նախադասութեամբ. «Հայաստանի գրողների կազմակերպութիւնը դէպի իր համագումարն է գնում նշանակալից յաջողութիւններով»: Հիմա այդպէս չի կարելի սկսել ո՛չ միայն այն պատճառով, որ նշանակալից յաջողութիւններ չկան, այլ նաեւ այն պատճառով, որ հիմա կոտրուել—փշրուել է այն ստանդարտը, որ տասնամեակներ շարունակ իշխում էր մեզ վրայ, պարտադրում—պահանջում էր խօսել միանման, մտածել միանման: Թերեւս սա է, խօսքի եւ մտածողութեան ստանդարտների գորշ տիրապետութիւնից ազատագրուելն է ամենամեծ ձեռքբերումը՝ մեր վերջին փոթորկալից տարուբերումների, քաղաքական եւ սոցիալական յեղաշրջումների: Մտածի՛ր՝ ինչպէս կարող ես, գրի՛ր՝ ինչպէս եւ ինչ ուզում ես, տնօրինի՛ր բախտդ՝ ինչքան որ ընդունակ ես: Ազատ ես, ազատութիւն է. բոլոր դարերում, բոլոր գիր ու մատեաններում գովերգուած, երազած, տենչալի դարձած ազատութիւն:

Սակայն գուցէ բոլոր յեղափոխութիւնների օրէնքն ու տրամաբանութիւնն է դա, կամ գուցէ դեր ունի այստեղ Դերենիկ Դեմիրճեանի ձեւակերպած «հայի չափը՝ չափազանց է»՝ բնութագիրը, այս տարինե-

digitised by A.R.A.R.@

րին շատ եղան ցաւալի չափազանցումներ, որոնք խորապէս ազդեցին ժողովրդի ճակատագրի վրայ, տեղի տուեցին քաղաքական եւ բարոյա-հոգեբանական անասելի կորուստների՝ թէ՛ երկրի ներսում եւ թէ երկրից դուրս:

Այսօր տեղը չէ թուարկելու այդ կորուստների ողջ ստեղնաշարը, սակայն բոլորովին չխօսել՝ անհնարին է: Ինչպէս չխօսել այն թանձր կեղտաջրի մասին, որ թափեցին մեր անցեալ 70 տարիների վրայ որոշ գերյեղափոխականներ՝ վիրաւորելով, հայրենի երկրում վտարանդի դարձնելով՝ այդ հայրենի երկիրը անձնուիրօրէն, իրենց երիտասարդութեան, իրենց տարատեսակ զրկանքների գնով կառուցողներին: Այո՛, այդ անցեալն ունի ամօթալի էջեր: Բաւական է յիշել 1937 թուականը, չարի ոգ չարագործութեան սանձազերծ տիրապետութիւնը խորհրդանշող այդ կոդը, որը անջնջելի խարանի պէս դաջուած է այս հասարակարգի կողին, ուր հնարաւոր եղաւ կիրառել ոճիրների այդպիսի համակարգ: 37 թուականի շօշափուկները՝ ուրիշ ձեւեր ու երանգներ ընդունած, տարածուեցին նաեւ հետագայ տարիների վրայ, ստիպելով մարդկանց փակ պահել շուրթերը, վախենալ, յարմարուել, կեղծաւորել, խարդախել, խաթարել ազգային նկարագիրը, եւայլն, եւայլն: Ո՞ր նորօրեայ գրականագէտն ու պատմաբանը կարող է զգալ հոգիների խեղաթիւրման այն կեղեքիչ ընթացքը, քան մենք, այդ ժամանակ մեր մաշկի ու մեր հոգու վրայ զգացած սերունդներս:

Այս մասին լաւ է գրել Նայիրի Զարեանը:

Մինչ ազեցէ՛ք, մենք լաւ գիտենք, թէ ինչ
Անպատմելի քաւարանով անցանք.
Ինչպէս մենք համբ, խուլ ու կոյր էինք,
Ինչպէս կռանալով՝ կուզիկ դարձանք:

Սակայն այս պայմաններո՛ւմ անգամ կառուցուեց Հայաստանը, կառուցուեց հայի հայրենիքը, վերածնուեց ազգային ոգին, եւ մենք չենք կարող ընդունել մեզ վրայ բարդուող այն յախուռն մեղադրանքները, թէ Խորհրդային Հայաստանում ապրել են միայն ստրուկներ, ստրկամիտներ, որոնք ոչինչ չեն ստեղծել, այլ միայն աւերել են, քծնել, անվերապահօրէն գլուխ են խոնարհել Մոսկուայի առաջ...

Դեռ 16 թուականին Անատոլ Ֆրանսը ասել է. «Այն ժողովուրդը, որը չի ուզում մեռնել, նրան սպանելը անհնար է»: Ես պիտի մի փոքր ձեւափոխեմ մեծ ֆրանսիացու խօսքերը. «Այն ժողովուրդը, որը չի ուզում ստրկանալ, նրան ստրկացնելը անհնար է»:

Ոչ, մենք չստրկացանք: Մեր ոգին, թէեւ երբեմն ընկրկեց, տեղի տուեց, անցաւ ընդլատակ, սակայն խոշոր հաշուով, իր ամբողջութեան մէջ՝ մնաց անշիջանելի:

Կոնստրուկտիւ ճարտարապետութեան գերիշխանութեան մէջ մենք՝ Հայաստանի մարդիկ, ունեցանք Թամանեան, կառուցեցինք Կառավարական տունը՝ հայ ճարտարապետութեան վերածնունդը նշանաւորող այդ ամենաազգային կերտուածքը, կառուցեցինք հայակնիք Երեւանը:

digitised by A.R.A.R.@

Սոցիալիստական ռեալիզմի կանոնիկ պարտադրությունների մէջ մեզանում յամառօրէն իր ասածը, իր գոյները առաջ տարաւ Մարտիրոս Սարեանը, փայլատակեցին հայ շնորհաշատ արուեստագէտների, երաժիշտների, գիտնականների բոյլեր, որոնք ազդարարեցին աշխարհին հայոց հանճարի նոր բռնկումները:

Մերթ «միացեալ հոսանքի», մերթ ժդանովեան խաւարամիտ զեկուցումներում հոչակած շեղումների, մերթ «կոսմոպոլիտիզմի» եւ ուրիշ եղած ու չեղած թշնամիների դէմ տարուող անհեթեթ պայքարների մթնոլորտում Հայաստանում ստեղծուեց աքանչելի գրականութիւն, հայաշունչ «*Վարդանանք*», «*Պապ թագաւոր*», «*Ախա Գեղեցիկ*», «*Մ՛ըն է, լաւ, մեր հայրենիք*», «*Անլռելի զանգակատուն*», «*Ախր ես ինչպէ՞ս վեր կենամ, գնամ*», «*Երկրի ջիղը*» եւ շատ ուրիշ մեծահամբաւ գործեր: Գրանիտէ ապաստան ստացան մեր թափառական մագաղաթները: Վերագնահատուեցին մեր պատմական արժէքները: Հրատարակուեցին, թարգմանուեցին, դէպի աշխարհի բացերը քայլեցին մեր մեծերը՝ Խորենացուց սկսած մինչեւ Նարեկացի, Քուչակ, Սայաթ-Նովա:

Մարտնչող աթեիզմի գաղափարաբանութեամբ ներծծուած երկրում անհնարին պահին հնար ընծայուեց Ամենայն Հայոց Կաթողիկոս, երջանկայիշատակ Վազգէն Առաջինին՝ զօրացնել Էջմիածինը եւ եկեղեցին, դարձնելով այն հոգեպահպանման ու հայապահպանման համազգային ազդակ, աղօթատուն: Զարթնեցին պատմութեան օրօրոցներում մուշ-մուշ քնած հոգեւոր երգերն ու տաղերը եւ ղողանջեցին մարդաշատ դահլիճներում: Բեմերից հնչեցին պատարագներ ու շարականներ:

Մոսկուայից եկող սահմանափակումների, դէպի հայկական արտասահմանը միայն ու միայն «դասակարգային մօտեցում» ցուցաբերելու ժամանակավրէպ պնդումների առկայութեամբ, գուցէեւ զանազան զարտուղի նպատակներ հետապնդող օրգանը՝ Սփիւռքի կոմիտէն, ծառայեցուեց մեր համազգային շահերին, թանձրացաւ դէպի Սփիւռք տանող թելերի հիւսուածքը, հայրենիք-արտասահման կապերը հետզհետէ իրենց ծիրի մէջ առան նոր մարդկանց, նոր շրջանակներ, օր օրի հաստատացնելով «մէկ ազգ, մէկ հայրենիք» գաղափարը:

Եւ վարջապէս, սովետական իշխանութեան՝ դեռ 18-20 թուականներից Թուրքիայի հետ սկսած սիրաբանութիւնների, տարածքային անձեռնմխելիութեան ամէն տարի նրոգուող հաստատիացումների, 15 թուի ցեղասպանութեան անտեսման, նոյնիսկ ժխտման պայմաններում, Հայաստանի մարդկանց, մտաւորականութեանը, գրողներին յաջողուեց նեարդերի անասելի պրկումով, հայրենասիրական մի նախադասութիւն, մի անուն, մի Անդրանիկ կամ Սողոմոն Թէհլիրեան գրաքննչական արգելաձողերից անցկացնելու ու հրատարակելու՝ գերագոյն համբերութիւն պահանջող ճիգերով Հայաստանում զարթեցնել ցեղասպանութեան ցաւը եւ մեր նահատակների յիշատակը անմար պահելու, Հայ դատին, հայոց պահանջատիրութեանը հաստատիմ մնալու ոգին: Ոգի, որը 65

digitised by A.R.A.R.@

թուականի Ապրիլ 24ին առաջին անգամ բողոքի ու հատուցման ցոյցի հանեց բազմահազար զանգուածներին, որը Ծիծեռնակաբերդի բարձունքին դարձաւ Եղեռնի յուշարձան եւ ամենամեայ երթ ու երդում, որը 88 թուականի Փետրուարին ալեկոծեց Հայաստանից մինչեւ Սփիւռք տարածուող հայաշխարհը եւ որի հրեղէն բոցավառումից ծնուեց Վահագն պատանեկիկը՝ երրորդ Հայկական Հանրապետութիւնը, հայոց նորանկախ պետականութիւնը...

Թանկագին բարեկամներ,

Թող ներուի ինձ, որ ես համագումարի բացման հակիրճութիւն ենթադրող խօսքը այնքան ծաւալեցի՝ հաւանօրէն համագումարում ինձ հասնող ելոյթից հրաժարուելու հաշուին: Պէտք է ջանամ իմ հետագայ ասելիքը շարադրել որքան կարելի է համառօտ:

Կարծում եմ, որ բոլորին յայտնի է Հայաստանի գրողների միութեան դերը՝ թէ՛ 88 թուականին նախորդող՝ ժողովրդի մէջ հայրենասիրութեան կրակը հրահրելու, եւ թէ 88ի Փետրուարից ծաւալուած ազգային-ազատագրական շարժման օրերին: Գրողների միութիւնը առաջինն էր, որ Փետրուարի 15ի իր ժողովում արձագանգեց Լեռնային Ղարաբաղից հնչող ազատամարտի կանչերին. նա էր, որ իր յարկի տակ ընդունեց սումգայիթեան արհաւիրքի զոհերին, ափոփեց ու պատըսպարան որոնեց մի քանի ժամում ամէն ինչ կորցրած անօթեւան բռնագաղթուածներին: Գրողների միութիւնը պայքարի հետագայ ամիսներին, գուցէ ոչ այնքան նկատելի, բայց հսկայական աշխատանք կատարեց շարժմանը բարոյապէս սատարելու գործում՝ միութենական ղեկավար մարմիններին, Խորհրդային հանրապետութիւնների ստեղծագործական միութիւններին, միջազգային հասարակայնութեանը եւ առանձին նշանաւոր մարդկանց պարբերաբար յղելով բողոքի նամակներ, հեռագրեր, դիմումներ՝ ի պաշտպանութիւն Լեռնային Ղարաբաղի արդար ընդվզմանը, «Ղարաբաղ» կոմիտէի յանիրաւի ձերբակալուած անդամների: Եւ այսօր ցաւալի է տեսնել Հայաստանի գրողների կազմակերպութիւնը այսպիսի թեւաթափ վիճակում, տեսնել, թէ ինչպէս այն՝ կորցրած իր մարտական ու ստեղծագործական լիցքերը, կարծես թէ վեր է ածուել նպաստամատոյց մարմնի, որը, որքան էլ որ ջանայ արդար լինել, միեւնոյն է, չի կարող գոհացնել միանգամից գոյութեան միջոցներից, հոնորարից, հրատարակուելու հնարաւորութիւնից զրկուած, իրաւացիօրէն արտնեղած գրողներին:

Անարդար է գրողների միութեան այս վիճակը վերագրել միայն գրական ղեկավարութեանը: Հանրապետութիւնում տիրող ընդհանուր մթնոլորտն է, որ հաղորդուել է ամէնքին, ընդհանուր փլուզումի հեղձուցիչ փոշին է, որ խցանել է մարդկանց յոգնած ունկերը:

Գրողների միութիւնում այդ փլուզումը սաղմնաւորուել է վաղուց. թերեւս այն օրերից, երբ միտինգներում համատարած յարձակում սկսուեց մտաւորականութեան վրայ, երբ ամէն օր ելոյթներում հոլովւում էր մտաւորականութեան, յատկապէս գրողների անունները, որպէս

digitised by A.R.A.R.@

«ղեկավարության փէշի տակ ծուարած յարմարողների, վերեւների պատուէրները կատարելու համար՝ շքանշաններ սպասողներին». երբ միտինգների ամբիոններից՝ բազմութեան սուլոցների ու բացագանչութիւնների տակ իջեցուում էին բոլոր նրանք, որոնք այս կամ այն չափով վիճարկում էին նորայայտ գործիչների ազգավնաս կարգախօսները: Այս ամէնի հետեւանքով մտաւորականութիւնը, այդ թւում նաեւ գրողների միութիւնը, հետագայ տարիներին կարծես թէ իրեն մի տեսակ դուրս զգաց դէպքերի յորդահոս ընթացքից: Պակասը լրացրեցին ներքին խլրտումները, երբ նախորդ համագումարի ժամանակ գրողների մի խումբ անջատուեց հին միութիւնից: Այդ պառակտումը, եւ այն էլ ղարաբաղեան շարժման օրհասական պահին, երբ տասը միութիւն էլ լինէին, պէտք է միանային ու բոլոր դառնային Ղարաբաղը խեղդող թշնամու դէմ, անհիմն այդ պառակտումը, որքան էլ անհշան ուժ ներկայացնող խմբի կողմից ձեռնարկուած, այնուամենայնիւ ինչ-որ տեղ հոգեբանօրէն ազդեց գրական կազմակերպութեան վրայ, խարխլեց նրա միասնութիւնը, եւ գրական ղեկավարութեան էներգիան՝ ստեղծագործական խնդիրներից աւելի,մխսուեց նորելուկ միութեան կողմից անօրինական կերպով գրաւած սենեակները վերստին «ազատագրելու», ինչպէս եւ «Հայ գրող» յորջորջուող թերթի՝ գրական աւագանում հեղեղող լուտանքները դիմագրաւելու ուղղութեամբ:

Մթնոլորտը պղտորելու մէջ դեր խաղացին նաեւ առանձին գրականագէտների եւ գրողների թունալից յարձակումները իրենց գործընկերների վրայ: Մեր անցեալ կեանքի տարատեսակ ողբերգութիւնների մէջ թափանցելու, անաչառօրէն վերլուծելու եւ հասկանալու փոխարէն, նրանք՝ այդ գրականագէտները, աւգեան ախոռները մաքրողի բահն ու քլունգը առած, կատաղի հարուածներ են տեղում բոլոր նրանց վրայ, ովքեր համարձակւում են անցեալ մեր պատմութեանը նայել տարբեր տեսանկիւնով եւ գիտնականին վայել խղճմտութեամբ փորձում են պարզել իրողութիւնը, ցրել այն սեւացնող ամպերը, որ աչառու ախիւանոյզները միակողմանիօրէն կուտակել են առանձին գրողների վրայ: Աստուած իմ, ինչ ատելութիւն կայ այդ յօդուածներում, չարութեան ինչ անսպառ պաշարներ, որոնք, ըստ երեւոյթին, անձեռնմխելի են մնացել, երբ մեր ժողովուրդը՝ մեծից մինչեւ փոքրը, գիտնականից մինչեւ բանուորը իրենց ատելավառ խօսքն էին ուղղում ազգի գաղութարարների եւ կամ բռնակալական Մոսկուայի մեր հանդէպ վարած նենգադաւ քաղաքականութեան դէմ...

Ատելութեան մրցավազքում երբեմն աւելի առաջ է անցնում *«Հայաստանի հանրապետութիւն»* թերթը: Բաւական է նայել թերթի Օգոստոսի 17ին տպագրուած յօդուածի միայն վերնագրին՝ *«Զգուշացէք ներքին թշնամուց»*, որպէսզի, ինչպէս ասում են, հաշիւդ առնես: Յօդուածում յիշատակւում են համարեա՛ բոլոր քիչ թէ շատ ընդդիմադիր կուսակցութիւններն ու կազմակերպութիւնները, պաշտօնաթերթերն ու թերթերը: Վայ էն անզգընտիր կոչուող պետութեանը, որ

digitised by A.R.A.R.@

այդքան շատ «ներքին թշնամիներ» ունի: Դրանց ճնշելու համար Վազգէն Սարգսեանի ձեռքի տակ եղած զօրք ու բանակից բացի, վայ թէ հարեւան երկրներից վարձկաններ էլ կանչուեն...: Պաշտօնաթերթը հէնց վերջերս, երբ Էջմիածնի վրայ սուգի քողը դեռ չի հանուել, հնարաւոր համարեց տպագրել մի յօդուած, որտեղ Ամենայն Հայոց կաթողիկոսի՝ ժողովրդի ճակատագրով համակուած տագնապալից ելոյթը՝ «Զուարթնոցի» դէպքերի առիթով, համարուեց ոչ աւել, ոչ պակաս, քան ԿԳԲի յանձնարարութեան եւ միանգամից հողին հաւասարեցուեցին նոյն թերթում մի երկու շաբաթ առաջ հրապարակուած՝ հանգուցեալ Հայրապետին վերաբերող դրուատանքի խօսքերը, այդ թւում հանրապետութեան նախագահի բարձրագոյն գնահատականը: Ահա թէ ինչի կարող է յանգեցնել բոլորի վրայ ցեխ շպրտելու, բոլորին արատաւորելու կիրքը, տարփանքի հասնող թոյնն ու չարութիւնը:

Որքան էլ սուղ լինի ժամանակս, ես այստեղ ուզում եմ մէջ բերել Վահան Թէքէեանի՝ քսանական թուերին գրած պատասխանը Ամերիկայում գտնուող իր հոգեւոր սան Զաւէն Սիրմէլեանի յոռետես նամակին: *«Սիրելի Զաւէն, դիտե՞ս թէ սա երկու բառերդ «անցեալս շատ դժբախտ է ու մութ» արտասուք բերին աչքերուս մէջ: Դժբախտ՝ այո, բայց ի՞նչ մութ: Թոյնը չեմ ներեր, որովհետեւ կրնայիր չըլլալ հիմա, բայց գողութիւնը եւ ուրիշ ինչ որ ըրած ես (անապատանութեան օրերուն) հոգիդ ինքն իրեն, իր յորդ ու պայծառ աղբիւրովը զանոնք սրբած-տարած է կեանքիդ վրայէն: Վայ անոնց, որոնց հոգին ճախճառուտ է, յանցանքները հոն կը մնան ու կը նեխին...»:*

«Թոյնը չեմ ներեր», եւ սա ասում է մեր պատմութեան ամենադառը օրերին, այդ դառնութիւնները մինչեւ վերջը ճաշակած մարդու կողմից: Եկէք, ուրեմն, յարգելի գործընկերներ, զսպենք մեզ, ընթացք չտանք մեր մէջ եռացող կրքերին, որքան էլ դժուար լինի դա նեարդերի այս եօթամեայ լկումի, հոգեկան անվերջ ցնցումների, մեզ վրայ տեղացող անձնական եւ ոչ–անձնական վիաւորանքների պայմաններում: Եկէք մեր խռովքների ու զայրոյթների էներգիան ծախենք մեր ժողովրդի համար բախտորոշ հիմնահարցերի վրայ, որոնք այնքան շատ են եւ այնքան կարօտ մեր միջամտութեանը:

Մեր ժողովուրդը տնտեսականից բացի ապրում է բարոյական ճգնաժամ: Խորը խաբուածութիւնն ու հիասթափութիւնը՝ գաղափարներից, իշխանաւորների վարքուբարքից, անօրինակ զրկանքները, թեւաթափող անյուսութիւնը՝ թէ որեւէ բան կը շտկուի,— այս ամէնը ծայր է տուել ազգակործան մի երեւոյթի, որը կոչւում է արտագաղթ: Եւ որ աւելի ողբերգականն է, սկսուել է նաեւ արտագաղթ՝ հայութիւնից, ազգային պատկանելութեան զգացումից, պարպուելը՝ Արարատից, ինչպէս ընդունուած է ասել Սփիւռքում: Օր օրի մարդկանց մտածողութեան մէջ գերիշխող է դարձնում պրագմատիզմը. «Ոնտեղ հաց, այնտեղ

digitised by A.R.A.R.@

կաց» արատաւոր կենսափիլիսոփայութիւնը: Դոլարի թանձր կանաչը սկսել է լկտիօէրն ներկել ամենայն Եռագոյն ու զինանշան, իր հեշտալուր խշրտոցով խլացնել ամենայն օրհներգ, հոգու ձայն, ազգային ոգի, ազգային լեզու, մշակոյթ: Ո՞վ կարող է կարծել, որ «շուկայական յարաբերութիւններ» կոչուող տնտեսագիտական, մեզ համար՝ յոյժ գրքային արտայայտութիւնը, երեւի խիստ հապճեպ, հապշտապ կիրառութեան հետեւանքով կարող էր այսքան ռեալ աղէտներ բերել Հայաստանին, ստեղծէր օրէցօր վայրենի ձեւեր ընդունող՝ սոցիալական բեւեռացում, գիւղերում ու քաղաքներում՝ քաոս ու անկառավարելիութիւն, մարդ արարածի համար անվայել աղքատացում, աշխատելու եւ համարեա՛ ոչինչ չստանալու աբսուրդային վիճակ, ուղեղների, ազգի կարող ուժերի արտահոսք, ընտանիքներ բաժան-բաժան լինելու տխուր իրողութիւն, գիտութեան եւ մշակոյթի ետդարձ եւ դեռ տեսակ-տեսակ անխոստովանելի արատներ: Մեզ սպառնում է ընդհանուր բարոյականութեան, ազգային բնաւորութեան, մեր լինելութեան կերպի էրոզիա, որը պակաս կործանարար չէ, քան արտագաղթը, քան լոյսի, տաքութեան, ուտելիքի պակասը:

Հարկաւոր է, ի՛նչ գնով էլ ուզում է լինի, քանի ուշ չէ, պատուարել, կազմեցնել դէպի Արարատ միտող այս հոգեւոր ջրհեղեղը: Այստեղ արդէն պէտք է սթափուի եւ գործի անցնի մտաւորականութիւնը, գրողը, արուեստագէտը: Իսկ որպէսզի նրա ջանքերը լինեն արդիւնաւէտ, ազդեն սրտի եւ մտքի վրայ, «հարկաւոր է, որ հասարակութեան մէջ վերականգնուի մտաւորականութեան դիրքը, որը այնպէս անխնայօրէն, ես կ'ասէի, անտնտեսվարօրէն խախտուեց այս տարիների ընթացքում: Հարկաւոր է Վիկտորիա Ռուֆֆոներից եւ նրանց մեծագրպան հովանաւորներից «բոնագրաւել» ամբիոնը, որը այժմեան դրութեամբ հեռուստատեսութիւնն է, եւ յատկացնել գրողին, արուեստագէտին, գիտնականին, բոլոր այն մարդկանց, որոնք կարող են շիտակ, առանց իրականութիւնը աքողելու սրտաբաց զրոյց վարել մարդկանց հետ, վերականգնել հոգիներում կատարուող աւերածութիւնը: Չէ՞ որ անկախ պետականութեան կայացման ու ամրացման համար հերիք չեն միայն անդրովկիանոսեան այցելութիւնները եւ նախարարների, դեսպանների, այլեւայլ պաշտօնեաների օրէցօր խտացող ցանցը: Այս ամէնից աւելի հարկաւոր է ժողովրդի, ասել է՝ առանձին մարդկանց հոգեկան ամրութիւնը, առողջ ինքնազգացողութիւնը, մարդու եւ պետութեան միջեւ հաստատուած փոխըմբռնումն ու փոխվստահութիւնը,

Ահա այս խնդիրների շուրջ պէտք ծաւալուի խօսակցութիւնը Հայաստանի գրողների միութեան ներկայ համագումարում, այս խնդիրների լուծման համար պէտք է իր ուժերը լարի միութեան նորընտիր ղեկավարութիւնը: Կարծում եմ, միութեան անդամներից շատերի կարծիքը յայտնած կը լինեմ, եթէ ասեմ, որ գրական ղեկավարութիւնը պէտք է վեր կանգնի կուսակցական նախատրամադրուածութիւններից, պէտք է առաջնորդուեն միայն ու միայն գրականութեան ու ժողովրդի շահե-

digitised by A.R.A.R.@

ռով: Մենք ուզում ենք լինել իսկապէս ազատ, գործել սոսկ մեր խղճի թելադրանքով: Ցայտնի խօսք է՝ ամէն գրող պէտք է ունենայ իր «այո»ն եւ «ոչ»ը: Այդ «այո»ն չպէտք է յուշուի վերից կամ կողքերից, եւ այդ «ոչ»ը չպէտք է ընդունուի այդպէս հիւանդագին: Որովհետեւ՝ եթէ գրողը իսկապէս գրող է, չի կարող գործել ի վնաս ժողովրդի, ի վնաս հայրենի իշխանութիւնների: Մնում է, որ իշխանութիւնները լինեն իսկապէս հայրենի, հասկանան գրողին, արտացայտ ընդդիմախօսին եւ ամէն քննադատող խօսք չհամարեն «թշնամական բարբաջանք», ո՛չ միայն թոյլ չտան տպագրել, այլեւ չմտածե՛ն իսկ բերան առնել «ներքին թշնամի» արտայայտութիւնը:

Հայաստանի հանրապետութեան ներկայ ղեկավարները, որ միտինկների հարթակից մէկէն բարձրացան ու կանգնեցին փառապսակ պատուանդանին, պէտք է զգան, որ այդ պատուանդանը նիւթուած է հայ ժողովրդի յանուն ազատութեան ու յանուն հայրենիքի մղած դարաւոր մաքառումներից, նիւթուած է «Մահ իմացեալի»ից եւ «Ազատն Աստուած»ից, ֆիդայական «կեցցէ Զէյթուն»ից եւ Բաֆֆու «Խենթի երազ»ից: Սերունդների բաղձանքն ու հատնումները կան այդ պատուանդանին մէջ՝ սկսած Վարդանանց պատերազմից մինչեւ Սարդարապատ, մինչեւ Ստեփանակերտում եւ Երեւանի Թատերական հրապարակում «Միացում», «Պայքար, պայքար» վանկարկողները: Ուստի՝ պատուանդանին բարձրացածները պէտք է զգան, որ իրենք պատասխանատու են մեր անցեալի ու ապագայի առաջ եւ ամէնից շատ ներկայի՛ առաջ, մեր բազմաչարչար ժողովրդի առաջ, որը հերոսաբար կրում է այս վերջ չունեցող տառապանքները եւ գործ դնելով իր ողջ իմաստութիւնն ու բնազդը,ե՛ւ իրեն, ե՛ւ երկիրը: Պէտք է յարգել տառապանքն ու իմաստութիւնը այն ժողովրդի, որը յամառում է ապրել հպարտ եւ արժանավայել, որը ինչպէս մեր պատմութեան բոլոր օրհասական պահերին, հիմա էլ վերին մի խորհրդով, աշխարհ է բերում նորանոր տաղանդներ, շնորհաշատ երեխաներ եւ պատանիներ, երաժիշտներ, արուեստագէտներ, բանաստեղծներ, գիտնականներ, կարծես նորից ու նորից հաւաստելու մեր կենսունակութիւնը, յոյս ներշնչելու, որ ինչ էլ լինի, մենք դուրս կը գանք այս փորձութիւններից եւս:

Եկէք, ուրեմն, բոլորս՝ հանրապետութեան նախագահ թէ գրող, նախարար թէ գիտնական, պատգամաւոր թէ բանուոր մեր անկաշառ նուիրուածութեամբ, մեր ազնիւ ծառայութեամբ օգնենք ժողովրդին նորոգելու իր խարխլած հաւատը, թեւաւորելու նրան, որպէսզի նա անձնուրաց աշխատանքով, սիրով ու գուրգուրանքով մեծացնի դարերի երկունք ապրած նորամանուկին՝ նորանկախ Հայաստանին, որ իրն է վերջապէս, իմն է, բոլորինն է, մեր աշխարհացրի հայութեան յարատեւման գրաւականը:

Երեւան, 19 Սեպտեմբեր 1994 ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Ա. ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

ՀԱՅ ԱՌԱՋԻՆ ԹԵՐԹԻՆ՝ «ԱԶԴԱՐԱՐ Ա Ր »ԻՆ 200ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ

«ԱԶԴԱՐԱՐ» — ՀԱՅ ԱՌԱՋԻՆ ԼՐԱԳԻՐԸ

Շմաւոնեանի տպարանը կը գործէր եւ որոշ հերթականութեամբ լոյս կ'ընծայէր գիրքեր: Որպէսզի տպարանը ոտքի կենար, ամէնօրեայ նիւթ կ'ուզէր: Պէտք էր գոհացնել զայն: Շմաւոնեան քհնյ., իբրեւ լուսամիտ եւ արթուն մարդ, տեղեակ է, որ Հնդկաստանի մէջ կայ պարբերական հրատարակութիւն: 1784ին, Կալկաթայի մէջ սկսած է լոյս տեսնել, անգլերէնով, Calcutta Gazette: Չի հետեւիր այս թերթին: Իրեն ուղեցոյց կը վերցնէ նոյն Մատրաս քաղաքին մէջ լոյս տեսած անգլերէն լրագիրը: Անոր մասին կը գրէ.

«Մեր քաղաքին բարեկարգ անգլիացիները, սակէ ամիս մը առաջ, սկսան տպագրել տետրակ մը, մերինին նման՝ ամսուն վերջը, եւ ինչպէս իմացայ, անոր մէջ ուրիշ բան չկայ, բայց միայն իրենց ազգէն համբաւաւոր մարդոց վարքը, զանազան պատմութիւններ, գործերու որպիսութիւնը եւ ոմանց արժանաւոր գրուածքները... իսկ տետրակին վերջը, իրենց հասարակութեան գործերը քաղցրացնելու համար, կը տպեն հոս վաճառելի զանազան իրերու գիները եւ նաւերու մեկնումի ու ժամանման ժամանակացոյցը։

«Այս տետրակը ես ինձ օրինակ վերցուցի»(12):

Շմաւոնեան քահանայ հոգեպէս էր պատրաստ է: Սակայն, հակառակ եկեղեցական ըլլալուն, ծանօթ է նաեւ շուկայի գերականութեան: Կ'ուզէ որ իր ժողովուրդն ալ հոգեպէս պատրաստ ըլլալ իր նոր հրատարակութիւնը ընկալելու: Իր թերթին լոյս ընծայումէն շուրջ 40 օր առաջ, իր հաւատացեալ ժողովուրդին կը բաժնէ ծանուցում-բացատրողագիր մը, «Բարեպաշտ Պարոնաց եւ Մաքրակենցաղ Տիկնա(ն)ց Մաղրասիս հայոց» խորագիրով: Ծանուցումը կու տանք ամբողջութեամբ: Այս ծանուցումը նաեւ տպուած է *«Ազդարար»*ի Ա. թիւին մէջ (էջ 1-2):

«ԱԶԴԱՐԱՐ»Ի ԾՐԱԳԻՐԸ

Օրինակ վերցուած է անգլերէն հրատարակութիւնը, սակայն նկատի ունենալով իր ժողովուրդին պահանջները, փոփոխութիւններ մտցուցած է: Ահաւասիկ իր առաջադրանքը.

digitised by A.R.A.R.@

1) Խրատական բաներ կամ խօսքեր:

2) Ուրիշ ազգերէ թարգմանութիւններ:

3) Մեր գիրքերէն՝ մատենագրութենէն վերցուած՝ ընտրուած հատորներ:

4) Հայաստանէն եւ Պարսկաստանէն այնպիսի լուրեր, զորս իր ընթերցողները չեն լսած:

5) Տեղական թերթերէն քաղուած այնպիսի լուրեր, որոնք մնայուն եւ ուրախացնող հանգամանք ունին: Ոչ-անհրաժեշտ եւ ժամանակավրէպ լուրեր պիտի չտանք:

6) Վաճառականներուն օգտակար ըլլալու համար՝ վաճառելի իրերու օրուան գիները:

7) Յառաջիկայ ամսուան օրացոյցը, նշելով տարբերու տօները, լուսնին փուլերը եւ հանդիսաւոր օրերը:

8) Նաեւ, եթէ կարելի ըլլայ, նաւագնացութեան համարները(13):

ՀՆԴԿԱՀԱՅՈՑ ԳՈՐԾԱԾԱԾ ՏՈՄԱՐԸ

Հնդկահայերը գործածած են Ազարիա Ջուղայեցիի տոմարը: Շմաւոնեան քահանայ այդ տոմարին ամսանուններով լոյս ընծայած է *«Ազդարարը»*: Հետեւաբար պարտաւոր ենք հակիրճ կերպով անդրադառնալ այդ տոմարին:

ԺԶ. դարուն, տոմարագէտ Ազարիա Ջուղայեցին կը պատրաստէր հայ տոմարին Գ. շրջանը (Ա.ը պատրաստուած էր Զ. դարուն, Բ.ը՝ ԺԱ. դարուն): Տարին բաժնած էր 12 ամիսի՝ 30ական օրով, 13դը՝ յաւելեաց ամիս, 5 օրով: Նահանջ տարիներու 12դ ամիսը կ'ունենար 31 օր: Տարուան առաջին օրը կը սկսի գարնանային գիշերահաւասարի օրը՝ Մարտ 21ին: Ամսանունները մեծ մասով արաբական են: Կու տանք բաղդատական տախտակը հռոմէական (Յուլեան) տոմարին հետ, որ ծանօթ է հին տոմար անունով–

Շամս	Մարտ 21
Աղամ	Ապրիլ 20
Շբաթ	Մայիս 20
Նախա	Յունիս 19
Ղամար	Յուլիս 19
Նաղար	Օգոստոս 18
Թիրա	Մեպտեմբեր 17
Դամա	Հոկտեմբեր 17
Համիրա	Նոյեմբեր 16
Արամ	Դեկտեմբեր 16
Ովդան	Յունուար 1
Նիրհան	Փետրուար 14
Յաւելեաց	Մարտ 16(14)

digitised by A.R.A.R.@

Մեր այսօրուան գործածածը կը կոչուի Գրիգորեան տոմար (նոր տոմար): Յուլեան եւ Գրիգորեան տոմարներուն տարբերութիւնը ԺԸ. դարուն 11 օր էր: Յուլեանին վրայ պէտք է աւելցնել 11 օր, ունենալու համար անոր համապատասխանող այսօրուան մեր՝ Գրիգորեանին ճշգրիտ օրը:

«*Ազդարար*»ի Ա. թիւին ճակատին գրուած է «*Ազդարար*» Թիրա ամսոյ, որ կ՚ընդգրկէ Սեպտեմբեր 17–Հոկտեմբեր 16ին օրերը: 18րդ դարուն մենք կը հետեւէինք Յուլեան տոմարին: Կարգ մը բանասէրներ տեղեակ եղած են, որ «*Ազդարար*»ը լոյս տեսած է Թիրա ամսոյն վերջին օրերը, ատոր համար ալ այդ ամսոյն վերջին օրը՝ ծննդեան օրը՝ Հոկտեմբեր 16ը (հին տոմարով) նկատած են անոր լոյս ընծայման: Լէօ եւ Մարգարիտ Մխիթարեան կը նշեն զայն:

Կը կասկածէինք, որ Հոկտեմբեր 16ին հրապարակ ելած ըլլայ: Ինչո՞ւ: «*Ազդարար*»ի Ա. թիւին վերջին էջերուն մէջ (էջ 43) տպուած են Ուրախակից Բարեկամին շնորհաւորանքի՝ ուրախակցութեան կարճ նամակ եւ քերթուած մը: Նամակը կը կրէ Թիրա 30 թուականը, այսինքն՝ 16 Հոկտեմբեր: Նամակը, քերթուածը եւ անոնց հետեւող օրացոյցը կը գրաւեն 7 էջ (ամբողջ թիւը 48 էջ): Տպարանը կրցա՞ւ այդ էջերը շարել, տպել, պրակները հաւաքել, թիւը կազմել եւ հրապարակ հանել նոյն օրը՝ Հոկտեմբեր 16ին: Կը կասկածինք: Կ՚ենթադրենք, որ Հոկտեմբեր 16ին վրայ պէտք է աւելցնենք 1-2 օր, վերոյիշեալ աշխատանքներուն ամբողջացման համար: Հետեւաբար, լոյս տեսած ըլլալու է Հոկտ. 17-18ին: Նոր տոմարով 28-29 Հոկտեմբերին:

ԿԱՐԳ ՄԸ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1794ին լոյս տեսած է 4 թիւ (հին տոմարով՝ Սեպտեմբերէն Դեկտեմբեր, նոր տոմարով՝ Հոկտեմբերէն 1795 Յունուար: 1795ին՝ 12 թիւ (Յունուար-Դեկտեմբեր, նոր տոմարով՝ Փետրուար 1795 Յունուար), իսկ 1796ին՝ 2 թիւ (Յունուար-Փետրուար, նոր տոմարով՝ Փետրուար-Մարտ): Իւրաքանչիւր թիւը՝ մօտաւորապէս 50 էջ: Իւրաքանչիւր տարուան էջերը (1794, 1795, 1796) շարունակական են: Չափը շարուածքին՝ 14x12 սմ.: Բնագիրը՝ 12 կէտաչափ (փունքօ) բոլորագիր եւ նօտր գիր: Ունի գլխագարդեր, վերջագարդեր եւ գարդագիրեր:

«ԱԶԴԱՐԱՐ»Ի ԲՆԱՏԻՊ ՕՐԻՆԱԿՆԵՐ

«*Ազդարար*»ի բնատիպ թիւեր կամ լրիւ հաւաքածոներ շատ քիչ պահպանուած են: Մեր ձեռքին տակ գտնուող աղբիւրները տեղեկութիւններ ունին անոնց մասին: Ցարմար կը նկատենք անդրադառնալ անոնց:

Մարգարիտ Մխիթարեան, «*Ազդարար*»ի վերահրատարակութեան նախաբանին մէջ կը գրէ. «*...առաջին հայ ամսագրի աշխարհում պահպանուած հաւաքածուների թիւը հազիւ կարող է հասնել մէկ*

digitised by A.R.A.R.@

սասնակի։ Մատենագիտական հազուագիւտ այդ մասունքներից երեքը գտնւում է Հայաստանում»(15):

Չի նշեր հաստատութիւնները: Մեզի ծանօթ են Մատենադարանին եւ Հանրային Գրադարանին հաւաքածոները: Ուրիշ հաստատութի՞ւն մըն ալ ունի, կամ՝ նշուած հաստատութիւններէն մէկը ունի երկրորդ հաւաքածո՞յ մը: Պետական քանգարանին ունեցածը մէկ թիւ է:

Ամալիա Կիրակոսեան 1970ին Երեւանի մէջ լոյս ընծայեց «*Հայ Պարբերական մամուլի մատենագիտութիւն*» (1794-1967) գործը, ուր իւրաքանչիւր թերթի տակ կը նշէ, թէ առաջ թերթէն թիւեր, տարիներ եւ հաւաքածոներ ո՛ւր կը գտնուին: Իրենց մամուլին ցուցակները ուղարկած են Հայաստանի, ներքին Սփիւռքի եւ արտաքին Սփիւռքի հայ կարեւոր գրադարանները, բացի Վենետիկի Մխիթարեան մատենադարանէն:

Մեր մամուլին ցանկէն լուր չունի Ա. Կիրակոսեան (չէ պահանջած մեզմէ): Անձնական մեր հաւաքածոյին մէջ կայ «*Ազդարար*»ի բնատիպ երկու թիւ, 179, թ. 1 եւ 2, այսինքն՝ շարքին 5րդն ու 6րդը:

Հայրենիքի եւ Վիեննայի հաւաքածոներուն մասին հնդկահայ բանասէր եւ ազգային գործիչ Մեսրոպ Յ. Մէքեան կը փոխանցէ քանկագին տեղեկութիւններ, զորս հոս մէջբերելը անհրաժեշտ կը նկատենք:

«*Ցոյժ հազուագիւտ են ամբողջական օրինակք «Ազդարար»ին յազդին եւ որքան կարացի իմանալ գտանի ամբողջական օրինակ մի ի Մատենադարանի Սրբոյ Էջմիածնի նուիրեալ է բարեյիշատակ Տէր Յովհաննէս աւագ քահանայէ Մկրեան կ. Պոլսեցւոյ որպէս գրէրն ինձ ի Տէր հանգուցեալ բարեկամն իմ Մկրեան յամին 1901, յամսեանն Մարտին, օրինակ գայս ի Կոստանդնուպոլսոյ.*

«*Ուրախ եմ ի վերայ գտանելոյդ զ«Ազդարար» անդրանիկ լրագիրն ազգիս որոյ չիք աստանօր եւ ոչ մի թերթ օրինակն, բայց եթէ միայն ի վանս Մխիթարեանց ի Վիէննա։ Եւ զիմն ես նուիրեցի Թանգատանին Մ. Էջմիածնի որում արժան էր ունել զքանի մի օրինակ»։*

«*Վիէննայի Մխիթարեանց օրինակն սակայն չունի զ«Ճակատ» եւ զ«Ցայտարարութիւն», որպէս եւ զէջս 44-45.Գակաս է նոյնպէս թիւ 1 եւ 2 վասն Ցունուար եւ Փետրուար ամսոց 1796 ամին։*

Գտանի ամբողջական օրինակ մի ասա յորմէ հանեալ է սոյն այս նմանահանութիւն վասն «Ամէնուն Տարեցոյցի(16):

Հայաստանի խորհրդայնացումէն ետք, երբ Էջմիածնի ձեռագրական եւ գրքային հաւաքածոները պետականացուեցան, հաւանաբար «*Ազդարար*»ի հաւաքածոն ալ փոխանցուեցաւ Մատենադարանին:

Միասնիկեանի անուան հանրապետական գրադարանին (ներկայիս՝ Ազգային Գրադարան) հաւաքածոն նուէր էր Հնդկաստանէն եւ սեփականութիւնը՝ Մեսրոպ Յ. Մէքեանի, որուն մահէն (1939) ետք, ի՛նչ պարագաներու տակ, չենք գիտեր, զայն ձեռք անցուցած է Կալկաթայի Ս. Նազարէթ եկեղեցւոյ Թաղական Խորհուրդը, որ 199ին զայն նուէր ղրկած է Հայրենիք:

digitised by A.R.A.R.@

Հալէպի «*Արեւելք*» օրաթերթին մէջ տպուած է հաղորդագրութիւն մը՝ «Հնդկահայերը «*Ազդարար*»ի մէկ հաւաքածոն նուիրուեցին Երեւանի Մատենադարանին», որմէ կը մէջբերենք.

«*Վերջերս Հնդկաստանի Տելհի քաղաքին մէջ տեղի ունեցաւ ասիական երկիրներու գրողներու համաժողովը, որուն կը մասնակցէր նաեւ սովետահայ գրող Գարեգին Սեւունց։*

«*Համաժողովի աշխատանքները աւարտելէն ետք, Գարեգին Սեւունց այցելեց Հնդկաստանի շարք մը քաղաքները, անոնց կարգին Կալկաթա, ուր հանդիպում ունեցաւ հայ գաղութի ղեկավարներուն հետ։ Կալկաթայի Սուրբ Նազարէթ եկեղեցւոյ Թաղական Խորհուրդը Գ. Սեւունցի յանձնեց Հնդկահայերու Նուէրը Սովետ. Հայաստանին՝ հայ ժողովուրդին համար բացառիկ արժէք ներկայացնող հայ անդրանիկ պարբերականի հայ անդրանիկ պարբերականի՝ «Ազդարար»ի լրիւ հաւաքածու։ Ան այժմ կը գտնուի Երեւանի Գեղական Մատենադարանը։*

«*Հնդկահայերու Նուէրը մեծ արժէք կը ներկայացնէ, քանի որ «Ազդարար»ի հազուագիւտ հաւաքածոներէն մէկն է։*

«*Դատելով հաւաքածոյին սկիզբը գրուած նամակագրութենէն, 1834ին ան պատկանած է Բարսեղ Յովակիմեանի Աւելի ուշ հաւաքածոն դարձած է Հնդկահայ բազմավաստակ բանաւէր եւ մանկավարժ, Հնդկահայերու պատմութեան վերաբերող շարք մը աշխատութիւններու հեղինակ Մեսրոպ Յ. Սէթեանի* (1871–1939) *սեփականութիւնը*»(17):

«*Հայ գիրքը 1512–1860 թուականներին*» մատենագիտական գործին մէջ ներմուծուած է «*Ազդարար*»ը: Զարմանալի կը գտնենք մամուլ նկատուած «*Ազդարար*»ին նշումը եւ անդրադարձը հայ գիրքի մատենագիտական ցուցակի մը մէջ: Նոյն մեթոդը կիրարկած է Հայր Գարեգին Զարբհանալեան իր «*Հայկական մատենագիտութիւն*»(18) գործին մէջ: Աշխատակիցները հետեւած են Զարբհանալեանի օրինակին: Հայկ Դաւթեան, որուն մատենագիտական գործը՝ «*Հայ Գիրքը 1801–1850 թուականներին*»(19) բնական շարունակութիւնն է վերոյիշեալ գործին, արդարօրէն դուրս ձգած է հայ մամուլը: Մամուլը տպագրութիւն, հրատարակութիւն է, սակայն գիրք չէ:

Սակայն, վերոյիշեալ ներմուծումին բարիքը այն է, որ կը պարունակէ որոշ տեղեկութիւններ «*Ազդարար*»ի բնատիպ ծանօթ թիւերուն եւ տարեկան հաւաքածոներուն մասին: Այդ տեղեկութիւնները աղօտ են. ճշգրտօրէն չեն նշուած թիւերը:

«*Ազդարար*»ի բնատիպ թիւեր եւ հաւաքածոներ ունեցող հաստատութիւններն ու անհատները,– Ազգային Գրադարան, Մատենադարան, Վիեննայի Մխիթարեան Մատենադարան, Վենետիկի Մխիթարեան Մատենադարան, Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի Կիլպենկեան Մատենադարան, Զմմառի վանքի Մատենադարան, Լեւոն Մինասեանի անձ-

digitised by A.R.A.R.@

նական գրադարան եւ Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի Մատենադարան:

Ուր հաստատութիւններէն եօթը նշուած են երեք տեղ (էջ 702, 711 եւ 719), առանց յստակացումի: Անոնք ունին 3 տարբեր վրայ երկարած 18 թիւե՞ր ալ, թէ որոշ տարիներու որոշ թիւեր: Զմմառը նշուած է միայն 1794 տարբեր տակ, առանց նշելու, թէ ունի՞ն առաջին 1-4 թիւերը:

Աշխատակիցները տեղեակ չեն, որ Հայաստանի պետական թանգարանը ունի 1 թիւ, 1794ի թ. 4ը (Դեկտ.): Կը նշէ Ա. Կիրակոսեան(20):

Մենք գործակցած ենք հայ գիրքի վերոյիշեալ մատենագիտութեան, ուղարկելով հանրային գրադարաններու, անձնական հաւաքածոներու եւ մեր անձնական հաւաքածոյին հնատիպ գիրքերուն ցանկերը (112-1800): Մեզի համար «*Ազդարար*»ը մամուլ ըլլալով, չէինք ներմուծած մեր ցանկին մէջ: Ինչպէս նշեցինք, մենք ունինք բնատիպ երկու թիւ:

Հաւանաբար անհատներ ունենան «*Ազդարար*»էն բնատիպ թիւեր: Օրինակ՝ 1971ին, երբ Գահիրէ կը գտնուէինք, եգիպտահայ գրող եւ խմբագիր Հայկ Ժամկոչեան մեզի յայտնեց, թէ «*Ազդարար*»էն ունի թիւ մը: Առիթ չունեցանք ստուգելու: Լսած ենք, որ Պարսկաստանի մէջ, Շմատոնեան գերդաստանէն ընտանիք մը ունի «*Ազդարար*»ի ամբողջ պահեստը: Զրո՞յց է, թէ իրականութիւն: Պէտք է ստուգել:

«ԱԶԴԱՐԱՐ»*ի ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ*

1969ը 17ամեակն էր «*Ազդարար*»ի հիմնադրութեան: Երեւանի Մատենադարանին եւ Լիզպոնի Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան գործակցութեամբ, լուսատիպ (offset) տպագրութեամբ վերատպուեցաւ թերթին ամբողջ շարքը (18 թիւ), երկու հատորով (1970, 771 էջ): Մատենադարանը տրամադրեց ամբողջական հաւաքածոյին լուսապատճէնները, իսկ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը հոգաց նիւթական ծախսերը: Չէ նշուած, սակայն կ'ենթադրենք, որ լոյս տեսած է Վենետիկի Մ. Ղազարի տպարանէն: Լոյս տեսած է Հայկական Մատենաշար Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան շարքին մէջ:

Ա. Հատորին սկիզբը, «*Երկու խօսք*» խորագիրին տակ, Մարգարիտ Մխիթարեան բաւական բծախնդրութեամբ կը ներկայացնէ «*Ազդարար*»ն ու անոր դերը(21):

«ԱԶԴԱՐԱՐ»*ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ ԵՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ*

Երբ Շմատոն քահանայ կը ձեռնարկէ «*Ազդարար*»ի հրատարակութեան, գիտակից է գոծին ծանրութեան: Հետեւաբար, դիմած է հնդկահայ մտաւորականութեան որոշ մէկ խաւին եւ երիտասարդ գրող-բրոցներու, եւ ապահոված՝ անոնց հաւանութիւնն ու գործակցութիւնը: Իր ծրագիրին Բ.

digitised by A.R.A.R.@

կէտը ներկայացնելու ատեն – «տրիշ ազգերէ թարգմանութիւններ»–, փակագիծի մէջ կը նշէ՝ *«որ եւ ուրախակիցք իմ երիտասարդք տեղոյս օգնել ինձ»*:

Ըստ երեւոյթին, կան խմբագրական մարմին եւ ուղղութիւն: Այդ խմբագրական մարմինին անդամներն են Շմաւոնեան քահանան եւ «տրախակից երիտասարդները», որոնք կոչուած են նաեւ վերակացուներ: Շմաւոնեան քահանան, ապրելով բրիտանական գաղութի մը մէջ, ընդունած է ժողովրդավարական սկզբունքներ: Տպագրուելիք յօդուածները քննութեան կ՚ենթարկուին խմբագրական մարմինին կողմէ եւ, հաւանութիւն ստանալէ ետք, կը յանձնուին գրաշարին: Մ. Ատուռածծին եկեղեցւոյ զանգակատան տակ դրուած է տուփ մը (նամակատուփ մը), ուր կրնայ դրուիլ *«Ազդարար»*ի հասցէագրուած որեւէ գրութիւն:

Աշխատակիցները կարելի է բաժնել երկու խումբի– 1. իրենց անուն մականուններով ներկայացող անձեր. 1. ծածկանուններու ետին թաքնուած անձեր:

Անուն-մականունով ներկայացողները արդէն գրական անցեալ ունեցող, գիրքի հեղինակ կամ յայտնի վաճառականներ են: Ատոնք են, նախ խմբագրապետը՝ ինք՝ Յարութիւն քահանայ Շմաւոնեանը. ապա՝ Յովսէփ արք. Արղութեան, Ստեփանոս. Յովհաննէս Գուլամիրեան, Պետրոս Յարութիւնեան, Խաչիկ Ծատուր Զարիֆեան (տպարանին նախկին հրատարակութիւններուն ղեկավարը), Յակոբ Սիմոնեան Այուբեանց (նոյնպէս նախկին գործակից), Սիմէոն Մկրտում, Փիլիպպոս Յակոբ Պտրումեան, Տէր Թորոս Անդրէասեան եւ Խօջամալ Սաֆարեան:

2(Ծածկանուններով ներկայացող աշխատակիցներ եւ թղթակիցներ –Ուրախակից Բարեկամ, «Բանասէր յումենմէ» (բանասէրէ մը), Թարգմանիչ, Ակնկալու, Տ.Թ.Ա., Չ.Ջ.Ճ., Հայ Որդի Հայ, Անուն Դիւական, Սատանի Չարխ, Ազգակից, եւայլն:

Այս ծածկանուններուն տակ որո՞նք թաքնուած են: Թոլորն ալ տարբե՞ր անձեր են, թէ՞ ոչ երբեմն նոյն անձը տարբեր ծածկանուններու տակ կը ներկայանայ: Պէտք է անոնց գրուածքները լեզուական, ոճական եւ շարադրական հիմերու վրայ մանրամասն քննութեան ենթարկել եւ եզրակացութիւններու յանգիլ:

Ուրախակից Բարեկամը հայ լեզուին տեղեակ, գրելու շնորհով օժտուած մէկն է: Գրեթէ իւրաքանչիւր թիւի մէջ ունի երկարապատում եւ ծանրաքայլ քերթուած մը: Այդ քերթուածները այսօրուան իմաստով, խմբագրականի դեր կը կատարէին: Ո՞վ կրնայ ըլլալ այս անձը: Մարգարիտ Մխիթարեան զայն կը նոյնացնէ Տէր Թադէոս Անդրէասեան Սոգինեանցի հետ: *«Մեր ենթադրութեամբ, Ուրախակից Բարեկամ կեղծանունը կրել է Շմաւոնեանի պաշտօնակից ու տպարանի աշխատանքներին շատ մօտ կանգնած Թադէոս Սոգինեանց քահանան: ...Ժամանակի գործիչների մէջ մենք չենք նշմարում մի այլ մտաւորականի, որը լայն աշխարհահայեցողի հետ միկտեղ բանաստեղծի գրչին տիրապետէր այնքան վարպետօրէն, որքան Սոգինեանցը»*(22):

digitised by A.R.A.R.@

Շմաւոնեան քահանայ 1791ին լոյս ընծայած է անոր «*Որդի Հայաստանեաց*» քերթողական գրքոյկը: Իր հրատարակութիւններուն յիշատակարաններուն մէջ կը նշէ անոր անունը: Հին գործակիցներ էին:

Ուրախակից Բարեկամը Ա. թիւին մէջ ուղղութիւն կու տայ քերթին խմբագրական մարմինին – հետեւիլ օտար քերթերու բովանդակութեան՝ գործելակերպին եւ ընդօրինակել զայն: Նախանձայոյզ եւ աշխատասէր ըլլալ: Հրատարակել միայն հաւաստի եւ խրատական (դաստիարակչական) լուրերը: Հետեւիլ գիտնականներու խորհուրդներուն եւ լոյս ընծայել գեղարուեստական գրականութիւն:

Շմաւոնեան քահանայ արդէն ունէր Ուրախակից Բարեկամին մօտիկ ծրագիր մը: Կը ջանայ թելադրանքները կիրարկել:

Շմաւոնեան պարզ քահանայ մը չէ: Քաղաքական հեռանկարներ ունեցող քաղաքական գործիչ մըն է: Եթէ Շահամիրեան գլխաւորաբար Հերակլ Բ.ի վրայ դրած էր իր յոյսը՝ հայ ժողովուրդին ազատագրումը ապահովելու, Շմաւոնեան քահանայ կը ջանայ հոն հասնիլ լուսաւորութեան ճամբով ինքնաճանաչման եւ ազգային փրկութեան:

Նոյն ոտիէն կ՚ընթանան Ուրախակից Բարեկամը, Հայու Որդի Հայը եւ Ազգակիցը: Հայ վաճառականութեան ապագան մութ է Հնդկաստանի մէջ: Դժուար թէ կարենայ մրցակցիլ անգլիացներու հետ: Ուրեմն՝ պէտք է մտածել աչքը ուղղել դէպի Հայրենիք, որ ունի քերրի հող: Գանձերով միասին տեղափոխուիլ Հայրենիք, տնտեսապէս հզօրանալ հոն եւ փրկել զայն օտար նուաճողներէ:

Բովանդակութեան իմաստով, քերթը հիմնականօրէն նկատի ունի հնդկահայ գաղութը: Տեղական քերթ մըն է եւ պարտաւոր է ամէնէն առաջ գոհացնել իր տեղական կարիքները, ընթերցողներուն ճաշակը: Որովհետեւ այդ գաղութին բարեկեցիկ տարրը հայ վաճառականներն են, հիմնականօրէն նկատի ունի զանոնք: Աշխատակիցներ ունի անոնցմէ: Կը տպէ անոնց յայտարարութիւնները, ճամբորդական նոթերը, անոնց պսակն ու մահը, նորածիններու ծնունդը: Եւ որովհետեւ այդ գաղութը առաւելաբար կազմուած է պարսկահայերէ, լայն տեղ յատկացուած է Պարսկաստանի եւ պարսկահայ լուրերու: Թղթակցութիւններ ստացած է Մատրասէն, Կալկաթայէն, Պասրայէն, Չինաստանէն եւ Ֆիլիփեան կղզիներէն: Լուրեր կան նաեւ Երեւանէն եւ Շուշիէն, նաեւ Անգլիայէն եւ Ֆրանսայէն: Ֆրանսական Յեղափոխութեան տարիներն են: Ռոպեսփիեռի մահուան առիթով կը գրէ.

«*Նորոգ իմն փոխարկութիւն երեւելի չէ լեալ միայն թէ գրեն, Ռոբէսպիէռ անուամբ այրն, զոր կառավարէր ապստամբացն Ֆրանսիոյ, 'ի վերջումն սպանեալ են*»(23):

Լուրը վերցուած է Հնդկաստանի անգլիական թերթերէն: Ռոպեսփիեռի անուան մէջ սխալներ կան: Կա՛մ անոնք սխալած են, կա՛մ Շմաւոնեան քահանան:

«*Ազդարար*»ի զանազան թիւերուն մէջ լոյս ընծայուած է Խաչատուր Ջուղայեցիի «*Պատմութիւն պարսից*» գործը, որ սկզբնաղբիւր է Հայաստանի եւ Պարսկաստանի պատմութեան համար: 11 թիւի մէջ, յաջորդա-

digitised by A.R.A.R.@

բար, տպուած է Յակոբ Այուբեանցի *«Հէյդարայի խանի պատմութիւնը»*, որ արկածային վէպի առաջին նմոյշն է մեր գրականութեան մէջ:

*«Ազդարար»*ի թիւերը ունին նիւթերու որոշ շարք: Սկիզբը կը տրուին ծանր նիւթերը կամ պաշտօնական յայտարարութիւնները, օրինակ՝ Յովսէփ արք. Արղութեանի շրջաբերական-նամակները: Ծանր նիւթերը երբեմն կը գրաւեն ամսաթերթին ծաւալին գրեթէ կէսը: Անոնց կը յաջորդեն ստացուած թղթակցութիւնները, որոնք կը շօշափեն զանազան հարցեր: Կը յաջորդէ լուրերու բաժինը –տեղական, պարսկական եւ եւրոպական: Առակ մը՝ հոգեկան քիչ մը հանդարտութիւն առթելու համար: Ծանուցումներ, վաճառելի իրերու սակ, ծնունդ, մահ եւայլն: Վերջին էջը յատկացուած է օրացոյցի, երկու ամսուան վրայ, տուեալ ամիսը եւ յաջորդը:

Ընդհանուր առմամբ այս է շարքը: Երբեմն խախտումներ կան:

«Ազդարար» լոյս տեսաւ մինչեւ 1796 Մարտ (18 թիւ): Անկէ ետք լոյս չտեսաւ: Վերջին թիւին մէջ ո՛չ մէկ ակնարկութիւն դադարման մասին: Այուբեանցի մեր նշած յօդուածաշարքին թիւ 11ին տակ կը գրէ, թէ պատտութեան աւարտը *«ի յեռեւեալ ազդարարոջն ընծայել»*(24):

Ի՞նչ են պատճառները թերթին դադարման, մեզի անծանօթ են: Թերթը սիրուած էր գաղութին, մ'անաւանդ անոր երիտասարդ գրասէր տարրին: Բայց թերթ մը ամէն բանէ առաջ նիւթական հաստատ կռուաններու պէտք ունի, իր գոյութիւնը կարենալ ապահովելու համար: Հաւանաբար այդ է, որ պակսեցաւ: Բայց թերթը նոր շաւիղ մը բացած էր մեր մշակոյթին անդաստանին մէջ, ուրկէ պիտի ընթանային նոր հաւատաւորներ եւ մեզ հասցնէին այսօրուան մեր մամուլին բարձրութեան:

ԾՄԱՒՈՆԵԱՆԻ ՆԿԱՐԸ

Նշենք, որ *«Ազդարար»* սկսաւ լոյս տեսնել 28 բաժանորդի գօրակցութեամբ: Հետագային, քանի մը բաժանորդ ալ ապահովեց Կովկասէն եւ Պարսկաստանէն:

*«Ազդարար»*ի անուան յիշատակը յարգելու երկու փորձ կատարուած է Հնդկաստանի մէջ: Առաջինը 1846ին, երբ Մատրասի մէջ լոյս ընծայուած է *«Ազդարար»* շաբաթաթերթը: Երկրորդը, 190-197, երբ Կալկաթայի մէջ լոյս տեսած է *«Նոր Ազդարար»* եռամսեայ պարբերաթերթը (արտ. եւ խմբ. Զ. Մ. Հանանեան):

Դժբախտութիւն է, որ գոյութիւն չունի Ծմաւոնեան քահանային դիմանկարը: Այն՝ ինչ որ կը ներկայացուի իբրեւ այդպիսին, Վիեննայի Մխիթարեան հայրերուն գործն է: Հայ մամուլին 100ամեակին առթիւ, 1894ին անոնք երեւակայական նկարով մը ուզեցին պատուել հայ մամուլին նահապետը: Նոյն նկարին հիմամբ, պարսկահայ մանրանկարիչ Աբրահամ Գուրգէնեան պատրաստած է նոր նկար մը:

*«Ազդարար»*ի իւրաքանչիւր թիւի անուանաթերթին վրայ տպուած է. *«Հայրապետութեան Տեառն Դուկաս Սրբազան Կաթողիկոսի Ամե-*

digitised by A.R.A.R.@

նայն Հայոց 'ի Վաղարշապատ՝ Եւ ի թագաւորութեան Օգոստափայլ Տեառն Երկրորդի Հերակլայ արքայի 'ի Թիֆլիզ»: Կաթողիկոսին անուան նշումը բնական է: Ինչո՞ւ վրաց թագաւորին անուան նշումը: Հնդկահայ ազատագրական խմբակը, ո 18րդ դարու վերջին քառորդին կը ձեւաւորէր իր քաղաքական դաւանանքը, կը նպատակադրէր Հայաստանի ազատագրումը: Ազատագրող՝ վրաց Հերակլ թագաւորը: Ինչո՞ւ: Որովհետեւ ան կրցած է միացնել Վրաստանի անջատ, իրարու թշնամի երկու թագաւորութիւնները, Կովկասի մէջ որոշ վարկ կը վայելէր, մա՛նաւանդ հայոց Բագրատունիներու տոհմէն էր: Շմաւոնեան քահանան ալ Հերակլի յարգանք ընծայելով՝ նոյն գաղափարին եւ յոյսին արձագանգը կը հանդիսանար:

digitised by A.R.A.R.@

«ԱԶԴԱՐԱՐ»Ի ԼԵԶՈՒՆ

Գրաբար է, սակայն ոչ-զերծ խորթութիւններէ: Շմաւոնեան քահանան եւ իր օգնականները չէին տիրապատեր հայերէնին: Ամսաթերթին աշխատակիցները – քահանայ հայրեր, պաշտօնեայ ածեր, վաճառականներ, հայկական դպրոցի բարձր դասարանի աշակերտներ հանդէս կու գան անկատար հայերէնով, գրաբարի եւ բարբառի խառնուրդով:

Չկայ ուղղագրական միօրինակութիւն: Յատուկ անունները զանազան տեղեր զանազան ձեւերով կը ներկայանան: Շմաւոնեան քահանան իր մականունը կը գրէ օով՝ Շմաւօնեան: Շիրազեցի բառը՝ Շիրազցի:

Վրիպակներ շատ կան: Ա. թիւին վրիպակներուն մէկ անկատար ցանկը կը ներկայացնէ Ուրախակից Բարեկամը Բ. թիւին մէջ (1794, էջ 77):

Ծնունդ բառը ընդհանրապէս տպուած է ճիշդ: Սակայն տեղ մը (նոյն էջին վրայ), երկու անգամ տպուած է ծննունդ (1795, էջ 314): Անուշադրութեան արդիւնք է: Հետեւեալ բառը՝ յետեւեալ (1796, էջ 73):

«ԱԶԴԱՐԱՐ»Ի ԴԵՐՆ ՈՒ ԱՐԺԷՔԸ

1794ի Հոկտեմբերին, Շմաւոնեան քահանայ հիմը կը դնէր *«Ազդարար»*ին, հայ ազգը երկրորդ անգամ կը մտնէր քաղաքակիրթ ազգերու ընտանիքէն ներս: Առաջին մուտքը տեղի ունեցած էր 112ին, երբ Մեղապարտ Յակոբ Վենետիկի մէջ լոյս կ'ընծայէր Պարզատոմար գիրքը, հիմը դնելով մեր տպագրական գործին, եւրոպական տպագրութենէն 60-70 տարի ետք:

Մեր այս երկրորդ մուտքը յապաղումով տեղի կ'ունենար: Եւրոպական ուներ դարաւոր մամուլ: Նշենք այդ ժամանակագրութիւնը.–

Իտալիա-1563	Անգլիա-1622
Ֆրանսա-1605	Սպանիա-1626
Զուիցերիա-1609	Շուէտ-1644
Աւստրիա-1610	Ռուսաստան-1703
Գերմանիա-1612	Յունաստան-1821
Ռումանիա-1828(25)	

Յապաղումով մուտք կը գործէր հայը բաղդատած Եւրոպայի: Սակայն բաղդատած արեւելեան եւ եւրոպական որոշ ազգերու եւ ժողովուրդներու, ռահվիրայի, առաջինը ըլլալու պատիւին կ'արժանանար: Արաբական աշխարհը իր մամուլը պիտի հիմնէ 1800ին (Գահիրէ), Օսմ. կայսրութիւնը (1832), Պարսկաստանը աւելի ուշ: Մեր դիրքը պզտիկ պատիւ մը չէ:

Լէօ, անդրադառնալով *«Ազդարար»*ի դերին եւ արժէքին, կը գրէ.

«Շմաւոնեան քահանան իր այդ գործով ո՛չ միայն մեր լրագրութեան սկիզբն էր դնում, այլեւ ստեղծում էր լրագրի մի տիպ, որ համարեա 'կէս դար գոյութիւն պահպանեց մեզանում: Հրապարակախօսութիւն չը կայ, պատահական են յօդուածները, զանազան գիտելիքների, առածների, հետաքրքրաշարժ տեղեկութիւննե-

digitised by A.R.A.R.@

րի մի ժողովածու — ահա այդ տիպը։ Դեռ երկար ժամանակ այս կերպարանքով եւ պատկերով հայերէն լրագիրներ պիտի հիմնուէին զանազան կողմերում, մինչեւ որ կը գար այն օրը, երբ կը ծնուէր հայ հրապարակախօսութիւնը։ Այնպէս որ, Շմաւոնեանը նախահայր է հանդիսանում ամբողջ կէս դարի հայ պարբերական մամուլի ուղղութեան կամ, աւելի ճիշտ ասած, բովանդակութեան, որովհետեւ ուղղութեան մասին ոչինչ հասկացողութիւն չը կար այդ ժամանակամիջոցում»(26):

Եթէ նկատի ունենանք, որ Շմաւոնեան քահանայ բարձր ուսման տէր չէր, չէր տիրապետեր հայ լեզուին, ոչ ալ գրելու արուեստին ծանօթ (անվերապահօրէն կ'ընդունի եւ կը յայտնէ իր թերթին Ա. թիւին մէջ)(27), մղուած ազգասիրութենէ եւ ունենալով տեսլական, եռանդ ու ձեռներէցութիւն, կը հիմնէ առաջին հայ թերթը, իր գործը կը գտնենք մեր անսահման երախտագիտութեան արժանի: Կրնանք չափել իր ձեռներէցութիւնը, երբ նկատի ունենանք Մխիթարեան Միաբանութեան պարագան: Միաբանութիւնը վերջնականապէս հաստատուեցաւ Վենետիկի Ս. Ղազար Կղզին (1717): ԺԸ. դարուն ունէր միաբաններու խմբակ մը, տպագրական դիւրութիւն, կատարեց հրատարակութիւններ եւ ծանօթ էր Եւրոպայի մամուլին: Հակառակ այս բոլորին, Շմաւոնեան քահանայի փորձէն 6 տարի ետք (1800) լոյս պիտի ընծայէ *Տարեգրութիւնը* (Հայր Ղուկաս Ինճիճեանի խմբագրութեամբ):

ՇՄԱՒՈՆԵԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ ԵՒ ՎԱԽՃԱՆԸ

Ինչպէս տեսանք, մինչեւ 1809 Շմաւոնեանի տպարանը կը գործէ: Անկէ ետք իր կեանքին մասին կցկտուր տեղեկութիւններ կան: Աղբիւրները կը նշեն, որ ապրած է դառն կեանք եւ ունեցած՝ ընտանեկան դժբախտութիւններ: Լեօ կը գրէ.

«...Շատ դժբախտութիւններ տեսաւ իր ընտանեկան կեանքի մէջ։ Այդ դժբախտութիւնների պատճառը գլխաւորապէս այն էր, որ նրա աղջիկն ու փեսան Հնդկաստանի փչացած ու անբարոյական վարքի տէր հայերից էին։ Այդ ընտանիքի պատճառով էլ մեր առաջին խմբագիրը վատնում է եկեղեցական եւ ազգային գումարներ, դատաստանի տակ է ընկնում եւ մեռնում է մի շատ ցաւալի մահով, 1824 թուականին»(28):

Գրեթէ նոյն բաները կ'ըսէ Թէոդիկ(29):

Թաղուած է իր հովուած եկեղեցիին՝ Մատրասի Ս. Աստուածածինի բակին մէջ, իր շինած բաղնիքին մօտ, իրեն նուիրուած պարտէզին մէջ:

Եկեղեցւոյ օրուան իշխանութիւնը գիտակցութիւնը ունեցած է անցաւորն ու մնայունը զանզանել, զատորոշել, անգիտանալով քահանայ հօր ակամայ սայթաքումները, գնահատած է անոր առաքելատիպ առաքելու-

digitised by A.R.A.R.@

թիւնը եւ մշակութային մեծ վաստակը, արտօնած է, որ թաղուի իր հովուած եկեղեցիին բակին մէջ, եւ կառուցած՝ տապանաքար մը, որուն վրայ քանդակուած է՝ *«Ի սուրբ կրօնի արթուն վարուք ուշիմ եւ զգօն, յամենուստ յարդեալ, խոհեմիտ եւ նուրբ հանճարիւք»*(30): Աւելի՛ն. եկեղեցւոյ պարտէզը կոչած է անոր անունով: Օրուան իշխանութիւնները արժանի են մեր ժողովուրդին ամբողջական յարգանքին:

1965ին նորոգուած է տապանաքարը: Ասոր մասին գտանք հետեւեալ տեղեկութիւնը:

«Շմատոնեան քահանային գերեզմանին տապանաքարը քայքայման վիճակի մէջ ըլլալով, Հայկական Ընկերակցութիւնը 196ին զայն փոխարինեց նոր ու գեղեցիկ սեւ սալաքարով մը, սկզբնական տապանագիրը վրան արձանագրուած»(31):

ՄԵՐ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հայ մամուլի 200ամեակը պէտք չէ անցնի անցնի, կամ վերջին վայրկեաններու հապճեպ կիսկատար ձեռնարկներով տօնակատրուի: Մեր մշակոյթին ամէնէն փայլուն իրագործումներէն, մարզերէն մէկն է. նոյնիսկ կրնանք ըսել մեր մշակոյթին գանձարանը, ցոլարանը: Անոր բարձր արժէքին գիտակցութենէն մղուած՝ պէտք է պետական, ազգային, միութենական թէ անհատական մակարդակներու վրայ հրատարակութիւններ եւ ձեռնարկներ ըլլան:

Իբրեւ փորձ-ծրագիր կը ներկայացնենք հետեւեալները.

1) Առանձին ուսումնասիրութեան նիւթ դարձնել Շմատոնեան քահանային անձնատրութիւնն ու գործունէութիւնը, մա՛նաւանդ *«Ազդարար»*ի հաւաքածոն:

2) Բանալ Շմատոնեան քահանային նուիրուած ցուցահանդէս մը:

3) Հայ մամուլի ընդհանուր ցուցահանդէս, ուր մասնաւոր բաժին մը յատկացնել Շմատոնեան քահանային:

4) Սփիւռքի իւրաքանչիւր գաղութի հայ մամուլի ցուցահանդէս:

5) Իւրքանչիւր թերթ հետամուտ ըլլայ ուսումնասիրելու իր թերթին ծննդոցն ու գործունէութիւնը– հիմնադիր անդամներ, թերթին անուան ընտրութիւն, նիւթական միջոցներ, խմբագիրներ (իրենց պաշտօնավարութեան տարիներու նշումով), արտօնատէր, վարչական տնօրէն եւ կազմ, տպարան (տեղափոխում եթէ կայ՝ նշել): Վերջապէս, այն բոլորը, որոնք չեն արձանագրուած թերթին հաւաքածոներուն մէջ, եւ որոնք պիտանի են մամուլի մատենագէտին, բանասէրին եւ ընդհանրապէս մշակոյթով հետաքրքրուող մարդուն:

6) Պատրաստել իւրաքանչիւր գաղութի մամուլի մատենագիտութիւնը:

7) Պատրաստել հայ մամուլի համապարփակ մատենագիտութիւնը:

Այս բոլորը միաժամանակ ընելը կրնայ դժուար ըլլալ: Իւրաքանչիւրը թող փորձէ իր կարելին ընել:

digitised by A.R.A.R.@

*
* *

Մեր խոր երախտագիտութեան արժանի է Յարութիւն քահանայ Շմաւոնեանը: Իբրեւ թանձրացեալ, շօշափելի արտայայտութիւն մեր երախտագիտութեան, Հայրենիքի թէ Սփիւռքի մէջ պէտք է կանգնենք արձանը կամ կիսանդրին այս *Մեծ Հայուն*:

ԱՐՏԱՇԷՍ ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

(12) «*Ազգաբար*», Ա. հատ., էջ 4:
(13) Նոյն, էջ 4-:
(14) Հայկ Խաչատրեան, «*Հայկական օրացոյցների եւ տարեցոյցների մատենագիտութիւն*», 113-1973 (Երեւան, 1976), էջ 11:
(15) Ա. հատ. (1970), էջ V:
(16) «*Ընդմարներ հնդկահայ կեանքէն*», «*Ամէնուն տարեցոյցը*», խմբ. Թեոդիկ, ԺԸ. տարի (Փարիզ, 1924), էջ 187:
(17) Հինգշաբթի, 28 Նոյ., 197, էջ 3:
(18) Վենետիկ, 1883:
(19) Երեւան, 1967:
(20) Նշ. աշխ., էջ 192:
(21) էջ V-XIX:
(22) «*Ազգաբար*», վերատպ., էջ ԴԿԿԿ:
(23) Նոյն, 1975, էջ 40:
(24) Նոյն, 1796, էջ 73:
(25) Գարեգին Լեւոնեան, «*Հայ պարբերական մամուլը*» (Երեւան, 1934), էջ ԿԴ:
(26) Նշ. աշխ., էջ 607:
(27) 1794, էջ :
(28) Նշ. աշխ., էջ 608:
(29) «*Տիպ ու տառ*» (Կ. Պոլիս, 1912), էջ 173:
(30) Գարեգին քահանայ Ց. Սազիսեան, «*Մադրասի հայկական հին գաղութը*», «*Տաթեւ*» տարեցոյց, խմբ. Արտաւազդ վրդ. (Սիրմէեան), Դ. տարի (հալէպ, 1928), էջ 107:
(31) "The wandering Armenians", by Father Aramais Mirzaian & Dr. Charles Price, Sydney, 1980, p. 73:

digitised by A.R.A.R.@

ՄԱՀԷՆ ԱՆԴԻՆ...

Անսպասելի չէր Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.ի վախճանը, բայց ինչպէս կը պատահի սրտերուն մէջ ու աշխարհի սրտամօտ վայրերուն մէջ լայն տեղ գրաւած գործօններու պարագային, անոր առաջացուցած կսկիծը խոր եղաւ եւ համընդհանուր։

Իր տարիքին լիութեան ու գործունէութեան բազմեռանդ շրջանի մը բարձրացաւ Ան Էջմիածնայ գահը, բայց նոյնքան հարթ չէր ու ծաղիկներով լեցուն չէր իր գործունէութեան դաշտը։

Նոր յղացումներ ու վերանորոգչական ծրագիրներ անպայման ունէր Ան, բայց Իր կաթողիկոսութեան մա՛նաւանդ առաջին երեսնամեակին, ինչպէս մեծ պաշտօններու կոչուած բոլոր անձերը, ու այս վերջիններուն կարգին ստեղծագործ շնորհներով օժտեալները, այնպէս ալ Ինք, Ամենայն Հայոց կաթողիկոսը մեծագործութիւններու շարքը աճեցնելու փոխարէն, տիրող համակարգին սահմանափակումներուն հետեւանքով՝ անկատար գործերուն դիմաց ապրեցաւ «լուռ ցաւեր», ու ըսաւ անկատար բաներ՝ լուռ ցաւերու հարուածներուն տակ դարձեալ, իսկ երբ ազատութեան ժամը հնչեց, լուռ ցաւերը մոռցնել տուող պերճախօս գործերու համար արդէն անբաւարար էին ֆիզիքական իր ուժերը...

Այս տողերը կը գրենք այն համոզումով, որ Վազգէն Վեհափառին խառնուածքով, ապրումներով ու բիւրեղացուցած մտածումներով անձնաւորութիւն մը, ըսե՛նք իր ապրած լուռ ցաւերուն պէս լուռ ցաւով՝ չէր կրնար հանդուրժել համարեա՛ լիակատար լքուածութիւնը Հաղպատի, Սանահինի, Արվնիի եւ մեր միւս համալիրներուն ու կոթողներուն, եթէ անաստուածներուն ճնշումը պակաս ըլլար իր վրայէն։

Միւս կողմէ՝ անմնացորդ հպարտութեամբ պիտի ըսենք, որ օր մը նոյն անաստուածներուն կողմէ «Անաստուած» վերակոչուած ու բաւական ժամանակ «Անաստուած» մնացած Էջմիածնայ շրջանին մէջ եթէ ոչ Աստուծոյ գոյութիւնը, գոնէ աստուածային բաներու շունչը վգացուց, պատկառանք ներշնչելով հարազատին թէ օտար այցելուներուն։

Շատ էին Վազգէն Վեհափառին սէրերը, բայց մենք պիտի անջատենք անոնցմէ երեքը,—

Գրականութեան սէրը, զոր արտայայտեց Չարենցի եւ ընկերներուն պաշտպանութեան ատեն։

Անկախութեան սէրը, զոր անձնաւորուած վգաց Մայիս 28ի խորհուրդին մէջ։

Հայոց լեզուին սէրը, որուն մէկ լուռ վկայութիւնը տուաւ մեսրոպեան ուղղագրութեամբ «Գարուն» ամսագրի 25ամեակը շնորհաւորող կոնդակով։

Հետագայ էջերուն ընթերցողը կը գտնէ մատնանշուած այդ սէրերէն առանձին նմոյշներ, ստորագրուած՝ պարզ անունով եւ մականունին սկզբնատառով։

digitised by A.R.A.R.@

ԼԵՒՈՆ

ՈՐԻՐ ԵՍ, ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

«Վերստին մեր ժանիքոտ ճակատագրի առաջ ենք կանգնած ճակատ առ ճակատ»։

Լենինականի մեծ երկրաշարժի առիթով Ա. Ահարոնեանի այս խօսքերը կը յիշենք ամէն անգամ, որ Հայաստանէն լուրը կ'առնենք նոր «մերկացումներուն»։

Ճիշդ է, թէ երեւոյթը նոր չէ։ Խ. Հայաստանի կեանքի սկիզբէն իսկ՝ բազմաթիւ եղած են հեռացումները, բանտարկութիւնները, աքսորները ու նոյնիսկ՝ մահապատիժները...

Արդարեւ, անոնցմէ գրեթէ բոլորը գոնէ չափով մը քաղաքական հանգամանք ունէին։

Օրուան ռեժիմը չէր հանդուրժեր, որ «հին»էն որեւէ հետք մընայ։ Համայնավար տեսակէտէն նոյնպէս բացատրելի էր այն խաչակրութիւնը, զոր սկսան հոն հայ եկեղեցիին դէմ եւ որուն արդիւնքը հայ հոգեւոր կեանքի մահը եղաւ։

Քաղաքական, տնտեսական-ընկերային եւ կրօնական ապարդեկներէն անդին անցան օրուան իշխանութեան ոտնձգութիւնները։

Քաղաքական մարդոց որոշումով փոփոխութեան ենթարկուեցաւ լեզուի ուղղագրութիւնը, հայոց պատմութիւնը եւ անոր աւանդելու ձեւը եւ գլխատուեցաւ մեր անցեալի գրականութիւնը։

Այս բոլորը եղան։ Մնացած էր, սակայն, հայ հոգիին վերջին կռուանը՝ արուեստը, մասնաւորապէս՝ նոր սաղմնաւորուող բանաստեղծութիւնը, ուր նոր ուժեր ի յայտ կու գային, շատերը՝ տաղանդաւոր։

Սկսեր էին մեզ հասնիլ նմոյշներ Ալապանէն, Մահարիէն, Չարենցէն, Սարեանէն, Բակունցէն, Նորենցէն եւ դեռ ուրիշներէն, մեր առջեւ բանալով յոյսի ու հաւատքի նոր հորիզոններ։

Ահա, սակայն, այդ հորիզոններու լոյսն ալ կը մարի։

Մենք այս դառն իրողութեան կը մօտենանք առանց որեւէ քաղաքական դիտումի։ Եւ ճիշդ ատոր համար Խ. Հայաստանի մէջ

digitised by A.R.A.R.@

ազգային խղճի ու ոգիի դէմ ցարդ կատարուած մահափորձերէն ամէնէն մտահոգիչը եւ ամէնէն յուսահատեցուցիչը կը նկատենք հայ բանաստեղծութեան ու արուեստին դաշունահարումը։

Մեզի համար հայ բանաստեղծութիւնը, վերջին, սակայն, ամէնէն թանկագին գրականն էր հայ ոգիի կենդանութեան, հայ ոգիի ստեղծագործ գոյութեան։

Արուեստը՝ հայ ցեղի ստեղծագործ ուժերու դարաւոր ասպարէզը, մա՛նաւանդ իր քաղաքական ստրկութեան շրջաններուն, արուեստը՝ հայ հոգիի բոլոր գեղեցկութիւններուն եւ արժէքներուն մարմնացումը, արուեստը՝ հայ ազգային դիմագծի ու ոգիի գոյութեան վերջին հնարաւորութիւնը, արուեստը՝ որուն շնորհիւ հայը ինքզինքը պահեց —եւ պահեց որպէս մշակութային ու քաղաքակրթիչ արժէք բազմաթիւ բարբարոս արշաւանքներու ընթացքին, բազմաթիւ օտար լուծերու տակ ու ցարերու ու սուլթաններու օրով—, այդ արուեստը այսօր մեր հայրենիքի մէջ ապատ չէ ու կախում ունի Քրեմլինի գրչի շարժումէն։

Իսկ այդ արուեստի ամենամեծ ծառաները կեանքէն քշուած կամ բանտարկուած են, իսկ անոնց գրականութիւնը՝ պարզապէս խաչուած։ Այս կը նշանակէ ուղղակի սպաննել հայ բանաստեղծութիւնը ու արուեստը եւ անոր հետ մէկտեղ մարել հայ հոգիին վերջին ճրագը։

Ի տես այս նոր կուլումին, սահմռկած կգացումներով, ո՛չ ժամանակ, ոչ ալ սիրտ ունինք այլեւս հարցնելու, թէ ինչո՞ւ համար այս բոլորը, որո՞նք են պատասխանատուները եւ ո՞ւր են թաքնուած ոճրագործները...

Իր հոգին, իր կեանքին իմաստը կորսնցուցած մարդու մը պէս, կանգնած մեր կեանքի խորխորատին առաջ՝ կ'աղաղակենք. հա՛յ հոգի, ո՞ւր կը տանին քեզ, հա՛յ ոգի, ո՞ւր կ'ուզեն թաղել քեզ։

Ո՞ւր է մեր «*Լուսաւորչի անմար կանթեղը*», որ՝

«Կախ է ընկած առանց պարան
Արագածի կատարին,
Ու սեղանից հրսկայական
Լոյս է տալիս աշխարհին։

Դեռ հաւատա՞նք արդեօք, թէ՝

«Ոչ մարդկային ձեռ կը հասնի
էն ահաւոր բարձունքին,
Եւ ոչ քամին կը հանգցընի,
Վիշապ-քամին ահագին»։—

(«ՀԵՐԿ», 1937 Յունիս, Պուքրէշ) ԼԵՒՈՆ

digitised by A.R.A.R.@

Պ.

ՔՍԱՆ ՏԱՐԻ ՅԵՏՈՅ

Մայիս 28ի նման օրերու իմաստը եւ խորհուրդը կը գլեն ու կ'անցնին կուտ քաղաքական-դիւանագիտական սահմանները։ Մայիս 28ը իր ազգային բարոյական արժէքով է, որ այսօր ինքզինքը մեզի կը հարկադրէ։

Մայիս 28ի ստեղծման պատմութենէն մեզի կը մնայ երկու բան։ Նախ՝ հայ ժողովուրդի հերոսական ճիգի պատմական իրողութիւնը, որով ան իր սեփական ուժով ապահովեց եւ փրկեց իր կեանքը, իր հայրենիքն ու իր իրաւունքը։ Ասիկա մեր ազգային մեծ հրապարտութիւններէն մին է ու մեր պատմութեան մէջ պիտի մնայ որպէս անխախտ վէմ մը, ուր արձանագրուած է հայ ժողովուրդի ուժի, հերոսութեան ու յաղթանակի պատմութիւնը։

Երկրորդ արժէքը, որ կը մնայ Մայիս 28էն, ինքը անկախութեան գաղափարն է։ Թէ այդ անկախութիւնը անապատելիօրէն հրոչակուեցաւ, խռովայոյզ կեանք մը ապրեցաւ ու միայն երկուքուկէս տարի կրցաւ դիմանալ, ոչինչով չեն ազդեր անկախութեան գաղափարին վրայ։ Բաւ է, որ այդ պատմական դէպքը պահ մը դրապէս իրականացաւ։ Այդ պահը ժամանակի չափով չի չափուիր։ Անոր ազգային-բարոյական արժէքն ու խորհուրդը կը մնան ամբողջական եւ հաւասար են դարի մը, հաւասար են ամբողջ պատմութեան մը։ Պահեր կան, որոնք ազգեր կը ստեղծեն իրենցմէ վերջ։ 1918էն ասդին Մայիս 28ը միշտ ներկայ է հայ ժողովուրդի մէջ, նաեւ անոնց մէջ, որոնք չեն տօներ զայն, նաեւ այսօրուայ Հայաստանին մէջ։

Պատմական նման դէպքերը չեն մեռնիր։ Պատմութիւնը աւելի ուժեղ է, քան մարդիկ, ու խորհուրդը կ'ապրի՝ ինքզինքը ուրիշ անունի տակ պահած։ Ճիշդ է, ժամանակաշրջաններ կրնան գալ, երբ պայմանները չեն թոյլատրեր, որ գաղափարը լրիւ իրականանայ, սակայն անմիջապէս, երբ պայմանները փոխուին ու նպաստաւոր կերպով դասաւորուին, այն ատեն մարդիկ կը հասկնան գաղափարին եւ խորհուրդ դարձած պատմութեան ներկայութիւնը եւ ուժը։

Բազմաթիւ են նման օրինակներ ժողովուրդներու կեանքին մէջ։ Օրինակ՝ Տրանսիլվանիոյ ռումէնները իրենց՝ մօտ հազար տարուան ստրկութեան շրջանին մէջ միայն երկու-երեք ամսուան համար ազատագրուեցան ու միացան մայր երկրին, Միհայ Վիդիազուի օրով։ Այս երեք ամիսներու անկախութեան փաստը, սակայն, գաղափար դարձած, երեք դար շարունակ կենդանի մնաց ժողովուրդի հոգիին

digitised by A.R.A.R.@

մէջ։ Եւ մեծ պատերազմէն առաջ Ռումանիոյ պաշտօնական վարիչները, արտաքին-քաղաքական աննպաստ պայմաններու տակ հրապարակաւ կը յայտարարէին, թէ ռումէն ժողովուրդը որեւէ սահմանային խնդիր չունի Աւստրօ-Հունգարիոյ հետ, թէ իրենք կը մերժեն ընդունիլ Տրանսիլվանիոյ ռումէններու ապատագրման հարցը։ Բայց միւս կողմէն, նոյն վարիչները անուղղակի միջոցներով ժողովուրդին մէջ վառ կը պահէին Տրանսիլվանիոյ ապատագրման ու միացման իտէալը։

Իսկ երբ նոր պայմաններ ստեղծուեցան, այդ նոյն մարդիկ պատերազմ հռչակեցին՝ յանուն Տրանսիլվանիոյ ռումէններու ապատագրման։

Պայման է, ուրեմն, որ մեր վիճակին մէջ գտնուող ժողովուրդը իր պատմութեան ոգիովը ու խորհուրդովը հոգեպէս վինուած մընայ, քաղաքական ինչ պայմաններու մէջ ալ գտնուի։ Այսօր մեր հայրենիքը ծանր օրեր կ'ապրի եւ գուցէ դեռ երկար ատեն ալ ան չկարենայ հասնիլ Մայիս 28ի խորհուրդի իրականացման, սակայն այնքան ատեն, որ հոն կայ ու կ'աճի մեր ժողովուրդը, ինչքան ատեն կը շինէ ու կը ստեղծագործէ եւ կը պահէ իր պատմութեան գիտակցութիւնը, մենք չենք կրնար չհաւատալ, թէ այդ ներկան մեծագոյն գրականը չէ վաղուանին։ Ահա թէ ինչու համար այսօր, երբ կը վերյիշենք կորսուած անկախութեան պատմութիւնը, լեցուն հաւատքով ու լաւատեսութիւնով մեր ապգի ե՛ւ ներկայի, ե՛ւ ապագայի վրայ, կ'ուզենք անգամ մըն ալ գոչել.

—Թող ապրի՛ մեր Հայաստանը։

Թող մնա՛ Մայիս 28ի խորհուրդը՝ որպէս անոր ապագայի աստղը։

(«ՀԵՐԿ», 1938 Մայիս, Պուքրէշ) Պ.

digitised by A.R.A.R.@

ՇԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ВЕРХОВНЫЙ ПАТРИАРХ
КАТОЛИКОС ВСЕХ АРМЯН

№138 Ս.Էջմիածին 6.Մարտի....1992.թ.

ՊԱՏՈՒՀԱՐԱՆ
ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ,,ԳԱՐՈՒՆ'' ԱՄՍԱԳՐԻ

ԾՐԲԻԱՆ

Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ձեզմ գնահատանքով ողջունում ենք ,,Գարուն'' ամսագրի քսանհինգամեայ գրական գեղարուեստական վաստակը և յղում Մեր քաջալերանքը և օրհնությունը խմբագրական կազմին ու աշխատակիցներին, նաև համայն մեր ընթերցասէր ժողովրդի զաւակներին, որոնք վստահ ենք թէ սիրով ու շահեկանութեամբ կարդում են ձեր ամսագիրը, որ քսանհինգ տարիներ շարունակ էր կարեւոր նպաստն է բերել հայ գրականութեան զարգացման շնորհակալ գործում:

Ձեր ամսագիրը թող միշտ նոր գարուններ բացի հայոց սանդեզարդ մտաւոր կեանքում:

,,Հակեցէք, հաստատուն կացէք ի հաւատս. ժրացարուք, ամենայն ինչ ձեր սիրով լիցի'' /Ա. Կորնթ. ԺԶ 14/ ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

digitised by A.R.A.R.@

Հղմարներ

«ՉԱՐԱՄԻՏ ՆԿՐՏՈՒՄՆԵՐ» «ԱՆՈՒԹԻՆ ՏԱԿ»...

Մեր պաշտօնակիցը, «*Շիրակ*», անցեալ տարուան իր Ապրիլ-Մայիս-Յունիս միացեալ թիւը բացած է «*Վազգէն Շուշանեան, իր արխիւը եւ... արխիւներու ճակատագիրը*» խորագրուած խմբագրական նոթով մը, ուր տեղ գտած կարգ մը ակնարկութիւնները կը մնան խիստ «գաղտնապահ», յա՛տկապէս՝ երբ խօսքը կը դառնայ տարաբախտ գրագէտին ձեռագիրներուն ամբողջականութեան:

60ական թուականներուն, Եղիշէ Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի Պետական թանգարանը վերջնականապէս հանգրուանած ձեռագիրներուն յուրը տալէ ետք, խմբագրականը կ'ըսէ.

«*Սակայն՝ իր ամբողջութենէն թեթեւցած, կարգ մը մարդոց չարամիտ նկրտումներուն հետեւանքով*»:

Որո՞նք են արդեօք անորոշ ձգուած այս «կարգ մը մարդերը», որոնց «չարամիտ նկրտումներուն հետեւանքով ձեռագիրները թեթեւցան իրենց ամբողջութենէն»:

Հայաստան հանգրուանելէ առաջ, բաւական թիւով անուններ կապուեցան Շուշանեանի ձեռագիրներուն: Ամէնէն առաջ կան «Կտակ»ակատարի հովերով հանդէս եկած անձերը, Լեւոն Զորմիսեան եւ ընկերք, երկրորդ՝ կայ Վիեննայի վանքի Բառասնական թուականներու աբբահայր Հապոգեանը, երրորդ՝ Անդրանիկ Ծառուկեան, չորրորդ՝ Փարամազ Տօնիկեան:

Արդ, յիշեալներէն որո՞նք են այն մարդերը, որոնց չարամիտ վերաբերումներուն հետեւանքով ձեռագիրները թեթեւացման ենթարկուեցան:

Երեւի «*Շիրակ*»ի խմբագրութիւնը բան մը գիտէ եւ հասցէ մը ունի իր մտքին մէջ եւ սպասուածը արդէն իր գիտցածը խորհրդաւորութենէ դուրս բերելու քաղաքացիական քաջութիւնն է, որովհետեւ խնդրոյ առարկան սովորական հարց մը չէ, այլ կը վերաբերի ազգային հարստութեան մը:

Կայ մութ մնացած երկրորդ կէտ մը «*Շիրակ*»ի խմբագրական նոյն նոթին մէջ, հետեւեալը.

«*Այսօր, հայրենի իրականութենէն ներս ստեղծուած նոր իրադարձութեանց լոյսին տակ, մատչելի, չա՛տ մատչելի դարձած է օգտագործումը Վազգէն Շուշանեանի եւ ուրիշներու արխիւներուն*»:

digitised by A.R.A.R.©

թէեւ ոմանք, այնտեղ թէ այստեղ, հինէն ժառանգուած սովորամոլութեան ուժով, կը փորձեն ընթանալ այլամերժ ուղիներով եւ առաջնորդուիլ ոչ-ուղղափառ ճամբաներով»։

Որքան մենք կը յիշենք, Երեւան հանգրուանելէ ետք, Շուշանեանի ձեռագիրներէն օգտուեցան «*Նայիրի*»ն («*Բանաստեղծն ու կինը*»), «*Նորք*»ը («*Մարդ մը, որ Արարատ չունի իր հոգւոյն խորը*»), «*Գարուն*»ը (*տարբեր գործերէ հատուածներ*) եւ «*Բագին*»ը («*Տենդեր*»)։

Այս հանդէսներէն ո՞րն է անիկա, որ, ըստ «*Շիրակ*»ի, ընթացաւ ուղղափառ ճամբաներէն եւ ո՞րն է այն միւսը, որ ընթացաւ ոչ-ուղղափառ ճամբաներէ։

Իսկ եթէ այս հանդէսներէն մէկուն կամ միւսին չի վերաբերիր ակնարկը, այն ատեն որո՞նք են ուրուագրուած ոչ-ուղղափառները։

Միւսները չենք գիտեր, բայց եթէ խնդիրը միայն ու միայն ձեռագիրներուն կը վերաբերի, կրնանք «*Բագին*»ը զերծ կացուցանել մեղադրանքէն, տրուած ըլլալով, որ հոս օգտագործուած էջերը եղած են լուսապատճէններ եւ լուսապատճէնները երբեւիցէ ամբողջութիւն մը թեթեւցընող ուժ չեն ունեցած։

Շարքին մէջ չմոռնանք եւ «*Շիրակ*»ը, որ Երեւանի Պետական թանգարանին մէջ հանգրուանած Վազգէն Շուշանեանի անտիպներէն «*Ներքին դաշտանկար*»ը հրատարակելու առիթով խմբագրած է իր նոթը։

Ու «*Ներքին դաշտանկար*»ը կը մատուցուի այնպիսի եղանակով մը, որ ուղղափառ ճամբաներէ ընթացած ըլլալու ուղղափառութենէն աւելի՝ կասկածը կու տայ ոչ-ուղղափառ ձեռնարկի մը։

Պարզենք։

Հայրենի մտաւորական Սարգիս Փանոսեան «*Շիրակ*»ի վերոյիշեալ համարի մէկ էջին, «*Վազգէն Շուշանեանի* «Ներքին դաշտանկար»*ը*» անուն համառօտ նշմարին մէջ, ի միջի այլոց կը գրէ.

««Շիրակի» *ընթերցողներին յանձնարարեր ներկայացնում ենք Ներքին Դաշտանկար ստեղծագործութիւնը ամբողջութեամբ, եւ մեր կողմէ տրուած կարգ մը բառերի տողատակի ծանօթագրութեամբ*»։

Հայաստանի Պետական թանգարանը հանգրուանելէ ետք, ինչպէ՞ս կամ ի՞նչ պայմաններով «*Ներքին դաշտանկար*»ը անցաւ Սարգիս Փանոսեանի ձեռքը, որ համարեա՛ հեղինակային իրաւասութեամբ կամ կըտակատարի մը համարձակութեամբ զայն կը յանձնէ «*Շիրակ*»ին։

Երբ այս կապակցութեամբ որեւէ լուսաբանութիւն չէ տրուած ընթերցողին, անխուսափելի կը դառնայ հարցումը, թէ՝ հինէն ժառանգուած սովորամոլութեան ուժո՞վ թանգարանէն դուրս բերուած է «*Ներքին դաշտանկար*»ը, թէ որդեգրուած նոր ոճի մը արդիւնք է անիկա։

Ոչ-ուղղափառներուն եւ «հինէն ժառանգուած սովորամոլութեան» ենթակայ միւս գործերուն վարէն դժգոհ՝ անորոշ ճամբաներով իրեն հասած «*Ներքին դաշտանկար*»ին առիթով, «*Շիրակ*» իր յաջորդ համարին (7-8-9) մէջ կը գրէ.

«*ՇԻՐԱԿ*-*ի խմբագրութիւնը կ'ողջունէ իր նոր աշխատակիցը, որուն կը պարտինք արդէն Վազգէն Շուշանեանի ստեղծագործու-*

digitised by A.R.A.R.@

թիւններէն Ներքին դաշտանկարի *ձեռագիրին հայթայթումն ու ա-նոր ծանօթագրուած հրատարակութիւնը»։*

Մանրախնդիր ըլլալու գնով պարտաւոր ենք հարցնել, թէ հայրենի նոր աշխատակիցին յայտնած «*Շիրակ*»ի այս լուր շնորհակալութիւնը «ձեռագիրի՞ն» համար բանաձեւուած է, թէ «ձեռագիրին» լուսապատճէնին։ Ձեռագիրն ու լուսապատճէնը նոյն բաները չեն, առաջինը, ինչպէս քիչ առաջ ուզեցինք ըսել, կը թեթեւցնէ ամբողջութիւնը, որ ցաւ կը պատճառէ ամբողջովին, իսկ երկրորդը կրնայ միայն խանգարել որոշ մարդոց հաշիւները, բայց կ'ուրախացնէ ամբողջը, ինչպէս եղաւ պարագան «*Բա-գին*»ի մէջ լոյս տեսնող պատճէնահանուած «*Տենդեր*»ուն։

Պիտի ուզէինք ասելցնել միայն, որ մեր պաշտօնակիցը, փոխանակ ընթերցողը անորոշութիւններու մէջ մխրճելու եւ ոչ-ուղղափառ ճամբաներու մէջ դեգերելու, խնամուած տպագրութեան մը արժանի դարձուցած ըլլար Շուշանեանը եւ թծախնդիր ըլլար որոշը եւ ուղղափառը իրենց հարազատութեան մէջ պահելու, ջանք ընէր գոնէ հաւատարիմ մընալու տարաբախտ գրագէտին բառամթերքին եւ ուղղագրութեան։

Այս մէկը գոնէ հնարաւոր էր, տրուած ըլլալով, որ սխալներ թոյլ տալու քմահաճ նկարագիր մը չունէր Շուշանեանի ձեռագիրը, ընդհակառակն, անիկա կը կարդացուէր տպագիր գործի մը դիւրութեամբ, հազուադէպօրէն ցիշդը սխալ ընկալելու առիթներ ստեղծելով։

Մատնանշենք «*Շիրակ*»ի մէջ անուշադրութեան հետեւանքով թոյլ տրուած սխալներուն քանի մը հատը։

1.–Գէշ օրերու՝ մանուկի մը պէս կը *յակիս* ընկերոջ մը ուսին։

2.–Կը բաւէր, որ ընկեր մը հայրենական երգ մը *երգեր*,

3.–Օ, արեանս այս *անհագուրդ* եւ բռնակալ ծարաւը։

4.–*Դալարահեղց* ու բարի պարտէզներ կը յայտնուին ճամբու եզերքներէն։

5.–Ազա՞տ ես բառերու շուայտ ու *զոչաքաղ* զօրութենէն։

6.–Երիտասարդութիւնը ծեր է, *ժռաատ* ու յուսահատ։

7.–Ցեղոյ մէկը կը սկսէր երգել արեւելեան պագշոտ, *հայրատ*, մելամաղձոտ եղանակներ։

8.–Գուցէ մայրս շատ *սիրեր* զիս՝

9.–Ե՞րբ, երբ *նազովրեցին* երկրորդ անգամ գայ Գալիլիա։

10.–*Անուրթի* տակ հեծող մարդիկն ու...

«*Շիրակ*»ի խմբագրութիւնը փոյթ չէ ըրած նոյնիսկ Սարգիս Փանոսեանի ծանօթագրութիւնը մեսրոպեան ուղղագրութեան վերածելու եւ բառերէն ոմանք պահած է Հայաստանէն հասած իրենց վիճակին մէջ, ինչպէս է պարագան *զՈչաքաղ*ին, *ժՈռատ*ին եւ *Հայրատ*ին։

Ասոնք՝ տեսանելի բաներ են, հետեւաբար՝ դիւրին սրբագրելի։ Դժուար է սակայն հասկնալ վերի համարակալութեան մէջ ներկայացած *անուրթը* ու պատկերացնել «*անուրթի տակ հեծող մարդիկ*»ը։

Կը կարծենք սխալած չենք ըլլար, եթէ ըսենք, որ *անուրթը* պէտք է ըլլայ *անուր*, որ Շուշանեանի գործածած յանախադէպ բառերէն մէկը կը հանդիսանայ...

digitised by A.R.A.R.@

«ԵՍ ՈՒԶՈՒՄ ԵՄ ԻՄԱՑՈՒԻ»...

Համայնավար այլամերժութեան միաեծան օրերուն, մեր հայրենիքին մէջ թոյլ տրուեցան գրական շարք մը գայթակղութիւններ, որոնց հանդէպ Սփիւռքի մէկ խաւը յայտնեց իր ընդվզումը, իսկ Հայաստանի պաշտօնական ինքնադատութեան մէկ թեւը, ու պաշտօնական ինքնադատութեան այդ թեւին տակ անած այս կողմի պաշտօնական ճորտերը՝ բացայայտ գայթակղութիւնները խղճի մտօք դատապարտելու փոխարէն, սկսան անզուսպ մոլեգնութեամբ մը վայրաձայել գրական խղճմտութեամբ հանդէս եկած նախանձախնդիրներուն դէմ։

Գրական գայթակղութիւններու կոյրգկուրայն արդարացում ճարելու փութկոտութեամբ հանդէս եկող գրոհայիններէն մէկը, որ Վազգէն Մնացականեան կը ստորագրէ, ըստ սովորութեան փորձեց պատշգամեն նաեւ Կոստան Զարեանի գրական աւազախրումը, «*Գրական թերթ*»ի էջերուն գրելով.

«*Ամէն ինչ, ե՛ւ հայրենիք վերադառնալը, ե՛ւ վէպի վերամշակումը, պատկառելի գրողը կատարել է իր սրտի ու խղճի թելադրանքով։ Դա, իրօք, ներքին բռնկումների հետեւանք է։ Այդ իրաւունքը գրողին ոչ ոք չի տալիս, դա ծնւում է նրա տաղանդի հետ միասին*» (1968, թիւ 20)։

Ուրեմն՝ այսպէս, Կոստան Զարեանի թէ՛ հայրենադարձութիւնը եւ թէ իր «Նաւ»ը այն օրերու իշխանութեանց քաղաքական տրամադրութիւններուն պատշաճեցնելու արարքը ընթացած են բնական մղումներով, «*սրտի ու խղճի թելադրանքով*»։

Իսկ եթէ՞ այդպէս չեն ընթացած գործերը։

Մառայամտութիւնը սկզբունքի վերածած յայտնի պատեհապաշտը շատ լաւ գիտէր, որ այդպէս չէին ընթացած գործերը, հայրենադարձութիւնը Կոստան Զարեանի մէջ բիւրեղացած համոզումի մը բնական թելադրանքը չէր, կայ վարկած մը, ըստ որում՝ խաբեբայ խայծեր շողացուցած էին իր դիմաց, ու չբացառելով հանդերձ «Նաւ»ը օրուան իշխանութեանց քաղաքական պահանջներուն ենթարկելու պահանջին իր մեղսակցութիւնը, հարցերը իրենց ամբողջութեանը մէջ առած՝ յայտնապէս ինկած էր կարմիր թակարդը։

Ան այդ՝ կան Զարեանի գոյգ խոստովանութիւնները, որոնք լոյս տեսան «*Հայութիւն*» անուն հայրենի նոր շաբաթաթերթին մէջ, եւ որոնք աւելորդ անգամ մը եւս կը բացայայտեն «Նաւ»ուն աւերակոյտին առջեւ զգացած հեղինակին ցաւը եւ թէ նաւային այդ աւերակոյտը «սրտի ու խղճի» հետեւանք համարած անձին աղաւաղուած դէմքը, միաժամանակ լուսաւորելով «լուսաշող հայրենիք»ին մէջ ապրած հայրենադարձին գերերջանի՛կ օրերը։

Ահաւասիկ «Նաւ»ուն հայաստանեան հրատարակութեան առիթով հեղինակին զգացած յետադարձ կսկիծը եւ անոր հեռաւոր բախտին կապուած խորհուրդը.

digitised by A.R.A.R.@

«Ես ուզում եմ իմացուի, որ «Նաւ»ի երկրորդ հրատարակութիւնը լոյս է տեսել ճնշման, խաբէութեան եւ սպառնալիքի տակ։ Երկրորդ հրատարակութեան վերջին մասը բոլորովին աւելորդ է, ինչպէս նաեւ շատ փոփոխութիւններ վէպի ներսում։ Այդ մարդիկ, որոնք ներկայացան իբրեւ իշխանութեան ներկայացուցիչներ, շահագրգռուած էին մանաւանդ նիւթապէս։ Գր. .....հանը ստացաւ աւելի քան 2000 ռուբլի արտագրելու եւ, առանց ինձ հարցնելու, սխալ փոփոխութիւններ մտցնելու համար։ Այդ շրջանին ես ապրում էի հոգեկան ճնշուած վիճակ կնոջս հիւանդութեան պատճառով եւ ոչ վէպն էր ինձ հետաքրքրում, ոչ ինչ որ անցնում էր իմ շուրջս։

«Ես անշուշտ, պիտի նկարագրեմ մանրամասնօրէն անց ու դարձերը, բայց սրանով ուզում եմ իմանան, որ իմ գրած վէպը այն է, ինչ որ տպուած է արտասահմանում (շատ աննշան փոփոխութիւններով) եւ իմ մահից յետոյ, երբ արտատպեն, թող միանգամայն անտեսեն երկրորդ հրատարակութիւնը»։

Անցուդարձերը նկարագրե՞ց Զարեան թէ ոչ, չենք գիտեր։ Մինչ այդ՝ վերստին անդրադառնանք ամոր նշած հոգեկան այն պայմաններուն, որոնց տակ տեղի ունեցան «Նաւ»ուն տրուած հարուածները.

«Այդ շրջանին ես ապրում էի հոգեկան ճնշուած վիճակ կնոջս հիւանդութեան պատճառով եւ ոչ վէպն էր ինձ հետաքրքրում, ոչ ինչ որ անցնում էր իմ շուրջս»։

Հաւատի չի թուիր այս հաստատումը, որ բնաւ յարիր չէ Կոստան Զարեանի բնաւորութեան, ա՛յն Զարեանի, որ իր առած քայլերուն համար երբեք սովորութիւն չունէր ընտանեկան կապերը հաշուի առնելու։ Ենթադրենք սակայն, որ այդպէս չէր իրադրութիւնը, քաջառողջ էր կինը ու ինքզինքը պահէր հոգեկան իր կորովը։ Այդ պարագային պիտի կարենա՞ր լռելեայն հասկցնել ուզած իր յաւակնութեամբ հանդէս գալ ու պարտադրել հեղինակային կամքը։ Բայց համայնավար գրաքննիչները ե՞րբ յարգ ընծայած են հեղինակի մը կամքին, որ պիտի յարգէին Զարեանի կամքը, որուն հետ քառասնամեայ վաղեմիութիւն ունեցող մաքրելիք առկախ հաշիւներ ունէին։ Մնաց որ, կնոջ հիւանդութենէն առաջացող «ճնշուած վիճակ»էն առաջ արդէն ամէն ինչ տեղի ունեցած էր «ճնշման, խաբէութեան եւ սպառնալիքի տակ»։

Ապշեցուցիչը այն է, որ գիտնալով հանդերձ, թէ մշակումներն ու վերամշակումները հոգեկան ու ֆիզիքական «մշակումներու»ն ներքեւ տեղի ունեցած են միշտ ու «Նաւ»ուն առիթով եւս ամէն ինչ տեղի ունեցաւ «ճնշման, խաբէութեան եւ սպառնալիքի տակ», յարմարուողական մոլի խառնուածքի տէր անձերը նման անբնական երեւոյթներու ետին յամառօրէն տեսան միայն «սրտի ու խղճի թելադրանքներ», իրենց կուսակցութեան վարքագծային օրինակով երբեւիցէ չերկնչելով պատմութենէն, որուն սահմանած պատիժը անողորմ եղած է իրեն դաւաճանածներուն հանդէպ, ու անվերաբերելի...

digitised by A.R.A.R.@

«ԳՐՈՂՆԵՐԻ ԹՇՆԱՄԱՆՔԸ»...

Ակնարկ մը նետենք նաեւ Կոստան Զարեանի առած միւս ֆայլին վրայ, որ, ինչպէս գրուեցաւ օրին, «Ստալինի ժառանգորդներ»ուն համար յարմարագոյն առիթը համարուեցաւ՝ սպանիչ հարուածը իջեցնելու զարեանականութեան ողնաշարին.

«Ուզում եմ իմացուի, որ ներկայ Հայաստան գալս համարում եմ սխալ։ Հայ այսպէս կոչուած գրողների թշնամանքը իմ հանդէպ ամէն քանից ցածր է. թո՛ւրք, ստոր... մեծ մասամբ անկարող մարդիկ, որոնք բացի մեռածներից մի մեծ բանաստեղծ չեն տուած. առաջին օրից ամէն բան արին, որ իմ ազգի առաջ բրոնած դերս նսեմացնեն, արժանիքներս փոքրացնեն եւ համբաւս փոքրացնեն։ Ահա չորս տարի է, որ գրողների միութիւնը ինձ անդամ չի հաստատել։ Չորս տարի է, որ ամէն բան անում են, որ երկրից մեկնեմ, որ հայ գրականութիւնը մնայ իր ճահճացած վիճակում, խեղճ խաղ, առանց մեծութեան։ Ոչ մի ժամանակ կեանքումս, ոչ մի երկրում այդպիսի մենակութիւն չեմ ապրել եւ այդպիսի հոգեկան վիճակի չեմ ենթարկուել («Հայութիւն», 14 Փետրուար 1992, թիւ 1)։

Ուրեմն՝ Հայաստանի մէջ ճահճացած վիճակի մէջ էր հայ գրականութիւնը, երբ վաթսունական թուականներուն ներգաղթեց Կոստան Զարեան, Հայաստանի Գրողներու վարչութեան կամ առանձին դէմքերու կողմէ իր ներկայութիւնը սպառնալիք մը համարուելով իտէալական այդ ճահճացումին, մարդիկ սկսան խաչակրութիւն մը իրեն դէմ, ա՛յնքան սատիկ, որ *«երկրից մեկնեմ, որ հայ գրականութիւնը մնայ իր ճահճացած վիճակում, խեղճ խաղ, առանց մեծութեան»։*

Լռելեայն կը հասկցուի, որ եթէ մեծարանքներ շռայլուէին իրեն, առանձին պատիւներու արժանանար, հայ գրականութիւնը երաշխիւ իմն պիտի խոյանար մեծութեան բարձունքներուն։

Ա՛յդ է, ու միշտ Կոստան Զարեանն է, ինքզինք գագաթ մը դաւանող գրող, որ ուրիշները ի յառաջագունէ արհամարհելու բնաւորութեան անխախտ գիծեր բերաւ հետը հայ գրականութեան վերադարձած առաջին տարիներուն, Վարուժանի օրերէն սկսեալ եւ մարդոց վերէն նայելու այդ գիծերը անբուժելի մնացին մէջը եւ դարձան հալածախտի իր գրամագլուխը՝ կեանքին բոլոր հանգրուաններուն։

Վերը տեսանք արեւելահայերուն հանդէպ իր կեցուածքը։

Ահա եւ արեւմտահայոց հանդէպ իր գանգատներէն մէկը.

«Ահա 30 տարի է տաճկահայ մտաւորականները ամէն բան անում են, որպէսզի ես չլինեմ» («Նորք», 1994, թիւ 2)։

Անբարեկամ հոգի մը՝ Կոստան Զարեան, ապերախտ խառնուածք մը, որ իրեն շռայլուած բոլոր բարիքներն ու գնահատանքները ուրանալու հեշտանքի մը անձնատուր եղաւ միշտ եւ մեծագարութեան առասպելներով օրօրեց ինքզինք շարունակ...

digitised by A.R.A.R.@

ՄԵԻ ԲԻԾ...

Այս տարի Անթիլիասի տպարանէն լոյս տեսաւ Անտոնինա Մահարիի 166 էջ հաշուող յուշագրական հատորը՝ «*Իմ ոդիսականը*», որ բաւական լոյս կը նետէ «անմեղ մեղաւորին» սիպերիական «հովուերգութեան» վրայ եւ չափով մը կը պարզէ անոր յապաղած կուսակցականութեան դրդապատճառները։

«*Իմ ոդիսական*»ին բովանդակութեան մասին որոշ գաղափար մը կու տայ առանձին էջի մը վրայ արձանագրած Անտոնինա Մահարիի հետեւեալ ձօնը.

«*Այս ինքնակենսագրական վիպակը ես ձօնում եմ Գուրգէն Մահարուն, որի հետ միասին անցանք տառապանքի ուղիները*»։

«*Տառապանքի ուղիները*» միայն սիպերիական տարիները չ'ընդգրկեր, այլ կը զարնուի նաեւ յետ-սիպերիական իրադարձութիւններու, որոնց մէջ Մահարիի կենսագրութեան առընչութեամբ կ'առանձնանան երկու գիծեր՝

Առաջինը՝ «*Այրուող այգեստաններ*»ուն մէջ տեղ գտած անըմբռնելի խորթութիւնները եղան։

Իսկ երկրորդը՝ համայնավար կուսակցութեան շարքերը գործնապէս անցնելու Մահարիի տուած նոյնքան ապշեցուցիչ փաստը։

Թէ «*Այրուող այգեստաններ*» վէպին մէջ սարքած ծայրայեղութիւնները եւ թէ համայնավար կուսակցութեան գործնապէս յարելու առիթով արձանագրած ուշացումը դուռ բացին մեծ հարցականներու, որոնք մէկ կողմէ նոր բարեկամներ ապահովեցին Մահարիի եւ, միւս կողմէ՝ անեցուցին իր գառածումները քննադատող մարդոց թիւը։

Համայնավար կուսակցութեան շարքերը անցնելու Մահարիի յապաղած տրամադրութիւնը տրամաբանական ու արդար գտնողներուն մէջ յայսկոյս եւս յայտնուեցան անձեր, որոնցմէ մէկը հանդիսացաւ Անդրանիկ Մառուկեան, «*Նայիրի*»ի մէջ լոյս ընծայած իր հետեւեալ երկխօսութեամբ.

«...*Ինքն է շարունակողը.*

«—*Զէ՞ս տեսներ, ամէն ինչ լաւ է այստեղ. եւ աւելի լաւ կը լինի։ Սա մեր հայրենիքն է, եւ պարտիան՝ նրա պաշտպանը։*

«—*Պարտիա ըսիր։*

«—*Ի՛ասեմ, իմ պարտիան, ինչպէս կ'ասեմ՝ իմ հայրենիքը... Իսկ էնտեղ, ձերոնք, կարո՞ղ են ասել նոյն բանը...*

«—*Մահարի, դուն... սադայէլ մըն ես*» (1961, թիւ 35, էջ 4)։

Այսինքն՝ դուն, Մահարի՝ ձիշդ կ'ըսես, ճշմարիտ բաներ կռահել գիտես, զինաթափող ուժ մը ունիս, պարտիան եւ հայրենիքը հաւասար մակարդակներու վրայ դնելու մարգարէական շունչի մը տէր ես, համայնավար պարտիան հպարտութեամբ կուրծքդ ուռեցնող երեւոյթ է, այլուր գործող պարտիաները ամօթի զգացումներ առթող անզօր շարժում-

digitised by A.R.A.R.@

ներ, դուն՝ Մահարի, ամբնեի վնիոներ արձակելու անսխալական աբ-ուեստ մը ունիս, դուն՝ Մահարի...

Ղարաբաղը, Նախիջեւանը եւ այլ մարզեր թրքացուցած եւ արեւնակից բիւր թիւրաւորներու հետ թրքօրէն վարուած պարտիան երբ Մահարի «իմ պարտիան» կը կոչէր, այդ հիասքա՛նչ բացագանչութեան ետին գոնէ՝ ազատ աշխարհի մարդերը պարտաւոր էին հաշիւ մը տեսնել, վախ մը, սահմռկեցուցիչ ստիպում մը եւ ոչ թէ անխառն ապրումի մը մղումը եւ փուքալ թմբկահարը դառնալ հաւանական ցնշումներու տակ արձակուած նման «կ'ասեմ»ներու: Կրկնութեան գնով ըսենք, որ համայնավար պարտիան չէր կրնար բնական մղումով պարտիական սէրեր առաջացնել մէկու մը սրտին, որ Մահարի կը կոչուէր, ա՛յն Մահարիին, որ նոյն պարտիային «արեգնափայլ» կացինով ինկած անկրկնելի Զարեհներու, Բակունցներու, Թոթովենցներու ողբերգութիւնները սրտին ու, իր տարիքին կենսախինդ շրջանի աւերակյտը ուսին՝ իր ճշմարտութիւնը չէ, որ կը քարոզէր յանախ, այլ բերան կը բանար ուրիշներու պատուաստած ու պարտադրած սուտը քնարերգելու:

Մեզմէ սպասուածը, կը կարծենք, իր՝ Մահարիին ու մահուան մանգաղին տակ շնչահեղձ միւսներուն լուռը հասկնալն էր եւ ոչ թէ սիպերիական կենսագրութիւններ ունեցող գրողի մը պառացածը ճշմարտութեան ձայն համարելու փութկոտութիւնը, ինչպէս ցոյց կու տան մէջբերուած վերի տողերը:

Այդքան բան դժուա՞ր էր կռահել, որ օր-ցերեկով կը շրջանցուի խնդրոյ առարկայ պարտիային մարդկային ու հողային յօշոտումները եւ նոյն յօշոտիչներուն կողմէ բիւր անգամ յօշոտուած գրողի մը բերնով կը փորձուի գովքը հիւսել տեւաբար յօշոտողներ խմորած յօշոտիչներու պարտիային:

Ի ձայն փողոյ ու թմբկի փառաբանուած պարտիայի օրօք, մարդիկ իրենց համոզումները բարձրաձայն չէին կրնար ըսել, բարձրաձայն կ'ըսէին միայն պարտադրուածը, խորագոյն մտածումներն ու ապրումները վստահելով միայն մտերիմ թուղթերու կամ անձերու:

Տարբեր չէր կրնար ըլլալ Մահարիի վարմունքը եւ արդէն տարբեր չէր: Անաւասիկ մեր ընդգծել ուզած իրականութեան հաստատումը, Անտոնինա Մահարիի «*Իմ ոդիսականը*» յուշագրութեան էջերուն.

—Մի անգամ Գուրգէնը վերադարձաւ կուսակցական ժողովից՝ խիստ գրգռուած ու վատ տրամադրութեամբ. «Անտոնինա, ես ուղղակի գժուեցի այդ կուսակցութեան ձեռքը։ Ինչի՞ս էր պէտք։ Անդամավճար տալո՞ւ համար։ Կոմկուսն ինչպիսին եղել է՝ այնպիսին էլ մնացել է՝ արնախում, դաժան, ժողովուրդների շահագործիչ։ Կուսակցութիւնը մարդկանց արիւնն է թափել եւ միլիոնների կործանել։ Կուսակցութիւնը չեկիստների ձեռքով տանջել է մեզ։ Ինչպէ՞ս կարող էի իմ դահիճների հետ նոյն կուսակցութեան մէջ լինել։ Ստալինն ու Բերիան եւս կուսակցական էին։ Չէ՞ որ կուսակցութիւնն է ծնել այդ մարդակերներին ու սադիստներին։ Ինչ մեծ սխալ գործեցի, եւ

digitised by A.R.A.R.@

գու. եւ չպահեցիր ինձ։ Հիմա այդ սեւ բիծն իմ կեանքից այլեւս չի ջնջուի» (էջ 155-156)։

Երբ Մահարի իր առաջին աֆսորին «պլանը գերակատարած» վերադարձաւ Երեւան, Աստուծոյ գառներով շրջապատուած չզգաց ինքզինք, իսկ երկրորդ աֆսորէն վերադարձած տարիներուն դիմացը ցրցուած գործօնները ստալինեանէն տարբեր բուրայի մը մէջ արիւն ու ոսկոր կազմած մարդեր չէին։ Գիտէր այս բոլորը եւ միացաւ «անոնց», գիտէր եւ գովքը հիւսեց «մարդակերների ու սադիստների» պարտիային։ Մահարի այդպէս վարուեցաւ, որովհետեւ հաւանաբար զգաց, որ ուրիշ ընելիք չէր մնացած իրեն։ Մե՞ր ցաւը ինչ էր սակայն, որ պարտք համարեցինք աչք գոցել «սեւ կետ»երուն դիմաց եւ նախամեծար համարեցինք դիմել ամէն ինչ պայծառ տեսնելու անշնորհակալ խաղարկութեանց...

ՄԵԾՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԷՆ...

Կանխող էջերուն մէջ խօսք եղաւ երկու նշանաւոր գործերու մասին, «*Նաւը լերան վրայ*» եւ «*Այրուող այգեստաններ*», որոնք վերջին երեսնամեակին ահագին աղմուկ բարձրացուցին իրենց շուրջ եւ հաւանաբար դեռ երկար ատեն պիտի զբաղեցնեն գրականութեան մարդերը, ինչպէս նաեւ գրասէր հասարակութիւնը։

Երկու վէպերուն առիթով՝ խօսք եղաւ նաեւ անոնց հեղինակներուն մասին։

Կոստան Զարեան եւ Գուրգէն Մահարի։

Առաջինը կայուն սկզբունքներէ զուրկ մարդու պէս վարուեցաւ իր գրիչին հետ, իսկ երկրորդը յանախ ոխակալութեամբ անցաւ սեղանին առջեւ։

Անոնց բնաւորութեան այդ գիծերուն ակնարկելով՝ մարդիկ հանեցին եզրակացութիւններ, որոնց մասին զուր չ'ըլլար մտածել։

Մենք նկատի ունինք հրապարակագիր եւ քննադատ Բենիամին Թաշեանի մէկ հին հաստատումը Կոստան Զարեանի մասին, եւ բանաստեղծ ու հրապարակագիր Սիլվա Կապուտիկեանի մէկ ոչ-շատ հին նշումը Գուրգէն Մահարիի վերաբերող։

Բենիամին Թաշեան կ'ըսէ.

«Կը ցաւիմ, որ Կոստան Զարեան չկրցաւ մտաւորական մնալ, թէեւ շարունակեց գրող ըլլալ։ Առաջինը նկարագիր է, երկրորդը արուեստ է։

digitised by A.R.A.R.@

«Այս երկուքը — նկարագիր եւ արուեստ — չկրցան հաշտ ըլլալ իրարու հետ։ Հաւասարակշռութիւնը խախտեցաւ երկուքին միջեւ։

«Ես հիմա գրեթէ վերջնականապէս համոզուած եմ, որ մարդիկ կրնան մեծ ըլլալ միայն նկարագրով» («Ցուսաբեր», 10 Ցունուար 1970)։

Ակնարկելով Գուրգէն Մահարիի *«Այրուող այգեստաններ»* վէպին մասին յայտնած Նայիրի Զարեանի բացասական կարծիքին, Սիլվա Կապուտիկեան կը նշէ երկու գրողներու փոխյարաբերութեան վերջին փուլին վրայ իջած մութ ամպերը, այդ լուռ խզման կը վերագրէ մահարիական *«Զգո՛յշ եղէք, մարդի՛կ»*, բանաստեղծութեան գրաւման պատճառը ու կ'ընդգծէ.

«Ուզում ես, որ մեծ գրողը մեծ լինի նաեւ հոգով, իր խղճի դէմ՝ մաքուր, լինի մինչեւ վերջ անարատ...»։

Թէ Բենիամին Թաշեանի եւ թէ Սիլվա Կապուտիկեանի արծարծած հարցը առածգական հարց է հարկաւ, բայց նորէն հարց ըլլալէ չի դադրիր, տրուած ըլլալով, որ ստեղծողն ու ստեղծագործութիւնը տարբեր արժէքներ դաւանող տեսութեան առկայութիւնը հաստատելով հանդերձ՝ մարդիկ ի հնուց անտի շատ տրամադիր չեն եղած այդ երկուքը անջատանջատ գնահատել, ու կարդացուած էջերուն ետին անպայման փորձած են տեսնել նոյն առաքինութիւններով զարդարուն հեղինակը։

«Ուզում ես, որ»... եւայլն։

Պարագայական խորագիրի մը տակ ստորեւ ուշադրութեան կը յանձնենք Սիլվա Կապուտիկեանի մէկ ծաւալուն գրութենէն անջատուած հետեւեալ երկու հատուածները, ուր կը պարզուի *«Զգո՛յշ եղէք, մարդի՛կ»* անուն Մահարիի բանաստեղծութիւնը, որ առաջին անգամ լոյս տեսաւ *«Նայիրի»* շաբաթաթերթի 9 Նոյեմբեր 1970 թուակիր համարին մէջ եւ ամբողջութիւնը կը բաղկանայ 12 տուներէ։

«ՄԱՆՐ ՎՐԻԺԱՌՈՒԹԻՒՆԻՑ ԴՐԴՈՒԱԾ»...

Նայիրի Զարեանը միայնակ կամ համարեա՝ միայնակ կրեց բացուած ամբարտակի ամբողջ հեղեղումը, եւ որովհետեւ յախուռն մարդ էր եղել, կռուազան, չափազանցնող, սխալուող, եւ, ուրեմն, ունէր շատ հակառակորդներ, չկամներ, հատուցման սպասողներ, ապա վերջիններս չը-փախցրեցին յարմար առիթը այդ հոսքն աւելի նպատակային դարձնելու.... «Վատը ժամանակը չէր, վատը մարդիկ էին»,– գրուեց,– *«Գրական թերթ»*ում՝ ուղղակի ակնարկելով Նայիրի Զարեանին։ «Այդ գրողներուն նահատակութեան գլխաւոր պատճառը՝ Ցուդայի հոգիով Նայիրիներն են»,– աղմկեցին արտասահմանեան հակառակորդ թերթերը, հրա-

digitised by A.R.A.R.@

պարակ հանելով նաեւ տարիներ առաջ Արշակ Չօպանեանի գրած վերոյիշեալ տողերը, իսկ տաղանդաւոր ու շատ սիրելի մի բանաստեղծ գրեց հետեւեալը.

Նա կռնակից խփեց, երբ զոհերը իրա
Նստած էին անել, մթին զնդաններում,
Ու սողսկեց նրանց պատուանդանի վրայ,
Որպէս հապիտ ու գող, որպէս մանր Ներոն։

Ես հասկանում եմ «*Գրական թերթ*»ի յօդուածագրին եւ նոյնիսկ կարող եմ չմեղադրել։ Բնաւորութեան հարց է։ Հակառակորդ ես։ Եկել է յարմար առիթը հարուածելու, հարուածելու տեղեր էլ կան, ուրեմն ինչո՞ւ խնայել... Եւ յետոյ, յօդուածագրի տողերը՝ «վատը ժամանակը չէր, վատը մարդիկ էին» վտանգաւոր չէ։ Սուտն այնքան բացայայտ է, «ժամանակը վատ չէր» բնորոշումը՝ այնքան անճիշդ, որ 37 թուականը ո՛չ միայն տեսնողի, այլեւ լսողի համար անգամ ծիծաղելի է...

Ես հասկանում եմ նաեւ ծերունի Արշակ Չօպանեանին, մեր մշակոյթի անձնուէր երախտաւորին, որին ոչ պակաս դառնութիւններ բերեցին այդ տարիները։ Հեռուից հեռու նա հազիւ թէ կարողանար թափանցել դէպքերի էութեան մէջ։ Բացատրելի է նաեւ արտասահմանի աղմուկը, թէեւ լաւ գիտեմ, որ խօսքը ինչ ակունքից է գալիս եւ ինչի համար է ասւում... Ես չեմ ներում վերոյիշեալ ոտանաւորի հեղինակին՝ իմ սիրելի բարեկամ Գուրգէն Մահարուն...

...Չէ՞ որ ինչ-որ գրուած է այդ ոտանաւորում ճշմարտանման է. իսկ ոչինչ չկայ աւելի վտանգաւոր, քան ճշմարտանման սուտը, քանի որ ճշմարտանման սուտը հարիւրապատիկ աւելի դժուար է հերքել, քան բացայայտն ու անհերքելիը։ Գոնէ Մահարին գրէր այդ ոտանաւորը այնտեղ՝ աքսորում, վիրաւորանքից ու անզօրութիւնից գազազած պահին, գոնէ գրէր վերադարձից անմիջապէս յետոյ, երբ եկաւ-տեսաւ Նայիրի Զարեանին իր փառքի մէջ, ծաղկուն ու բարեկեցիկ։ Գուցէ դա բացատրելի եւ ինչ-որ մի տեղ արդարացնելի կը լինէր։ Բայց, ո՛չ, այդ տարիներին նա ընդունեց Նայիրի Զարեանի օգնութիւնը, հովանաւորութիւնը, գորովն ու ջանքերը՝ գրչակիցներին ազատելու, կեանքին վերադարձնելու։ Մահարին այդ ոտանաւորը գրեց յետոյ, երբ բուրգը փլուել էր արդէն, երբ զայրոյթի եւ ատելութեան ամբարտակը արդէն բաց էր թողուած Նայիրի Զարեանի վրայ, երբ հաստատ գիտէր, որ իր տողերը աւելի պէտք է ճշգրտէին հոսքի ուղղութիւնը։ Գրեց՝ մանր վրիժառութիւնից դրդուած, իր «*Այրուող այգեստաններ*»ի վէպի նկատմամբ Նայիրի Զարեանի բռնած բնաջնջական դիրքի պատճառով։ Կա՞յ արդեօք Գուրգէն Մահարու գրառումներում այս առիթով ինքն իրենից ամաչելու որեւէ ակնարկ։ Երեւի ոչ... Սակայն երանի թէ լինէր, եւ դա ո՛չ միայն Նայիրի Զարեանի համար, այլ իր՝ Մահարու համար։ Ուզում ես, որ մեծ գրողը մեծ լինի նաեւ հոգով, իր խղճի դէմ՝ մաքուր, լինի մինչեւ վերջ անաղարտ... («*Գարուն*», 1992, թիւ 3, էջ 41-42)։

ՄԻՔԱՅԷԼ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԶԳՈՒՅՇ ԵՂԷՔ, ՄԱՐԴԻԿ...

Ես իմ կեանքը տարայ, որպէս վէրք ու դրօշ,
Ու բարձրացայ յամառ՝ մթին անդունդն ի վեր,
Ես թրծեցի հոգիս տարտարոսի հրով՝
Որքի նման անօգ եղայ, որքի պէս վեհ։

Անարցունք ու անլաց՝ ես կորցրի ամէնն՝
Ինչ իմաստն էր կեանքի, կախարդանքը նրա։
Թողի, որ մկները իմ գրքերը ծամեն,
Մտայ մի անանուն ու ահաւոր մրափ...

Ու երբ ես զարթնեցի տասնեօթամեայ քնից,
Ու երբ քայլամոլոր նորից աշխարհ մտայ,
Զկար արդէն դուը, նա, որ մի գլխանի՝
Միլիոն գլուխ կերաւ ու մավզոլէյ մտայ։

Իշխում էր չոգունէ սապոգաւոր Նեռը
Երեւանի վրայ քիրտ ու ամբարտաւան,
Տնքում էր սրբազան Քանաքեռի լեռը,–
Կանգնել էր իր սրտին օտար մի մարդասպան։

Ու առաջին անգամ հայ բանաստեղծը անգ
Նրա փառքը երգեց քսու եւ լարձնաշուրթ,
Զոհեց խիղճ ու հոգի, ծախեց քնար ու երգ,
Գրչի տեղ նա բռնեց բանարկուքեան դաշոյն։

Այդ նրան նա երգեց, ժա՛նտ դահճին՝ որ պոկեց
Ժողովրդի սրտից խանչեան մի Աղասի,
Զարենց մի Եղիշէ, Ալեքսանդր մի Բակունց,
Լուսէ զաւակներին Գորիսի եւ Ղարսի...

Նա կռնակից խփեց, երբ զոհերը իրա
Նստած էին անել, մթին զնդանններում,
Ու սողոսկեց նրանց պատուանդանի վրայ,
Որպէս հտպիտ ու գող, որպէս մանր Ներոն։

Կեանքից ստացայ ես արեւ ու քնար,
Ու կողոպտուած, խլուած գարունների ուժով
Ես ճչում եմ հիմա, որքան ունեմ հնար,–
Զգո՛յշ եղէք, մարդի՛կ, նայէք շուրջը ուշով։

Զգո՛յշ եղէք, մարդի՛կ, դեռ ապրում են նրանք
Վրէժխնդիր մաղձով, դժգոհ ու ոխակալ՝
Նրանք երազում են Քանաքեռի վրայ
Նրա ստուերը սեւ ծանր չոգուն հագած։

ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐԻ

digitised by A.R.A.R.@

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ
ԵՐԿՈՒ ՄՕՏԵՑՈՒՄ

(Հեղինակ՝ Թորոս Թորանեան)

Հայկական Հարցը երկու տարբեր դիտանկիւններէ ներկայացնող երկու պատմաբաններու՝ թուրք Թանէր Աքչամի եւ փրոֆ. Վահագն Տատրեանի վերջերս լոյս ընծայած գործերը հայ ընթերցողին ներկայացնելու նպատակով, Թորոս Թորանեան 1994ին հրատարակեց ուշադրութեան արժանի գրքոյկ մը՝ «Հայկական Հարցը. երկու մօտեցում»: Հալէպի մէջ, «Կիլիկիա» հրատարակչատունէն լոյս տեսած վերոնշեալ հրատարակութիւնը, որ կը բաղկանայ երկու մասէ, կը հաշուէ 76 էջեր:

«Երկու խօսք» խորագրեալ մէկ էջնոց ներածականին մէջ, նշելէ ետք, թէ առաջին հատորին հեղինակը Համպուրկ ապրող թուրք պատմաբան մըն է, իսկ երկրորդինը՝ Իսթանպուլ ծնած եւ ներկայիս Միացեալ Նահանգներ հաստատուած հայ պատմաբան մը, Թորոս Թորանեան կը գրէ. «Դուք պիտի տեսնէք երկու մօտեցում հայկական ցեղասպանութեան նկատմամբ: Առաջինը, նոր երեւոյթ, թէեւ կ'ընդունի ջարդերը, բայց կ'աշխատի բացատրութիւններ տալ, մեղմացնելով մեծագոյն այս ոճիրը հոգեբանական վերլուծումներու յենած, ու երկրորդը կը դատապարտէ ցեղասպանութեան գործադրումը ու փաստերու լեզուով կը հաստատէ նախճիրը»:

digitised by A.R.A.R.@

Գրքոյկին առաջին 41 էջերը Թորոս Թորանեան յատկացուցած է Թանէր Աքչամի «Թուրք ազգային ինքնութիւնը ու Հայկական Հարցը» («Թիւրք ուլուսալ գիմլիկէ վէ էրմէնի սորունու») խորագրեալ եւ 224 էջերու վրայ տարածուող հատորին, որ տպուած է 1992ի Նոյեմբերին, Իսթանպուլի մէջ եւ որուն յառաջաբանը ստորագրած է այլ թուրք մը՝ Էօմէր Լաչինէր:

1976ին իբրեւ համայնավար ու քրտական քարոզչութիւն ընող օրինազանց անձ ձերբակալուած, բանտարկուած եւ տարի մը ետք բանտէն փախուստ տալով Գերմանիա ապաստանած Թանէր Աքչամ, գիրքին առաջին իսկ էջերէն, կը փորձէ զարգացնել այն միտքը, որ Թուրքիոյ գոյատեւման եւ թուրք ազգային ինքնութեան զարգացման համար, Կիլիկիոյ կոտորածներն ու Մեծ Եղեռնը անխուսափելի պահանջներ էին: Պուլկարիոյ, Սերպիոյ, Եգիպտոսի կորուստով անել կացութեան մատնուած թուրք պետութեան համար այլ ելք չէր մնար, եթէ ոչ «մեր բոլոր ուժերը այս նպատակին (իմա՝ Թուրքիոյ բաժանման վտանգին) դէմ զօրակոչի ենթարկել» եւ վերջ դնել «հայերու ապերախտութիւններ»ուն: Հետեւաբար, հիմնուելով վերնշեալ տուեալներուն վրայ, Ցեղասպանութեան փաստը չհերքող Թանէր Աքչամ կ'եզրակացնէ. «Հայկական Հարցը Թուրքիոյ լինել-չլինելու հարցին վերածուեցաւ, որով, բանիալամիզմը զօրացաւ եւ այսպիսով ծայր առին հայկական ջարդերը»:

Հայկական Ցեղասպանութեան ծրագիրը «արդարացնող» հոգեբանական, ընկերային, տնտեսական, քաղաքական եւ բազմազան այլ «տուեալներ»է առաջնորդուած՝ Թանէր Աքչամ կ'եզրափակէ. «Թուրքերը, իրենց իսկ բնաջնջումի վախէն մտրակուած՝ դիմեցին հայերը պակասեցնելու ծրագիրին»: Ապա, դէպքերը իր ուզած ձեւով զարգացընելով, սպիտակ էջին վրայ իր արձանագրած դատումը քանի մը էջ անդին ժխտելով, իր իսկ հաստատած միտքը այլուր հարցականի տակ առնելով եւ իրերայաջորդ հարցումներով ու ժխտումներով իր «տրամաբանութեան» օղակը ոլորապտոյտ առ ոլորապտոյտ ընդարձակելով՝ Աքչամ կը կատարէ հետեւեալ չնաշխարհիկ եզրակացութիւնը. «Հայկական ջարդերու մասին ինչո՞ւ կը լռենք, երբ կրնանք ըսել թէ ատոնք բոլորը օսմանցիներու օրով եղած են եւ յեղափոխութիւնն ալ նոյն օսմանեան պետութեան դէմ եղած է, մենք անոնց հետ կապ մը չունինք: Մենք նման գործ չենք ըրած: Օսմանցիներն էին: Մեր օրով, 1926ին, նոյնիսկ դատարանով դատապարտեցինք ջարդը կազմակերպողները եւ յանցագործ պատասխանատուներէն ոմանք կախաղան բարձրացուցինք»:

Ուրեմն՝ վերջ: Պէտք չէ խուսափիլ հայկական ջարդերուն մասին խօսելէ, եթէ նոյնիսկ «անհանգստանալու խորունկ պատճառներ կան»: «Մեր պատմութիւնը մոռնալու ցանկութեան պատճառներէն մէկն ալ հայկական ջարդերն են,— կ'ըսէ Աքչամ եւ կը շարունակէ:— Մենք հիւանդ ենք, ինչու բացէ ի բաց չենք խօսիր հայկական ջարդերու

digitised by A.R.A.R.@

մասին։ Այդ սեւ թապուն մենք մեզի ջնջած ենք եւ կը կարծենք թէ առողջացած ենք։ Եթէ առողջացած ենք, ինչո՞ւ չենք խօսիր։ Կը նշանակէ, որ մենք տակաւին առողջացած չենք...», եւայլն։

Ապա, ան կը հաստատէ, որ ինքզինք էապէս անկախ ներկայացնող այսօրուան Թուրքիան «ժառանգորդն է օսմանցիութեան եւ անոր շարունակութիւնը», որովհետեւ Մուսթաֆա Քեմալի հիմնած հանրապետութեան հիմքին մէջ ջարդուած ժողովուրդի մը դիակները կան։ Ահա թէ ինչու, թրքական ինքնութիւնը իր մաշեցնող հիւանդութենէն ազատագրելու համար, Թանէր Աքչամ կ'ընդգծէ, որ Թուրքիան ստիպուած է դիմելու շատ ուշացած նախաձեռնութեան մը,— պատմական իրողութիւնները վերլուծելու եւ երկխօսութեան անցնելու քայլին։ Վերջապէս, Աքչամի իսկ հաստատումով՝ Հայկական Հարցը կարելի չէ դիտել իբրեւ պատմութեան անցած եւ լմնցած գործ, այլ պէտք է զայն կշռադատել այսօրուան տուեալներով եւ դիմել բացայայտօրէն խօսելու քայլին։

«Հայկական Հարցը...» գրքոյկին երկրորդ մօտեցումը ընդարձակ յօդուած մըն է (էջ 49-78), որ կը կրէ՝ «Վահագն Տատրեանի նոր գործերը» խորագիրը։ Իր այս գրութեամբ Թ. Թորանեան հայ ընթերցողին կը ներկայացնէ երբեք յոգնիլ չճանչցող եւ շարունակ անծանօթ ճշմարտութիւններ յայտնաբերող փրոֆ. Վահագն Տատրեանի երեք նորագոյն ուսումնասիրութիւնները, որոնք կը կոչուին՝ «Խեղաթիւրում մը Հայկական Ցեղասպանութեան կարգ մը գլխաւոր ոճրագործներու պատիժներուն կապակցութեամբ», «Թուրք զինուորականութեան դերը օսմանեան հայերու բնաջնջման գործին մէջ. ուսումնասիրութիւն պատմական շարունակութեամբ» եւ խորագիրը չնշուած հատոր մը, որ Օսմանեան կայսրութեան պաշտօնաթերթին, Զինուորական Դատարանի արձանագրութիւններուն, Պատերազմական Խորհրդարանի ունկնդրութիւններուն, Թուրքիոյ Ազգային Մեծ Ժողովի գաղտնի նիստերու արձանագրութիւններուն, 20 թուրք եւ 11 օտար հեղինակներու հատորներուն ու բազմաթիւ փաստաթուղթերու, տեղեկագիրներու, նամակներու եւ վկայութիւններու անհերքելի հարուստ փաստերով լոյսին կը բերէ Հայասպանութեան մթին ծալքերը, Մեծ Եղեռնի ճշմարտութիւնը հերքող թրքական պետական յամառ քարոզչութիւնը կը մերկացնէ նոյնինքն թրքական աղբիւրներէ քաղուած վաւերաթուղթերու գիտական անվիճելի յամառութեամբ եւ կ'ըսէ ցարդ չքննարկուած ոճիրներ բացայայտող իրաւ պատմագէտի ակադեմական ճշմարտացի խօսքը։

Փրոֆ. Վահագն Տատրեանի կոթողական աշխատանքը գնահատելով, Թ. Թորանեան կ'եզրափակէ. «Ահա այսպէս, մեղուաջան յարատեւութեամբ կը շարունակէ իր գիտական պրպտումները փրոֆ. Վահագն Ն. Տատրեանը եւ բազմահազար օտար ընթերցողներու կը հասցնէ իր ուսումնասիրութիւնները, որոնք գրուած են միշտ գիտնականի լրջութեամբ եւ պատմական փաստերու, փաստաթուղթերու արձակած լոյսին տակ, որպէսզի խաւարէն լոյսին գայ Հայկական Հարցը, որպէսզի ի վերջոյ յաղթանակէ ճշմարտութիւնը»։

digitised by A.R.A.R.@



ԷՋՄԻԱԾԻՆ ԵՒ ԱՆԹԻԼԻԱՍ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

(Հեղինակ՝ Մելգոն Էպլիղաթեան)

Հայ եկեղեցւոյ հիմնահարցերէն մէկուն՝ զայն մեր ժամանակներու պահանջներուն եւ պայմաններուն լուծում բերող ամբողջական կանոնագրութեամբ (սահմանադրութիւն) օժտելու հրամայականը, առաւել քան երբեւիցէ, ընդգծուեցաւ վերջին տարիներուն, Խորհրդային Միութեան քայքայման պատճառով ստեղծուած բարենպաստ պայմաններուն բերումով՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.ի (1991, 1994) եւ այս հարցով շահագրգիռ աշխարհիկ մէկէ աւելի մտաւորականներու կողմէ:

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կանոնագրութեան ամբողջական վերախմբագրման անհրաժեշտութենէն առաջնորդուած՝ 1970 եւ 1973 տարիներուն վերոնշեալ եւ յարակից այլ նիւթեր շօշափող շարք մը յօդուածներ ստորագրած տոքթ. Մելգոն Էպլիղաթեան, Հայաստանի վերաստեղծ հանրապետութեան պարզած նոր պայմաններուն եւ տուեալներուն լոյսին տակ՝ «Դրօշակ»ի էջերուն ընդարձակ ուսումնասիրութիւն մը ստորագրելէ ետք, զայն հարստացուց անհրաժեշտ յաւելումներով, եւ վերախմբագրուած ու ամբողջացած իր ուսումնասիրութիւնը ամփոփեց «Էջմիածին եւ Անթիլիաս» խորագրեալ գրքոյկի մը մէջ:

1994ին, Հալէպի «Կիլիկիա» հրատարակչատունէն լոյս տեսած եւ 78 էջեր հաշուող այս հատորիկը, որ նաեւ ունի «Հայ եկեղեցւոյ սահմանադրութեան հարցը» ենթախորագիրը, կը բաղկանայ չորս բաժիններէ եւ անոնց կցուած յաւելուածէ մը: Կարճ, բայց խիտ ներածականի մը մէջ, Հայաստանեաց Առաքելական Եկեղեցին բաղկացնող Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, Երուսաղէմի եւ Պոլսոյ Պատրիարքութիւնները ընդհանուր օրէնսդրութեամբ մը միացնող սահմանադրութեան անխուսափելի պահանջին անդրադառնալով՝ տոքթ. Մելգոն Էպլիղաթեան կ'ընդգծէ, որ հայ եկեղեցւոյ վարչակազմակերպական մեքենան հիմնական վերանայման կը կարօտի, որովհետեւ, ինչպէս կ'եզրափակէ՝ «Մեզի, հայերուս համար Հայ Եկեղեցին զուտ կրօնական հաստատութիւն չէ: Անիկա ազգային եկեղեցի է, եւ անոր սահմանադրութիւնն ալ՝ ազգային կարեւոր հարց»:

digitised by A.R.A.R.@

«Քրիստոնեայ, ազգային, անկախ հայ եկեղեցի» խորագրեալ առաջին բաժինը կը բաղկանայ հինգ ստորաբաժանումներէ, որոնք, պատմական տուեալներու ճշդորոշ օգտագործումով՝ համառօտ գիծերու մէջ կը ներկայացնեն աւելի քան հազար եօթը հարիւր տարեկան հայ եկեղեցին ուրոյն սահմանադրութեամբ օժտելու նպատակով գումարուած համագումարները՝ Ներսէս Պարթեւ Հայրապետի նախագահութեամբ 363ին Աշտիշատի մէջ կայացած համագումարէն մինչեւ 1991ին Վազգէն Ա. Կաթողիկոսի հրապարակած մասնակի կանոնագրութիւնը եւ 1992ին Հալէպի մէջ գումարուած Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Ազգային Ընդհանուր Ժողով»ին հաստատած մասնակի կանոնագրութիւնը: Ապա՝ «Հայ եկեղեցւոյ ազգային նկարագիրը» ստորաբաժանումով հեղինակը կը բնութագրէ պետական եւ աշխարհական ամէն տեսակի կառոյցներու չքացումէն ետք կանգուն մնացած ազգային մեր միակ կազմակերպութեան՝ Հայ եկեղեցւոյ ստանձնած ազգային ներկայացուցչական հանգամանքը եւ ծաւալած գործունէութիւնը՝ նորակազմ գաղթավայրերու մէջ: Պատմական նկարագիր ունեցող այս բաժինը կը զարգանայ եւ իր եզրակացութեան կը յանգի «Պոլսոյ Պատրիարքութիւնը եւ Ազգային Սահմանադրութիւնը», «Հիմնական սկզբունքներ» եւ «Պոլսոժէնիա» ենթաբաժանումներով, որոնք սեղմ բնութագրումով կը ներկայացնեն Ազգային Սահմանադրութեան պատմական հոլովոյթը, ազգին եւ ազգայիններուն փոխադարձ իրաւունքներն ու պարտաւորութիւնները ճշդող հիմնական սկզբունքները, ինչպէս նաեւ՝ Հայաստանի ռուսացումը հետապնդած քաղաքականութեան ծիրէն ներս ցարական միապետութեան 1836ին հրապարակած եկեղեցական օրէնսդրութիւնը եւ անոր յաջորդած տագնապալի անցուդարձերը:

«Էջմիածնի կանոնագրութիւնը» խորագրեալ երկրորդ բաժինը հատորիկին, որ կը բաղկանայ հինգ ստորաբաժիններէ, ամենայն բծախնդրութեամբ կ'ուսումնասիրէ Ս. Էջմիածնի կանոնագրութեան գլուխները բաղկացնող յօդուածները: Աշխատանք մը՝ որուն շնորհիւ ընթերցողը ամբողջական գաղափար մը կը կազմէ եկեղեցական բարձրագոյն իշխանութեան վարչական կառոյցին, այսինքն՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Եպիսկոպոսաց Տեղական Ժողովի, Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի, թեմերու եւ ծխական-եկեղեցական կազմակերպութիւններու վարչական կարգուսարքին, իրաւասութիւններուն եւ պարտաւորութիւններուն մասին: Ապա, Ս. Էջմիածնի կանոնագրութեան յօդուածները քննարկելով՝ տոքթ. Մ. Էպլիղաթեան կը կատարէ բաղդատական-քննական ընթերցումը Էջմիածնի Կանոնագրութեան եւ Ազգային Սահմանադրութեան, կը նշէ այն պատմական դրդապատճառները, որոնց բերումով լոյս աշխարհ եկած Էջմիածնի զուտ եկեղեցական կանոնագրութիւնը կը մնայ խոցելի իբրեւ ժողովրդավարական հակակշռողութիւն, հակառակ այն հաստատումին, որ՝ «Հայաստանեայց Եկեղեցին որդեգրել է եկեղեցական կեանքի ղեկավարման ժողովրդավարական սկզբունքները եւ ժողովական դրութիւնը»:

digitised by A.R.A.R.@

Այս լոյսին տակ՝ Ս. Էջմիածնի Կանոնագրութեան ժողովրդավարացման անհետաձգելի հրամայականին անդարադառնալէ ետք, մեկնելով պետականօրէն վերականգնած Հայաստանի Հանրապետութեան փաստէն, տոքթ. Մ. Էպլիղաթեան կ'ենթադրակցնէ, որ, առաւել քան երբեւիցէ, այսօր «Էջմիածինի կը սպասէ առաջնահերթ եւ պատմական առաքելութիւն մը.— ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ։ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ, ԱՑՍԻՆՔՆ՝ ՀԱՅ ՀԱՒԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒ ԱՄԲՈՂՋՈՒԹԻՒՆԸ»։

Ս. Էջմիածինի Կանոնագրութիւնը յօդուած առ յօդուած քննարկելէ ետք, նոյն մօտեցումով հեղինակը կը ներկայացնէ եւ կը քննարկէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կանոնագրութեան, (Ազգային Սահմանադրութիւն), այսինքն՝ Անթիլիասի վերջին կանոնագրութեան վերամշակուած տարբերակը եւ լրացուցիչ յօդուածներով ճշդուած Կիլիկիոյ Կաթողիկոսութեան այժմու վարչական կառոյցը։ Անթիլիասի վերջին կանոնագրութեան (1992 Նոյեմբեր) ստորաբաժանումները մէկ առ մէկ ներկայացնելէ, անոր ժողովրդավարական դիմագիծն ու էութիւնը վերլուծելէ, անհրաժեշտ լրացումները եւ փոփոխութիւնները մատնանշելէ ետք, հատորիկը փակող «Հարցադրումներ եւ հաստատումներ» ենթաբաժանումով՝ տոքթ. Մ. Էպլիղաթեան կը կատարէ սփիւռքեան եւ հայրենական ներկայ իրավիճակէն, ինչպէս նաեւ՝ զոյգ կանոնագրութիւններէն քխած կենսական նշանակութիւն ունեցող հարցադրումներ եւ հաստատումներ, որոնք ներկայիս «չորս «ինքնագլուխ» (autocéphale—autocéfhale) բաժիններով» գործող Հայ Եկեղեցին կը միտին տեսնել ներդաշնակ, միացնող, արդի եւ առաւել ժողովրդավար վարչակառոյցով եւ կանոնագրութեամբ օժտուած։

Արդէն՝ նոյն հրամայականի ընդգծման կը ծառայէ հատորիկին կցուած «Ցաւելուած»ը, որ լայն մէջբերումներ կը կատարէ գրքոյկի տպագրութեան յանձնումէն ետք Վազգէն Ա. Կաթողիկոսի 22 Ապրիլ 1994ին հրապարակած կոնդակէն։ Հայ Եկեղեցին հիմնականօրէն վերամշակուած սահմանադրութեամբ մը օժտելու անխուսափելի անհրաժեշտութիւնը ընդգծող վերոնշեալ կոնդակը, որ կը կատարէ պատմական նշանակութիւն ունեցող հաստատումներ, այս հատորիկը կը փակէ այն ընդհանուր մտածումով, թէ Հայ եկեղեցին պէտք է անպայման օժտել «համայնավար շրջանի եկեղեցաքանդ սխալները» արբագրող եւ եկեղեցւոյ մարմիններու մէջ «աշխարհական մտաւորական ուժեր»ու լայն մասնակցութիւնը ապահովող ամբողջական նոր սահմանադրութեամբ մը, որովհետեւ, ինչպէս կը հաստատէ երջանկայիշատակ Ամենայն Հայոց Վեհափառը՝ «Առանց հաւատացեալ ժողովրդի աշխարհական ներկայացուցիչների լայն գործակցութեան, Հայ Եկեղեցին կը տկարանայ, կը կորցնի իր «Ազգային Եկեղեցին» լինելու պատմական կոչումը եւ հեռու կը մնայ ժողովրդից, ժողովուրդն էլ՝ Եկեղեցուց, որը անցեալում քաղաքականութիւնն էր համայնավար իշխանութեան»։

digitised by A.R.A.R.@



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ ԿԸ ՀԱՐՍՏԱՆԱՑ ՔԱՋԱԶՆՈՒՆԻԻ ԳՈՐԾԵՐՈՎ



Հայաստանի ճարտարապետական ազգային մայր թանգարանին նուիրած են 1918ի հանրապետութեան առաջին վարչապետ, դաշնակցական երեւելի գործիչ, մասնագիտութեամբ ճարտարապետ Յովհաննէս (Ռուբէն) Քաջազնունիի ճարտարապետական-շինարարական եւ գիտա-մանկավարժական ժառանգութենէն հրաշքով փրկուած մասունքներ, որոնք տարբեր բնոյթի բազմատեսակ գործեր են։ Մասունքներուն նուիրատուն է Լիլիթ Քաջազնունիի գործերու հաւատարմատար Լիանա Յովսէփեան։

Պատմական արժէք ունեցող այդ նիւթերը տասնամեակներ պահպանուած եւ ապահով կերպով, անոնք մեր օրերը հասած են շնորհիւ Քաջազնունիի դստեր՝ Մարկօ Քաջազնունիի ջանքերուն։

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԱՀԻՆԵԱՆԻ «ՓՈԿՐՈՄ» ՎԷՊԸ

Սումգայիթի ողբերգութեան 6րդ տարելիցին առիթով, Միացեալ Նահանգներու մէջ լոյս տեսած է լոնտոնաբնակ Ալեքսանդր Շահինեանի *«Փոկրոմ»* վէպը, որ մեծապէս գնահատուած ու լայն ճանաչում գտած է։ «Շիքակօ Ուիմէն Ֆոր Փապլիշինկ» կազմակերպութեան կողմէ նախաձեռնուած լաւ վաճառք ունեցող գիրքերու մրցանակաբաշխութեան մէջ *«Փոկրոմ»*ը գրաւած է երկրորդ տեղը։ Գիրքը լոյս տեսած է «Էտիշըն Ֆիու» հրատարակչատունէն։ Գրախօսականին մէջ գրուած է հետեւեալը.– ««Փոկրոմ»*ը իրապէս արժէքաւոր վէպ մըն է։ Անիկա առաջին անգամ ըլլալով կ'անդրադառնայ հայ-ազրպէյճանական հակամարտութեան ողբերգական էջին»։* Գիրքը միայն կոտորածներու շարադրանք չէ, այլ տառապեալ հոգիի ճիչ՝ ի տես հայերու նկատմամբ գործադրուած անարդարութեան։

Գիրքին հեղինակը բազմիցս եղոյթ ունեցած է Պի.Պի.Սի. Ձայնասփիւռէն եւ յօդուածներ ստորագրած՝ *«Թայմզ»*

digitised by A.R.A.R.@

թերթիս մէջ, փորձելով Արեւմուտքին ուշադրութիւնը հրաւիրել Հայաստանի, Արցախի եւ Ազրպէյճանի մէջ տեղի ունեցած դէպքերուն վրայ։

ՅՈՒՆԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՄԵՐԳՆԵՐՈՒ ՇԱՐՔ

Էտկար Ցովհաննիսեանի *«Գողգոթան»* ստեղծագործութեան կատարողութեամբ, Ա Սեպտեմբերին, Արամ Խաչատրեանի անուան համերգասրահին մէջ բացումը կատարուած է յունական երաժշտութեան եւ արուեստին նուիրուած համերգներու շարքին։

Յունական արուեստին նուիրուած համերգին իր մասնակցութիւնը բերած է յոյն երիտասարդ ջութակահար Քրիստոս Գալիլէաս։ Ան արտասահմանեան իր շրջապտոյտին առաջին երկիրը ընտրած է Հայաստանը։ Այս մասին իրեն ուղղուած հարցումի մը պատասխանելով, յոյն ջութակահարը ըսած է. *«Հայաստան, որովհետեւ այս չքնաղ երկիրը մօտ՝ Տիրուհի Գալֆայեանի հայրենիքն է»։*

ԵՈՒՐՍԷՆԱՐԻ ՅՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ...2037 ԹՈՒԱԿԱՆԻՆ

Ֆրանսացի գրագիտուհի Մարկրիթ Եուրսէնար զանազան առիթներով կրկնած է, որ որեւէ յուշագրութեան հեղինակ իր գրագէտի ազատութիւնը եւ իրաւասութիւնները կորսնցուցած «դատապարտեալ գրող մըն է», եթէ նոյնիսկ կարգ մը դէպքերու օրինակելիութեան հանգամանք տալու նպատակով կը դիմէ զայն խոշորացոյցով

կամ մանրացոյցով դիտելու ընտրանքին։

Ֆրանսայի Ակադեմիայի առաջին կին անդամին համոզումով՝ յուշագրութիւնները սպանութիւնն են ա՛յն անձին, որուն կեանքը կը պատմեն պարզացուած անկեղծութեամբ եւ առարկայական մօտեցումով, քանդելով խնդրոյ առարկայ ենթակային մարդկային բարդ ներաշխարհին եւ ինքնուրոյն հոգեբանութեան կախարդական պատկերը։

Եւ որովհետեւ Մարկրիթ Եուրսէնար արձակագիրին «ահաբեկումը» հանդիսացող իր յուշագրութիւնները նաեւ յոյսին կը բերեն անխոստովանելի գաղտնիքներ՝ ինչպէս բոլոր խոստովանութիւն-յուշերը, իր մահէն առաջ (1957), գրագիտուհին գրաւոր արձանագրութեամբ խստօրէն զգուշացուցած է իր ժառանգորդներուն, որ յուշագրութիւններուն պահարանները կրնան բացուիլ իր մահէն միայն յիսուն տարի ետք, այսինքն՝ 2037 թուականին։

Այս արգելքը մեծապէս դժուարացուցած է Եուրսէնարի կեանքին եւ գրականութեան մասին մենագրութիւն մը պատրաստած ֆրանսացի այլ գրագիտուհի մը՝ Ժոզիան Սավինիոյի աշխատանքը։ Հակառակ այս խոչընդոտին, Մ. Եուրսէնարի յուշագրութիւններուն տպուած կարգ մը հատուածներուն եւ զանազան անձերու հասցէագրուած նամակներու վրայ հիմնուելով՝

digitised by A.R.A.R.@

Սաւինիօ յաջողած է իրականացնել հարուստ տեղեկութիւններով յատկանշուող այնպիսի՛ մենագրութիւն մը, որ ամենայն մանրամասնութեամբ կը ներկայացնէ Մարկրիթ Եուրսէնարի թըշուառ մանկութիւնն ու երիտասարդութիւնը, իր հօր հանդէպ տածած անհուն սէրն ու պաշտամունքը, ինչպէս նաեւ՝ իր նկարագրի եւ հոգեմտաւոր աշխարհի կազմաւորման մէջ հայր Եուրսէնարի խաղացած գլխաւոր դերակատարութիւնը։

Անձնական հետաքրքրական տեղեկութիւններու կողքին՝ Ժոգիան Սաւինիոյի մենագրութիւնը նոյնքան անծանօթ մանրամասնութիւններ կը փոխանցէ գրագիտուհիին սիրային փորձառութեանց եւ իր գործերուն միջեւ գոյութիւն ունեցող կապերուն մասին։ Այսպիսով կը պարզուին բազմաթիւ գաղտնիքներ եւ ընթերցողին համար բացայայտ կը դառնայ, որ *«Շնորհաց հարուած»* անուն վէպին հերոսը նոյնինքն Եուրսէնարի առաջին սիրահարն է՝ Անտրէ Ֆրինիոն, որ՝ յուշագրութեան ոճով գրուած *«Վարիան»* անուն նշանաւոր վէպին միջոցաւ Մարկրիթ Եուրսէնար կը փորձէ անմահացնել սիրային այն ահաւոր ողբերգութիւնը, զոր գրագիտուհին ապրած է իրմէ տարիքով փոքր եւ *սիտաայի* հետեւանքով իրմէ առաջ մահացած իր մէկ սիրահարին՝ Ճերի Ուիլսընի հետ։

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ՝ ՆՈՒԻՐՈՒԱԾ Գ. ԱԲԷԼԵԱՆԻ «ԱՆՆԱ ՀԱՐՍԸ» ՎԷՊԻՆ

Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Մոնթրէալի մասնաճիւղի վարչութեան կազմակերպութեամբ՝ Երեքշաբթի, 16 Օգոստոս 1994, երեկոյեան ժամը 8.30ին, Մոնթրէալի Հայ Կեդրոնի «Աւետիս Ահարոնեան» սրահին մէջ, տեղի ունեցած է գրական երեկոյ-հանդիպում մը, լիբանանահայ արձակագիր եւ հրապարակագիր (Զիւնական) Գէորգ Աբէլեանի հետ, որուն ընթացքին նաեւ ներկայացուած է հեղինակին նոր լոյս տեսած *«Անննա հարսը»* խորագրեալ վէպը։

Հատորի մը մէջ ամփոփուելէ առաջ *«Բագին»*ի էջերուն լոյս տեսած մեր աշխատակիցին վերոնշեալ վէպը արժանացած է ջերմ ընդունելութեան։ Բացման եւ բարի գալուստի խօսքէն ետք, Սիմա Աբրահամեան նախ ներկայացուցած է հիւր գրագէտին հակիրճ կենսագրականը, ապա՝ հանգամանօրէն անդրադարձած է անոր *«Անննա հարսը»* վէպին, վեր առնելով Գ. Աբէլեանի այս գործին իրական կեանքէ բխած ըլլալու իրողութիւնն ու հաղորդական ջերմութիւնը։ Վէպին վերլուծումէն ետք, *«Անննա հարսը»*էն յատկանշական հատուածներ կարդացած է Գարոլին Չէրչեան։ Վերջաւորութեան խօսք տրուած է հեղինակին, որ նախ շնորհակալութիւն յայտնած է այս ձեռնարկը կազմակերպած «Համազգային»ի վարչութեան, ապա՝ անդրադարձած *«Անննա հարսը»* վէպին։ Պաշտօնական բաժնի աւարտին՝ տեղի ունեցած է մը-տերմիկ զրոյց հեղինակին հետ, ինչպէս նաեւ՝ գրասէրներու գնած հատորներու մակագրում։

Յաջորդ օրը՝ 17 Օգոստոսի երեկոյեան, Թորոնթոյի Հայ Կեդրոնի գրադարանին մէջ տեղի ունեցած է նոյնաբնոյթ հանդիպում մը, որուն ընթացքին *«Անննա հարսը»* վէպը գրասէր հասարակութեան ներկայացուցած է դոկտ. Անի Հասըրճեան։

digitised by A.R.A.R.@

«ԲԱԳԻՆ»Ի 1994Ի ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԵՂԻՆԱԿ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻՒ
Փ. ՃԵՐԱՆԵԱՆ	Բանաստեղծութիւններ	1-2-3
» » »	» » » »	10-11-12
Ա. ԳԱՐԱԼԷՋԵԱՆ	» » » »	1-2-3
Ս. ԳՐԻԳՈՐԵԱՆ	» » » »	1-2-3
» » »	» » » »	10-11-12
ԱՐՄԱՆՏ	Տրիոլէտներ	4-5-6
Շ. ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ	Բանաստեղծութիւններ	4-5-6
Դ. ՊԵՏՐՈՍԵԱՆ	» » » »	4-5-6
Մ. ՋԱՐԻՖԵԱՆ	» » » »	4-5-6
ՄԱՐՈՒՇ	Սթրոֆէ	7-8-9
Ց. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Մեռեալ կէտ	7-8-9
Ա. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ	Գիշերային ակումբի եւ մարդկային սիրոյ մասին	7-8-9
Դ. ՎԱՐՈՒԺԱՆ	Դիակի սայլը	7-8-9
Ա. ԷԼ-ՏԸՊՐՔ	Երգ Սասունին	7-8-9
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Նշխարներ շուշանին շարակնոցէն	10-11-12
ՎԱՐԱՆԴ	Բանաստեղծութիւններ	10-11-12

ԱՐՁԱԿ

Ց. ԿԱՐԱՊԵՆՑ	Աշնանամուտ	1-2-3
Գ. ԱԲԷԼԵԱՆ	Պէյրութ	1-2-3
» » »	» »	4-5-6
» » »	» »	7-8-9
» » »	» »	10-11-12

digitised by A.R.A.R.@

Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ	Տենդեր	1-2-3
» » »	» »	4-5-6
» » »	» »	7-8-9
» » »	» »	10-11-12
Ժ. ԱԹԹԱՐԵԱՆ	Ամերիքանա	4-5-6
Ֆ. ԷԼ-ՄՈՒՏԱՐԷՍ	Արձաններու վաճառորդը	7-8-9
Պ. ՄՆԱՊԵԱՆ	Առաջին շրջանակ	10-11-12

ՅՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բ. ՂՈՒԼԵԱՆ	Գիպիստանի արծիւը	1-2-3
» » »	» » » »	4-5-6
Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ-ԳՐԻԳՈՐԵԱՆ	Վիգէն-Վրէժ	7-8-9
» » »	» » » »	10-11-12

ԻՄԱՑԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Մ. ՓԱՆՈՍԵԱՆ	Վազգէն Շուշանեանի Ձեռագրերի հետքերով	1-2-3
Պ. ՄՆԱՊԵԱՆ	«Կտակ»ի մը կատակերգութիւնը	1-2-3
» » »	...եւ Աստուած հեռու պահի	4-5-6
Վ. ԹԵՔԵԱՆ	Ժաղ Ցակոբեան՝ անհող եւ հողահզօր	1-2-3
Ց. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Ց. Պէրպէրեանի «Անցման եղանակ»ը	1-2-3
Մ. Ռ. ԱՊՈՒՄԷՖԵԱՆ	Հոգու եւ բնութեան նուրբ երգիչը	4-5-6
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Կենսունակ ամսագիր մը՝ «Վարուժան»	4-5-6
» » »	«Արագիլներու զաղթը...»	7-8-9
Հ. ԲԱԽՉԻՆԵԱՆ	Բոդլերը հայ գրականութեան մէջ	4-5-6
Գ. ՑԱԿՈԲԵԱՆ	Շ. Տասնապետեանի «Նոր քերթուածներ»ը	4-5-6

digitised by A.R.A.R.@

Ս. ԳՐԻԳՈՐԵԱՆ	Երիտասարդ գրիչներ՝ Արցախէն	4-5-6
Ա. ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ	Հայ առաջին թերթին՝ «Ազդարար»ի 200ամեակի առթիւ	7-8-9
» » »	» » »	10-11-12
Ն. ԱԴԱԼԵԱՆ	Պօղոս Մնասկեանի Միջնարարը	7-8-9
Ս. ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ	«Նորոգենք ժողովրդի հաւատը»	10-11-12
ԼԵՒՈՆ	Ո՞ր ես, Լուսաւորիչ	10-11-12
Պ.	Քսան տարի յետոյ	10-11-12
ՎԱՉԳԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ	Կոնդակ	10-11-12

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՈԹԵՐ

* * *	Սարգիս Փանոսեան	1-2-3
* * *	Արտաշէս Տէր Խաչատուրեան	1-2-3
* * *	Նաեւ այս պապակը	4-5-6
* * *	Հենրիկ Բախչինեան	4-5-6
* * *	Սրտի Պարտք...	10-11-12

ՆՇՄԱՐՆԵՐ

* * *	«Չարամիտ նկրտումներ» «Անութին տակ»...	10-11-12
* * *	«Ես ուզում եմ իմացուի»...	10-11-12
* * *	«Գրողների թշնամանքը»...	10-11-12
* * *	Մեւ քիծ...	10-11-12
* * *	Մեծութեան պայմաններէն...	10-11-12

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

* * *	«Հորիզոն»՝ 15 տարեկան	4-5-6
* * *	Իմ ոդիսականը (Ա. Մահարի)	4-5-6

digitised by A.R.A.R.@

* * *	Ազգային յեղափոխական նոր երգերու երգարան	4-5-6
* * *	Հայկական Հարցը (Թ. Թորանեան)	10-11-12
* * *	Էջմիածին եւ Անթիլիաս (Մ. Էպլիղաթեան)	10-11-12

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

1-2-3, 4-5-6, 7-8-9, 10-11-12

*
* *

«ԲԱԳԻՆ»Ի 1994ի ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ 10-11-12

digitised by A.R.A.R.@

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

«ՀԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԾԱԳՈՒՄԸ»
—ուսումնասիրություն—
Ներսէս Վիրապեան, Լոս Անճելես, 1993, 168 էջ:

«ՄԱՐԴԿԱՑԻՆ ԻՐԱՒԱՆՑ ՀԱՐՑԵՐ»
—յօդուածներ—
Պէպօ Սիմոնեան, Պէյրութ, 1994, 288 էջ:

«ԿՏԱԿԸ»
—պատմուածքներ—
Պերճուհի Աւետեան, Հալէպ, 1994, 148 էջ:

«ՈԳՈՒ ԱՄՐՈՑՆԵՐ»
—էսսէներ—
Կարպիս Սուրէնեան, Հալէպ, 1994, 126 էջ,
հրատարակութիւն՝ «Հ.Բ.Ը.Միութեան»:

«ԹՌՉՈՂ ԾԱՂԻԿՆԵՐ»
—բանաստեղծութիւններ—
Վարսիկ Վարդունի, Երեւան, 1994, 90 էջ,
հրատարակչատուն՝ «Մեհեան»:

«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ. ԵՐԿՈՒ ՄՕՏԵՑՈՒՄ»
—հրապարակագրութիւն—
Թորոս Թորանեան, Հալէպ, 1994, 78 էջ,
հրատարակչատուն՝ «Կիլիկիա»:

«ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ»
—պատմուածքներ—
Ուիլիըմ Սարոյեան, հայացուց՝ Յովհաննէս Շէօհմելեան,
Պէյրութ, 1994, 238 էջ, հրատարակչատուն՝ «Սիփան»:

«ԷՋՄԻԱԾԻՆ ԵՒ ԱՆԹԻԼԻԱՍ»
—ուսումնասիրություն—
Մելգոն Էպլիղաթեան, Հալէպ, 1994, 78 էջ,
հրատարակչատուն՝ «Կիլիկիա»:

digitised by A.R.A.R.@

ԼԻԲԱՆԱՆ

Հատավաճառ (զայգ թիւ)	5·000 Լ·Ո·
Տարեկան բաժնեգին	30·000 Լ·Ո·

ՍՈՒՐԻԱ

Հատավաճառ (զայգ թիւ)	100 Ս·Ո·

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին	40 Ամերիկեան տոլար

باكين

مجلة شهرية ، ادبية فنية وعلمية

المدير المسؤول

السيد ارتين كارنيك قزانجيان

•

PAKINE

REVUE MENSUELLE
LITÉRAIRE & ARTISIQUE

Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

•

ԲԱԳԻՆ

ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Խմբագիր
ՊՕՂՈՍ ՄՆԱՊԵԱՆ

Խմբագրութեան անդամ
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Հասցէ՝

Centre Culturel SHAGHZOYAN
Bourdj Hammoud — Liban

digitised by A.R.A.R.@